1783

3 К23
Ц-28

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻ
առաջաբանով յեվ ծանոթագրություններով

3К23
Հ-28

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

11 SEP 2013
3K23
Հ-28
ալ.
30 MAY 2005
03 NOV 2009

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

(1894 — 1917)

Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻ
առաջաբանով յեվ ծանոթագրություններով

Չ6479
1006
28193

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

1783

ԱՌԱՋԱԲԱՆ

Վ. Ի. Լենինի ստորև տպագրվող նամակները հասցեագրված են գլխավորապես նրա մորը՝ Մարիա Ալեքսանդրովնային և քրոջը՝ Մարիա Իլյինիչնային[1] և ընդգրկում են 1894 թ. մինչև 1917 թ. ժամանակաշրջանը[2], այսինքն՝ սկսած Վ. Ի. հեղափոխական գործունեության առաջին տարիներից մինչև Փետրվարյան հեղափոխությունից հետո նրա Ռուսաստան վերադառնալը։ Մոտ քառորդ դար կազմող այդ ժամանակաշրջանում առաջացել և կազմվել ե մեր կուսակցությունը։ Յեվ այդ ամբողջ փառավոր քսանհինգամյա ժամանակաշրջանում Վ. Իլյիչն եր գլխավորում, ղեկավարում և սնուցում այդ կուսակցությունը։ Նրա ամբողջ կյանքը հեղափոխական պայքարի մեջ եր. նրա անձնական կյանքն անբաժան ե այդ պայքարից, պրոլետարիատի գործին նվիրված այդ աշխատանքից։

Թեև մենք ունենք Լենինի աշխատությունների ամբողջ ժողովածուն և լենինիզմին նվիրված բավական ընդարձակ (թե գիտական հետազոտական և թե հանրամատչելի) գրականություն, սակայն Լենինն իբրև մարդ ցայտուն բազմակողմանի անհատականությամբ մինչև օրս չափազանց թերի յե նկարագրված կամ գրեթե բոլորովին չի նկարագրված։

Ընթերցողին առաջարկվող նամակները մասամբ լրացնում են այդ բացը։ Նրանցով վորոշ չափով կարելի յե դատել Վ. Ի. կենցաղի, սովորությունների, հակումների, մարդկանց հանդեպ ունեցած նրա վերաբերմունքի մասին և այլն։ Վորոշ չափով վերապահությամբ ասում ենք մենք, վորովհետև նախ և առաջ՝ սա հիշյալ ժամանակաշրջանում հարազատներին ուղղած նրա նամակների բնավ

---

[1] Թեև այս նամակների բովանդակությունը, «կրկնությունից խուսափելու համար», սովորաբար վերաբերում եր մեր ընտանիքի բոլոր, գեթ տվյալ ժամանակին միասին ապրող անդամներին։

[2] Այստեղ չի մտել Վ. Ի. աքսորի ժամանակաշրջանում հարազատների հետ ունեցած նամակագրությունը (տես «Пролетарская революция» №№ 3, 4, 5, 6, 1929 թ.) և 1896 թվի նամակագրությունը, յերբ Վ. Ի. նստած եր Պետերբուրգի նախնական կալանատանը (1895 թ. 9.XII մինչև 1897 թ. 29.I հին տոմ.)։ Այդ շրջանում Վ. Ի. Լենինի նամակագրությունը հարազատների հետ շատ աննշան եր, վորովհետև նա համարյա մշտապես տեսակցություն ուներ մոր և քույրերի հետ (տես՝ Ա. Ի. Յելիզարովա-Ուլյանովայի «Վ. Ի. բանտում» հոդվածը, «Пролетарская революция» 1924 թ. № 3. և այդ հոդվածին կցված Վ. Ի. 1896 թ. 2 նամակը)։ 1905 թ. նոյեմբերից մինչև 1907 թ. դեկտեմբեր Վ. Ի. ապրում եր Լենինգրադում կամ Ֆինլանդիայում, հաճախակի տեսակցում եր հարազատներին և գրեթե նամակ չեր գրում նրանց։ Բացի դրանից, կան մի շարք նամակներ էլ՝ ուղղված Աննա Իլյինիչնային և Մարիա Ալեքսանդրովնային, առանձնապես այն շրջանից, յերբ Մարիա Իլյինիչնան ապրում եր արտասահմանում։ Այդ նամակները կհրատարակվեն լրացուցիչ կերպով։

ամբողջ ժողովածուն չի հանդիսանում: Հաճախակի քաղաքից քաղաք տեղափոխ-
վելիս բազմաթիվ խուզարկությունների և ձերբակալությունների ժամանակ,
վորոնց յենթարկվում եր մեր ընտանիքի անդամներից մերթ մեկը, մերթ մյուսը,
նրա նամակներից շատերը վոստիկանության ձեռքն են ընկել և չեն վերադարձ-
վել[1] և կամ այլ ճանապարհով կորել են: Հաճախ նամակները կորչում եյին առաքման
ժամանակ, մանավանդ իմպերիալիստական պատերազմի շրջանում: Ուստի յերբեմն
միևնույն հարցը մեկը մյուսի հետևից կրկնվում է միքանի նամակներում: Բացի
սրանից այս նամակները կրում են ցարական շրջանի վոստիկանական պայման-
ների կնիքը: Ճիշտ է, ամբողջ գործնական նամակագրությունը (բոլոր հաղոր-
դագրությունները հեղափոխական անցքերից, կուսակցական կյանքի մասին և
այլն) այն ժամանակ մենք կատարում եյինք կոնսպիրատիվ կերպով, քիմիայով՝
սովորաբար գրքերում և հանդեսներում, և առաքում ուրիշների «մաքուր» հաս-
ցեներով[2]: Սակայն անձնական կյանքն ու հեղափոխական աշխատանքն այնքան
սերտ կապված եյին միմյանց, վոր անձնական լեգալ նամակագրությունն ան-
շուշտ խիստ տուժում եր և աղարտվում մեր կողմից՝ վոստիկանական պայման-
ների պատճառով: Յեվ իզուր չեր, վոր Վ. Ի. իր քրոջը՝ Մարիա Իլյինիչնային
Վոլոգդա, վորտեղ վերջինս աքսորված եր՝ ուղարկած իր նամակներից մեկում
ասում է, թե «չափից դուրս դժվար է մեր (քո և իմ՝ մանավանդ) վիճակում
նամակագրություն պահպանել այնպես, ինչպես կուզեյինք»:

Իսկ այդ վերաբերում եր վոչ թե Մարիա Իլյինիչնային, այլ մեր ընտա-
նիքի բոլոր անդամներին, վորովհետև Վ. Ի. հարազատ եր նրանց վոչ միայն
արենակցությամբ, այլև հայացքներով, համոզմունքներով: Նրանք ամենքն ել
(Աննա Իլյինիչնայի ամուսին Մ. Տ. Յելիզարովը նույնպես) այն ժամանակ սո-
ցիալ-դեմոկրատներ եյին, հարելով կուսակցության հեղափոխական թևին, նրանք
բոլորն ել ավել կամ պակաս մասնակցում եյին հեղափոխական աշխատանքին,
աշխույժ հետաքրքրվում եյին կուսակցության կյանքով, հրճվում եյին նրա հա-
ջողություններով, ցավում նրա անհաջողությունների համար: Յեվ անգամ մեր
մայրը, վոր ծնվել է 1835 թվին և վորը 90-ական թվականների վերջին, յերբ
մեր ընտանիքի մեջ խուզարկություններն ու ձերբակալություններն սկսեցին
առանձնապես հաճախակի բնույթ ստանալ, արդեն 60-ից անցել եր, լիակատար
համակրանքով եր վերաբերվում մեր հեղափոխական աշխատանքին:

Հեղափոխականների ամբողջ լեգալ թղթակցությունը պերլյուստրացիայի
յեր յենթարկվում և հարկ եր լինում դիմել զանազան ակնարկների, պայմանա-
կան նշանների և այլն, վորպեսզի այսպես թե այնպես արծարծենք մեզ հետա-
քրքրող հարցերը, հաղորդենք այս կամ այն անլեգալ նամակն ստանալու մա-
սին, տեղեկանանք ծանոթների մասին և այլն:

Ընթերցողը կտեսնի, վոր Վ. Ի. նամակները, վորոնք անմիջորեն ուղարկ-
վում եյին մոր, քրոջ կամ յեղբոր հասցեյով, գրեթե չեն պարունակում անուններ
և ազգանուններ. այդ կարող եր անախորժության տեղիք տալ այն անձնավորու-

[1] Այսպես Ցենտրարխիվում մենք գտել ենք Վ. Ի. գրած 6 նամակներից քաղվածքներ՝ կցված Մոսկվայի ժանդարմական վարչության գործին իբրև «իրային ապացույցներ»: Այդ քաղվածքները մենք տալիս ենք հավելվածում:

[2] Պահել այդ հասցեները Ռուսաստանում, իհարկե, անհնար եր, և դրանց միայն մի մասը պահպանվել է այն պատճեններում, վոր ընդօրինակվում եյին արտասահմանում:

թյան համար, վորի ազգանունը հիշված լիներ այդպիսի նամակում: Իսկ վորևե
մեկին լավագույն դեպքում անախորժություն պատճառելու ամենանվազագույն
ցանկություն մենք անշուշտ չունեյինք: Իսկ յեթե Վ. Ի. նամակների մեջ պա-
տահում եյին այնուամենայնիվ անուններ և յերբեմն էլ ազգանուններ, ապա
դրանք միայն այն ընկերների և ծանոթների ազգանուններն եյին, վորոնց հետ
մեր ծանոթությունը, միևնույն է, հայտնի յեր վոստիկանությանը զանազան
հանգամանքների բերումով (միատեղ աքսոր միևնույն գործի համար, միևնույն
դպրոցում սովորելը և այլն), և կամ հիմնված եր զուտ գործնական հարաբերու-
թյունների վրա (հրատարակիչների, գրավաճառների ազգանուններ և այլն):
Յերբ Վ. Ի. ուզում եր փոքրիշատե լեգալ ծանոթներից մեկի մասին հաղորդել
վորևե բան, ուղարկել իր վողջույնը և այլն, նրա ազգանունը հիշատակելուց
խուսափելու համար այդպիսի նամակներում շատ հաճախ դիմում եր մակա-
նունների և բացատրությունների, վորոնք առնչություն ունեյին մեզ ծանոթ
այս կամ այն վորոշ փաստի կամ անձի հետ: Որինակ՝ Վ. Ի. «պատմաբան» է
անվանում (նկատի ունենալով նրա պատմական աշխատությունները) Ի. Ի.
Սկվորցով-Ստեպանովին, վորի հետ նա մի ժամանակ Ա. Ի. և Մ. Ի. միջոցով
աշխույժ նամակագրություն եր պահպանում[1]:

Ուղարկելով իր վողջույնը Վ. Վ. Վարովսկուն, վորը միաժամանակ Մարիա
Իլյինիչնայի հետ աքսորի մեջ եր գտնվում Վոլոգդայում, Վ. Ի. գրում է. «Բա-
րևներս լեհական բարեկամներիս և ցանկություններ, վոր ամեն կերպ ոգնեն»:
«Չինական ճամփորդ» անվան տակ հասկացվում է Ա. Ի. Սկլյարենկոն, վոր այն
ժամանակ ծառայում եր Մանջուրիայի յերկաթուղու վրա, «պարոն» ասելով,
«վորի հետ մենք անցյալ տարի նավակով զբոսնում եյինք», պետք է հասկանալ
Վ. Ա. Լևիցկուն և այլն:

Այլաբանորեն ստիպված եյինք գրել նաև՝ անլեգալ հրատարակությունները,
կոնսպիրատիվ թղթակցությունները, քիմիական նամակներ պարունակող գըր-
քերն ուղարկելու մասին և այլն:

1900 թ. դեկտեմբերի վերջերին տողերիս գրողը արտասահման մեկնող
Գ. Բ. Կրասինի միջոցով Վ. Ի.-ին ուղարկել եր «Սոցիալիստ-հեղափոխական-
ների կուսակցության մանիֆեստը»՝ կոնսպիրատիվ նպատակով խցկելով այն մի
ինչ-վոր լուսանկարներ պարունակող ալբոմի մեջ: Այդ փաթեթը շատ եր ու-
րախացրել Վ. Ի.-ին, վորն իր՝ 1904 թ. 16.I-ին գրած նամակի մեջ ասում է՝
«Շատ շնորհակալ եմ ուղարկածդ գրքերի և մանավանդ այն չափազանց գեղե-
ցիկ և հետաքրքրական լուսանկարների համար, վոր ուղարկել է քեռու աղան
Վիեննայից. շատ կուզեյի հաճախակի ստանալ այդ տեսակ նվերներ»:

«Իսկրան» և ուրիշ անլեգալ հրատարակություններ ուղարկվում եյին
Ռուսաստան, ի միջի այլոց, ծրարների մեջ «մաքուր» լեգալ հասցեներով: Այդ-
պիսի հասցեներ մենք տալիս եյինք նաև մեզ համար գրականություն ստանա-
լու նպատակով: Յեվ յերբեմն այդ առաքումների մասին մեզ հաղորդվում եր
լեգալ նամակներով, վորպեսզի մենք ժամանակին հնարավորություն ունենայինք
իրազեկ լինելու հասցեատիրոջ մոտ: Յերևի հենց այդպիսի հաղորդագրություն
են պարունակում նաև Վ. Ի. հետևյալ խոսքերը (1900 թ. 6.XII-ի նամակ).

[1] Այդ նամակագրությունից պահպանվել է դժբախտաբար մի նամակ միայն 1909 թ. 16.XII: Տես Լենինի Յերկեր, հատ. XIV, 2-րդ ռուս. հրատ., եջ 212—216:

«Ուղարկեցի քեզ, որքան հիշում եմ, իննին քեզ հետաքրքրող փոքրիկ բանը»: «Վալոդյան շատ ուրախացավ քո մեծ նամակից», գրում է Ն. Կ. 1916 թ. 8.II-ի նամակում. «Գուցե ելի մի կերպ կգրես»: Քանի որ մեր լեգալ նամակագրությունը յերբեք ընդարձակ ծավալ չուներ, իսկ իմպերիալիստական պատերազմի ժամանակ, յերբ գրվել է այս նամակը, մենք թղթակցում եյինք գլխավորապես բացիկներով և այն էլ պատվիրած, որովհետև շատ նամակներ կորչում եյին, ուստի վերոհիշյալ խոսքերն ըստ յերևույթին յենթադրում են գրքի մեջ ուղարկված անլեգալ նամակ:

Իր արտասահմանում գտնված առաջին շրջանում՝ 1900 թվին, յերբ նա դեռ չգիտեր, թե որքան հիմնավոր կլինի նրա հաստատվելն այնտեղ, նա կոնսպիրատիվ նպատակներով մեզ չեր հաղորդում իր անձնական հասցեն թղթակցելու համար, և յերբ նա ապրում եր Շվեյցարիայում կամ Մյունխենում, մենք մեր նամակներն ուղարկում եյինք Պարիզ կամ Պրագա: Օրինակ՝ 1901 թ. 2.III-ի նամակում նա հաղորդում եր իր նոր հասցեն՝ ավելացնելով, որ «տեղափոխվել է իր բնակարանատիրոջ հետ միասին»: Ֆրանց Մոդրաչեկը, որի հասցեյով ուղարկվում եյին մեր նամակները, իրոք այն ժամանակ տեղափոխվել եր նոր բնակարան, սակայն ինքը Վ. Ի. շարունակում եր ապրել Մյունխենում՝ հին բնակարանում:

Վ. Ի. բնորոշ գծերից մեկն եր՝ մեծ ճշտապահությունը և պունկտուալությունը, ինչպես և խիստ խնայողությունը միջոցներ ծախսելու մեջ առհասարակ և մանավանդ իր վրա ծախսելու մեջ: Այդ հատկությունները Վլադիմիր Իլյիչը յերևի ժառանգել եր մորից, որին նա նման եր բնավորության շատ գծերով: Իսկ մեր մայրը՝ մոր գծով գերմանուհի յեր, և բնավորության նշված գծերը հատուկ եյին նրան մեծ չափով:

Թե Վ. Ի. որ աստիճանի խնայող եր դրամի նկատմամբ և տնտեսող սեփական ծախսերի մեջ, այդ յերևում է նրա 1895 թ. հոկտեմբերի 5-ի նամակից:

«Առաջին անգամ է ահա ՍՊԲ-ում յես գործածում եմ յելեմուտից գիրք, որպեսզի տեսնեմ, թե որքան եմ յես ինչպես ծախսում: Դուրս է գալիս, որ 28.VIII-ից մինչև 27.IX-ը, մի ամսվա ընթացքում յես ծախսել եմ ընդամենը 54 ռ. 30 կ., չհաշվելով իրերի ծախսը (մոտ 10 ռ.) և մի դատական գործի համար արած ծախսը (նույնպես մոտ 10 ռ.), մի գործ, որ յես գուցե վարեմ: Ճիշտ է, այդ 54 ռուբլու մի մասն այնպիսի ծախս է, որ ամեն ամիս չպիտի կրկնվի (կալոշներ, հագուստ, գրքեր, համրիչ և այլն), սակայն այդ էլ (16 ռ.) դուրս գալուց հետո, այնուամենայնիվ, չափազանց մեծ ծախս է ստացվում՝ 38 ռ. մի ամսում: Պարզ է, որ խնայողությամբ չեմ ապրել. մենակ ձիաքարշի վրա, օրինակ, մի ամսում ծախսել եմ 1 ռ. 36 կ.: Հավանորեն կընտելանամ այստեղի կենցաղին, պակաս կծախսեմ»:

Յեվ նա իրոք տնտեսում եր, մանավանդ, յերբ սեփական վաստակ չուներ և ստիպված եր լինում դիմել «օժանդակության», ինչպես նա անվանում եր մոր օգնությունը դրամով: Խնայողություն եր անում այնչափ, որ 1895 թ. Պետերբուրգում ապրելիս չեր բաժանորդագրվում «Русские ведомости» լրագրին[1], այլ

[1] «Русские ведомости»-ն բոլոր բուրժուական լրագրերի մեջ ամենից կարգինն եր և հետաքրքրականը:

կարդում եր հանրային գրադարանում «2 շաբաթ հետո»: «Գուցե բաժանորդագրվեմ, յերբ աշխատանք ստանամ այստեղ» — գրում եր նա իր քրոջը:

Այս գիծը բնորոշ եր Վ. Ի.-ին նրա ամբողջ կյանքի ընթացքում և ցայտուն արտահայտվում եր նրա մեջ ոչ միայն այն ժամանակ, յերբ նա Ռուսաստանում աշխատանք չեր ունենում և կամ եմիգրացիայում նրան չեր հաջողվում հրատարակիչ գտնել իր գրական աշխատությունների համար (արժե հիշել այստեղ գեթ այն փաստը, որ «Ագրարային հարցը» անտիպ մնաց ամբողջ 10 տարի և միայն լույս տեսավ 1917 թվին) և Վ. Ի. յերբեմն ուղղակի կրիտիկական վիճակ եր ապրում (տես, օրինակ, Շլյապնիկովին 1916 թ. սեպտեմբերին գրած նրա նամակը), այլև այն ժամանակ, յերբ նրա նյութական դրությունը լրիվին ապահովված եր, այսինքն՝ 1917 թվին հեղափոխությունից հետո:

Յեթե կար մի բան, որի նկատմամբ Վ. Ի. դժվարանում եր խնայողություն անել, այդ գրքերն եյին: Գրքերը հարկավոր եյին նրան իր աշխատությունների համար, որպեսզի իրազեկ լիներ ռուսական և օտարերկրյա քաղաքականության ու եկոնոմիկայի և այլն և այլն:

«Ի մեծ սարսափ իմ, — գրում է նա Բեռլինից իր մորը 1895 թ. հուլիսի 29-ին,— տեսնում եմ, որ ֆինանսների կողմից յես նորից «դժվարություն» եմ ապրում. գրքեր և նման բաներ գնելու «հրապույրն» այնքան մեծ է, որ փողերը, սատանան գիտե, թե ուր են գնում»: Սակայն այդ կողմից էլ նա աշխատում եր զրկել իրեն, գլխավորապես նրանով, որ պարապում եր գրադարաններում, մանավանդ որ եմիգրացիայում այդ նրա համար աշխատանքի հանգիստ պայմաններ եր ստեղծում՝ ազատելով նրան իրարանցումից և անվերջ հոգնեցուցիչ խոսակցություններից, որ այնքան հատուկ եյին անսովոր, խորթ շրջապատից ձանձրացած և զրույցների մեջ սրտերը թեթևացնել սիրող եմիգրանտներին:

Գրադարանից, սակայն, Վ. Ի. օգտվում եր բնավ ոչ միայն արտասահմանում, այլ Ռուսաստանում ապրելիս: Պետերբուրգից մորն ուղարկած նամակներից մեկում նա գրում է, որ գոհ է իր նոր սենյակից, որը գտնվում է «կենտրոնից ոչ հեռու (օրինակ, գրադարանից 15 րոպե ճանապարհի վրա)»: Աքսոր գնալիս նա այն միքանի օրերն անգամ, որ ապրեց Մոսկվայում, օգտագործեց Ռումյանցևի թանգարանում աշխատելու համար: Իսկ յերբ ապրում եր Կրասնոյարսկում և սպասում նավագնացության սկսվելուն՝ Մինուսինսկի գավառ մեկնելու համար, Վ. Ի. պարապում եր Յուդինի գրադարանում, թեև դրա համար նա ստիպված եր ամեն օր մոտ 5 վերստ ճանապարհ անցնել:

Աքսորավայրում, որտեղ գրադարանների մասին խոսք անգամ չեր կարող լինել, Վ. Ի. աշխատում եր լրացնել այդ բացը, խնդրելով մեզ կազմակերպել նրա համար գրադարանային գրքերի առաքումը փոստով:

Միքանի այդպիսի փորձեր արվեցին, սակայն այդ առաքումը չափազանց շատ ժամանակ եր խլում (մոտ մի ամիս այնտեղ և հետ), իսկ գրադարանից գրքերը տրվում եյին որոշ ժամկետով:

Սակայն յերբեմն նման միջոցի Վ. Ի. դիմում եր և հետագայում: Այսպես՝ Աննա Իլյինիչնային 1914 թ. 31.I ուղարկած նամակում[1] նա գրում է. «1905—1908 թ. քրեական գործերի վիճակագրական տեղեկությունների ժողովածուի

[1] Նամակը չի պահպանվել, և այս քաղվածքը մենք վերցրել ենք ոստիկանության դեպարտամենտի գործից:

տուժիվ ջես կենդրոնի չգնել (չարժե, թանգ են), այլ վերցնել (Յեր[դվյալ] Հավ[ատարմատարների] Խոր[հրդի] կամ Պետ[ական] Դումայի) գրադարանից և ուղարկել մի ամսով»։

Արտասահմանում ապրելիս Վ. Ի. նույնպես միշտ օգտվում էր գրադարաններից։ Բեռլինում նա պարապում էր կայսերական գրադարանում։ Ժնևում նա ունեք էր հատուկ սերած «ակումբը» («Societé de lecture»), վորտեղ պահանջվում էր գրանցվել և մուծել վորոշ՝ ճիշտ է, շատ աննշան՝ անդամավճար այդ «ակումբի» գրադարանում պարապելու իրավունք ձեռք բերելու համար։ Պարիզում նա աշխատում էր Ազգային գրադարանում, թեև դանդատվում էր, վոր նա «վատ է կազմակերպված», Լոնդոնում Բրիտանական թանգարանում և միայն Մյունխենում ապրելիս ցավում էր, վոր «այստեղ գրադարան չկա», իսկ Կրակովում նա քիչ էր օգտվում գրադարանից։ Մ. Ա. Ուլյանովային 1914 թ. 22.IV նամակում նա գրում է. «Այստեղ (Կրակովում) գրադարանը վատ է և չափազանց անհարմար, սակայն յես ինքս գրեթե չեմ լինում այնտեղ»։ Լրագրական աշխատանքը («Պրավդայում»), բազմատեսակ հարաբերությունների ընկերների հետ, վորոնք գալիս եյին Կրակով ավելի մեծ թվով, քան Ֆրանսիա կամ Շվեյցարիա, Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի աշխատանքի ղեկավարումը, կուսակցական կոնֆերանսները և խորհրդակցությունները և այլն չափազանց շատ ուժ եյին խլում, վորպեսզի հնարավոր լիներ շատ ժամանակ նվիրել գիտական աշխատանքին։ Սակայն այն ժամանակ էլ «հաճախ մեր միտն էր գալիս—գրում է Վ. Ի.—Ժնևը, վորտեղ կարելի յեր ավելի՛ լավ աշխատել, կար հարմար գրադարան, կյանքը պակաս ջղային էր և պակաս անմիտ»։

Յեվ յերբ իմպերիալիստական պատերազմի սկզբում Վ. Ի. ձերբակալվում է Գալիցիայում և ապա նորից ընկնում Շվեյցարիա, նա գրում է. «Լավ են այստեղի գրադարանները, և գրքերից օգտվելու տեսակետից գործս բավական հաջող է։ Մինչև իսկ զուրեկան է կարդալը՝ առօրյա լրագրական աշխատանքի շրջանից հետո»։ Իսկ հետո Ն. Կ.-ի հետ Բեռնից գնում է Ցյուրիխ՝ ի միջի այլոց, «այնտեղի գրադարաններում պարապելու համար» (շարունակելով, սակայն, նույնչափ լարված քաղաքական կուսակցական աշխատանքը, վորպիսի հանգամանքը ցայտուն լուսաբանություն է գտնում, ի միջի այլոց, ընկ. ընկ. Կարպինսկու և Ռավիչի հետ նրա այդ շրջանում ունեցած նամակագրության մեջ, վոր նորերս հրատարակված է XI «Լենինյան ժողովածվում»), վորոնք, նրա ասելով, «Բեռնի գրադարաններից ավելի լավ են»։ Սակայն յեթե տարբերկրյա գրքերը կարդալու, լրագրեր և հանդեսներ նայելու հնարավորության տեսակետից Վ. Ի. արտասահմանում լավ պայմանների մեջ էր՝ հաճախելով այդ նպատակով գրադարանները, ապա ռուսական գրքերի պակասությունը մշտապես զգացվում էր ուժեղ կերպով։ «Գերմաներեն գրքերն այստեղ յես հեշտությամբ կճարեմ, — գրում է նա իր 1902 թ. 2.IV նամակում,— նրանց պակասությունը չեմ զգում։ Իսկ ռուսերեն գրքերն այստեղ պակասում են»։ «Նոր գրքեր քիչ եմ տեսնում», գրում է նա իր 1900 թ. 6.IV նամակում։ Յեվ անշուշտ այն հանգամանքը, վոր Վ. Ի. հաճախակի ձեռքի տակ չէր ունենում իրեն անհրաժեշտ գիրքը, քիչ չէր խանգարում նրա աշխատանքին, յերբ նա գտնվում էր արտասահմանում։ Այս պատճառով հարազատներին գրած նամակների մեջ նա մշտապես խնդրում է ուղարկել այս կամ այն գրքերը, վորոնք անհրաժեշտ են իրեն աշխատանքի համար (վիճակագրության, հողային հարցի, փիլիսոփայության և այլ խնդիրների վերաբերյալ գրքեր), նաև նոր հրատարակություններ, ժուռնալներ, բելլե-

տրիստիկա։ Նմանապես այդ նամակների հիման վրա էլ վորոշ չափով կարող ենք գտնել, թե այս կամ այն ժամանակաշրջանում գիտելիքների վո՛ր ճյուղերի վերաբերյալ գրականությամբ էր հետաքրքրվում Վ. Ի. և իր վո՛ր աշխատությունների համար է օգտագործել նա այդ գրականությունը։

Այդ գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում զանազան վիճակագրական ժողովածուներին։

Թե ինչ մեծ նշանակություն էր տալիս Վ. Ի. վիճակագրությանը՝ «ճշգրիտ փաստերին, անվիճելի փաստերին», այդ ակնառու յերևում է նրա աշխատություններից, այն սևագրություններից, քաղվածքներից և հաշվարկումներից, վորոնք նախորդել են այդ աշխատություններին։ Այդ տեսակետից բնորոշ է և նրա անավարտ մնացած ու չհրատարակված աշխատությունը՝ «Վիճակագրություն և սոցիոլոգիա»—Պ. Պիրյուչեվ (նոր կեղծանուն, վոր Վ. Ի. ընդունել էր այդ աշխատության հրատարակումը հեշտացնելու համար), վորը նվիրված է «Ազգային շարժումների նշանակության ու դերին, ազգայինի և միջազգայինի հարաբերակցության» խնդրին։

Յեվ այդ աշխատության մեջ մենք հանդիպում ենք հետևյալ տողերին.

«Հասարակական յերևույթների բնագավառում,—գրում է Վ. Ի.,—չկա մի ուրիշ ավելի տարածված և ավելի սնանկ միջոց, քան առանձին փաստիկներ դուրս կորզելը, օրինակներով խաղը։ Վոչ մի դժվարություն չի ներկայացնում օրինակներ հավաքելն ընդհանրապես, սակայն այդ վոչ մի նշանակություն էլ չունի կամ այդ նշանակությունը հաճախ բացասական է, վորովհետև ամբողջ բանն առանձին դեպքերի պատմական կոնկրետ իրադրության մեջ է։ Փաստերը յեթե վերցվում են իրենց ամբողջությամբ, իրենց կապակցությամբ՝ վոչ միայն «համառ», այլև անպայման ապացուցիչ բան են։ Փաստիկները, յերբ նրանք վերցվում են ամբողջից դուրս, կապակցությունից դուրս, յերբ նրանք հատ ու կտոր ու կամայական են, հենց հանդիսանում են միմիայն խաղալիք և կամ մի այլ ավելի վատ բան»... «Պետք է փորձել ճշգրիտ և անվիճելի փաստերից ստեղծել այնպիսի հիմք, վորի վրա հնարավոր լինի հենվել, վորի հետ հնարավոր լինի համադրել այն «ընդհանուր» կամ «օրինակելի» դատողություններից յուրաքանչյուրը, վորոնք այնքան չափից դուրս ի չարն են գործ գնում միքանի յերկիրներում, մեր օրերում։ Վորպեսզի այդ իսկապես հիմք լինի, անհրաժեշտ է վերցնել վոչ առանձին հարցեր, այլ քննվող հարցի վերաբերյալ բոլոր փաստերի ամբողջությունը, առանց մի հատիկ բացառության, ապա հակառակ դեպքում՝ անխուսափելի կերպով պիտի ծագի կասկած, և միանգամայն օրինական կասկած, վոր փաստերը հավաքված կամ ջոկված են կամայական կերպով, վոր փոխանակ պատմական յերևույթների իրենց ամբողջությամբ վերցրած օբյեկտիվ կապի և փոխադարձ կախման մատուցվում է «սուբյեկտիվ» թխվածք՝ գուցե կեղտոտ գործն արդարացնելու համար։ Չե՞ վոր այդ պատահում է... ավելի հաճախ, քան մենք կարծում եյինք»։

1902 թ. Վ. Ի. խնդրում է ուղարկել իրեն՝ արտասահման Սիբիրում ունեցած գրքերից՝ «ամբողջ վիճակագրությունը»[1], վորին, ինչպես նա գրում է իր

[1] Այդ վիճակագրությունը, վոր Վ. Ի. օգտագործել է իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի համար, Լենինի Ինստիտուտն ստացել է արտասահմանից 1925 թ. նրա մնացած գրքերի հետ միասին, և այդ գրքերի քաղվածքներից ու նրանց մեջ կատարած նկատողություններից կարելի յե մի շարք արժեքավոր դատողություններ էլ անել Իլյիչի աշխատանքի մասին։

առթիվ յես կհանգրեյի չգնել (չարժե, թանգ են), այլ վերցնել (Եր[դվյալ] Հավ[ատարմատարների] Խոր[հրդի] կամ Պետ[ական] Դումայի) գրադարանից և ուղարկել մի ամսով»:

Արտասահմանում ապրելիս Վ. Ի. նույնպես միշտ ոգտվում էր գրադարաններից: Բեռլինում նա պարապում էր կայսերական գրադարանում: Ժնևում նա անդամ էր հատուկ ստեղծված «ակումբը» («Societé de lecture»), վորտեղ պահանջվում էր գրանցվել և մուծել վորոշ՝ ճիշտ է, շատ աննշան՝ անդամավճար այդ «ակումբի» գրադարանում պարապելու իրավունք ձեռք բերելու համար: Պարիզում նա աշխատում էր Ազգային գրադարանում, թեև գանգատվում էր, վոր նա «վատ է կազմակերպված», Լոնդոնում Բրիտանական թանգարանում և միայն Մյունխենում ապրելիս ցավում էր, վոր «այստեղ գրադարան չկա», իսկ Կրակովում նա քիչ էր ոգտվում գրադարանից: Մ. Ա. Ուլյանովային 1914 թ. 22.IV նամակում նա գրում է. «Այստեղ (Կրակովում) գրադարանը վատ է և չափազանց անհարմար, սակայն յես ինքս գրեթե չեմ լինում այնտեղ»: Լրագրական աշխատանքը («Պրավդայում»), բազմատեսակ հարաբերությունները ընկերների հետ, վորոնք գալիս եյին Կրակով ավելի մեծ թվով, քան Ֆրանսիա կամ Շվեյցարիա, Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի աշխատանքի ղեկավարումը, կուսակցական կոնֆերանսները և խորհրդակցությունները և այլն չափազանց շատ ուժ եյին խլում, վորպեսզի հնարավոր լիներ շատ ժամանակ նվիրել գիտական աշխատանքին: Սակայն այն ժամանակ էլ «հաճախ մեր միտն էր գալիս—գրում է Վ. Ի.—Ժնևը, վորտեղ կարելի յեր ավելի լավ աշխատել, կար հարմար գրադարան, կյանքը պակաս ջղային էր և պակաս անժամ»:

Ցեվ յերբ իմպերիալիստական պատերազմի սկզբում Վ. Ի. ձերբակալվում է Գալիցիայում և ապա նորից ընկնում Շվեյցարիա, նա գրում է. «Լավ են այստեղի գրադարանները, և գրքերից ոգտվելու տեսակետից գործս բավական հաջող է: Մինչև իսկ զուրեկան է կարդալը՝ առորյա լրագրական աշխատանքի շրջանից հետո»: Իսկ հետո Ն. Կ.-ի հետ Բեռնից գնում է Ցյուրիխ՝ ի միջի այլոց, «տեղական գրադարաններում պարապելու համար» (շարունակելով, սակայն, նույնչափ լարված քաղաքական կուսակցական աշխատանքը, վորպիսի հանգամանքը ցայտուն լուսաբանություն է գտնում, ի միջի այլոց, ընկ. ընկ. Կարպինսկու և Ռավիչի հետ նրա այդ շրջանում ունեցած նամակագրության մեջ, վոր նորերս հրատարակված է XI «Լենինյան ժողովածուում»), վորոնք, նրա ասելով, «Բեռնի գրադարաններից ավելի լավ են»: Սակայն յեթե ոտարերկրյա գրքերը կարդալու, լրագրեր և հանդեսներ նայելու հնարավորության տեսակետից Վ. Ի. արտասահմանում լավ պայմանների մեջ էր՝ հաճախելով այդ նպատակով գրադարանները, ապա ռուսական գրքերի պակասությունը մշտապես զգացվում էր սուր կերպով: «Գերմաներեն գրքերն այստեղ յես հեշտությամբ կճարեմ,—գրում է նա իր 1902 թ. 2.IV նամակում,—նրանց պակասությունը չեմ զգում: Իսկ ռուսերեն գրքերն այստեղ պակասում են»: «Նոր գրքեր քիչ եմ տեսնում», գրում է նա իր 1900 թ. 6.IV նամակում: Ցեվ անշուշտ այն հանգամանքը, վոր Վ. Ի. հաճախակի ձեռքի տակ չէր ունենում իրեն անհրաժեշտ գիրքը, քիչ չէր խանգարում նրա աշխատանքին, յերբ նա գտնվում էր արտասահմանում: Այս պատճառով հարազատներին գրած նամակների մեջ նա մշտապես խնդրում է ուղարկել այս կամ այն գրքերը, վորոնք անհրաժեշտ են իրեն աշխատանքի համար (վիճակագրության, հողային հարցի, փիլիսոփայության և այլ խնդիրների վերաբերյալ գրքեր), նաև նոր հրատարակություններ, ժուռնալներ, բյուլե-

տեններ: Նմանապես այդ նամակների հիման վրա էլ վորոշ չափով կարող ենք գտնել, թե այս կամ այն ժամանակաշրջանում գիտելիքների վո՛ր ճյուղերի վերաբերյալ գրականությամբ էր հետաքրքրվում Վ. Ի. և իր վո՛ր աշխատությունների համար է ոգտագործել նա այդ գրականությունը:

Այդ գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում զանազան վիճակագրական ժողովածուներին:

Թե ինչ մեծ նշանակություն էր տալիս Վ. Ի. վիճակագրությանը՝ «ճշգրիտ փաստերին, անվիճելի փաստերին», այդ ակնառու յերևում է նրա աշխատություններից, այն սևագրություններից, քաղվածքներից և հաշվարկումներից, վորոնք նախորդել են այդ աշխատություններին: Այդ տեսակետից բնորոշ է և նրա անավարտ մնացած ու չհրատարակված աշխատությունը՝ «Վիճակագրություն և սոցիոլոգիա»—Պ. Պիրյուչեվ (նոր կեղծանուն, վոր Վ. Ի. ընդունել էր այդ աշխատության հրատարակումը հեշտացնելու համար), վորը նվիրված է «Ազգային շարժումների նշանակության ու դերին, ազգայինի և միջազգայինի հարաբերակցության» խնդրին:

Ցեվ այդ աշխատության մեջ մենք հանդիպում ենք հետևյալ տողերին.

«Հասարակական յերևույթների բնագավառում,—գրում է Վ. Ի.,—չկա մի ուրիշ ավելի տարածված և ավելի սնանկ միջոց, քան առանձին փաստիկներ դուրս կորզելը, որինակներով խաղը: Վոչ մի դժվարություն չի ներկայացնում որինակներ հավաքելն ընդհանրապես, սակայն այդ վոչ մի նշանակություն էլ չունի կամ այդ նշանակությունը հաճախ բացասական է, վորովհետև ամբողջ բանն առանձին դեպքերի պատմական կոնկրետ իրադրության մեջ է: Փաստերը յեթե վերցվում են իրենց ամբողջությամբ, իրենց կապակցությամբ՝ վոչ միայն «համառ», այլև անպայման ապացուցիչ բան է: Փաստիկները, յերբ նրանք վերցվում են ամբողջից դուրս, կապակցությունից դուրս, յերբ նրանք հատ ու կտոր ու կամայական են, հենց հանդիսանում են միմիայն խաղալիք և կամ մի այլ ավելի վատ բան»... «Պետք է փորձել ճշգրիտ և անվիճելի փաստերից ստեղծել այնպիսի հիմք, վորի վրա հնարավոր լինի հենվել, վորի հետ հնարավոր լինի համադրել այն «ընդհանուր» կամ «որինակելի» դատողություններից յուրաքանչյուրը, վորոնք այնքան չափից դուրս ի չարն են գործ դնում միքանի յերկրներում, մեր որերում: Վորպեսզի այդ իսկապես հիմք լինի, անհրաժեշտ է վերցնել վոչ առանձին հարցեր, այլ քննվող հարցի վերաբերյալ բոլոր փաստերի ամբողջությունը, առանց մի հատիկ բացառության, ապա հակառակ դեպքում՝ անխուսափելի կերպով պիտի ծագի կասկած, և միանգամայն որինական կասկած, վոր փաստերը հավաքված կամ ջոկված են կամայական կերպով, վոր փոխանակ պատմական յերևույթների իրենց ամբողջությամբ վերցրած ոբյեկտիվ կապի և փոխադարձ կախման մատուցվում է «սուբյեկտիվ» թխվածք՝ գուցե կեղտոտ գործն արդարացնելու համար: Չէ վոր այդ պատահում է... ավելի հաճախ, քան մենք կարծում եյինք»:

1902 թ. Վ. Ի. խնդրում է ուղարկել իրեն՝ արտասահման Սիբիրում ունեցած գրքերից՝ «ամբողջ վիճակագրությունը»[1], վորին, ինչպես նա գրում է իր

[1] Այդ վիճակագրությունը, վոր Վ. Ի. ոգտագործել է իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի համար, Լենինի Ինստիտուտն ստացել է արտասահմանից 1925 թ. նրա մնացած գրքերի հետ միասին, և այդ գրքերի քաղվածքներից ու նրանց մեջ կատարած նկատողություններից կարելի յե մի շարք արժեքավոր դատողություններ էլ անել Իլյիչի աշխատանքի մասին:

1902 թ. 2.IV նամակում), «յես մի քիչ սկսում եմ կարոտել»... Հետագայում զանազան քաղաքներից և ավելի կանոնավոր կերպով վիճակագրական նյութեր ստանալու նպատակով Վ. Ի. գրում է նույնիսկ մի հատուկ դիմում—խնդիր[1] ուղղված 1908—1909 թ. ձմեռը Մոսկվայում տեղի ունեցած բժիշկների և բնագետների համագումարի վիճակագրագետներին (այդ համագումարում կար վիճակագրական սեկցիա): Այդ դիմումին արձագանքեցին մի ամբողջ շարք գավառական վիճակագիրներ, և իր 1909 թ. 2.I նամակում Վ. Ի. գրում է. «Ստացա մի նամակ ևս Ռյազանից վիճակագրության մասին,— այդ հրաշալի բան է, ըստ յերևույթին շատերից ոգնություն կունենամ»:

1908 թվին, յերբ Վ. Ի. աշխատում էր «Մատերիալիզմի և էմպիրիոկրիտիցիզմի» վրա, նա իր համար դուրս է գրում պրոֆ. Չելպանովի գիրքը Ավենարիուսի և նրա դպրոցի մասին, «Իմմանենտ փիլիսոփայության մասին» գրքույկը և այլն:

Իր այդ աշխատության մասին նա գրում է իր քրոջը. «Շատ աշխատանք եմ թափել մախիստների վրա և կարծում եմ, վոր բոլոր նրանց (և «էմպիրիոմոնիզմի» նույնպես) անասելի գռեհկությունները պարզեցի»:

Հարցնելով՝ ստացվե՞լ է արդյոք նորագույն կապիտալիզմի վերաբերյալ իր ձեռագիրը («Իմպերիալիզմն իբրև կապիտալիզմի բարձրագույն ստադիա»), Վ. Ի. գրում է. «Այդ տնտեսագիտական աշխատությանը յես առանձնապես մեծ նշանակություն եմ տալիս և հատկապես կուզեյի հրապարակված տեսնել այն իր ամբողջությամբ» (1916 թ. 22. X նամակը): Ինչպես հայտնի յե, նրա այս վերջին ցանկությունը չիրականացավ (թեև Վ. Ի. «բոլոր ուժերով հարմարվում էր» «խստություններին»,—ինչպես նա գրում էր Մ. Ն. Պոկրովսկուն 1916 թ. 17.VII ուղղած նամակում)՝ Վ. Ի. աշխատությունը յենթարկվեց մի շարք փոփոխությունների և կրճատումների և միայն տաս տարի անց լույս տեսավ իր նախնական ձևով:

Վ. Ի. հարազատներին գրած նամակներից պարզվում է, թե ինչ կապակցությամբ Վ. Ի. ձեռնարկել է իր (դեռևս չհրատարակված) աշխատությունը՝ «Արդի յերկրագործության կապիտալիստական կառուցվածքը» վերնագրով: Իր 1916 թ. 22.X նամակում նա գրում է քրոջը. «Դու գրում ես, վոր «Ագրարային հարցը» հրատարակիչը կուզեր լույս ընծայել գրքի և վոչ բրոշյուրի ձևով»: Յես այդ այնպես եմ հասկանում, վոր յես պիտի ուղարկեմ շարունակությունը (այսինքն՝ Ամերիկայի մասին իմ գրվածքին իբրև լրացում գրեմ իմ խոստացածը Գերմանիայի մասին նույնպես): Այդ աշխատանքին կձեռնարկեմ, հենց վոր ավարտեմ այն, ինչ վոր պիտի գրեմ հին հրատարակչից իմ ստացած ավանսը մարելու համար»: Հիշյալ աշխատության ձեռագիրը, վոր պահվում է Ինստիտուտում, ավարտված չէ, Վ. Ի.-ին ըստ յերևույթին հեղափոխությունը «խանգարեց» ավարտելու այն:

Ընթերցողին առաջարկվող Վ. Ի. նամակները վորոշ պատկեր են տալիս նաև գրական աշխատանքի պայմանների և այն դժվարությունների մասին, վորոնց հետ կապված էր այդ աշխատանքի արդյունքների հրատարակությունը: Մենք նկատի ունենք նրա լեգալ աշխատությունները: Այդ տեսակետից Վ. Ի. ամբողջ

[1] Դրա հրատարակումն այստեղ նույնպես հնարավոր յեղավ Մոսկվայի ժանդարմերիայում պահված լինելու շնորհիվ, ժանդարմերիա, վորը պահպանել է այն իր գործերի մեջ:

նախահեղափոխական շրջանում (բացառյալ առաջին հեղափոխության և „Звезда“-յի ու „Правда“-յի ժամանակաշրջանները՝ 1912—1914 թ. թ., յերբ նա հնարավորություն ուներ աշխատելու լեգալ լրագրերի համար և յերբ յերևան էին գալիս, թեկուզ կարճ ժամանակով, նաև սեփական լեգալ հրատարակությունները) գտնվում է աննպաստ պայմաններում վոչ միայն այն պատճառով, վոր արտասահմանում, որինակ, նա միշտ աշխատանքի համար անհրաժեշտ ռուսերեն գրքերի և այլ նյութերի պակասություն էր զգում:

Մեծ դժվարություններ էյին ներկայացնում գրաքննության պայմանները. Վ. Ի. հոդվածները կրճատվում և աղավաղվում էյին (ինչպես, որինակ, «Վոչ-քննադատական քննադատությունը» հոդվածը), գրքերը բռնագրավվում էյին («Ագրարային հարցը», 2-րդ հատոր) և այլն և այլն: Սակայն բացի դրանից մեծ դժվարություն էր ներկայացնում և նրա՝ Ռուսաստանից կտրված լինելը, վորպիսի հանգամանքը հաճախ նրան զրկում էր հրատարակչությունների հետ անմիջական կապեր հաստատելու հնարավորությունից և այլն: Բնորոշ են, որինակ, նրա բազմաթիվ փորձերը աշխատանք ձեռք բերելու Գրանատի Էնցիկլոպեդիկ բառարանի համար: «Լավ կլիներ աշխատանք ունենալ Էնցիկլոպեդիկ բառարանի համար,— գրում է նա իր քրոջը 1914 թ. դեկտեմբերի 22-ին,— սակայն այդ յերևի հեշտ չի սարքել, յեթե առիթ չունենամ ծանոթանալու խմբագրության քարտուղարի հետ»: Ծանոթանալու առիթ նա չունեցավ, և յերբ Վ. Ի. անմիջորեն դիմում էր Գրանատի խմբագրության, նա յերբեմն պատասխան անգամ չէր ստանում իր նամակներին և կամ ստանում էր մեծ ուշացումներով: «Չի՞ կարելի արդյոք ստանալ մի աշխատանք էլ «Էնցիկլոպեդիկ բառարանի» համար,— գրում է նա քրոջը 1915 թ. փետրվարին: — Այդ մասին յես գրել եմ քարտուղարին, սակայն նա չի պատասխանում[1]: «Յես դժբախտաբար բոլորովին կտրված եմ այժմ հրատարակչական կապերից»,— գրում է նա 1912 թվին:

Յեվ յեթե չլիներ այն մեծ ոգնությունը, վոր Վ. Ի.-ին ցույց էյին տալիս նրա ընկերներն ու ազգականները՝ հրատարակիչներ գտնելու, նրա աշխատությունները սրբագրելու համար և այլն, նրա գրվածքները լույս ընծայելու հետ կապված դժվարություններն ավելի մեծ պիտի լինեյին: Սակայն քույրերն ու մայրը այդ տեսակետից միշտ չէյին կարող ոգնության գալ Վ. Ի.-ին, մանավանդ յերբ նրանք գտնվում էյին բանտում կամ աքսորի մեջ: Յեվ 1904 թվին, որինակ, նա խնդրում է մորից տալ իրեն Մարկ Տիմոֆեյեվիչի հասցեն, վորի հետ նա «մի գրական գործ» ունի (1904 թ. 20.I նամակը):

Սակայն յեթե Վ. Ի. ընդունակ էր սիստեմատիկ, տոկուն և չափազանց արդյունավետ կերպով աշխատել, նա գիտեր և հանգստանալ, յերբ դրա համար, իհարկե, հնարավորություն էր ներկայանում: Ամենալավ հանգիստը նրա համար լինում էր բնությանը մոտիկ և մարդկանցից հեռու գտնվելը: «Այստեղ (Ստիրսուդդենում, Ֆինլանդիայում, վորտեղ նա հանգստանում էր, վերադառնալով «սաստիկ հոգնած»՝ 5-րդ կուսակցական համագումարից.— Մ. Ու.) կա հրաշալի հանգիստ, լող, զբոսանք, մենակություն, պարապություն: Մենակությունը և անգործությունը ինձ համար ամենից լավն է»: Հանգիստն այնտեղ, ուր Լիդիա Միխայլովնա Կնիպովիչը շրջապատել էր նրան բացառիկ ուշադրու-

[1] Վ. Ի. իր նամակների պատասխանը չէր ստանում նաև մյուս հրատարակիչներից: Այդ առթիվ տես՝ Լենինի 3-րդ նամակը (01 թ. 27.IX) Լ. Ի. Ակսելրոդին — «Լենինյան ժողովածու» XI ռուս. հրատ. էջ 326:

թյամբ և խնամքով, նախապես վոր հրաշալի յեր, և հետագայում նա հիշում եր այդ մասին, յերբ ծանր տիֆից նոր առողջացած Մարիա Իլյինիչնային նա գրում ե՝ «Այ թե քեզ ուղարկեյինք Սալիսուզդեն»։

Վ. Ի. շատ եր սիրում բնությունը և նրա նամակներում միշտ հանդիպում ենք բնության գեղեցկության նկարագրություններ, ուր ել վոր նրան բախտը գցեր։ «Ծովն և այստեղի բնությունը» — գրում ե նա մորը 1895 թ. Շվեյցարիա ուղևորվելիս, — յես հիանում եմ նրանով անդադար։ Այն գերմանական կայարանից, վորտեղից յես գրեցի քեզ, իսկույն սկսվեցին Ալպերը, յերևացին լճեր, այնպես վոր դժվար եր աչք հեռացնել վագոնի պատուհանից»։ «Զբոսնում եմ, — այժմ վատ չե այստեղ զբոսնել, — գրում ե նա Մարիա Ալեքսանդրովնային, — Պոդոլսկում նույնպես (ինչպես և նրա շրջակայքում) ըստ յերևույթին կան բավական գեղեցիկ վայրեր»։ «Այս օրերս զբոսնում եյի մի գեղեցիկ լճի վրա և լավ յեղանակին սքանչանում եյի հրաշալի տեսարաններով», — հաղորդում ե նա արտասահմանից։ «Այս օրերս մենք Նադյայի և մի բարեկամիս հետ միասին հիանալի զբոսանք կատարեցինք դեպի Սալևը։ Ներքևում, ամեն տեղ ժընևում մառախուղ ե, մռայլ ե, իսկ սարի վրա (ծովի մակերևույթից մոտ 1200 մետր բարձր) հրաշալի արև, ձյուն, պստիկ սահնակներ. ասես ռուսական ձմեռային լավ օր լիներ։ Իսկ ներքև սարի տակ, — la mer du brouillard մառախուղի ամպերի մի իսկական ծով, վորոնց հետև վոչինչ չի տեսնվում. սարերն են միայն նշմարվում, այն ել միայն շատ բարձր սարերը։ Փոքր Սալևն անգամ (900 մետր) ամբողջովին մառախուղի մեջ ե»։ — «Մենք Նադյայի հետ ման յեկանք վոտքով և կառքով շրջակա բազմաթիվ վայրերում, գտանք և շատ գուրեկան տեղեր», — կարդում ենք 1902 թ. 27.IX նամակում։ Իրավացի յեր յերևի Վ. Ի., յերբ գրում եր. «Միակն այստեղի ընկերներից, վոր ուսումնասիրում ենք քաղաքի ամբողջ շրջակայքը, մենք ենք։ Գտնում ենք զանազան «գյուղական» կածաններ, ծանոթ ենք մոտակա վայրերին, պատրաստվում ենք և ավելի հեռավոր զբոսանքներ կատարելու»։

Յեթե չեր հաջողվում ամառը միառժամանակով քաղաքից դուրս գալ, վորտեղ (քաղաքից դուրս) իսկույն «գյուղական կյանք» եր հաստատվում («վաղ եյինք վերկենում և գրեթե աքաղաղների հետ միաժամանակ պառկում»), Վ. Ի. և Ն. Կ. յերբ ապրում եյին Շվեյցարիայում, յերբեմն վոտքով բարձրանում եյին սարերը։ Այսպիսի մի ճամփորդության նկարագրությունը մենք գտնում ենք Նադեժդա Կոնստանտինովնայի 1904 թ. 2.VII նամակի մեջ՝ գրած Մարիա Ալեքսանդրովնային։ «Մոտ մի շաբաթ ե արդեն, վոր մենք դուրս յեկանք ժընևից, — կարդում ենք այդ նամակում, — և հանգստանում ենք բառիս բուն նշանակությամբ։ Գործերն ու հոգսերը թողել ենք ժընևում, իսկ այստեղ քնում ենք օրական 10-ական ժամ։ Լողանում ենք, զբոսնում ենք։ Վալոդյան նույնիսկ լրագրեր կարդալն չի կարդում. առհասարակ գրքեր մենք վերցրել եյինք մեզ հետ նվազագույն քանակով և դրանք ել վաղը ժընև ենք ուղարկում, իսկ մենք ինքներս առավոտյան 4-ին վերցնում ենք պարկերը և մի յերկու շաբաթով ուղևորվում սարերը։ Գնալու յենք դեպի Ինտերլակեն, այնտեղից դեպի Լյուցերն. կարդում ենք Բեդեկկեր և մանրազնին խորհրդածում մեր ճամփորդության շուրջը... Վալոդյայի հետ մենք պայման ենք կապել՝ վոչ մի գործի մասին բնավ չխոսել. գործը արջ չի, վոր անտառ փախչի. վոչինչ չխոսել և ըստ հնարավորի չմտածել»։

Սակայն այդպիսի ճամփորդությունները հազվագյուտ եյին և ձեռնարկվում

եյին միայն այն ժամանակ, յերբ աշխատանքը և ֆրակցիոն տենդը արդեն չափազանց վատ եյին անդրադառնում առողջության և ջղերի վրա, ինչպես 1903—1904 թվի ձմեռվանից հետո, վոր հաջորդեց կուսակցության 2-րդ համագումարին և նրա պառակտմանը։ Իսկ սովորաբար, յերբ Վ. Ի. ամառը գյուղ եր մեկնում, նա այնտեղ ել եր շարունակում աշխատանքը, յեթե այդ հարկավոր եր միքանի որ լիովին հանգստանալուց հետո։ Իսկ յեթե քաղաքից մեկնելը անհնար եր դառնում և կամ այդ մեկնումը կարճատև եր լինում, ճամփորդությունները կատարվում եյին սովորաբար կիրակի օրերը քաղաքի շրջակայքում, յերբեմն դեպի սարերը, վոտքով կամ հեծանիվներով։ «Ինչ-վոր անկախ մեր կամքից ամեն ինչ դուրս ե գալիս արտասահմանյան ձևով, — զբոսնում ենք հենց կիրակի օրերը, թեև այդ անհարմար ե ամեն տեղ լիքը լինելու պատճառով» — գրում ե Վ. Ի. մորը 1903 թ. 29.III։ Հավաքվելով նման զբոսանքի, սովորաբար իրենց հետ վերցնում եյին ճաշի տեղ բուտերբրոդ և մեկնում եյին ամբողջ օրով։ Զարմանալի չե, վոր Վ. Ի. և Ն. Կ. դասվել եյին «զբոսականների» («պրոգուլիստների», զբոսասերների) կուսակցության շարքերը, մինչդեռ մյուս ընկերները «սինեմիստների» («սինեմա»[1] հաճախել սիրողների), կուսակցության մեջ եյին, ինչպես հանաքով անվանում եյին իրար։

Յեվ իրոք, Վ. Ի. քիչ եր սիրում զանազան զվարճությունները, վորոնք հանգիստ եյին պատճառում մյուս ընկերներին լարված աշխատանքից հետո։ Նա յերբեք, կարծեմ, կինո չեր հաճախում, մանավանդ յերբ արտասահմանում եր ապրում, շատ սակավ եր լինում և թատրոնում։ Յերբ առաջին անգամ ուղևորվեց արտասահման, Բեռլինում նա գնաց «Ջուլհակների» ներկայացմանը։ Հաճախում եր թատրոն նաև, յերբ ապրում եր արտասահմանում եմիգրացիայում. սակայն ավելի շատ՝ յերբ այնտեղ ապրում եր մենակ «բավական միայնակ» (այսինքն՝ առանց ընտանիքի) կամ յերբ լարված աշխատանքից հետո վորևե գործով նրան հաջողվում եր ուղևորվել մեծ քաղաք և նա իր այդ ուղևորությունն օգտագործում եր նաև մի քիչ իրեն «թափ տալու» համար։ Սակայն արտասահմանյան թատրոնները Վ. Ի.-ին քիչ եյին բավարարում իրենց բեմադրություններով (յերբեմն նրանք Ն. Կ. հետ հեռանում եյին հենց առաջին գործողությունից հետո, վորպիսի դեպքերը ընկերներին առիթ եյին տալիս հանաքով նախատելու նրանց՝ զուր տեղը փող ծախսելու համար), և թատրոնի հետագա հաճախումներից միայն «Կենդանի դիակի» բեմադրությունն եր կարծես, վոր տպավորություն գործեց նրա վրա։ Սակայն նրան շատ եր դուր յեկել Գեղարվեստական թատրոնը, ուր նա յեղել եր մինչև եմիգրացիան, Մոսկվայում յեղած ժամանակ, Լալայանցի («Կոլումբի») հետ միասին, և 1901 թ. փետրվար ամսին նա գրում եր իր մորը, վոր «մինչև օրս հաճույքով ե մտաբերում» իր այդ հաճախումը։ «Կուզեյի — կարդում ենք նրա 1903 թ. 4.II նամակում — Գեղարվեստական թատրոնում տեսնել „На дне“ («Հատակում») պիեսը»։ Տեսնել այդ պիեսը նրան հաջողվում ե արդեն շատ տարիներ անց, հեղափոխությունից հետո, յերբ նա ապրում եր Մոսկվայում։

Համեմատաբար քիչ եր հաճախում Վ. Ի. նաև համերգներ, թեև սիրում եր յերաժշտությունը։ «Այս օրերս առաջին անգամ այս ձմեռվա ընթացքում մենք ներկա եյինք մի լավ համերգի և շատ գոհ մնացինք, մանավանդ Չայկովսկու վերջին սիմֆոնիայից (Symphonie pathétique)», — կարդում ենք նույն նամա-

[1] «Սինեմա» — կինեմատոգրաֆ։

կում։ «Այս օրերս յեղա օպերայում, մեծ հաճույքով լսում եյի «Ժիդովկան»։ Այս օպերան յես լսել եյի մի անգամ Կազանում (յերբ յերգում եր Զակրժևսկին), կարծում եմ մոտ 13 տարի սրանից առաջ,— գրում եր նա մորը 1901 թվի 9.II,— սակայն միքանի մոտիվներ մնացել են այն օրվանից հիշողությանս մեջ»։ Յեվ հետագայում հաճախակի նա շվվացնում եր այդ մոտիվները (ատամները սեղմած շվվացնելու իր յուրահատուկ մաներով)։ Հետագայում, արտասահմանում Վ. Ի. քիչ եր լինում օպերայում և համերգներում։ Յերաժշտությունը չափազանց ուժեղ ազդում եր նրա ջղերի վրա, և յերբ նրանք խանգարված եյին լինում,— իսկ այդ այնպես հաճախ եր պատահում եմիգրանտի կյանքից անբաժան իրարանցման ու տենդի մեջ,— նա դժվարությամբ եր տանում այն։ Վ. Ի. միայնակ (զվարճությունների իմաստով) կյանքի վրա պակաս չեյին ազդում նրա շատ զբաղված լինելը և համեստ բյուջեն։

Համեմատաբար քիչ ուշադրություն եր նվիրում Վ. Ի. հիշատակության արժանի բաներին. «յես առհասարակ բավական անտարբեր եմ նրանց նկատմամբ,— գրում ե նա Բեռլինից 1895 թվին,— և մեծ մասամբ պատահմամբ եմ լինում այնտեղ։ Ինձ առհասարակ զանազան ժողովրդական յերեկույթներում և զվարճավայրերում թրև գալն ավելի յե դուր գալիս, քան թե թանգարանները, թատրոնները, պասաժները և այլն և այլն հաճախելը»։ Զանազան վայրերում այդ տեսակ «թրև գալու» համար Վ. Ի. սովորաբար օգտագործում եր յերեկոները, յերբ նա 1895 թվին ապրում եր Բեռլինում, և այդ նրան հնարավորություն եր տալիս «ուսումնասիրելու Բեռլինի բարքերը և ականջ դնելու գերմաներենին»։ Սակայն վոչ միայն Բեռլինում՝ առաջին անգամ արտասահմանում ապրելիս նա զբաղվում եր բարքերի ուսումնասիրությամբ,— նրա՝ հարազատներին գրած նամակների մեջ կան շատ տեղեր, վորոնք ցույց են տալիս, վոր Պարիզում ապրելիս էլ կամ կարճ ժամանակով այնտեղ ժամանելիս նա հաճույքով դիտում ե այնտեղի կյանքը, նշելով այն բռնազբոսիկությունը, վորով Պարիզի բնակիչները պահում են իրենց փողոցներում և բուլվարներում։ «Պարիզը շատ անհարմար քաղաք ե՝ համեստ միջոցներով ապրելու համար և շատ հոգնեցնող» — գրում ե Վ. Ի. միքանի օրով այնտեղ գնալուց հետո։ «Բայց կարճ ժամանակով լինել այնտեղ, տեսակցել, շրջագայել — այդ տեսակետից չկա ավելի լավ և ուրախ քաղաք»։ Դիտում ե Վ. Ի. նաև չեխերի կյանքը Չեխո-Սլովակիայով անցնելիս և ափսոսում ե, վոր չի ուսումնասիրել չեխական լեզուն. կայտառ գույներով նկարագրում ե Գալիցիայի գյուղացիների կյանքն ու բարքերը, վոր նա հնարավորություն եր ունեցել դիտելու Գալիցիայում ապրելիս. Մյունխենի փողոցների կարնավալը, կոնֆետտիի և սերպանտինի ցրումը և այլն։ Կյանքը նա սիրում եր իր բոլոր արտահայտություններով և գիտեր, ինչպես գրեթե վոչ վոք, լայնորեն դիտել և ուսումնասիրել այն։

Վ. Ի. ստորև հրատարակվող նամակներից կարելի յե տեսնել նրա ունեցած վերաբերմունքը թե հարազատների և թե վորոշ չափով առհասարակ մարդկանց հանդեպ։ Վո՛րքան ուշադրություն և խնամք ե ցուցաբերվում դրանց հանդեպ այդ նամակներում։ Վ. Ի. շատ եր կապված իր հարազատներին, մանավանդ իր մորը, և նրա հոգսը․ վորպեսզի մայրը լավ, հանգիստ և հարմար ապրի, զգացվում ե նրա բոլոր նամակներում, վոր նա ուղղում ե թե անմիջորեն նրան և թե մեր ընտանիքի մյուս անդամներին։ Նրա նամակները լի եյին հարցերով, թե ինչպես ե առողջությունը, «ինչպես են տեղավորվել բնակարանում, ցուրտ չե այն արդյոք»։

«Անհանգստացնում ե ինձ,— գրում ե նա մորը 1909 թվին,— վոր ձեր բնակարանը սառն ե... Չլինի՞ թե մրսես... Չի՞ կարելի արդյոք վորևե միջոցներ ձեռք առնել, գուցե լավ կլիներ, յեթե յերկաթե փոքրիկ վառարան դնեյիր...»։ Այդ նամակներում այնքան շատ խրատներ կան՝ «մի լավ ամառը հանգստանաս», «քիչ վազվզիր, ավելի շատ հանգստացիր, առողջ յեղիր» և այլն։

Առանձնապես ուժեղ եր արտահայտվում Վ. Ի.-ի ուշադրությունը մոր նկատմամբ, յերբ նրա գլխին վորևե փորձանք եր գալիս. իսկ այդ փորձանքներն այնքան շատ եյին նրա կյանքում։ Մեր ընտանիքի անդամներից մերթ մեկը, մերթ մյուսը յենթարկվում եյին ձերբակալության կամ աքսորի. պատահում եր յերբեմն, վոր ձերբակալվում եյին միքանի հոգի միաժամանակ, և մայրը, վոր այդ ժամանակ բավական հասակավոր եր, ստիպված եր լինում նորից ու նորից գնալ բանտերը տեսակցելու, իրեր հանձնելու, ժամերով նստելու ժանդարմների և պրոկուրորների ընդունարաններում, ցավել հոգեպես՝ յերբեմն կատարյալ մենակության մեջ՝ իր զավակների մասին, վորոնց զրկել եյին ազատությունից։ Թե վորչափ Վ. Ի. անհանգստանում եր մոր մասին նրա կյանքի այդ շրջաններում և վորչափ ընկճված եր լինում նրանից կտրված լինելու պատճառով, այդ առանձնապես ցայտուն արտահայտություն ե գտնում նրա 1901 թ. 1.IX մորն ուղղված նամակի մեջ։ Մարիա Իլյինիչնան և Մարկ Տիմոֆեյեվիչն այդ ժամանակ նստած եյին բանտում, Աննա Իլյինիչնան արտասահմանում եր և Ռուսաստան վերադառնալ չեր կարող, վորովհետև նրան էլ այդ դեպքում նույն գործով կարող եյին ձերբակալել, իսկ Դմիտրի Իլյիչը նույնպես չեր կարող մնալ մոր հետ, վորովհետև պետք ե վերջացներ Յուրյեվի համալսարանը։ Նույնպիսի մենակության մեջ մայրը մնացել եր օտար քաղաքում, յերբ 1904 թվին Կիևում կուսակցության Կենտրոնական և Կիևի կոմիտեյի գործով ձերբակալվել եյին Դմիտրի Իլյիչը, Աննա Իլյինիչնան և Մարիա Իլյինիչնան։

Վ. Ի. միշտ ցանկանում եր, վոր մայրն իր մոտ ապրի, և նա բազմիցս կանչել ե նրան իր մոտ։ Սակայն այդ դժվար ե յեղել իրագործել, ի միջի այլոց, այն պատճառով, վոր մայրը միշտ ապրել ե իր զավակներից նրա հետ, ում առանձնապես անհրաժեշտ ե յեղել նրա օգնությունը։ Իսկ Ռուսաստանում այդ օգնությունը միշտ անհրաժեշտ ե յեղել նրան, ում գլխին թափվում եյին վոստիկանության պատիժները։ Ուստի նրան միայն յերկու անգամ (Վ. Ի. առաջին և յերկրորդ եմիգրացիայի շրջաններում) վիճակվել եր կարճ ժամանակով լինել արտասահմանում և նրա հետ տեսնվել։ 1902 թվին նա միայն մի ամիս ապրեց Վ. Ի. և Աննա Իլյինիչնայի հետ Loguivy-ում, Ֆրանսիայի հյուսիսում։ Յերկրորդ և արդեն վերջին անգամ նրան հաջողվեց տեսնվել Վ. Ի. հետ Ստոկհոլմում, ուր նա Մարիա Իլյինիչնայի հետ գնացել եր 1910 թվին, հատկապես նրա հետ տեսնվելու համար։ Այդ ճամփորդությունների համար Վ. Ի. միշտ պարզորոշ մարշրուտներ ե տվել, խորհուրդ տվել գիշերներն իջևանել հյուրանոցներում, «ճամփորդությունից շատ չհոգնելու համար»։ Հենց Ստոկհոլմում Մ. Ա. Ուլյանովային առաջին և վերջին անգամ հաջողվեց ներկա լինել Վ. Ի. յելույթին բանվոր եմիգրանտների ժողովում։ Յերբ մենք մեկնում եյինք, Վ. Ի. ճանապարհ դրեց մեզ մինչև նավահանգիստ. շոգենավ նա չեր կարող մտնել, վորովհետև վերջինս ռուս ընկերության եր պատկանում, և Վ. Ի.-ին կարող եյին այնտեղ ձերբակալել,— և իմ մտքից մինչև հիմա չի հեռանում նրա դեմքի արտահայտությունը, յերբ այնտեղ կանգնած՝ նա նայում եր մորը։ Վո՛րքան

ցավ կար այդ ժամանակ նրա դեմքին։ Սուս, նախազգուշակում եր, վոր դա իր վերջին տեսակցությունն եր մոր հետ։ Այդպես էլ պատահեց իրոք։ Այլևս տեսնըվել հարազատների հետ մինչև Փետրվարյան հեղափոխությունից հետո նրա Ռուսաստան ժամանելը՝ Վ. Ի. չհաջողվեց. իսկ մայրը վախճանվեց հեղափոխությունից քիչ առաջ, 1916 թվի հուլիսին։ Մեզ չի հասել՝ մոր մահվան լուրն ստանալուց հետո Վ. Ի. գրած առաջին նամակը։ Չի պահպանվել նույնպես և նրա հաջորդ նամակը, սակայն և այնտեղ, վորքան մտաբերում եմ, կարելի յեր տեսնել, թե վորչափ ծանր եր նրա համար այդ կորուստը, վորպիսի ցավով եր տանում նա այդ վիշտը և վորպիսի քնքշություն եր արտահայտում մեր նկատմամբ, վոր նույնպես ճնշված եյինք այդ մահվամբ։

Մեծ ուշադրություն եր նվիրում միշտ Վ. Ի. թե իր քույրերին և թե իր յեղբորը, ինչպես և Մ. Տ. Յելիզարովին՝ անդադար հետաքրքրվելով, թե ինչպես են նրանք ապրում, ինչպես են իրենց զգում, ունեն արդյոք վաստակ, լավ են արդյոք հանգստանում և այլն։ Նա աշխատում եր թարգմանություններ գտնել մեզ համար, յերբեմն դրա համար ոտարազգի գրքեր եր ուղարկում մեզ, հետաքրքրվում եր, թե ինչ ենք կարդում մենք, ինչով ենք զբաղվում, հրավիրում եր իր մոտ ապրելու և այլն։ Մեծ ուշադրություն եր ցուցաբերում Վ. Ի. և իր ընկերներին, հարցնում եր, թե ինչպես են ապրում նրանք, աշխատում եր ոգնության գալ նրանց նաև նյութական տեսակետից։ Այսպես նա ձեռնարկում եր առաջաբաններ գրել ընկերների կատարած թարգմանություններին, վերջինների հրատարակությունը հեշտացնելու և այդպիսով ընկերների համար վաստակի հնարավորություն ստեղծելու։

Այն ընկերներին, վորոնք ծանոթ չեն եմիգրանտական կյանքի և ցարիզմի շրջանի լեգալ նամակագրության պայմաններին, ոտարոտի և անհասկանալի կարող են թվալ Վ. Ի.-ի նամակներում հաճախակի պատահող հիշատակությունները, վոր նա ապրում է «շատ հանգիստ», «կամաց-կամաց», «հանգիստ-խաղաղ» և այլն, այնպիսի ժամանակ, ինչպես, որինակ, իմպերիալիստական պատերազմի շրջանում, յերբ անլեգալ նամակագրությունից և գրականությունից յերևում է, վոր նա կատաղի յեռանդով կռիվ եր մղում շովինիզմի դեմ, վորի ազդեցությանն էլ հենց յենթարկվել եր սոց.-դեմոկրատական կուսակցությունների մեծամասնությունը։ Սակայն չպետք է մոռանալ, վոր Վ. Ի. այդ շրջանում կարող եր յելույթ ունենալ միայն մամուլում, այն էլ մի օրգանում, վոր միքանի շաբաթվա և նույնիսկ միքանի ամսվա մեջ մի անգամ եր միայն լույս տեսնում, վորի, ինչպես և բրոշյուրների առաքումը շատ դժվարացված եր, և արտասահմանյան եմիգրանտների վոչ մեծ ժողովներում կամ ոտարերկրյա բանվորների փոքրիկ խմբակներում։ Հասկանալի յե, վոր այդ հնարավորությունները Վ. Ի. համար չափազանց աննշան եյին, և յեթե, ինչպես այդ պատմում է Ն. Կ. Կրուպսկայան, նա Ռուսաստանի հեղափոխության սկզբին առյուծի տպավորություն եր թողնում, վոր ճգնում եր ազատվել իր վանդակից, ապա արդյոք նույն վանդակը չե՞ր նրա համար և եմիգրանտի կյանքն առաջներում, յերբ նա կտրված եր Ռուսաստանից, մանավանդ իմպերիալիստական պատերազմի շրջանում,—մի վանդակ, վոր զգալիորեն ճնշում եր նրան, հնարավորություն չեր տալիս ծավալելու իր ուժերը, չեր գոհացնում առաջնորդի, ժողովրդական տրիբունի բնությունը։ Նա ձգտում եր շատ ավելի լայն աշխատանքի, ձգտում եր իրոք, վորպես առյուծ, և ստիպված եր մշակել յերկու-յերեք ընկերների, վորպեսզի նրանց միջոցով մուտք ունենա դեպի ավելի լայն մաս-

սաները։ Յեվ միթե Վ. Ի. նման խառնվածքի համար այդպիսի գործունեյությունը, ինչպես և ընդհանուր լրագրությունը «քնաթաթախ Բեռլինում», իսկապես վոր չափազանց «խաղաղ» և «դանդաղ» ընթացող չեր։

Լեգալ նամակագրության մեջ միայն յերբեմն է նշմարվում նրա զայրույթը «ամենավնասակար տիպի վատթարագույն ոպորտունիստների», «վարկերի քվեարկման առթիվ տեղի ունեցած չտեսնված ստորությունների» դեմ և այլն։ Այստեղ նա կաշկանդված եր գրաքննական շրջանակներով, և արժի միայն տեսնել, թե նրա նամակների մեջ (տես հավելվածը) վոր ֆրազներն են դրավել «ախրաննիկների և ժանդարմների ուշադրությունը» և ծառայել «իրական ապացույցներ», վորպեսզի հասկանալի լինի, վոր թե նա և թե նրա հարազատներն այդ ժամանակ այնպիսի վիճակ եյին ապրում, յերբ արդեն չափազանց դժվար է նամակագրություն ունենալ այնպես, ինչպես ցանկալի յե։

Յեվ զուր չեր, վոր մեր առաջաբանի սկզբում մենք վերապահություն արեցինք, թե Վ. Ի. հարազատներին գրած նամակներն ունեն իրենց նշանակությունն ու հետաքրքրությունը գլխավորապես իբրև նյութ՝ նրան վորպես մարդ բնութագրելու տեսակետից (սակայն և այդ բնութագիրն էլ անշուշտ չի կարող լիակատար լինել, և վորոշ չափով պիտի լինի միակողմանի, նկատի ունենալով վոստիկանական պայմանները)։ Այդ տեսակետից, մեր կարծիքով, նրա նամակներն արժեքավոր գանձեր են Վ. Ի. մասին յեղած գրականության մեջ, և մնում է միայն ափսոսել, վոր նրա՝ հարազատներին և ընկերներին գրած նամակներից շատ շատերը կորել են։ Ինչ վերաբերում է Լենինին իբրև առաջնորդի, քաղաքական գործչի և գիտնականի, այդ մասին վկայում են ուրիշ փաստաթղթեր և առաջին հերթին նրա գրական հարուստ ժառանգությունը։

Առանձնապես ծանր եր Վլադիմիր Իլյիչի համար յերկրորդ եմիգրացիան։ Պետերբուրգում և նրա շրջակայքում վարած կյանքից հետո ընկնելով Ժընև, նա առանձնապես ծանր ընդունեց իր այդ վերադարձը դեպի վաղեմի ոջախը։ «Միքանի որ է արդեն, ինչ վոր ենք ընկած այս անիծված Ժընևում,—գրում է նա Մ. Ի.-ին 1908 թ. 14.I։ —Զզվելի փոս է։ Սակայն ինչ արած։ Կհարմարվենք»։ Յեվ իր սովորական համառությամբ ու յեռանդով Վ. Ի. ձեռնարկում է աշխատանքի, վորովհետև բոլոր պայմաններում նա գիտե «հարմարվել»։ «Անախորժ եր տեղափոխումների միայն ամենից առաջին մոմենտը, իբրև անցում լավից դեպի վատը։ Սակայն այդ անխուսափելի յեր»,—գրում է նա հաջորդ նամակում իր քրոջը։ Յեվ նորից, վորպես անցում լավից դեպի վատը, այդ ժամանակ առանձնապես զգալի յե դառնում նրան աշխատանքի համար անհրաժեշտ գրական նյութերի, նորությունների և լրագրերի բացակայությունը, քանի վոր Պետերբուրգում նա հնարավորություն ուներ կարդալու բոլոր լրագրերն ու հանդեսները, հետևելու բոլոր նորություններին։ Յեվ նա խնդրում է «ձեռք բերել 3-րդ Դումայի արձանագրությունները (պաշտոնական հրատարակություն ստենոգրական հաշվետվությունների, նաև Դումա մտցվող հայտարարությունների, հարցումների և որինագծերի)» և ուղարկել նրան «բոլորը առանց բացթողումների»։ Նրան հետաքրքրում են նաև «Ակտյաբրիստների, աջերի, կազակային խմբակի ծրագրերը, անուններն ու թերթիկները և այլն»։ Նա զրկված է այդ հարկավոր նյութերից, մինչդեռ «Դումայում այդ բոլոր «թղթերը» յերևի թափված են հատակին, և վոչ վոք այդ թղթերը չի էլ վերցնում»։ Խնդրում է նա նույնպես ուղարկել իրեն «մենշևիկների բոլոր հրատարակությունների նորույթները, պրոֆեսիոնալ ժուռնալները, վորոնք փրկվել են ավերումից և այլն։ Սակայն Վ. Ի.

1006/28193

էմիգրացիայում կարիք էր զգում միայն գրքերի, ինչքան էլ որ մենք աշխատում եյինք հայթայթել նրան թեկուզ ամենահետաքրքիրը, ինչ վոր գտնում եյինք գրական շուկայում, այլև ռուսական լրագրերի։ Այդ տեսակետից առանձնապես վատ էր դրությունն իմպերիալիստական պատերազմի շրջանում, յերբ Վ. Ի. ժամանակ առ ժամանակ մնում էր բոլորովին առանց ռուսական լրագրերի։ «Ուղարկեցեք շաբաթը մի անգամ ձեր կարդացած ռուսական լրագրերը, թե չե յես այդ լրագրերը բոլորովին չունեմ»,—գրում է նա 1916 թ. 20.IX։

Մեծ կարիք կար և վաստակի, մանավանդ Վ. Ի. էմիգրացիայի վերջին տարիներին։ «Շուտով սպառվում են մեր գոյության բոլոր հին աղբյուրները, և բավական սուր կերպարանք է ընդունում վաստակի հարցը» (1915 թ. 14.XII)։ Իսկ այդ հարցը «բավական անհանգստացնում է նրան»—գրում է Ն. Կ., վորովհետև Վ. Ի. շատ փափկանկատ էր դրամական գործերում, վորևե մեկից օգնություն խնդրելու մեջ։ «Պիտի նստեմ, ինչ էլ լինի գրեմ»,—գրում է նա 1916 թ. 10.IX,—վորովհետև հրեշային թանկություն է, ապրելը սարսափելի դժվարացել է»։

Յեվ Փետրվարյան հեղափոխությունից միայն մի քանի ամիս առաջ, 1916 թվի աշնանը Վ. Ի. ստիպված էր գրքեր վորոնել թարգմանության համար, հրատարակչի հետ գրագրություն ունենալ նրանց հրատարակման առթիվ։ Վո՞րքան արդյունավետ պիտի օգտագործվեյին նրա ուժերը, յեթե լինող նա ստիպված լիներ վատնել իր ժամանակը թարգմանությունների վրա, սակայն և դրան վերջիվերջո «խանգարեց» հեղափոխությունը։

Այսպես եյին նրա կյանքի պայմաններն էմիգրացիայում հեղափոխությունից քիչ առաջ։ Կտրվածությունը Ռուսաստանից, բանվորական մասսաներից, վորոնց վրա նա միշտ ձգտում էր անմիջական ազդեցություն ունենալ, էմիգրանտական գոյության դժվարին պայմանները,—թեև յեռանդն ու համառությունը յերբեք չեյին բաժանվում Վ. Ի.-ից,—բնական է, վոր «ջղերը հիվանդացել են», վոր ամբողջ օրգանիզմը զգալի չափով խախտված է։

Դառնությամբ է հնչում նրա 1917 թվի 15.II նամակում Ն. Կ.-ի կատակե մասին հաղորդումը՝ Ռուսաստանից դրամ ստանալու ժամանակ—«դու (Վ. Ի.) «թոշակ» ես սկսել ստանալ»։

Իսկ այդ նամակից հետո, վորի կտորներից պարզ զգացվում են այն ծանր պայմանները, վորոնց մեջ ստիպված էր ապրել Վ. Ի. հեղափոխությունից առաջ, հանկարծ կարճ ուրախ հաղորդագրություն հեռագրով՝ «Գալիս ենք յերկուշաբթի գիշերը։ Հաղորդեցեք «Պրավդային»»։

Վերջ էմիգրացիային։ Վերջ և նրա նամակագրությանը հարազատների հետ։

Միայն յերկու կարճ յերկտող էլ ստացա յես Վ. Ի.-ից, կարճ, ինչպես կարճ էր նրա ընդհատակյա կյանքը Ֆինլանդիայում կերենշչինայի և կոռնիլովշչինայի ժամանակները, Հոկտեմբերյան մեծ հաղթանակի նախօրյակին։

Մ. ՈՒԼՅԱՆՈՎԱ

1

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[25] 13.XII [18] 94. [Պետերբուրգ]

Վաղուց է, ինչ վոր տանից բան չեն գրում։ Ի՞նչպես է առողջությունդ. Մանյաշա։ Ինձ գրել են, վոր դու արդեն հաճախում ես գիմնազիա։

Լավ կլիներ դու քեզ ստիպեյիր ամեն օր մի յերկու ժամ զբոսնել։ Արժե արդյոք այդպիսի տոկունությամբ նստել դասերի վրա և քայքայել առողջությունը։

Բացի գիմնազիական զբաղմունքներից ե՞լ ինչ ես անում։ Ի՞նչ ես կարդում։ Տեսակցո՞ւմ ես Մ. Ի.-ին*[1]։ Գնո՞ւմ է նա Ղրիմ, թե՞ վոչ։

Գրիր նաև, յեթե այդ հարմար է, համալսարանում Կլյուչևսկու հետ տեղի ունեցած պատմության մասին[2]։ Ասում են՝ նա մի ինչ-որ դասախոսություն է կարդացել, հետո ինչ-որ գիրք է հրատարակել։ Այդ գրքի վերնագիրն անգամ յես չեմ տեսել. հետաքրքիր է իմանալ։

Ի՞նչպես է ընթանում քո նոր ծանոթությունը։

Քո Վ. Ու[լյանով]

Յես վաղուց արդեն գրել եմ, վոր տեղեկանան «Կապիտալի» 3-րդ հատորի մասին։ Ինձ խոստացել են ձեռք բերել այդ հատորը (ծանոթս, վորին Մարկը ճանաչում է)[3]։ Յեվ հիմա յես վոչինչ չգիտեմ։ Կկատարե՞ն արդյոք այդ խոստումը։ Շարունակո՞ւմ են արդյոք խոստանալ, թե՞ հրաժարվում են։ Իսկ կուզեյի իմանալ, վ[որովհետև] այդ գիրքը ձեռք բերելը հեշտ չի։ Հաղորդիր այդ, խնդրեմ, Մարկին։

Բարևներ բոլոր մերոնց։

Առո՞ղջ է արդյոք մայրիկը։ Համբուրիր նրան իմ տեղ։

Քեզնից նամակ եմ սպասելու։

Անյուտային ասա, վոր յեղա Ալ. Անդր[եյեվի][4] մոտ և իզուր յեղա։ Նրան խոստացել են, և նա սպասում է. կհասնի՞ արդյոք սպասածին, և յերբ՝ այդ հայտնի չի։

[1] Մարիա Իվանովնա Լեբեդևան Ա. Պ. Սկլյարենկոյի մտերիմ ընկերն էր, վորին Վ. Ի. ճանաչում էր Սամարայից. Մ. Ի. հիվանդ էր թոքախտով, վորից և մահացավ Ղրիմում։ Տես նրա մասին «Հին ընկեր Ա. Պ. Սկլյարենկո» ժողովածուն, Պետհրատ, 1922 թ., ռուս. հրատ., էջ 11, 22, 36։

[2] «Ի տեր հանգուցյալ թագավոր-կայսր Ալեքսանդր 3-րդի հիշատակին» իր ճառը Կլյուչևսկին կարդացել էր նախ՝ իբրև դասախոսություն իր սովորական լսարանում ֆիլոլոգների մոտ։ Այդ դասախոսությունն անցավ

* Ստացե՞լ է նա արդյոք իմ նամակը։

տանից միջադեպերի։ 1894 թ. նոյեմբերի 28-ին Կլյուչևսկին կրկնում է նույն ճառը Մոսկվայի Համալսարանին առընթեր պատմության և Ռուսաստանի հնությունների կայսերական ընկերության նիստում, որի նախագահն էր ինքը, իսկ Կլյուչևսկու մտերիմ ընկեր Ցելլիդիֆոր Բարսովը, որ «Московский листок»-ի խմբագիրն էր, տպագրում է այդ ճառն իր լրագրում։ Այդ լայն ուսանողական մասսաներին ծանոթացնում է ճառին, ճառը լույս է տեսնում նաև առանձին բրոշյուրով (Մոսկվա. համալսարանական տպարան, 1894)։ Ուսանողները գնեցին այդ «Ճառի» հրատարակության մեծ մասը և տարածում էին այն իբր «ուղղված և լրացված յերկրորդ հրատարակություն» (այդ էր գրված ձեռքով շապկի վրա)։ «Ուղղումը» և «լրացումը» կայանում էր նրանում, որ տեքստից առաջ կպցրած էր հեկտոգրաֆի վրա տպված թերթիկ հետևյալ մակագրությամբ.

«18-րդ դարը ռուս գրականության մեջ ընդօրինակման դար է, սակայն այդ դարն ուսանելի օրինակներ է տալիս քաղաքացիական արժանապատվության համար», և ապա դրան հետևում էր Ֆոն-Վիզինի «Դավադիր աղվեսը» առակը։

Այդ առակի մեջ Շունը, գազանների թագավոր առյուծի մահի մասին խոսելիս ասում է Խլուրդին.

Յես լավ եյի ճանաչում Առյուծին. դա մի խոշոր անասուն էր,
Յեվ չար, և անիմաստ, և բարձրագույն իշխանության ուժի շնորհիվ
Նա միայն հագեցնում էր իր՝ բռնապետի կրքերը։
Հեզաբարո արքայի գահը՝ զոհասեղանների արժանի,
Շինած էր հոշոտված գազանների վոսկորներից»։

Մոտակա հերթական դասախոսության, նոյեմբերի 30-ին, որին հավաքվել էին «զանազան ֆակուլտետների և կուրսերի» ուսանողները, Կլյուչևսկուն նվիրաբերվեց նրա ճառի այդ «յերկրորդ հրատարակությունը», և նա, ինչպես այդ նշված է վոստիկանական զեկուցագրի մեջ, յենթարկվեց «սուլոցի» և «շվվոցի»։ (Ֆոն-Վիզինի առակի տարածումը և նրա ընթերցումը «բանվորների ժողովներում» վերագրվեց ՍՊԲ-ում 1895 թվին ձերբակալված մի քանի սոցիալ-դեմոկրատների, իբրև «հանցավոր ծաղր ի տես հանգուցյալ կայսեր սրբազան հիշատակի նկատմամբ»)։ «Այդպիսի անկարգության համար յերեք գլխավոր խռովարարները Համալսարանի Ռեկտորի վորոշմամբ անմիջապես հեռացվեցին, մյուս յերեքը յենթարկվեցին ձերբակալության կարցերում, իսկ չորսին նկատողություն արվեց»։

Հաջորդ օրը Համալսարանում հավաքվեց «մոտ 100 հոգուց» ժողով, վորը պահանջում էր վերացնել Ռեկտորի վորոշումը։ Դեկտեմբերի 2-ին կայացավ ավելի բազմամարդ ժողով, «մոտ 500 հոգուց» և Համալսարան կանչվեց վոստիկանություն։ Իբրև հետևանք՝ 44 մարդ ձերբակալվեցին և աքսորվեցին Մոսկվայից։

3 Թե ում մասին է խոսքը՝ չհաջողվեց պարզել։ Հավանական է, որ խոսքը Ռ. Էմ. Ցիմմերմանի (Գվոզդյովի) մասին է, որին Մ. Տ. Յելիզարովը ծանոթ էր Սամարայից, կամ Վադիմ Անդրեյեվիչ Իոնովի մասին։

Գվոզդյովը (1866—1900) մարքսիստական ուղղության գրող էր, որի տնտեսագիտական հոդվածները, ինչպես և պատմվածքները, զետեղվում էին «Русское богатство»-յում, «Жизнь»-ում, «Научное обозрение»-յում։ Ռուսաստանի առաջին մարքսիստական լրագիր «Самарский вестник»-ի ղեկավարներից մեկը, «Վաշխառություն և կուլակություն» գրքի հեղինակը։ Տես Լենինի Յերկերը, 2-րդ հատոր, 2-րդ ռուս. հրատարակ., էջ 650, 651։

Իոնով Վ. Ա. (ծն. 1863 թ.)—վիճակագիր. Մ. Տ. Յելիզարովի և Վ. Ի. ծանոթը Սամարայից, յեղել էր Ամերիկայում, Չիկագոյում, վորտեղից և ստացել էր իր՝ «Չիկագեցի» մականունը։ 80-ական թվականների վերջում պատասխանատվության էր կանչվել նարոդովոլեցական գործով, Ն. Բելյաևի հետ հարաբերություն ունենալու համար։ Ն. Բելյաևը նարոդովոլեցների խմբակների կազմակերպիչներից մեկն էր Պետերբուրգում և մերձվոլգյան քաղաքներում։ Իոնովը ձերբակալված էր և պահվում էր կալանքի տակ։ Հետագայում սոցիալ-դեմոկրատ է դառնում։ Աշխատակցում էր «Самарский вестник»-ին և լեգալ մարքսիստական հանդեսներին։ Ողնում էր Վ. Ի.-ին սրբագրելու «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության վիճակագրական աղյուսակները։ Մի քանի տարի սրանից առաջ վախճանվել է։

4. Թե ում մասին է խոսքը, չհաջողվեց պարզել։

2

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մանյաշային

[1895 թ. հունվարի 5] 24.XII. [1894 թ.]։ [Պետերբուրգ]

Վերջապես պատրաստվեցի պատասխանելու քո ամսի 15-ի նամակին։

Գիմնազիայի և զբաղմունքներիդ մասին քո հայտնած հայացքին չհամաձայնվել չեմ կարող։

Նախ՝ բժիշկն ասել է, որ չհաճախես մինչև Ծն[ունդ], իսկ դու գտնում ես, որ բաց թողնելն անհարմար է։ Չէ՞ որ ամիսներ են բաց թողնում, վոչ միայն շաբաթներ. չէ՞ որ ավելի լավ չի լինի, յեթե գարնանը հարկադրվես պառկել։

Յերկրորդ։ Դու գրում ես՝ կամ բոլորովին չսովորել, իսկ յեթե սովորել, ապա «համենայն դեպս վոչ բոլորովին իմիջի այլոց»։ Ինձ թվում է՝ այժմ խոսք կարող է լինել ամենաշատը միայն ավարտելու մասին։ Իսկ դրա համար միթե չունի լարված աշխատել. ինչ դժբախտություն, յեթե ստանաս յերեքներ, իսկ բացառիկ դեպքում և յերկուներ։ Համենայն դեպս, առաջին յերկու յեռամսյակում լավ թվանշաններով կփոխադրեն։ Իսկ դրանից ավել վոչինչ հարկավոր էլ չէ։ Յեվ վերջապես, քանի որ գիմնազիայի դասընթացն սկզբից ամեն ինչ անցել ես հիմնովին, ապա այժմ արդեն դու լավ կավարտես, յեթե մինչև անգամ բոլորովին դադարես դասերը պատրաստել։ Չէ՞ որ դու պետք է համաձայնվես, որ յերեքներով յոլա գնացողները նախ՝ դասերը չեն պատրաստում և յերկրորդ՝ անցածից էլ վոչինչ չեն հիշում։ (Մեզանում գոնե այդպես էր)։ Ուրեմն դու նրանց հանդեպ առավելություն կունենաս։

Ըստ իս, հենց այն դեպքում միայն հնարավորություն կունենաս ավարտելու, յեթե հենց «իմիջի այլոց» պարապես։ Հակառակ դեպքում դու ամառը լուրջ կհիվանդանաս։

Յեթե դու չես կարող պարապել իմիջի այլոց, այդ դեպքում ավելի լավ է թողնել և գնալ արտասահման։ Գիմնազիան միշտ էլ կարելի է ավարտել, իսկ

համպորդությունն այժմ կթարմացնի քեզ, թափ կտա քեզ, վոր դու տանն այնքան էլ չթթվես: Այնտեղի հետ ծանոթանալուց հետո կարող ես միալ և ուսանել վորևէ ավելի հետաքրքիր բան, քան Իլովայսկու պատմությունը կամ Ֆիլարետը (?) հավատո հանդանակը:

Հրմնավոր կերպով ես արդյոք դրոսնում հիմա: Ցերեկի վոչ: Ինչու չես ուզում չմշկել սահարանում: Ելլը պլոտի ասես՝ «ձանձրալի յես»: Չի կարելի, վերջապես, այդ աստիճան թուլության հասցնել իրեն. դրա մեջ ավելի պակաս «զուրախ բան» կա: Հարկավոր է, վոր դու քեզ հարկադրես:

Շելգունովի[1] մասին յես քեզ հետ համաձայն եմ, վոր նրա միջանի բաները հնացել են: Նրա հոդվածներից վորոնք են քեզ դուր գալիս, ռուսական հարցերի մասին, թե պատմականները: Տնտեսական, թե փիլիսոփայական:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Տես Ն. Վ. Շելգունովի Յերկերը, յերկու հատորի մեջ, հեղինակի պատկերով և Ն. Միխայլովսկու Ներածականով. ՍՊԲ, հրատ. Պավլենկովի. 1891 թ.:

3

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Salzburg 14.2. V [18] 95. [Զալցբուրգ]

Ոգտվում եմ 2 ժամվա կանգառումով ավստրիական մի քաղաքում (հեռու չէ արդեն* Նշանակման տեղից)[1], վորպեսզի կատարեմ խոստումս՝ գրեմ ճանապարհից:

Ահա յերկու որ է արդեն, ինչ ճամպորդում եմ «արտասահմանում» և վարժվում եմ լեզվի մեջ. յես բոլորովին չվախ դուրս յեկա, մեծ դժվարությամբ եմ հասկանում գերմանացիներին, լավ է ասեմ՝ ամենևին չեմ հասկանում**: Դիմում եմ անվերջ կոնդուկտորին այս կամ այն հարցով,—նա պատասխանում է. յես չեմ հասկանում: Նա ավելի բարձր ձայնով է կրկնում: Այնուամենայնիվ յես չեմ հասկանում, և նա բարկանում է ու հեռանում: Չնայած այդպիսի ամոթալի ֆիասկոյիս, չեմ հուսահատվում և բավական մեծ ջռանդով կոտրատում եմ գերմաներեն լեզուն:

Բարևներս բոլոր մերոնց:

Քո Վ. Ուլյանով

Հետ[ևյալ] նամակս յերևի այնքան էլ շուտ չկարողանամ գրել:

[1] 1895 թ. ապրիլի վերջին Վ. Ի. մեկնեց արտասահման, վորտեղ կապեր հաստատեց «Աշխատանքի ազատագրություն» խմբակի՝ Պլեխանովի, Աքսելրոդի, Զասուլիչի հետ: Վլադիմիր Իլյիչի Պ. Բ. Աքսելրոդին կատարած առաջին այցելության և նրանց մեջ յեղած զրույցների մասին տես վերջինիս հիշողությունները «Գ. Վ. Պլեխանովի և Պ. Բ. Աքսելրոդի նամակագրության» մեջ, հատ. I, ռուս. հրատ., եջ 269—275. հրատ. Ռ. Մ. Պլեխանովայի. Մոսկվա, 1925 թ.:

---

* Մի որից քիչ ավելի:

** Չեմ հասկանում ամենապարզ խոսքերն անգամ,—այն աստիճան անսովոր է նրանց արտասանությունը և այն աստիճան արագ են նրանք խոսում:

4

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

20/8 մայիսի. [1895 թ.]. [Շվեյցարիա]

Նախորդ նամակս գրել եյի ճանապարհից: Հիմա արդեն հաստատվել եմ տեղում,—կարծում եմ, սակայն, վոր վոչ յերկար ժամանակով, և վոր շուտով նոր կուղևորվեմ մի վորևէ տեղ:

Բնությունն այստեղ հրաշալի յե: Անվերջ սքանչանում եմ նրանով: Այն գերմանական կայարանից, վորտեղից յես գրել եյի քեզ, անմիջապես սկսվեցին Ալպերը, յերևացին լճերը, այնպես վոր չեր կարելի աչք հեռացնել վագոնի պատուհանից. յեթե իմանայի այնտեղի պայմաններն ու գները (չի կարող պատահել, վոր գյուղերում հնարավորություն չլինի եժան սարքվել), ապա հավանաբար կարելի կլիներ այնտեղ ամառանոց գնալ: Ճանապարհածախսը թանգ չի, իսկ բնությունը փարթամ:

Տեսա սանուհուս և նրա ընտանիքը[1]: Զբոսցում եյինք ի[միջի] այլոց Մարկի հարուցած գների թեմայի շուրջը*: Դուրս է գալիս՝ շատ է թանգ այստեղ տնային ծառայողը՝ 25—30 frs ամսական, ամեն ինչ պատրաստ ստանալով հանդերձ, իսկ կերակրել էլ, ասում են, պետք է շատ լավ:

Սարքվեցի՞ք արդյոք դուք վերջապես ամառանոցում. հասցեն, ասենք, ինձ հարկավոր չի, վորովհետև յես կարող եմ գրել Մարկին, սակայն յես ուզում եյի...[2]

[1] Խոսքն Ապոլոն Ալեքսանդրովիչ Շուխտի մասին է, վոր հեղափոխական ուսանողական խմբակների գործով Պետերբուրգից աքսորվել եր Սիբիր (1884—1887): Վերադառնալով այնտեղից, նա միառժամանակ ապրել եր Սամարայում և այնտեղ ծանոթացել Վ. Ի. հետ, վորի հետ տեսնվում եր նաև Պետերբուրգում: Հետագայում Շուխտը տեղափոխվում է Շվեյցարիա՝ Ժընև, վորտեղ և Վ. Ի., ինչպես յերևում է նամակից, տեսնվում է նրա և նրա ընտանիքի հետ: Ա. Ա. Շուխտի աղջիկներից մեկը՝ Ասյան հենց վոր Վ. Ի. սանուհին եր: Ներկայումս Ա. Ա. Շուխտը Համկ (բ.) կ անդամ է, 1917 թվից:

[2] Յերկրորդ թերթիկը չի պահպանվել:

5

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Paris, 8 juin [հունիսի—27 մայիսի 18]95. [Պարիզ]

Ստացա քո նամակը հենց Պարիզ մեկնելուց առաջ: Շատ ափսոս, վոր այդպիսի անհեթեթություն է պատահել Միտյայի հիվանդության հետ. չեմ հասկանում, ինչպես կարելի յե մերժել վորևէ մեկին հետաձգել քննությունը, քանի վոր նա բժշկական վկայական ունի հիվանդության մասին: Ինչու նա չի ուզում շարունակել միջնորդությունը, ինչ միտք ունի մեկ տարի կորցնել:

Մանյաշայի քննությունները, յերևի, արդեն հիմա վերջանում են, կամ նա ավարտել է: Արժեր, վոր նա ամառը մի լավ հանգստանար:

---

* Ցես սարքվել եմ այժմ... (շարունակությունը չկա:—Խմբ.):

Դեռ նոր եմ սկսում կամաց-կամաց ծանոթանալ Պարիզին. ահագին քաղաք է, բավական լայն տարածված, այնպես որ ծայրամասերը (որտեղ ավելի հաճախ եմ լինում) չեն տալիս կենտրոնի պատկերը։ Տպավորությունը շատ դուրեկան է, փողոցները լայն, լուսավոր, բուլվարների շ[ատ] խիտ ցանց, բուսականությունը շատ. հասարակությունն իրեն պահում է միանգամայն անբռնազբոսիկ, այնպես որ սկզբում նույնիսկ մի քիչ խորթ է թվում պաշտոնապաշտ և խստադեմ Պետերբուրգից հետո։

Ամեն ինչ ինչպես հարկն է տեսնելու համար պետք է անցկացնել մի քանի շաբաթ։

Շատ էժան են այստեղ բնակարանները, օր[ինակ], 2 սենյակ խոհանոցով ամսական 30—35 frs. կահավորված սենյակի համար շաբաթական 6—10 frs, այնպես որ հույս ունեմ էժան սարքվելու։

Բարևս մերոնց բոլորին։

Քո Վ. [Ուլյանով]

Արդյոք գո՞հ եք ամառանոցից[1].

[1] Նամակի վերջը կտրված է։

6

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

18 juillet [18]95 6 հուլիսի. [Շվեյցարիա]

Վերջին նամակս, յեթե չեմ սխալվում, գրել եմ 8-ին։ Այն օրվանից յես բավական թրև յեկա և այժմ ընկել եմ... մի շվեյցարական կուրորտ. վճռել եմ օգտվել դեպքից, որպեսզի ընդհուպ սկսեմ բուժվել ձանձրացրած հիվանդությունից (ստամոքսի), մանավանդ, որ այս կուրորտը պահող մասնագետ բժշկին ինձ շատ են հանձնարարել իբրև իր գործին հմուտ բժշկի։

Արդեն մի քանի օր է, ինչ ապրում եմ այս կուրորտում և վատ չեմ զգում ինձ. պանսիոնը հրաշալի է, բժշկությունն էլ, ըստ յերևույթին, լուրջ, այնպես որ հույս ունեմ մի 4—5 օրից դուրս պրծնել այստեղից։ Ըստ յերևույթին այստեղ էլ կյանքը շատ թանկ պիտի նստի. բուժումը՝ ավելի թանկ, այնպես որ յես արդեն դուրս եմ յեկել բյուջեյիս սահմաններից և հույս չունեմ յոլա գնալ այժմ սեփական միջոցներով։ Յեթե կարելի է, ուղարկիր ինձ էլի մի 100 ռուբլի հետևյալ հասցեյով. Suisse, Zürich Parterre. Seilergraben, 37. Hn. Grünfest (ուրիշ ոչինչ հանձնումներ և նման բաներ հարկավոր չեն*)։ Համենայն դեպս, այս հասցեյով եմ սպասելու նամակիդ, իսկ իմ հասցեն չեմ գրում, որ[ովհետև] իզուր է. միևնույն է, այստեղից պիտի մեկնեմ ավելի շուտ, քան պատասխանը հնարավորություն կլինի ստանալ։

Գո՞հ եք Վոլգայով կատարած ձեր ճամփորդությունից։ Ի՞նչ նորություն կա այնտեղ։ Բոլորդ էլ առո՞ղջ եք։ Նամակն ինձ յերևի արդեն ուղարկված է, բայց յես դեռ չեմ ստացել (վերջին նամակը՝ բացիկը՝ ստացել եմ Մարկից Պարիզում), որ[ովհետև] միշտ տեղից տեղ եմ փոխվում։ Սակայն, յեթե այդ նամակը Պարիզի հասցեյով է ուղարկված, ապա յես կստանամ։

* Փողն ամենից հարմարն է ուղարկել փոստով, իբրև դրամական ծրար։

Շո՞գ է արդյոք ամառը ձեզանում։ Այստեղ էլ շատ շոգ է, սակայն յես այժմ լավ տեղ եմ ապրում՝ քաղաքից հեռու, բուսականության մեջ և մեծ լճի մոտ։

Բարևներս մերոնց բոլորին։

Քո Վ. [Ուլյանով]

7

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Berlin, den 10 August [օգոստոսի—18]95. [29 հուլիսի, Բեռլին]

Չգիտեմ, ստացա՞ր արդյոք իմ նախորդ նամակը, որ յես մոտ մի շաբաթ առաջ այստեղից ուղարկել եմ քեզ։ Համենայն դեպս, կրկնում եմ հասցես՝ Berlin, Moabit, Flensburgerstrasse, 12[II] (bei Frau Kurreick) Herrn W. Ulianoff.

Յես այստեղ սարքվել եմ շատ հաջող՝ մի քանի քայլափոխում ինձնից գտնվում են Thiergarten* (գեղեցիկ, ամենալավ ու ամենամեծ պարկը Բեռլինում), Շպրեն, որտեղ յես ամեն օր լողանում եմ, և քաղաքային յերկաթուղու կայարանը։ Այստեղ ամբողջ քաղաքի միջով (փողոցների վրայով) անցնում է յ[երկաթ]ուղին. գնացքները մեկնում են 5 րոպեն մի անգամ, այնպես որ ինձ համար շատ հարմար է «քաղաք» գնալ (Մոաբիտը, որտեղ յես ապրում եմ, իսկապես արդեն արվարձան է համարվում)։

Բանը բուրդ է միայն լեզվի կողմից. խոսակցական գերմաներեն լեզուն ֆրանսերենից անհամեմատ վատ եմ հասկանում։ Գերմանացիք այնչափ անսովոր են արտասանում, որ յես չեմ հասկանում խոսքերը նույնիսկ հրապարակային ճառերում, մինչդեռ Ֆրանսիայում յես սկզբից ևեթ գրեթե ամեն բան հասկանում էի այդպիսի ճառերում։ 2 օր առաջ յես թատրոնում էի, ներկայացնում էին Հաուպտմանի «Weber»-ը**։ Չնայած ներկայացումից առաջ նորից կարդացել ամբողջ դրաման, խաղին հետևելու նպատակով, յես չկարողացա հասկանալ բոլոր ֆրազները։ Սակայն չեմ հուսահատվում և ափսոսում եմ միայն, որ շատ քիչ ժամանակ ունեմ այդ լեզուն հիմնովին ուսումնասիրելու համար։

Բարև մերոնց բոլորին։

Քո Վ. [Ուլյանով]

Յեթե դու արդեն ինձ փող ես ուղարկել, ապա այդ մասին գրիր ինձ խնդրեմ, իսկույն. յեթե չես ուղարկել, ուղարկիր այստեղ։

Այսքան յերկար ձեզնից նամակ չունենալու պատճառը յերևի՞ այն է, որ նրանք (նամակները) զբոսնում են որ[ևէ] տեղ իմ թափառած վայրերում։

8

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ - Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[17] 29/VIII [18]95. [Բեռլին]

Այս օրերս ստացա քո նամակը, թանկագին մայրիկ, իսկ այսօր նամակ նաև Մարկից, որին մի փոքրիկ գրություն եմ կցում[1].

* Կենդանաբանական այգի—Խմբ։

** «Ջուլհակները»—Խմբ:

Ապրում եմ առաջվա նման և Բեռլինից առայժմ գոհ եմ։ Բոլորովին լավ եմ զգում ինձ,—յերևի կանոնավոր կյանքը (անվերջ տեղափոխումները մի տեղից մյուսը ինձ շատ են ձանձրացրել, և ընդ վորում այդ տեղափոխությունների ժամանակ չեր հաջողվում կանոնավոր ու կարգին սնվել), լողանալը և այլն, բժշկական պատվերները պահպանելու հետևանքով իր ներգործությունն է ունենում։ Պարապում եմ առաջվա նման Königliche Bibliothek-ում*, իսկ յերեկոները սովորաբար թրև եմ գալիս զանազան տեղերում, ուսումնասիրելով Բեռլինի բարքերը և ականջ դնելով գերմաներեն բառերին։ Այժմ արդեն մի քիչ ընտելացել եմ և մի քիչ ավելի լավ եմ հասկանում, թեև այնուամենայնիվ դեռևս շատ և շատ վատ։

Բեռլինի Sehenswürdigkeit-ները** հաճախելու մեջ շատ ծույլ եմ։ Յես առհասարակ նրանց նկատմամբ բավական անտարբեր եմ, և մեծ մասամբ պատահական է լինում իմ հաճախումը։ Ինձ զանազան ժողովրդական յերեկույթներում և զվարճավայրերում թրև գալն ավելի յե դուր գալիս, քան թե թանգարանները, թատրոնները, պասաժները և այլն և այլն հաճախելը։

Գալով այն հարցին, թե վորչափ եմ մնալու այստեղ²,—յերկար մնալու մտադրություն չունեմ («հյուր լինելը լավ է, տանը՝ ավելի լավ»։ Առայժմ, սակայն, կմնամ այստեղ, և, ի մեծ սարսափ իմ, տեսնում եմ, վոր ֆինանսների կողմից նորից «դժվարություններ» են ծագում. գրքեր և այլն գնելու «հրապույրը» այնքան մեծ է, վոր փողերս, սատանան գիտե, ինչպես են հատնում։ Ստիպված եմ նորից դիմելու «ոժանդակության»—յեթե կարելի՞ է, ուղարկիր ինձ մի 50—100 ռուբլի։

Մարկը գրում է, վոր բնակարանի կողմից Ձեր գործերն ուղղակի տրագիկ վիճակի մեջ են՝ բնակարաններ չկան։ Մասկվան, ուրեմն, այդ տեսակետից Պետերբուրգից էլ վատ է։ Ջափազանց անախորժ բան է, գիտեմ, բնակարանային այդ չարչարանքը։ Ցանկանում եմ վորքան կարելի յե շուտ ազատվեք այդ չարչարանքից։

Բարև բոլոր մերոնց։

Քո Վ. Ուլ[յանով]

¹ Այստեղ հիշատակվող կցված գրությունը չի պահպանվել։

² Ըստ յերևույթին, Մ. Ա. Ուլյանովան, յերկյուղ կրելով, վոր Վ. Ի.-ին Ռուսաստանում նորից կձերբակալեն, խորհուրդ եր տալիս նրան, վորքան կարելի յե, յերկար մնալ արտասահմանում։

9

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

7 Sept[ember] [սեպտեմբերի] 26 օգ[ոստոսի] [18]95. [Բեռլին]

Թանգագին մայրիկ, այսոր ստացա քո նամակը՝ փողով հանդերձ, և շնորհակալ եմ դրա համար։ Ինձ զարմացնում է յեղանակների այսպիսի սուր տարբերությունը. դու գրում ես, վոր ձեզանում ցուրտ է, իսկ այստեղ այնպիսի տոթ շոգ է, վորպիսին ամբողջ օգոստոսին չի յեղել, այնպես վոր յես կարծում եյի, վոր հավանաբար դեռ կապրեք ամառանոցում։

* Կայսերական գրադարան։—Խմբ։

** Հիշատակության արժանի վայրերը։—Խմբ։

Ապրում եմ յես այստեղ առաջվա նման և արդեն այնքան եմ ընտելացել այստեղի կյանքին, վոր զգում եմ ինձ գրեթե ինչպես տանը և հաճույքով դեռ յերկար կմնայի այստեղ, սակայն մոտենում է արդեն մեկնելու ժամանակը, և յես սկսում եմ մտածել զանազան գործնական հարցերի մասին, ինչպես, օրինակ, իրեր և ճամպրուկ գնելու մասին, տոմսերի մասին և այլն։ Հարկավոր չե՞ արդյոք, վոր ձեզ համար վորևե բան հետս բերեմ։ Յես այստ[եղ] կարող եմ ամենտեսակ բաներ գնել վորևե մեծ խանութում, և ինչպես թվում է՝ ֆաբրիկատներն այստ[եղ] մերից եժան են և յերևի՝ լավ։ Գուցե Միտյային հարկավոր են վորևե գրքեր. թող գրի, (օր[ինակ], գուցե վորևե անատոմիական ատլաս, կամ մի վորևե ուրիշ բժշկական բան), Մանյաշան էլ նույնպես։ Յեթե նա վոչինչ նկատի չունի,—գուցե դու կամ Անյուտան խորհուրդ կտաք ինձ, թե ինչ բերեմ հետս Մանյաշային։ Զգում եմ, վոր պետք է գնել զանազան անպետք իրեր...¹

¹ Նամակի յերկրորդ թերթիկը չի պահպանված։

10

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

5[17]X [18]95. [Պետերբուրգ]

Յերեկ ստացա, թանգագին մայրիկ, քո 2/X նամակը։ Վերջապես, ինչպես թվում է, ինձ համար մի լավ սենյակ գտա։ Ուրիշ բնակվողներ չկան, տանտիկնոջ ընտանիքը փոքր է, և իմ սենյակից նրանց դահլիճը տանող դուռը բոլորովին փակ է, այնպես վոր ձայները խուլ են լսվում։ Սենյակը մաքուր է և լուսավոր։ Մուտքը լավ։ Քանի վոր միևնույն ժամանակ կենտրոնից էլ հեռու չեմ (օր[ինակ] վոտքով մոտ 15 րոպե յե մինչև գրադարանը), ուստի յես միանգամայն գոհ եմ։

Տ[իլլոյին]¹) տեսա յերեկ և այսոր։ Նա տոմս չի ճարել, չի էլ կարող, դժբախտաբար, ճարել, վորով[հետև] չկա այն մարդը, վորի վրա նա հույս եր դնում։ Սակայն յերբ իր սեփական գրությունը յերկաթուղ[իների] ժամանակավոր վարչության մեջ ամրանա, այն ժամանակ, ասում է, գուցե։ Սակայն ըստ յերևույթին չի լինի։

Գալուց քիչ հետո յեղա Վոլկովյան գերեզմանատանը². այնտեղ ամեն ինչ իր տեղն է՝ և՛ խաչը և՛ պսակը։

Քեզ սիրող Վ. Ուլյանով

Խնդրում եմ մի քիչ փող ուղարկես ինձ. իմ փողերը հատնելու վրա յեն*։ Սամարայից ինձ գրում են, վոր Գրաֆովի գործից³ (Սամարայում իմ վարած Կաղանի գործից) խոստացել են վճարել նոյեմբերին։ Այդ ինձ կտա (յեթե խոստումը կատարվի, իսկ թե վորչափ հաստատ է, չգիտեմ) մոտ 70 ռուբլի։ Ինձ այստեղ մի իրավախորհրդատուի մեջ տեղ են խոստանում, սակայն թե այդ
գործը հատկապես յերբ գլուխ կգա (և գլուխ կգա, թե վոչ) չգիտեմ։

Գրիր, ի՞նչ վիճակում են քո ֆինանսները, ստացա՞ր արդյոք վորևե բան

* Հարկ կլինի վճարել մոտ 10 ռ., յերբ ինձ ոգնական ընդունեն, վորը ցուցակում պիտի լինի։

մորաքրոջիցդ. ստացա՞ր արդյոք Կրուշվիցից[4] սեպտեմբեր ամսվա կապալավարձը. շա՞տ է մնացել արդյոք նախավճարից (500 ռ[ուբլու]) տեղափոխվելու և սարքվելու վրա կատարած ծախսերից հետո։

Առաջին անգամն է, որ յես Ս[անկտ] Պ[ետեր]բ[ուրգում] սկսել եմ վարել յելևմտից գիրք, վորպեսզի տեսնեմ, թե վորքան եմ իրոք ծախսում։ Դուրս է գալիս, վոր 28.VIII-ից մինչև 27.IX-ը մի ամսվա ընթացքում ծախսել եմ ընդամենը 54 ռ. 30 կ., չհաշվելով իրեր գնելու ծախսը (մոտ 10 ռ.), և մի դատական գործի համար, վոր յես դույցե վարեմ, կատարած ծախսս (նույնպես մոտ 10 ռ[ուբլի])։ Ճիշտ է, այս 54 ռ[ուբլու] մի մասն այնպիսի ծախսերից է, վոր ամեն ամիս կրկնվելու չէ (կալոշ, հագուստ, գրքեր, համրիչ և այլն), սակայն և առանց դրա (16 ռ[ուբլու]) այնուամենայնիվ չափազանց մեծ ծախս է ստացվում՝ 38 ռ. ամսական։ Պարզ բան է, վոր շռայլ եմ ապրել—միայն ձիաքարշի վրա, որ[ինակ], ամսական 1 ռ. 36 կոպ. եմ ծախսել։ Յերևի ընտելանալով այստեղի կյանքին, պակաս կծախսեմ։

[1] Ընկեր Տիլլո Ալբերտ Եդուարդովիչը պաշտոնաթող կոլլեժսկի քարտուղար եր, վորը յերկաթուղու վրա յեր ծառայում։ 1896 թվին Ա. Ե. Տիլլոն ՍՊԲ-ի ժանդարմական վարչության կողմից պատասխանատվության եր կանչվել, ընդ վորում նա, իմիջի այլոց, մեղադրվում եր սահմանից «հանցավոր հրատարակությունները» անցկացնելու մեջ։

Իր «Չհրապարակված հիշողությունների» հոդվածի մեջ (Պսկով) Յու. Մարտովը գրում է. «Չեկավ նույնպես («Պսկովի խորհրդակցությանը»։—Խմբ.) մեր սպասած ինժեներ և արդյունաբերական գործիչ Տիլլոն, վոր դեռ 80-ական թվականներից սոցիալ-դեմոկրատ եր, և վորը Ս. Ի. Ռադչենկոյի հետ միասին այդ ժամանակ Պետերբուրգում «օրթոդոքս» տրոյկային յեր մարմնացնում և ոգնում եր նրան «Պայքարի միության» մեջ «եկոնոմիստորեն տրամադրված» յերիտասարդության գրոհի դեմ պայքարելու» («Լենինյան ժողովածու» IV, ռուս. հր., եջ 58, ինչպես և 59)։

[2] Վոլկովյան գերեզմանատանը թաղված է քույրը, Ոլգա Իլյինիչնան, վորը 1891 թվի գարնանը վախճանվել եր Պետերբուրգում վորովայնային տիֆից։

[3] Թե ինչ գործի մասին է խոսքը՝ չհաջողվեց պարզել։

[4] Կրուշվիցին կապալով եր տրված մորը պատկանող Ալակայեվկա (այժմ Լենինկա) խուտորը։

11

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[Հոկտեմբեր[1] 1895 թ. Պետերբուրգ]

Մ ա ն յ ա շ ա յ ի ն

Հետաքրքրությամբ կարդացի քո սեպտ[եմբերի] 27-ի նամակը և շատ գոհ կլինեյի, յեթե մեկ-մեկ դու գրեյիր ինձ։

Այստեղ յես դեռ չեմ յեղել վոչ Երմիտաժում, վոչ թատրոններում։ Մենակ գնալու մի տեսակ տրամադրություն չկա։ Մոսկվայում մեծ հաճույքով քեզ հետ կգնամ Տրետյակովի գալլերեյան և ելի վորևե ուրիշ տեղ։

Р[усские] Вед[омости]-ն կարդում եմ Հանր[ային] Գրադարանում (2 ժամաթ հետո)։ Գուցե բաժանորդագրվեմ, յերբ աշխատանք գտնեմ այստեղ։ Ինձ համար նրա համարները չարժե պահել, սակայն և վաղաժամ պատռել էլ կարծում եմ նույնպես պետք չէ. կարող է վորևե հետաքրքիր բան հարկավոր լինել։

Ֆրանսերենի ուսուցչի մասին քո պատմածից տեսնում եմ, վոր Մոսկվայի գիմնազիայի աշակերտուհիները, յեթե նույնիսկ քեզնից առաջ են անցել—բայց շատ փոքր չափով։ Միջակ աշակերտուհիները յերևի քեզանից ավել չգիտեն։ Դու, շա՞տ ժամանակ ես արդյոք նվիրում դասերիդ տանը։

Միտյային ասա, վոր վոչ մի գործ չունենա այդ սրիկա բուկինիստի հետ, վոր Կլյուչևսկու[2] համար 25 ռուբլի յե ուզում. 4 ռուբլուց ավել չի կարելի տալ։ Ի՞նչպես են ընթանում Միտյայի պարապմունքները։

Ցտեսություն։

Քո Վ. Ու[լյանով]

Կարողանո՞ւմ ես ջոկել իմ ձեռագիրը։

[1] Թվականի հիմնավորումը՝ Մ. Ի.-ի սեպտեմբերի 27-ի նամակի մասին հիշատակությունը։

[2] Խոսքը, յերևի, ռուսական նոր պատմության վերաբերյալ վիմագրական ձևով հրատարակված դասախոսությունների մասին է, վորոնք սկսել եյին հրատարակվել դեռ 1880/81 ուսումնական տարուց։

12

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

5[17]XII [18]95. [Պետերբուրգ]

Թանգագին մայրիկ, յերեկ Անյուտայից նամակ ստացա, վորի մեջ նա հաղորդում է, վոր դու Արդաշևների[1] հետ միասին մտադիր ես գնալ Կազան. և շտապում եմ գրել քեզ։

Արդաշևներն այսօր եյին ուզում մեկնել։ Դ[միտրի] Ա[լեքսանդրովիչ] [Արդաշևը] ինձ առաջարկում է վերցնել նրա ազգականի ժառանգության իրավունքների մեջ հաստատվելու գործը, սակայն մենք դեռ ամբողջովին չենք համաձայնվել։

Ապրում եմ առաջվա պես։ Սենյակիցս շատ էլ գոհ չեմ, նախ՝ վորովհետև տանտիկինս բծախնդիր կին է, յերկրորդ՝ պարզվեց, վոր հարևան սենյակը բաժանվում է մի բարակ միջապատով, այնպես վոր ամեն ինչ լսվում է, և յերբեմն ստիպված եմ փախչել բալալայկայից, վոր նվագում է իմ հարևանը և ուղղակի դադար չի տալիս իմ ականջներին։ Բարեբախտաբար, այդ մինչև այժմ հաճախ չի պատահել, մեծ մասամբ նա տանը չի լինում և այդ միջոցներին բնակարանը շատ խաղաղ է։

Կմնամ արդյոք այստեղ մի ամիս էլ, թե վոչ,—առայժմ չգիտեմ[2]։ Կտեսնեմ։ Համենայն դեպս ծննդյան տոներին, յերբ վերջանում է սենյակիս ժամկետը, դժվար չի լինի գտնել մի ուրիշը։

Այժմ այստեղ շատ լավ յեղանակներ է անում, և իմ նոր վերարկուն իսկ և իսկ հարմար է գալիս սեզոնին[3]։

[1] Արդաշևները Վ. Ի.-ի մորեղբոր վորդիքն են։

[2] Լույս 9.XII-ի գիշերը Վ. Ի. ձերբակալվեց։

[3] Նամակի յերկրորդ թերթիկը չի պահպանվել։

13

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

15[28]III 1900 [Պսկով]

Այս օրերս ստացա նամակդ, թանգագին մայրիկ։ Նադյայի մասին խնդրագիրն ուղարկել եմ 10-ին[1] և շուտով սպասելու յես պատասխանի։ Յեթե (սպասածիս հակառակ) պատասխանն անբարենպաստ լինի, յես իրոք մտադիր եմ խնդրել քեզ (յեթե դու կատարելապես առողջ լինես), վոր դու ուղեվորվես անձամբ խնդրելու։ Սակայն այդ դեպքում, հետո կտեսնենք...

«Жизнь»-ը[2] ստացա, այնպես վոր մի ուղարկեք։

Ցինդրեյի Անյուտային Archiv-ն[3] ուղարկել Նադյային (յերկրորդ օրինակը յես ժամանակավորապես դրա այստեղ)։ Յես այստեղ ապրում եմ բավարար, հաճախ լինում եմ գրադարանում և զբոսնում եմ։

Ներիր, վոր շատ կարճ եմ գրում՝ ուշանում եմ փոստից։

Պինդ համբուրում եմ քեզ և ուղարկում եմ վողջույնս մերոնց բոլորին։

Քո Վ. Ու[լյանով]

Այստեղ գովում են մի բժշկի, և յես ուզում եմ խորհրդակցել նրա հետ իմ կատարրի մասին։ Պիտերում, ասում են, գարունը վոր մոտենում է, սկսվում են զանազան համաճարակ հիվանդություններ[4]։

[1] Այդ խնդրագիրը դեռևս չի հաջողվել գտնել։

[2] «Жизнь»-ի 1900 թ. փետրվարի համարում զետեղված էր Վ. Ի.-ի «Կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ» հոդվածը (քննադատություն Բուլգակովի մի հոդվածի, վորն ուղղված էր Կաուցկու գրքի դեմ)։ Հնարավոր է, վոր հենց այդ հոդվածը պարունակող համարի մասին է հիշատակվում նամակում։

[3] «Archiv für soziale Gesetzgebung und Statistik»—«Սոցիալական օրենսդրության և վիճակագրության արխիվ»—հրատարակում էր Հենրիխ Բրաունը, հիմնված է 1888 թ.։ Հանդեսը մեծ տեղ էր նվիրում բանվորական օրենսդրությանն ու բանվորական շարժմանը։ Հանդեսին աշխատակցում էյին ամենաաչքի ընկնող «մարքսիզմի քննադատները» (Զոմբարտը և ուրիշն., ռուսներից՝ Պ. Ստրուվեն, Բուլգակովը և ուրիշն.)։ Այն ժամանակվա մարքսիստական գրականությունը համեմատաբար մեծ ուշադրություն էր նվիրում այս հանդեսին։ 1904 թվից սկսած հանդեսը լույս է տեսնում Վ. Զոմբարտի, Մ. Վեբերի և Է. Յոֆֆեյի խմբագրությամբ «Archiv für Sozialwissenschaft und Sozialpolitik» անվանակ։ Հանդեսն այժմ էլ հրատարակվում է Լեդերերի խմբագրությամբ։

[4] Վ. Ի. նկատի ունի ձերբակալությունները։

14

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[10/IV] 28/III [1900] [Ուֆա]

Ինչ-վոր վաղուց է նամակ չեմ ստացել վոչ քեզնից, վոչ էլ Անյուտայից։ Ինչպես յերևում է՝ իմ վերջին կոլեկտիվ նամակը ձեզ չի գոհացրել, այն ժամանակ մի տեսակ շատ վատ էր գրվում։ Որերս մեր սիբիրյակները «կոլեկտիվ»

նամակի համար ինձ խիստ հայհոյեցին. Վալոդյային էլ բաժին հասավ՝ նա հինգ հոգու միասին 20-տողանոց նամակ էր գրել և դրա փոխարեն 5 նամակ էր ուզում ստանալ։ Ձեռ առան, ծաղրեցին։ Այսպես ուրեմն։

Շնորհավորում եմ քեզ, սիրելի Մարուսյա, և հաջողություն ցանկանում։ Քանի վոր յես Մարիա Ալեքսանդրովնային ուղղած նամակում իմ վերաբերյալ արդեն ամեն ինչ դուրս եյի տվել, ուստի գրելու յեմ ընդհանուր ծանոթների մասին։ Անցնելիս այցելեց մեզ Յեգորը[1]։ Սաստիկ ուրախացա նրան տեսնելով, թե չէ՝ չգիտեյի էլ, ինչ մտածել նրա մասին։ Նրա դեմքը կենդանի յեր ու փայլուն։ Անդադար բլբլացնում էր։ Պատմում էր,— վոր Վ[ասիլի] Վ[ասիլյեվիչ]ը[2] լավ տեղ է ստացել Ոմսկում, վոր Տոնյան[3] աղջիկ է բերել, նրանք յերկուսն էլ առողջ են, [Նվվիրա] Ն[ընեստովնա]-ն[4] հիացած է իր թոռից (առաջին թոռի վերաբերմամբ նա բավական անտարբեր էր)։ Լավ տեղ է ստացել նաև Գլեբը[5]—դեպոյի պետի ոգնականի պաշտոն Տոմսկի մոտ։ Զինան[6] առայժմ նստած է Նիժնեուդինսկում։ Նրանց գործերն ուրեմն հաջող են գնում։ Իսկ Ռիգայում վատ է ապրում խեղճ Մ[իխայիլ] Ա[լեքսանդրովիչը][7]։ Նա գրում էր, վոր կյանքը կազարմաներում ժամանակից աշխատանքից էլ վատթար է։ Նրան մենակ վոչ մի տեղ չեն թողնում, այլ միշտ՝ զինվորի ուղեկցությամբ, այն էլ միայն խանութ։ Նրանից բոլոր գրքերը խլել են, բացի գերմաներեն բառարանից և քաղաքացիական իրավունքից։ Վատ են կերակրում։ Սեփական վոչ մի բան ունենալ չի լինում. իսկույն բոլորը գողանում են։ Այնքան վատ հագուստ են տալիս, վոր ստիպված ես լինում սեփականն ունենալու։ Իսկ ամենավատն այն է, վոր Մ. Ա.-յին տեղավորել են հենց այն վաշտի մեջ, վոր բանվորների դեմ էր կռվում։ Զինվորները մի բանվորի սպանելու համար 10-ական ռուբլի պարգև եյին ստանում և այն դեպքում, յերբ պահակ եյին լինում, կրակում եյին իրենց սեփական նախաձեռնությամբ։ Ահա թե ինչպիսի բաներ։ Մինուսինսկի ընկերները բոլորը վողջ-առողջ են։ Քիչ առաջ նամակ ստացա այնտեղից։ Շատ ուրախացա։ Առհասարակ յես չեյի էլ յերևակայում, վոր այդքան կապվել եմ բոլոր մինուսինցիներին։ Բ[արամզին]-ը[8], վորին մենք թողել եյինք մեր շունը, պատրաստվում է մատուցել մեզ (հատկապես Վալոդյային) նրա պատկերը, Նա շատ լավ էր նկարում։ Մեր շունն առհասարակ լավ վիճակի մեջ է և դարձել է ընդհանուրի սիրելին։

Շան մասին խոսելիս միտս յեկավ Լիրոչկան[9]։ Նա մի անգամ իմ միջոցով հանձնարարություններ էր տալիս, և դրանցից մեկը ամենամանրամասն տեղեկություններ էր պարունակում մի ինչ-վոր գզգզված շան մասին։ Մեր ընդհանուր ծանոթ կանանցից մեկը նորերս նամակ էր ստացել նրանից և այդ գրությունից քաղվածքներ էր ուղարկել ինձ։ Նամակի տեսական մասն ինձ այնքան էլ դուր չեկավ, ասում է, վոր Բեր[նշտայնը][10] թեորետիկ[ական] տեսակետից վոչինչ չի տալիս։ «Այդ ինչ-վոր իդիոտիզմ է», սակայն, իբր թե նրա գրքի պրակտիկ նշանակությունը հսկայական է, իբր թե ուշադրություն է դարձրել մասսաների պահանջներին, կոչ է անում դեպի կյանքը, դեպի կոնկրետությունը։ Գրքի հաջողությունը բացատրվում է նրանով, վոր որթոդոքսալ ուղղությունն արդեն շատ է համը տարել։ Բան[աձե]-ի[11] մասին ասում է, վոր այնտեղ յեռանդը յեռ է գտնում նրա մեջ, վոր հնարում է ուղիներ, վորոնցով պետք է ընթանա զարգացումը։ Առհասարակ Լ[իրոչկան] ինձ համար մի տեսակ x է։ Մենք նրա հետ առաջ մշտապես զարմանալի կերպով համակարծիք եյինք, սակայն վերջին յերեք տարիներս նրա հետ մի ինչ-վոր բան է պատահել, յես

նրան բոլորովին չեմ կարողանում ճանաչել: Յեթե մենք տեսնվեյինք, գուցե միևնույն հայացքների գայինք, սակայն նամակագրությունից… բոլորովին բան դուրս չի գալիս: Նա այն Լ[իրոչկան] չէ, վորին յես ճանաչում եյի: Գրել մառախուղների, յեղանակների և նման բաների մասին՝ չարժի, իսկ այլ բաների մասին նա ըստ յերևույթին չի ուզում, համ էլ մի տեսակ դուր չի գալիս: Ճիշտն ասած, յես չեմ կարող հաշտվել նրա ամուսնանալու հետ: Նրա ամուսինը[12] մի տեսակ ինքնավստահ-սահմանափակ անձնավորության տպավորություն է թողնում ինձ վրա: Սակայն այս նյութի մասին շատ յերկարացրի:

Ցտեսություն: Համբուրիր Անյուտային և բարևիր իմ կողմից Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]-ին:

Քո Նադյա

[1] Մարտով Լ. (Յու. Օ. Ցեդերբաում) (1873—1923)—Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող միության» անդամներից է «Искра»-յի հիմնադիրներից մեկն եր, վորին մասնակցություն եր ցույց տալիս Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցության 2-րդ համագումարում գլխավորեց փոքրամասնությունը և այդ ժամանակից մինչև մահը մնաց մենշևիզմի ամենաաչքի ընկնող իդեոլոգն ու հրապարակախոսը, մենշևիկյան կուսակցության բոլոր կենտրոնական հիմնարկների անփոփոխ անդամը և մենշևիկյան հրատարակությունների խմբագիրը: Մանրամասնությունները տես Լենինի Յերկեր, IV հատոր, ռուս. 2-րդ հրատարակություն, եջ 641:

[2] Վ. Վ. Ստարկով (1869—1925)—ինժեներ-տեխնոլոգ, իր հեղափոխական գործունեյությունն սկսել է 90-ական թվականներին. Լենինի, Կրժիժանովսկու և ուրիշների հետ միասին ձերբակալվել է 1895 թվի դեկտեմբերին, «Բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող Սպբ. միության» գործով, 1897 թվին աքսորվել է Արևելյան Սիբիր 3 տարով: Աքսորից հետո, 1900 թվից սկսած աշխատում է զանազան գործարաններում և ձեռնարկություններում իր մասնագիտությամբ, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը կուսակցական աշխատանքներում ակտիվ մասնակցություն չունենալով: Իր կյանքի վերջին տարիներում ԽՍՀՄ առևտրական ներկայացուցչի տեղակալն եր Գերմանիայում:

[3] Ա. Մ. Ռոզենբերգ—Վ. Վ. Ստարկովի կինը:

[4] Ե. Ռոզենբերգ—Ա. Մ. Ռոզենբերգի մայրը:

[5] Գ. Մ. Կրժիժանովսկի (ծնվ. 1872 թ.)—կուսակցության հին, աչքի ընկնող անդամ: 1895 թվին Վ. Ի.-ի հետ միաժամանակ ձերբակալվել է և աքսորվել Յենիսեյսկի նահանգի Մինուսինսկի գավառը: «Պսկովի խորհրդակցությանը» ընտրվում է կուսակցության 2-րդ համագումարը հրավիրող Կազմ. Կոմիտեյի անդամ. 2-րդ համագումարում հեռակա ընտրվում է Կենտկոմի անդամ: Ներկայումս Համ.Կ(բ)Կ Կենտկոմի անդամ է, Պետպլանի նախագահ: Մանրամասնությունները տես «Լենինյան ժողովածու» VI, ռուս. հրատ., եջ 210—211:

[6] Զ. Պ. Կրժիժանովսկայա—կուսակցության հին անդամ, «Բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող միության» անդամներից մեկը: 1902 թվին «Искра»-յի ռուսական կազմակերպության բյուրոյի քարտուղարն եր: Մանրամասնությունները տես «Լենինյան ժողովածու» VIII, ռուս. հրատ., եջ 224:

[7] Մ. Ա. Սիլվին, վոր այն ժամանակ զինվորական ծառայության մեջ եր (ծն. 1874 թ.), իր հեղափոխական գործունեյությունն սկսել է 1891 թվին Նիժնի-Նովգորոդում, 1893 թվից սկսած կապ է հաստատում «ծերերի», Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող միության» հիմնադիրների հետ: Աքսորված եր Յերմակովսկոյե գյուղը (30 վերստ Շուշենսկոյե գյուղից հեռու, վորտեղ գտնվում եր Լենինը), 1899 թվին մասնակցում է աքսորյալների ժողովին, վորոնք ընդունում են «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների բողոքն» ընդդեմ «Credo»-յի: Հետագայում աշխատում է իբրև «Искра»-յի գործակալ: Ռեակցիայի տարիներին հեռանում է քաղաքական գործունեյությունից: Մանրամասնությունները տես՝ «Լենինյան ժողովածու» VIII, ռուս. հրատ., եջ 144:

[8] Ցե. Վ. Բարամզին (1867—1920)—սկսել է հեղափոխական աշխատանքը 1891—1892 թ.թ., լինելով արդեն մարքսիստ, ուսանող յերիտասարդության խմբակներում. 1899 թ. Յերմակովսկոյե գյուղում Լենինի խմբակի հետ միասին ստորագրում է բողոքը «Credo»-յի դեմ, հետագայում աշխատում է իբրև «Искра»-յի ռուսական կազմակերպության անդամ: Մանր. տես՝ «Լենինյան ժողովածու» VIII, ռուս. հրատ., եջ 235:

[9] Ապոլլինարիա Ալեքսանդրովնա Յակուբովա (Կուբա, Լիրոչկա)—«Բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող միության» անդամներից մեկը: Մի ժամանակ համակրում եր «եկոնոմիստներին», իսկ հետագայում անցնում է «Искра»-յի կողմը: Նրա մասին տես՝ կենսագրական տեղեկությունները «Լենինյան ժողովածու» VI, ռուս. հրատ., եջ 196—197:

[10] Խոսքը Բեռնշտայնի «Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie» («Սոցիալիզմի նախադրյալները և սոցիալ-դեմոկրատների անելիքները») գրքի մասին է: Պետրովին (Լենինին) ուղղած նամակի մեջ 1900 թ. հոկտ. 23-ին Ա. Ա. Յակուբովան գրում է. «Ինչ-վոր մեկը ձեղանում ինձ «բեռնշտայնական» է համարում: Ծիծաղելի յե, վոր այդ ասեկոսեն հորինվել է ավելի շուտ, քան նույնիսկ իմ՝ վորևէ Բեռնշտայնի մասին լսելը: Եհ, պարոններ, պարոններ: Անպատճառ պետք է կպցնել մի մականուն, մի ետիկետ և ապա սկսել տարածել այդ ամենուրեք: Կարող եմ մի բան ասել միայն, վոր յես առաջին անգամ կարդացի Բեռնշտայն ռուսերեն թարգմանված և… զարմացա: Մի՞թե, մտածում եյի յես, յեվրոպական միտքն այժմ այնչափ աղքատ է, վոր նույնիսկ այդպիսի թեթևակշիռ գրողները նրա մեջ ամբողջ հեղափոխություններ են կատարում կամ ավելի ճիշտ՝ այդքան աղմուկ են առաջացնում: Անշուշտ, նա ճիշտ մտքեր էլ շատ ունի, բայց ավաղ, դրանք նոր չեն»:

[11] Խոսքն, ըստ յերևույթին, «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների բողոքի» կամ «Credo»-յի մասին է (Ցե. Կուսկովայի և Ս. Պրոկոպովիչի «Credo»-յի դեմ), վոր գրել եր Վլադիմիր Իլյիչը և ընդունվել է 1899 թ. ամառը, Յերմակովսկոյե գյուղում 17 հոգու ժողովում: Տես Լենինի Յերկերը, ռուս. հրատ., 2-րդ հատ., 2-րդ հրատարակություն, եջ 473—486:

[12] Կ. Մ. Տախտարյով—1894—1897 թ. «Պետերբուրգի պայքարի միության» աչքի ընկնող գործիչ, եկոնոմիստ, «Рабочая Мысль»-ի խմբագիր: Մանրամասն. տես՝ «Լենինյան ժողովածու» IV, ռուս. հրատ., եջ 199, ծան. 10:

15

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Պոդոլսկ, Մոսկվայի նահանգ, Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային Կեդրովայի տուն:

[19] 6/IV 1900. [Պսկով]

Այսօր ստացա նամակ Մանյաշայից (3/III-ի), թանգագին մայրիկ, վորտեղ նա ամաչեցնում է իմ լռության համար: Յես իսկապես մեղավոր եմ — ապր[իլի] 1-ի առիթով մինչև անգամ չեմ շնորհավորել քեզ և Մանյաշային: Բանն այն է, վոր այն ժամանակ կրկին «գլուխս խառնվել եր» (ինչպես արտահայտվել է Նադյան սիբիրցի ընկերներին գրած իր նամակում) յերկար սպասված ճանապարհորդի[1] գալու պատճառով (վորն այժմ արդեն վերադարձել է յերևի տուն):

Ապրում եմ առաջվա նման: Առողջությունս բավարար է, և յես այսօր արդեն փորձեցի դադարել «ջուր»[2] խմելուց: Զբոսնում եմ,—այստեղ վատ չե զբոսնել, Պսկովում էլ (ինչպես և նրա շրջակայքում) կան ըստ յերևույթին շատ գեղեցիկ տեղեր: Այստեղի խանութում գնեցի բացիկներ Պսկովի տեսարաններով և ուղարկում եմ 3 հատ՝ քեզ, Մանյաշային և Անյուտային:

Յերեկ նամակ ստացա Մ[իխայիլ] Ա[լեքսանդրովիչ]ից[3], գրում է (4/IV-ին), վոր վաղը կամ մյուս օրը նորից Սիբիր է ուղևորվում (Ո[լգա] Ա[լեքսանդրովնայի][4] հետ)—զինվորական իշխանությունը մի անգամ էլ փոխել է նրա ծառայության տեղը: Խոստանում է Աչինսկից ուղարկել նոր հասցեն:

Նադյան յերևի պառկած է. բժիշկը գտնում է (ինչպես նա գրում եր մոտ մի շաբաթ առաջ), վոր նրա (կանացի) հիվանդությունը համառ բուժում է պահանջում, վոր նա 2—6 շաբաթ ժամանակով պիտի պառկի: (Յես նրան էլի փող ուղարկեցի (Վոդովոզ[ովայից][5] ստացա 100 ռ.), վորովհետև բուժվելու համար բավական ծախսեր են հարկավոր: Ինձ առայժմ ունեցածս կբավարարի, իսկ յեթե կպակասի, կգրեմ քեզ): Ուրեմն նա չեր կարող այժմ գալ այստեղ ինձ մոտ, նույնիսկ թույլտվության դեպքում (պատասխան մինչև հիմա չունեմ և այժմ գրեթե դադարել եմ նույնիսկ սպասելուց)[6]: Մտադիր եմ գարնանը, մոտ 1½ ամսից գնալ նրան տեսության[7],—գուցե և ավելի շուտ:

Իմ այստեղի ծանոթս[8] արտասահմանյան անցագիր է վերցնում և մտադիր է ապրիլի 20-ի մոտերքը ուղևորվել բժշկվելու. նրա գնալուց հետո ինձ համար մի քիչ տաղտկալի կլինի այստեղ:

Տեղացի մի գերմանացուց գերմաներենի դասեր եմ վերցնում, դասը՝ 50 կոպեկ: Թարգմանում ենք ռուսերենից—մի քիչ խոսում ենք: Գործն այնքան էլ լավ չի ընթանում և յես արդեն սկսել եմ մտածել, վոր գուցե ձեռք վերցնեմ,—սակայն առայժմ դեռ կնայեմ—կտեսնեմ: Անհասարակ քիչ եմ պարապում. դեռևս չեմ վերջացրել Webb-ի[9] ցանկը:

Լինում եմ գրադարանում, կարդում եմ լրագրեր: Նոր գրքեր քիչ եմ տեսնում: Դավիդովին *[10] չեմ տեսել: Պ. Ստրուվեյին մտադիր չեմ պատասխանել[11] (նրա դեմ մի փոքրիկ մեջբերք[12] ուղարկեցի՝ ի պատասխան Սկվորցովին գրած հոդվածի համար), Կաչարովսկուն[13] տեսա և մտադիր եմ պատասխանել նրան:

* Չի՞ ուղարկի, արդյոք, Մանյաշան, յեթե ունի:

Տեսե՞լ ես արդյոք, Մանյաշա, «Н[аучное] об[озрение]» № 3 և 4: Սքանչելի յե այնտեղ Պիսարևի մասին հոդվածը[14]:

Միտյան, ուրեմն, թողել է ծառայությունը և սկսել է գիտություննե՞րով զբաղվել: Այդ հրաշալի յե: Շա՞տ է աշխատում Մանյաշան: Ի՞նչպես և վո՞րտեղ են տեղավորվում Անյուտան Մարկի հետ:

Շնորհավորում եմ տոնդ, սիրելիս, և պինդ համբուրում քեզ: Շնորհակալություն Մանյաշայից նամակի համար: Միտյային բարևներ:

Քո Վ. Ու[լյանով][15]

[1] Յու. Մարտովը (Յու. Ո. Ցեդերբաումը) Սիբիրից անցել է Պսկով, իսկ հետո մեկնել Պոլտավա: «Պսկովի խորհրդակցության» մասին, վորին ներկա յեր Մարտովը, տես «Լենինյան ժողովածու» IV, «Չհրապարակված հիշողություններից» Մարտովի հոդվածը, ռուս. հրատ., եջ 49—61:

[2] Վ. Ի. մի ինչ-վոր հանքային ջուր եր խմում, վորը նրան ստամոքսի կատարրի դեմ պատվիրել եր բժիշկն արտասահմանում 1895 թ.:

[3] Մ. Ա. Սիլվին:

[4] Ո. Ա. Սիլվինա—Մ. Ա. Սիլվինի կինը:

[5] Մ. Ի. Վոդովոզովա, վորի հրատարակությամբ լույս է տեսել Վ. Ի.-ի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գիրքը: Տես Լենինի Յերկերը, հատոր III, ռուս. 2-րդ հրատ.:

[6] Վոստիկանության դեպարտամենտի պատասխանը Վ. Ի.-ի խնդրագրին առայժմ չի հաջողվել գտնել: Վոստիկանության դեպարտամենտի գործում Վ. Ուլյանովի վերաբերյալ կա միայն Մ. Ա. Ուլյանովայի խնդրագիրը, վորպեսզի Նադեժդա Կոնստանտինովնային թույլատրվի տեղափոխվել Պսկով: Ահա այդ խնդրագիրը.

Վոստիկանության Դեպարտամենտի Նորին Գերազանցություն Պարոն Դիրեկտորին

Իսկական Ստատսկի Խորհրդականի այրի Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովայի

ԽՆԴՐԱԳԻՐ

Նկատի ունենալով, վոր իմ վորդի Վլադիմիր Ուլյանովը ավարտել է իր աքսորի ժամկետը և նրան թույլատրված է վերադառնալ Ռուսաստան՝ դիմում եմ Ձերդ Գերազանցության ամենախոնարհ խնդրով՝ թույլ տալ նրան անցնելիս մնալ ինձ մոտ իր կնոջ հետ միասին մոտ մի շաբաթ ժամանակով, վորովհետև յես նրա հետ յերեք տարի յե, ինչ չեմ տեսնվել, իսկ նկատի առնելով իմ այժմյան թույլ առողջությունը և իմ զառամյալ հասակը, ինձ համար հոգնեցուցիչ է նույնիսկ համեմատաբար վոչ-հեռավոր ճամփորդությունը:

Շատ և շատ խնդրում եմ Ձերդ Գերազանցությանը չմերժել իմ այս խնդիրը, նաև թույլատրել իմ վորդու կին Նադեժդա Կոնստանտինովնային (ծն. Կրուպսկայա) բնակվել իր ամուսնու հետ Պսկովում, վորտեղ ամուսինը մտադիր է շարունակել իր զբաղմունքն ըստ յերդվյալ հավատարմատարի:

Մարիա Ուլյանովա

Մոսկվա, 2 փետրվարի 1900 թ.

Բախմետյեվսկի փողոց, տ. 25, բնակ. 4:

(Վոստիկանության դեպարտամենտի՝ Վլադիմիր Ուլյանովի վերաբերյալ գործից: № 25.929, թերթ 75):

Վ. Ի.-ի մի շաբաթ Մոսկվա գալը թույլատրվում է (տես նույն գործի մեջ Ոստիկանության դեպարտամենտի գրությունը № 3117—27 մարտի 1900 թվի, № 3719—3 ապրիլի 1900 թ., № 4243—29 ապրիլի 1900 թ.), իսկ Նադեժդա Կոնստանտինովնայի Ուֆայից Պսկով փոխադրվելը՝ մերժվում։

7 Վ. Ի. 1900 թ. ամառը Ուֆա յեր մեկնել իր մոր և Աննա Իլյինիչնայի հետ միասին և այնտեղ մնաց մի ամսից քիչ ավելի, հուլիսի 10-ական թվերին վերադառնալով Պոդոլսկ։ Մեկնել եր նա այնտեղ վոչ թե «անլեգալ», ինչպես այդ սխալմամբ նշված է I «Լենինյան ժողովածուի» մեջ—«Основные вехи»-ում եջ 170, այլ դրա համար հատուկ թույլտվություն ստանալով վոստիկանության դեպարտամենտից։ Տես նամակ 19։

8 Ա. Ն. Պոտրեսով, «Искра»-յի հիմնադիրներից մեկը, 1900 թ. ապրիլի 20-ական թվերին մեկնեց արտասահման։ Իր «Չհրատարակված հիշողություններից» հոդվածում Մարտովը գրում է. «Վորոշված եր, վոր Ա. Ն. Պոտրեսովը ամենամոտիկ ժամանակներս արտասահման կմեկնի, անմիջական կապեր կհաստատի Պլեխանովի և Աքսելրոդի հետ և հենց այժմյանից հող կտանի տեսական ժուռնալ հրատարակելու, վորը համենայն դեպս արտասահմանում պիտի լույս տեսնի»։

Բացի դրանից Պոտրեսովը «Գերմանական սոցիալ-դեմոկրատների մոտ պիտի պարզեր Գերմանիայում կոնսպիրատիվ կերպով լրագիր հրատարակելու հնարավորությունները»... («Լենինյան ժողովածու» IV, ռուս. հրատ., եջ 60)։ Կենսագր. տեղեկ. տես Լենինի Յերկերը, հատ. IV, ռուս. 2-րդ հրատ., եջ 646։

9 Աքսորում Վ. Ի. թարգմանում եր Սիդնեյ և Բեատրիսա Վեբբի «Անգլիական տրեդյունիոնիզմի թեորիան և պրակտիկան» (Industrial Democracy) գրքի առաջին հատորը և խմբագրում յերկրորդ հատորի թարգմանությունը, վորը կատարել եր Յե. Սմիրնովը (Գուրեվիչը)։ Գիրքը լույս տեսավ Ո. Ն. Պոպովայի հրատարակությամբ։ Տնտեսագիտական գրադարան, Պ. Ստրուվեյի ընդհանուր խմբագրությամբ։ Հատ. I, ՍՊԲ., 1900 թ., հատ. II, ՍՊԲ., 1901 թ.։

10 Խոսքը Ի. Դավիդովի «Ի՞նչ է ուրեմն տնտեսական մատերիալիզմը» գրքի մասին է։ Քննադատական-մեթոդոլոգիական ուրվագիծ։ Խարկով։ Հրատ. Վ. Ն. Գալովկինի, 1900 թ. («Вопросы современности» գրադարան, պրակ III)։

11 Ըստ յերևույթին նկատի ունի Ստրուվեյի «Աշխատանքային արժեքի թեորիայի հիմնական անախտոմիան» հոդվածը, վոր լույս եր տեսել 1900 թվին «Жизнь»-ի № 2-ում։ Տես Լենին, Յերկեր, հատ. III, ռուս. 2-րդ հրատ., ծան. 184, եջ 581—582։

12 Տես Լենինի Յերկերի III հատ. ռուս. 2-րդ հրատ. ծան. 177 և «Վոչ-քննադատական քննադատություն» (Պ. Սկվորցովի «Ապրանքային ֆետիշիզմ» հոդվածի առթիվ, «Научное обозрение» 1899 թ. № 12) հոդվածի վերջին խոսքի նկատմամբ արված ծանոթագրությունը։ Այդ ծանոթագրությունը յերևի հենց այն «միջարկն» է, վորի մասին հիշատակվում է Վ. Ի.-ի նամակում։ Այդ ծանոթագրության մեջ ի միջի այլոց ասված է. «Ստրուվեն իր հոդվածի վերջում (տես ծան. 10.—Խմբ.) հատուկ ցանկություն է հայտնում, վորպեսզի յես արտահայտվեմ այսպես ասած «քննադատության» կողմից հարուցվող հարցերի շուրջը։ Այդ առթիվ պիտի նկատեմ, վոր ներկայումս ինձ առանձնապես զբաղեցնում է ժամանակակից եկլեկտիկ ուղղության հարցը փիլիսոփայության և քաղաքա-

տնտեսության մեջ և վոր յես դեռ հույսս չեմ կորցնում վորոշ ժամանակ հետո ներկայացնելու այդ ուղղության սիստեմատիկ վերլուծումը. իսկ եկլեկտիզմի ամեն մի առանձին «հիմնական սխալի» և «հիմնական անտինոմիայի»... հետևից ընկնել (թող ներեն ինձ հարգելի «քննադատները») ինձ ուղղակի անհետաքրքրական է թվում։ Ուստի առայժմ յես կբավականանամ հայտնելով իմ հսկա ցանկությունը՝ թող նոր «քննադատական ուղղությունը» արտահայտվի իր լիակատար պարզորոշությամբ, չսահմանափակվելով լոկ ակնարկներով։ Ինչքան ավելի շուտ այդ տեղի ունենա, այնքան ավելի լավ, վորովհետև այնքան ավելի քիչ կլինի խառնաշփոթությունը և հասարակությունն այնքան ավելի պարզ կգիտակցի տարբերությունը մարքսիզմի և Մարքսի բուրժուական քննադատության նոր «ուղղության» միջև»։ (Լենին, Յերկեր, հատ. III, ռուս 2-րդ հրատ., եջ 501)։

13 Խոսքը Կ. Ռ. Կաչարովսկու «Ռուսական համայնք (Թվական և փաստական հետազոտության փորձ)» գրքի մասին է, հ. I, մ. 1, ՍՊԲ., 1900։ Տպարան «Народная польза» ընկերության։ Գրե՞լ է արդյոք Վ. Ի. այդ գրքի առթիվ ռեցենզիա կամ գնահատական, չհաջողվեց պարզել։

14 «Դմիտրի Իվանովիչ Պիսարև»—Ն. Կարենինի հոդվածը։ Հոդվածագիրը Վ. Ի. Զասուլիչն է։ Տես Վ. Ի. Զասուլիչի յերկերը, հրատ. Ո. Ն. Ռուտենբերգի, «Библиотека для всех», ռուս. հրատ., հատոր II. եջ 221—301։

15 Այս նամակի հետ միաժամանակ ուղարկվել է 3 բացիկ Պսկովի տեսարաններով։ Դրանցից պահպանվել է յերկուսը՝ ուղղված մեկը Մ. Ա. և մյուսը Մ. Ի. Ուլյանովաներին։

16

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Քաղ. Պոդոլսկ, Մոսկվայի նահանգ, Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային։ Կեդրովայի տուն։

[9/V] 26/IV [19]00. [Պսկով]

Թանգագին մայրիկ, այսօր ուղարկում եմ քեզ իմ խոստացած՝ Մեչի բրոշյուրը և ոտախի «Научное обозрение»-յից [1]։ Ներիր, վոր ուշացրի։ Ի՞նչպես եք ապրում։ Ի՞նչպես յեղավ Անյուտայի գործը. վո՞րտեղ է նա այժմ. ի՞նչ է վճռել նա ամառվա մասին։

Պինդ համբուրում եմ քեզ և ուղարկում եմ վողջույնս մերոնց բոլորին։

Քո Վ. Ու[լյանով]

1 Ի՞նչ բրոշյուրի և ի՞նչ ոտախկի մասին է խոսքը, չհաջողվեց պարզել։

17

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Քաղ. Պոդոլսկ, Մոսկվայի նահանգ, Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային։ Կեդրովայի տուն։

[13/V] 30/IV [19]00. [Պսկով]

Ստացա, թանգագին մայրիկ, քո և Մանյայի 25-ի նամակները։ Յես գուցե ավելի առաջ դուրս պրծնեմ այստեղից, մոտավորապես մի յերկու շաբաթից, տակայն քիչ թե շատ վորոշակի ասել չեմ կարող։

Յես կարծեմ գրել եյի արդեն քեզ, թե խնդրագիր եմ տվել, վոր ինձ թույլ տան $1\frac{1}{2}$ ամիս ապրել Ուֆայում[1]: Հույս ունեմ շուտով պատասխան ստանալու:

Նադյան գրում է ինձ, վոր նրա առողջությունը մինչև լավ է: Նա Անյուտայից Archiv-ը չի ստացել: Ահա թե ինչ կխնդրեյի յես Անյուտայից. չի՞ կարելի արդյոք վերադարձնել այդ Archiv-ը իմ գալու պահին և չուղարկել այն այլևս Նադյային, վորովհետև այն ինձ է հարկավոր այժմ (յես ինքս նրան կտանեյի), իսկ յերկրորդ օրինակը, վորի վրա յես հույս եյի դրել, ձեռից դուրս է պրծել: Շատ կուզեյի ստանալ այն, յերբ ժամանեմ ձեզ մոտ:

Մանյաշային խնդրում եմ ուղարկել ինձ Նադյայի թարգմանությունը[2]: Յես այդ թարգմանությունը կուղարկեմ ժուռնալին:

Ֆիլիպովն[3] ինձ գրում է, վոր նույնիսկ Սկվորցովի դեմ ուղղված հոդվածից[4] գրաքննիչը գրեթե մի յերրորդ մասը դուրս է գցել: Ա՜յ քեզ խաթա:

Պինդ համբուրում եմ քեզ և ուղարկում բարևներս մերոնց:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Բերում ենք այդ խնդրագիրը վոստիկանության դեպարտամենտում Վլադիմիր Իլյիչ Ուլյանովի մասին յեղած գործի պատճենից (25929, թ. 87), վոր պահպանվում է Լենինյան Ինստիտուտում.

Վոստիկանության Դեպարտամենտի
Նորին գերազանցություն Պարոն Դիրեկտորին

Ժառանգական ազնվական Վլադիմիր Իլյիչ Ուլյանովից, ապր. Պսկով քաղաքում, Արխանգելսկի փողոց, Չերնովի տանը:

Խնդրագիր

Ներքին Գործոց Պարոն Մինիստրը վորոշել է արգելել ինձ ապրել ի թիվս այլ նահանգների նաև Ուֆայի նահանգում: Ներկայումս Ուֆա քաղաքում բնակվում է իմ կին Նադեժդա Ուլյանովան, վոր գտնվում է բացահայտ հսկողության տակ, և իմ միջնորդությունը (սույն թվի մարտի 10-ի խնդրագրով), վորպեսզի նրան թույլատրվի Պսկով քաղաք փոխադրվել, բավարարման յենթակա չի ճանաչվել: Ըստ վերջին լուրերի, վոր յես ստացել եմ իմ կնոջից, նա հիվանդացել է և բժշկվում է կանացի հիվանդությունների տեղական մասնագետ դ. բժիշկ Ֆեդոտովի մոտ. բժշկի ազգանունը յես մատնանշում եմ այն նպատակով, վորպեսզի իմ հայտարարությունը հնարավոր լինի ստուգել, և այն դեպքում, յեթե ստուգումն անհրաժեշտ համարվի, յես պատիվ ունեմ ամենայն խոնարհությամբ խնդրելու, վոր տեղեկանքը հեռագրով պահանջվի: Իմ կնոջ հիվանդությունը համառ բժշկություն է պահանջում, վոր բժիշկների ասելով կպահանջի 6 շաբաթից վոչ պակաս ժամանակ, և վորովհետև կնոջս մոտ գտնվող իր մայրը շուտով պիտի մեկնի Ուֆա քաղաքից, ապա կինս մենակ է մնալու, իսկ այդ չափազանց վնասակար կերպով կարող է անդրադառնալ բուժման ընթացքի վրա:

Վերոհիշյալի հիման վրա պատիվ ունեմ ամենախոնարհ կերպով խնդրելու՝ թույլ տալ ինձ ապրել Ուֆա քաղաքում $1\frac{1}{2}$ ամիս:

Ժառանգական ազնվական
Վլադիմիր Ուլյանով

Քաղ. Պսկով, 20 ապրիլի 1900 թ.

[2] Թե ինչ թարգմանության մասին է խոսքը, չի հաջողվել պարզել:

[3] Մ. Մ. Ֆիլիպով — «Научное обозрение»-յի խմբագիր: Տես «Լենինյան ժողովածու» IV, ռուս. հրատ., եջ 19, ծան. 40:

[4] «Վոչ-քննադատական քննադատություն»: Տես Լենինի Յերկերը, հատ. III ռուս. 2-րդ հրատ.: Այդ հոդվածը տպագրված է «Научное обозрение»-յի 900 թ. №№ 5 և 6-ում:

18

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[18] 5/V 1900. [Պսկով]

Միայն այսոր առավոտ ստացա քո՝ ամսի 2-ի նամակը, թանգագին մայրիկս Մանյաշայի կցագրով հանդերձ: Ինչո՞ւ յե ուշացել նամակը (դու սպասում եյիր, վոր յես կստանամ 3-ին կամ 4-ից վոչ ուշ), չգիտեմ. վրան կան շտեմպելներ՝ «Փոստի վագոն 2-ին» և «Պսկով 4-ին», այնպես վոր թերևս նույնիսկ ուշացում էլ չկա. նամակը 4-ին է յեկել Պսկով և այսոր առավոտյան հասցրել են: Պոդոլսկից յեկեղ նամակը չի կարող ստացվել նույն արագությամբ, ինչպես Մոսկվայից:

Իզուր ես անհանգստանում իմ մասին, թանգագինս. առողջությունս այժմ բավական լավացել է, իմ ջրից յես վաղուց արդեն ձեռք եմ քաշել, և վոչ մի անգամ կարիք կամ ցանկություն չեմ զգացել նորից դիմելու նրան: Յերեկ տեղական վոստիկանապետից ստացա վկայական, վոր նրա կողմից խոչընդոտ չկա իմ՝ արտասահման մեկնելու դեմ. այսոր մուծեցի կեսը (10 ռուբլի) և 2 ժամից հետո արտասահմանյան անցագիր կստանամ: Ուրեմն, ամառը կշարժվեմ դեպի տաք յերկիրներ. անմիջապես մեկնել այստեղից չեմ կարող, վորովհետև նախ՝ պիտի կապվեմ խմբագրությունների և թարգմանությունների միջանի հրատարակիչների հետ և ավարտեմ միջանի դրամական հաշիվներս (հույս ունեմ, իմիջի այլոց, մինչև ստանալ Ֆիլիպովից. թե վոր չստացա վոչ նրանից և վոչ էլ Պոպովայից, կգրեմ քեզ, խնդրելով ուղարկել ինձ մի մասը: Բացի դրանից, յես պիտի սպասեմ այստեղ դեպարտամենտին ուղղված խնդրագրիս պատասխանին, վոր ինձ թույլատրվի $1\frac{1}{2}$ ամիս ապրել Ուֆայում կնոջս հիվանդության պատճառով: Այս խնդրագիրը յես տվել եմ 20/IV-ին և մոտավորապես մի շաբաթից պատասխանն արդեն պետք է վոր լինի: Նադյային յես անպատճառ կայցելեմ, սակայն դեռ չգիտեմ՝ կհաջողվի՞ արդյոք ինձ մնալ նրա մոտ $1\frac{1}{2}$ ամիս, կամ դուցե (վոր ավելի հավանական է) ստիպված կլինեմ բավականանալ պակաս ժամանակամիջոցով: Համենայն դեպս, արտասահմանյան անցագիր ստանալը (վոր պիտի ստանայի Պսկովում, վորտեղ յես ապրում եյի վերջին ժամանակ) ինձ չի կաշկանդում, վորովհետև որենքով ներքին նահանգներում ստացված անցագրով արտասահման մեկնելու ժամկետը հավասար է 3 ամսի, այսինքն՝ յես չեմ ուշանա, նույնիսկ յեթե Ռուսաստանից մեկնեմ օգոստոսի 5-ին: Ուստի, ինչպես յես արդեն գրել եմ, այստեղից մտադիր եմ ճանապարհ ընկնել մայիսի 15-ից մինչև 20-ը. կաշխատեմ, անշուշտ, վորքան կարելի յե՝ ավելի շուտ: Գրիր՝ ինչ անեմ իրերս. թողնեմ արդյոք Մոսկվայում (այնտեղ է արդյոք Մարկը և վորտեղ է նրա բնակարանը, յերկա՞ր է մնալու Մոսկվայում և հաճա՞խ է արդյոք գալիս ձեզ մոտ) կամ միանգամից տանեմ Պոդոլսկ (չգիտեմ՝ վորքան հար-

մար կլինի այդ. յես, կարծես, հետո պիտի վերցնեմ ամեն ինչ՝ ներառյալ գրքերը), իսկ հետո կխնդրեմ Մանյաշային ամենամանրամասն կերպով ինձ գրել, թե ինչպես գտնեմ ձեզ Պադոլսկում։

Պինդ համբուրում եմ քեզ և բարևում բոլոր մերոնց։

Ց մոտակա տեսություն։

Քո Վ. Ու[լյանով]

Նադյան գրում ե, վոր իր առողջությունը լավացել ե։

Հենց նոր ստացա անցագիր Նահանգապետի գրասենյակից և տեղեկացա, թե ինչ հետևանք ունեցավ խնդրագիրս Ուֆա մեկնելու մասին. դուրս ե գալիս՝ մերժված ե!!![1] Ահա այս արդեն յես բնավ չեյի սպասում և միանգամայն մոլորված՝ չգիտեմ թե ինչ անեմ!

[1] Վոստիկանության դեպարտամենտի դիրեկտորն իր՝ ապրիլի 29-ի № 4242 գրությամբ Պսկովի նահանգապետին հաղորդել ե, վոր այդ միջնորդությունը «բավարարման յենթակա չի ճանաչված», և խնդրել ե իրազեկ դարձնել այդ մասին Վ. Ուլյանովին։

19

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Պադոլսկ, Մասկվայի նահանգ, Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային։ Կեդրովայի տուն։

[23] 10/V [19]00 [Պսկով]

Հենց այժմ ստացա քո՝ ամսի 8-ի նամակը, սիրելի մայրիկ, և անմիջապես նստում եմ պատասխանելու։ Յես շատ ուրախ եմ, վոր թույլտվություն ե յեկել քեզ հետ տեսնվելու[1] և, հասկանալի յե, վոր անպատճառ կօգտվեմ դրանից, այստեղից իսկույն մեկնել յես, դժբախտաբար, չեմ կարող, քանի վոր վերադառնալ այստեղ արդեն յես չեյի ուզենա, իսկ իմ ֆինանսական գործերն ու խմբագրությունների հետ միքանի գործերս կարգավորելու համար յես պետք ե մի 5—7 որ էլ կամ մոտավորապես այդքան մնամ այստեղ։ Սակայն իհարկե կարևոր չե, թե մի շաբթով առաջ կգամ թե հետո. քո և Անյուտայի պատճառաբանությունների հետ (ի դեպ՝ merci քաղաքային վիճակագրության վերաբերյալ աշխատության համար, վոր յես հենց այսոր ստացա) յես ընդհանրապես համաձայն եմ և, ինչպես խորհուրդ եք տալիս, այնպես էլ կվարվեմ, միայն յես ստիպված եմ հրաժարվել անձամբ Ս[անկտ] Պ[ետեր]բ[ուրգ] գնալուց և արդեն պիտի խնդրեմ քեզ, վոր դու ինքդ ուղևորվես, յեթե կարողանաս, հինգշաբթի որը[2], 18-ին, իսկ յեթե վոչ՝ հինգշաբթի 25-ին, նայած թե յերբ կտեսնվենք։

Ց մոտակա տեսություն։ Քո Վ. Ու[լյանով]

[1] Տես Մ. Ա. Ուլյանովայի խնդրագիրը (նամակ 15, ծան. 6) և այդ առթիվ վոստիկանության դեպարտամենտի դիրեկտորի պատասխանը նույն այդ դեպարտամենտի գործի մեջ (25929, թ. 89)։

[2] Հինգշաբթի որերին վոստիկանության դեպարտամենտում ընդունելություն եր լինում։ Վ. Ի. խնդրում ե մորը միջնորդել Պետերբուրգում, վորպեսզի

իրեն թույլատրվի գնալ Ուֆա՝ կնոջ մոտ։ Այդ թույլտվությունն իրոք Մ. Ա. Ուլյանովան կարողացել եր ձեռք բերել, ինչպես այդ յերևում ե Վ. Ուլյանովայի մասին վոստիկանության դեպարտամենտի գործից (25929, թ. 91)։

20

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[31] 18/V [19]00. [Պսկով]

Գրում եմ քեզ, թանգագին մայրիկ, միքանի խոսք, վորպեսզի իմաց տամ քեզ, վոր իմ մեկնումը դժբախտաբար մի քիչ հետաձգվում ե,—բայց շատ քիչ. հույս ունեմ այնուամենայնիվ, վոր ձեզ մոտ կլինեմ կիրակի կամ յերեքշաբթի յերեկոյան, 21-ին կամ 23-ին[1]։ Պինդ համբուրում եմ քեզ և խնդրում անհանգիստ չլինել իմ առողջության մասին. յես այժմ ինձ լավ եմ զգում և շատ եմ զբոսնում, մանավանդ, վոր սքանչելի յեղանակներ ե անում։ Ցերկու-յերեք որվա անձրևներից հետո ամեն ինչ կանաչել ե, փոշի դեռ չկա, օդը սքանչելի յե—ուղղակի քաշում ե ins Grüne *)։

Քո Վ. Ու[լյանով]

Ց մոտակա տեսություն։

[1] Մայիսի 20-ին Վ. Ի. անլեգալ կերպով ժամանում ե Պետերբուրգ, 21-ին Մարտովի հետ միասին ձերբակալվում ե փողոցում և 10 որ նստում պահնորդական բաժնում (Охранное отделение), ընդ վորում Վ. Ի. բախտից նրա մոտ գտնվող՝ Պլեխանովին ուղղված քիմիական նամակը չեր լուսահանվել։ Վ. Ի. Պադոլսկ ժամանեց մայիսի 31-ին «ՍԳԲ պահնորդական բաժնի ստորաճանավորի ուղեկցությամբ», ինչպես այդ կարդում ենք Մասկվայի ժանդարմական նահանգական վարչության պետի 1900 թ. 5/VI № 5897 գրության մեջ (Վ. Ուլյանովի գործը՝ 25929)։

21

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Բաց նամակ։ Քաղ. Պադոլսկ, Մասկվայի նահ., Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային։ Կեդրովայի տուն։

[15] 2/VII [19]00. [Ուֆա]

Թանգագին մայրիկ, դժբախտաբար պիտի հաղորդեմ քեզ, վոր մեր տեսակցությունը միքիչ հետաձգվում ե. յես ստիպված եմ ուղևորվել վոչ յերկար ժամանակով ընկերոջս մոտ՝ Սիբիր[1]. ուստի և Պադոլսկով ավելի շուտ չեմ անցնի, քան հուլիսի 20-ը կամ 21-ը (ավելի հավանական ե, ինչպես կարծում եմ, 20-ը)։ Ապա ինձ մնում ե միայն հավաքել իրերս, անցագրերս վիզա դնել տալ և շարունակել իմ ճամփորդությունը։ Յեթե իրերը դեռ չեն հասել, շատ կխնդրեմ Միտյայից ամենայեռանդուն միջոցներ ձեռք առնել, նույնիսկ թող անձամբ մեկնի դրա համար[2]։ Մերոնք բոլորն էլ առողջ են և բարևում են քեզ։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ուղարկում բարևներս բոլոր մերոնց։

Քո Վ. Ու[լյանով]

*) Բնության գիրկը, քաղաքից դուրս։ Խմբ.։

¹ Թե ում մոտ էր պատրաստվում գնալ Վ. Ի.—Սիբիր, չի հաջողվել պարզել, սակայն նա այնտեղ չմեկնեց և Ուֆայից յեկավ Պադոլսկ հուլիսի 10-ին, իսկ հուլիսի 16-ին նա արդեն մեկնեց արտասահման «Искра»-յի գործը դնելու համար:

² Վ. Ի.-ի իրերն ու գրքերը, վոր նա ուղարկել էր Պսկովից, ուշացումով եյին հասել Մասկվա, վորովհետև նրանց, ինչպես հետո պարզվեց, ժանդարմները բացել և զննել եյին:

22

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[8 օգոստ.] 26 հուլիսի: [1900 թ.] [Ուֆա]

Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա,

Հենց հիմա Վալոդյայից ստացա բաց նամակ, վոր գրված էր արդեն Ավստրիայից... Պետք է ասել, վոր բավական յերկար են ճանապարհորդում նամակները. այս բացիկը յես ստացա 8-րդ օրը,—ուրեմն ընդհանրապես ասած՝ Վալոդյայի նամակները յես ստանալու յեմ իններորդ-տասներորդ օրը: Վալոդյան գրում է, վոր իրեն շատ լավ է զգում, վորի համար, իհարկե, շատ ու շատ ուրախ եմ: Դուք ինչպես եք. առողջ եք. մեզ մոտ անանցանելի ցեխից ու խոնավությունից հետո սքանչելի օրեր են սկսվել: Ձեզ մոտ էլ յերևի շատ լավ յեղանակներ է անում և դուք էլ եք կարողանում վայելել ամառը: Մեզ մոտ այժմ լավ է: Ափսոս, վոր Ձեզ և Անյուտայի վրա Ուֆան այդպիսի վոչ ձեռնտու տպավորություն է թողել. այն ժամանակ օդն այնքան զզվելի և խեղդիչ էր, համ էլ ամեն ինչ բավական անկարգ էր մեզ մոտ: Առայժմ մենք դեռ նույն բնակարանում ենք ապրում, իսկ հիմա շուտով արդեն, յերևի, ձմեռվա բնակարանը կփոխադրվենք. Նոր բնակարանը շատ լավն է, արդեն փորձված. գտնվում է մեր դիմացը, մի քիչ թեք: Ցես այժմ բոլորովին առողջ եմ, մայրիկս նույնպես: Նա բոլորին ուղարկում է իր բարևները:

Վալոդյան, Ուֆայում գտնվելիս, Ֆիլիպովին խոցելի նամակ էր գրել այն առթիվ, վոր նա իր հոդվածն այնքան խեղաթյուրված ձևով էր զետեղել¹: Արդեն Վալոդյայի մեկնելուց հետո Ֆիլիպովից նամակ է յեկել, վորով նա փորձում է կոծկել գործը՝ «Վողորմ[ած] Տ[եր], առիթ է առեղծվում գործն ուղղելու, ուղարկում եմ Ձեզ Սկվորցովի հոդվածի² ձեռագիրը, վորպեսզի դուք կարողանայիք նրան պատասխանել: Շատ եմ խնդրում նկատի առնել գրաքն[նու-թյան] պայմանները և լինել հակիրճ»: Այսպես, սիրալիր ձևով ուղարկելով հոդվածը, նա ուզում էր կակղացնել Վալոդյային, սակայն 2 օրից հետո միտքը փոխում է և ուղարկում յերկրորդ նամակը՝ արդեն վոչ թե ինչպես առաջ—Վլադիմիր Իլյիչին, այլ պարոն Ուլյանովին հանձնելու համար: Նամակը հենց լոկ միայն արտաքինով պետք է վոր արհամարհանք նշանակի՝ պատռված կես թերթ թուղթ, նամակը տպագրված է ռեմինգտոնի վրա և տպագրածի վրա ուղղումներ են կատարված: Նամակը հիմար հայհոյական է, յերևում է, վոր մարդը չի հասկանում, թե ինչ է խոսում: Ցես նրան գրեցի, վոր յերկու նամակն էլ ստացա, սակայն ուղարկել այժմ Վալոդյային անկարող եմ, քանի վոր չգիտեմ նրա հասցեն, իմանամ թե չէ, իսկույն կուղարկեմ, իսկ ձեռագիրը վերադարձնում եմ, վորովհետև յեթե այն ուղարկեմ արտասահման, շատ կձգձգվի հոդվածի տպա-

գրությունը, իսկ այդ հանգամանքը հազիվ թե հաճելի լինի հեղինակին: Վալոդյան, յերևի, չէր ուզենա օգտվել այդ պարոնի սիրալիրությունից: Սկվորցովի հոդվածը նույնպես վերին աստիճանի հայհոյական է: Նույն անտեղի մեջբերումները Մարքսից և լիակատար անհասկացողությունը հակառակորդի նկատմամբ: Այդպիսի սուբյեկտի հետ նույնիսկ բանակռիվ ունենալն էլ հետաքրքրական չէ: Չգիտեմ, կպատասխանի՞ նրան արդյոք Վալոդյան: Վալոդյայի մեկնելու հաջորդ օրը մեզ այցելեց Մարիա Անդրեյեվնան³: Նա շատ դուրեկան է և չափազանց սիրալիր: Ցես մինչև անգամ մի տեսակ ամոթխար յեղա, սիրալիր լինելու շնորհք յես բոլորովին չունեմ: Ուզեցի յես էլ իմ կողմից սիրալիր լինել, առաջարկել նրան օգնել մուրաբա յեփելում, սակայն ժամանակին հիշեցի, վոր յես յերբեք մուրաբա չեմ յեփել, ուստի մուրաբա յեփելու տեղ աստված գիտե ինչեր կեփեմ... Վողջ ձմեռը նրանք պիտի ապրեն խուտորում: Դեհ, ցտեսություն: Պինդ համբուրում եմ Ձեզ և Անյուտային, իսկ Մանյաշային՝ միքիչ կգրեմ:

Ձեր Նադյա

¹ «Վոչ-քննադատական քննադատություն» («Научное обозрение»-յի 1900 թ. № 5—6): Տես 17-րդ նամակ, 1900 թ. 12/V—29/IV:

² Խոսքն, ըստ յերևույթին, Պ. Սկվորցովի հոդվածի մասին է, վոր նա գրել էր ի պատասխան «Վոչ-քննադատական քննադատության», սակայն վոչ «Научное обозрение»-յում, վոչ «Жизнь»-ում այդ հոդվածը չի տպագրվել:

³ Մ. Ա. Գրաչևսկայա (ծն. Զալեժսկայա)—Վ. Ի.-ի մորաքրոջ աղջիկը:

23

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Պադոլսկ, Մասկվայի նահանգ. Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային: Կեդրովայի տուն: Russland. Moskau:

[18] 31 օգ[ոստոս] 1900 [Ժնև]

Ցես զարմանում եմ, Թանգագին մայրիկ, վոր քեզնից վոչ մի նամակ չեմ ստանում. յերկու անգամ յես քեզ գրել եմ Պարիզից, հիմա էլ ճանապարհից եմ գրում (գնացել եմ զբոսանք կատարելու Ժնևոսի վրա) ¹. Ցես առողջ եմ և վատ չեմ անցկացնում ժամանակս. այս օրերս տեսա Անյուտային ², զբոսանք կատարեցինք միասին մի շատ գեղեցիկ լճի վրա և զմայլվում էինք հրաշալի տեսարաններով լավ յեղանակին, բայց այստեղ լավ յեղանակները նույնպես հազվադեպ են. ընդհանրապես լինում են անձրևներ, ամպրոպներ: Ամառը նույնչափ անբարեհաջող է տուրիստների համար, ինչպես և Ռուսաստանում:

Պինդ համբուրում եմ քեզ և հղում բարևներս բոլոր մերոնց: Մանյաշայից խնդրում եմ շտապ ուղարկել ինձ համար յղած բոլոր գրքերը. ինչ վերաբերում է արկղներին, հույս ունեմ շուտով գրելու:

Քո Վ. Ու[լյանով]

Գրել ինձ կարելի յե նույն հասցեյով (կամ Անյուտային՝ ինձ ուղարկելու համար, թեև այդ ավելի կդանդաղի, քան Պարիզի հասցեյով):

[1] Ոգոստոսի մեջերքին Վ. Ի. գնացել եր Գերմանիա, Նյուրնբերգ՝ գերմանական սոցիալ-դեմոկրատ Ադոլֆ Բրաունի հետ տեսնվելու համար, վորը տեխնիկական մեծ աջակցություն եր ցույց տալիս «Искра»-յի հրատարակությանը Գերմանիայում։

[2] Աննա Իլյինիչնան, վորն այդ պահին արտասահման եր գտնվում։

24

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Պոդոլսկ, *Մոսկվայի նահանգ. Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային։ *Կեդրովայի տուն.* Russie. Moscou.

[25 *ոգոստոսի*] 7 *սեպտ*[*եմբերի*] 1900 *թ. Պարիզ*[1].

Թանգագին մայրիկ, ստացա Մանյայի նամակները, թե բացը և թե փակը, և շատ ուրախացա, տանից լուրեր ստանալով։ Միքանի որ է արդեն, ինչ յես վերադարձել եմ Ժենևից։ Յերկար մտադիր չեմ այստեղ մնալ. շուտով կմեկնեմ յերևի վորևե տեղ։ Թե ուր, դեռ ինքս ել չգիտեմ. կգրեմ, յերբ այդ վորոշվի։

Մանյաշան տրտնջում է իմ նամակների կարճ լինելու համար. գիտակցում եմ մեղքս, սակայն արդարանալու համար պիտի ասեմ, վոր այստեղ ակամա գլուխդ պտույտ կգա, և թեև շատ առատ ու բազմատեսակ են ստացվող տպավորությունները, սակայն դժվար է լինում ընտրել այն, վորի վրա արժի ավելի յերկար կանգ առնել և ավելի մանրամասն նկարագրել։ Հույս ունեմ, վոր յերբ այստեղից մեկնեմ, հեռանամ վորոշ տարածության վրա ցուցահանդեսի իրարանցումից և ցուցահանդեսային մթնոլորտից, — այն ժամանակ յես ի վիճակի կլինեմ ավելի կենտրոնանալու և ավելի իմաստալից գրելու։ Իսկ մինչ այդ, խնդրեմ ներողամիտ լինեք դեպի ինձ՝ նամակներիս հանգամանորեն չլինելու համար։

Պինդ համբուրում եմ քեզ, թանգագինս, և հղում եմ բարևներս մերոնց բոլորին։

Քո Վ. Ու[*լյանով*]

Մանյաշան վոչինչ չի գրում քո առողջության մասին. այդ, հուսով եմ նշանակում է, վոր դու առողջ ես։

Ի՞նչպես են Միտյայի գործերը. յերբ է տեղափոխվում Մարկը և յերբ՝ դուք ամենքդ՝ Մոսկվա։ Ի՞նչ է հայտնի Մանյաշայի գործի մասին[2]։

1. 1900 *թ. Վ. Ի. Պարիզում չեր ապրում, և յեթե գալիս եր այնտեղ, ապա կարճ ժամանակով, սակայն կոնսպիրացիայի նպատակով իր նամակները Պարիզի վրայով եր ուղարկում Ռուսաստան։ Սեպտեմբերի սկզբներին նա, յերևի, գտնվում եր Շվեյցարիայում։*

2. *Մ. Ի. Ուլյանովան* 1899 *թվի աշնանը ձերբակալվել և աքսորվել եր Նիժնի-Նովգորոդ, վորտեղից հետո փոխադրվել եր Մոսկվա։ Այդ գործով նա մի տարվա բացահայտ հսկողություն եր ստացել, վորի տակ նա ապրում եր Սամարայում։*

25

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[6] 19/IX 1900. Ն[*որ*] տ[*ոմար*]. [*Մյունխեն*]

Յերեկ (չե, 16-ին, և վոչ թե յերեկ) ստացա, թանգագին մայրիկ, քո՝ ոգոստոսի 23-ի նամակը, վորը շատ ուրախացրեց ինձ։ Մանյաշայի առաջին նամակներն ել ստացա. ստացա նաև նրա ոգոստոսի 24-ի բացիկը, վորի մեջ նա գրում է, թե գրասենյակից[1] *մի նոր նամակ ել է յեկել հիշեցումով։* Յես արդեն *Մանյաշային* ուղարկել եմ հասցեն, *վորը պիտի տալ գրասենյակին։ Հուսով եմ, վոր Մանյաշան արդեն ստացել է այն։*

Շատ ափսոս, վոր Միտյային մերժել են համալսարան ընդունել։ Մեկ տարի ել կորցնել, այդ սատանան գիտե, թե ինչ բան է։ Գուցե դեռևս հաջողվի այդ գլուխ բերել այն յերաշխավորներից մեկի ոգնությամբ, վորի մասին դու գրում ես։ Մանյաշայի դրությունն ուրեմն նույնպես դեռ անորոշ է։

Անյուտայից յերեկ նամակ ստացա և հույս ունեմ այս որերս տեսնվելու նրա հետ. մենք նրա հետ բավական զբոսանքներ ենք կատարում։ Մտադիր եմ շուտով նորից դիմելու իմ ջրերին, վորպեսզի բուժումս կանոնավորեմ։ Այժմ այստեղ յեղանակը լավ է. մառախլապատ, անձրևային յեղանակներն անցել են, և կարծեմ, հիմիկվանից արդեն կարելի կլինի կարգին զբոսնել։ Սպիտակեղենով և փողով բավական ապահովված եմ, թանգագին մայրիկ, այնպես վոր վոչ այս, վոչ այն ուղարկել ինձ առայժմ հարկավոր չե. հուսով եմ, վոր դրա մասին դեռ յերկար ժամանակ գրելու չեմ, իսկ յերբ հարկավոր լինի, յես կաշխատեմ վաղորոք նախատեսել։

Նադյայից ել յերեկ նամակ ստացա. նրանք, իր ասելով, լավ են սարքվել և այժմ նա արդեն շատ դասեր ունի, վորոնք որական մոտ յոթ (!) *ժամ են խլում իրենից։*

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և հղում բարևներս մերոնց բոլորին։ Ուզում եմ վորքան կարելի յե շուտ հնարավորություն ստանալ վերջնականապես սարքվելու ձմեռվա համար, և լավ սարքվելու։

Քո Վ. [*Ուլյանով*]

Հա, քիչ մնաց մոռանայի ավելացնելու՝ սեպտ[*եմբերի*] *17-ին (ուրեմն՝ 4-ին մեր տոմարով) ստացա Բրաունի* Archiv-*ը, վորը յես թողել եյի։ Շուտ ստացվեց! Մեծ* merci *Մանյաշային։*

[1] *Խոսքը տրանսպորտային գրասենյակի մասին է, վորի միջոցով ուղարկվում եյին Վ. Ի.-ի գրքերը։*

26

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մոսկվա, *Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային. *Բախմետյևսկի փող., Շաֆրոնովի տուն (№ 25)*, Russland. Moskau.

[22/IX] 5/X [19]00.

Թանգագին մայրիկ, ստացա Մանյաշայի՝ սեպտեմբերի 8-ի նամակը, — այդ նամակի վերաառաքումն ինձ Պարիզից ձգձգվել եր։ Շատ ուրախացա, իմանալով,

վոր Միտյայի գործը հաջողվելու վրա չէ, և վոր նրան հավանաբար թույլ կտան մնալ Յուրյևում[1]*։ Լավ կլիներ, վոր շուտով լուծվեր նրա գործը։ Ի՞նչպես են Մանյայի գործերը։ Այդ մասին նա վոչինչ չի գրում։ Ի՞նչպես է քո առողջությունը։ Արդյոք ամբողջովին լավ եք սարքվել դուք։ Ես այժմ առողջ եմ. վաղուց արդեն և բոլորովին լավացել եմ ինֆլուենցայից և ավելի կանոնավոր եմ պարապում։*

Ժամանակն այժմ այստեղ հրաշալի չէ, իսկ ձեզ մոտ ինչպես։ Ստացա Մանյաշայից նաև գրքեր (Bulletin officiel)*. *շնորհակալ եմ դրա համար։ Սպասում եմ արկղի ու դրամի շուտափույթ ստացման։*

Պինդ համբուրում եմ քեզ, իմ թանգագինս, և ուղարկում բարևներս բոլորին։

Քո Վ. Ու[լյանով]

[1] *Դմիտրիյ Իլյիչը ձերբակալվել էր 1897 թվի նոյեմբերի 7(19)-ին Մասկվայի «Բանվորական միության» գործով, նստել էր բանտում մինչև 1898 թ. օգոստոսի 20-ը (սեպտեմբերի 2-ը), վտարվել էր համալսարանից և աքսորվել Տուլա, վորտեղ մնացել էր մոտ մի ամիս, իսկ հետո՝ բացահայտ հսկողության ներքո ապրում էր Մասկվայի նահանգի Պադոլսկ քաղաքում։ Այստեղ նա ապրեց 1898 և 1899 թ. թ., վորից հետո թույլտվություն ստացավ մտնելու Յուրյևի համալսարանը, վորը և ավարտեց 1901 թվին։ Տես «Լենինյան ժողովածու», VI, ռուս. հրատ., էջ 480 — 482.*

27

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մասկվա, *Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային. *Բախմետյևսկի փող., Շարոնովի տուն (№ 25).* Russland. Moskau.

Մանյաշային

[24/X] *6*/XI [*19*]*00.* [*Մյունխեն*]

Նամակդ ստացա, Մանյաշա, վորի համար մեծ շնորհակալություն։

Այս օրերս ստացա գրքերը և սարսափեցի, յերբ բացեցի մեծ արկղը։ Նրա մեջ մի ինչ-վոր Աննա Ֆեդուլովայի (Սիբիրի Բառնաուլ քաղաքից) բժշկական գրքերն եյին[1]*, վորը 1893 թվից մինչև 1899-ը ուսանել է Լոզանում և Ժնևում։ Այս ինչ անհեթեթություն և խայտառակություն է։ Ես գաղափար անգամ չունեմ այդ անձնավորության մասին և առաջին անգամն է, վոր լսում եմ նրա անունը։ Ի՞նչպես կարող եյին դրանք ուղարկված լինել Մասկվա, տար մարդու հասցեյով։ Ինչու վոչ վոք չի տեղեկացել դրանց մասին միքանի ամսվա ընթացքում, յերբ նրանք գտնվում եյին Մասկվայում։*

Աշխատիր, յեթե կարող ես, իմանալ՝ ինչումն է գործը։ Ես բոլոր գրքերի համար վճարեցի մոտ 40 (քառասուն!) ռուբլի, ուրեմն ուրիշի գրքերի համար յես գերածախսեցի յերևի մոտ յերեսուն ռուբլի ինչ-վոր անփույթ անձնավորությունների մեղքով։

* *Պաշտոնական բյուլլետեն։* Խմբ.։

Ես կգրեմ Սիբիր և Շվեյցարիա, վորպեսզի աշխատեմ գտնել այդ անձնավորությանը։

*Այդ գրքերն առայժմ ուղարկեցի ամբար *։*

Ստացա մի որ նամակ Լիրոչկայից[2]*, վորը քեզ և մայրիկին հազար ամենաջերմ վողջույններ է ուղարկում։ Տեսնվել նրա հետ՝ հավանաբար չի հաջողվի։*

Իմ գրքերն ստացա միանգամայն բարեկարգ վիճակում, — merci *դրա համար։*

Կրկնում եմ համենայն դեպս իմ հասցեն. Herrn Franz Modráček. Směcky 27. Prag. Oesterreich. *Ավստրիա։*

Քիչ առաջ այստեղ վատ յեղանակներ եր անում, իսկ այսօր՝ մի հրաշալի օր է, արևային, տաք։ Տեսնենք ինչպիսի ձմեռներ են լինում այստեղ։

Ապրում եմ առաջվա նման, քիչ-քիչ պարապում եմ լեզուներով. մի չեխի հետ գերմաներենի և ռուսերենի փոխադարձ դասեր ենք տալիս իրար (ավելի ճիշտ՝ զրույցներ, քան դասեր). հաճախում եմ գրադարան։

Պինդ համբուրիր, խնդրեմ, իմ կողմից մայրիկին։ Արդյոք նա բոլորովին առողջ է այժմ։ Իսկ Մարկն ինչպես է։ Չմոռանաս ճարել ինձ համար չինական ճամփորդի[3] *հասցեն։*

Սեղմում եմ ձեռքդ։ Քո Վ. Ու[լյանով]

[25/10] 7/XI

Ներիր, վոր նամակն ուշ ուղարկեցի։ Յերեկ ստացա քո գրքերը (merci *դրա համար՝ լավ ընտրություն է) և 10. X-ի նամակը. միայն ինչու նա այդքան յերկար է մնացել ճանապարհին։*

[1] *Այդ գրքերը տրանսպորտային գրասենյակի սխալի հետևանքով եյին ընկել արտասահման։*

[2] *Լ. Ա. Յակուբովա։*

[3] *Ա. Պ. Սկլյարենկո, վորն այն ժամանակ յերկաթուղու վրա յեր ծառայում Մանջուրիայում։ Սկլյարենկոն (1870—1916) տասնվեց տարեկան հասակից մասնակցում եր Սամարայի ինքնազարգացման հեղափոխական խմբակում, վորի համար ձերբակալվում և ուղարկվում է Պետերբուրգ մեկ տարով «*Кресты*»-յում նստելու համար։ Յերբ Վ. Ի. Սամարայումն եր ապրում, նրա և Ի. Խ. Լալայանցի հետ միասին մասնակցում է մարքսիստական խմբակում. 1893 թվի վերջին կրկին բանտարկվում է, իսկ 1895 թ. 3 տարով աքսորվում է Արխանգելսկի նահանգը։ 1905—1907 թ. թ. գտնվելով Սարատովում, ակտիվ մասնակցում է կուսակցական աշխատանքներին, մասնակցում է կուսակցության 5-րդ համագումարին «Իոմոն»*

* *Հարկավոր է կապվել այն տրանսպորտային գրասենյակի հետ, վորն ուղարկել է։ Հայտնիր ինձ նրա մանրամասն հասցեն։ Գուցե գրքերի տերը շուտով պահանջ կներկայացնի նրանց համար։ Նրանք արդյոք անդորրագիր տվե՞լ են այդ գրքերի համար։ Յեթե այո, ապա ի՞նչպես կարող եյին նրանք (այստեղ) առանց անդորրագրի տալ գրքերը։ Փորձիր գնալ նրանց մոտ բացատրություն պահանջելու կամ ավելի լավ է՝ գրիր նրանց պատվիրած նամակ, պատասխանի համար կցելով մի նամակադրոշմ։*

(Ես կարծում եմ, վոր գրքերի տերը պարտավոր է ինձ վճարել իմ ծախսերը, վորովհետև իր մեղքն է, վոր իր գրքերն ուղարկել է ուրիշի հասցեյով և չի հայտնել իր մասին)։

մականունով։ Ռուսաստան վերադառնալուց հետո նորից և ձերբակալվում Մոսկվայում և աքսորվում Ուստ-Սիսոլսկ։ Էտապով ուղարկվելիս սաստիկ ծեծի յենթարկվում, վորպիսի հանգամանքն անդրադառնում է նրա առողջության և հետագա աշխատանքների վրա։ Աքսորից Ս. վերադառնում է 1910 թվին և ապրում Պետերբուրգում, անմիջական մասնակցություն չունենալով կուսակցական աշխատանքներին։ Աշխատակցում է «Звезда»-յին և «Правда»-յին։ Տես «Հին ընկեր Ալեքսեյ Պավլովիչ Սկլյարենկոն» (1870—1916 թ. թ.) հատուկ ժողովածուն. Պետհրատ. 1922 թ., ռուս. հրատ.

28

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Russland. Moskau. Մասկվա, *Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային. *Բախմետյևսկի փող., Շարոնովի տուն*

29 [16] XI [19]00. [*Մյունխեն*]

Մանյաշա, հենց հիմա ստացա քո 6/XI-ի նամակը և նրան կցված նամակը։ Շնորհակալ եմ։

Քո նախորդ նամակը չեմ ստացել, ուստի և չգիտեմ, թե ինչպես ուղարկել բժշկ[ական] գրքերը[1]*։ Ո՞ւմ անունով։ Գրքերի տիրո՞ջ։ Իսկ չի՞ կարելի արդյոք նախորոք ստանալ նրանից ծախսերը։*

Լիովին առողջ եմ և ապրում եմ առաջվա նման։ Պինդ համբուրիր, խնդրեմ, իմ կողմից մայրիկին և հայանիր իմ մեծագույն վողջույնը Մարկին։

Ժամանակին եք ստանում, արդյոք, իմ նամակները։ Համեմատիր, խնդրեմ, ջանմպելները և գրիր ինձ։

Քո Վ. Ու[լյանով]

[1] *Տես նախորդ նամակի 1 ծանոթագրությունը։*

29

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Russland. Moskau. *Մասկվա, Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային. *Բախմետյևսկի փող., Շարոնովի տուն։*

6/XII [*նոյեմբերի* 23] [19]00. [*Մյունխեն*]

Թանգագին մայրիկ,

Այս որերս ստացա Մանյաշայի միջոցով ինձ ուղարկված նամակները։ Merci *դրա համար։ Զգիտեմ, դեռ կկարողանա՞մ արդյոք շուտով պատասխանել Սիբիր, ինձ մոտ մի նամակ էլ կա վաղուց առանց պատասխանի։*

Ցերեկ նամակ ստացա Անյուտայից։ Նա գրում է, վոր դեռևս չգիտե, թե վորքան յերկար պիտի մնա Պարիզում։ Դու էլ յերևի նամակներ ունես նրանից։

Տոնիերին ապասո՞ւմ եք արդյոք Միտյային։ Ի՞նչպես են ընթանում նրա մեքենաներն ու գերմաներենը։

Ի՞նչպիսի յեղանակներ է անում ձեզանում. յերևի լավ ձմեռ է։ Իսկ այստեղ՝ ցեխ, աշնանային անձրև. թե վոր այդպես տևեց ամբողջ «ձմեռը», այդ ձյունից ու սառնամանիքից էլ վատ է։ Ճիշտ է, մեկ-մեկ շատ լավ օրեր էլ է լինում՝ չոր, պարզ, սակայն իբրև բացառություն միայն։

Վո՞րտեղ է մտադիր անցկացնել իր արձակուրդը Մարկը։ Մոսկվայո՞ւմ, թե պիտի մեկնի վորևե տեղ։

Ի՞նչպես են Մանյաշայի գործերը։ Արդյոք չափազանց շատ չի՞ աշխատում նա։ Լիովի՞ն առողջ է նա այժմ. նրա համար, դուցե, օգտակար լիներ ավելի շատ վազվզել, այսինքն՝ զբոսնել քաղաքի զանազան ծայրամասերում։ Անյուտան գրում է, վոր Մանյաշան Նադյայի հետ միասին դուցե ճանապարհ ընկնեն այստեղ։

Ցես ապրում եմ առաջվա նման, անիմաստ թափառում եմ օտար յերկրում. դեռևս միայն «հույս եմ տածում» վերջ տալ իրարանցմանը և հիմնավոր կերպով նստել աշխատանքի։

Նադյան հաճախ է գրում ինձ. նա առողջ է, իսկ ինչ վերաբերում է Ցե[լիզավետա] Վ[ասիլյեվնայի]ն, նա ինչ-վոր միշտ տկար է։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և առողջություն եմ ցանկանում քեզ։ Վողջույններս մերոնց։

Քո Վ. Ու[լյանով]

Սահո՞ւմ է արդյոք Մանյաշան չմուշկներով։ Այստեղ կա մի ինչ-վոր künstliche(!) Eisbahn*. միշտ պատրաստվում եմ գնալ տեսնելու այդ կեղծվածքը։ Սառույցն անգամ արհեստական... Խեղճ պրագացիք*[1]*։*

[1] *«Պրագացիք» գրված է կոնսպիրատիվ նպատակով. Վ. Ի. այդ ժամանակ ապրում էր Մյունխենում։*

30

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մասկվա. *Մարիա Իլյինիչնա* Ուլյանովային. *Բախմետյևսկի փող., Շարոնովի տուն.* Russland Moskau.

14 [*1*]XII [19]*00* [*Մյունխեն*]

*Ստացա քո նամակը, Մանյաշա, վորի մեջ կրկնում ես հասցեն գրքերի համար։ Վաղը ևեթ նորոգել կտամ արկղը, — նա տուժել է յերկարատև ճամպորդություններից, և յես չեմ վստահանում ուղարկել այդպես, — և ապա՝ կուղարկեմ վորևե տրանսպորտային գրասենյակի միջոցով։ Անդորրագիրը կուղարկեմ պատվիրված նամակով ուղղակի Ֆեդուլովային, իսկ քեզ կգրեմ, վոր արդեն ուղարկված է***։*

Ս[երգեյ] Ի[վանովիչից][1] *նամակը ստացել եմ և, վորքան հիշում եմ, արդեն տեղեկացրել եմ քեզ այդ մասին։*

* *Արհեստական սառցավայր։* Խմբ.։

** *Այդ, յերևի, վոչինչ չի նշանակում. կուղարկեմ այնպես, վոր ստացողը վճարի, — չէ՞ վոր մենք էլ այդպես ենք ստացել Մոսկվայում, — ըստ յերևույթին այդ հնարավոր է։*

Յերեկ նամակ կար Անյայից։ Նա մտադիր է ասես յերկար ժամանակով մնալ այստեղ, այսինքն՝ արտասահմանում, բայց չգիտե, թե ինչպես են ձեր գործերը և արդյոք շատ եք սպասում նրան Ծննդյան տոներին։

Միտյան շատ լավ է վարվել, վոր յերկաթ[ուղուց] առել է փողը։ Անշուշտ, թողնել չարժեր։

Պինդ սեղմում եմ ձեռքդ և խնդրում եմ պինդ համբուրել իմ կողմից մայրիկին։ Բարևներս Մարկին և Միտյային։ Ներիր նամակիս համառոտ լինելու համար. արդեն ուշ է, — կավելացնեմ վաղը, թե ժամանակ ունեցա. թե չէ հենց այսպես կուղարկեմ։

Քո Վ. Ու[լյանով]-

Այս բոպեյիս իմացա, վոր արկղի նորոգումն ավարտված է։ Ուրեմն այսօր (կամ վոչ ուշ, քան վաղը) ուղարկում եմ այն, ուստի և առաքելու մասին հատուկ ծանուցում կուղարկեմ քեզ, միայն յեթե վորևէ ձգձգում տեղի ունենա, վորը քիչ հավանական է։ Անդորրագիրը կուղարկեմ ուղղակի պատվիրված նամակով, նույն հասցեյով։ Քեզ ուղարկել եմ, վորքան մտաբերում եմ, 9-ին՝ քեզ հետաքրքրող իրը։ Ստացել ես։

Նորից՝ ամենքին ամենամեծ բարևներս, մանավանդ մայրիկին։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Ս. Ի. Միցկևիչ՝ վոր այդ ժամանակ աքսորի մեջ էր Սր. Կոլիմսկում ՌՍԴԲԿ Մոսկվայի կազմակերպության գործով։

Միցկևիչն իր հեղափոխական գործունեությունը սկսել է 80-ական թվականների վերջերին։ 1891 թվին մտնում է Մոսկվայի մարքսիստների խմբակը, վորի հետ Լենինը 1894 թվին կապ էր պահպանում։ Այդ խմբակի ոգնությամբ հեկտոգրաֆի վրա տպագրվեց՝ «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են պայքարում նրանք սոցիալ-դեմոկրատների դեմ» բրոշյուրը։ 1894 թվի դեկտեմբերին Մ. ձերբակալվում է, իսկ 1898 թվին 5 տարով աքսորվում է Յակուտսկի մարզը, մոտ կես տարի բժշկություն է անում վոսկու հանքերում, իսկ հետո ադմինիստրացիայի առաջարկով տեղափոխվում է ծառայության Յակուտիայի մարզի հյուսիս-արևելքի ամենածայրամասը՝ Կոլիմսկի յերկիրը։ Աքսորից հետո Մ. աշխատում է հաջորդաբար Մոսկվայում, Տվերում, 1905 թվին նորից Մոսկվայում, իսկ հետո Նիժնի-Նովգորոդում և Սարատովում։ Հեղափոխությունից հետո աշխատում է ժող. լուսավորության բնագավառում, ներկայումս նա ԽՍՀՄ Հեղափոխության Թանգարանի դիրեկտորն է։

Վ. Ի.-ի՝ Ս. Ի. Միցկևիչի հետ աքսորի տարիներին ունեցած նամակագրությունը չի պահպանվել։

31

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մոսկվա, Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. Բախմետևսկի փող., Շարոնովի տուն։ Russland. Moskau.

26 [13] VII [19]00. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, դու այս նամակը, յերևի, կստանաս տոներից մի քիչ առաջ։ Շնորհավորում եմ և ցանկանում եմ քեզ ուրախ անցկացնել տոները.

դուցե դա Միտյան այդ ժամանակին և միասին հավաքվեք դուք՝ գեթ առնվազն Ռուսաստանում գտնվողներդ։ Մենք Անյայի հետ նույնպես մտադրություն ունեյինք հավաքվելու, սակայն չհաջողվեց։ Այստեղ արդեն Weihnachten* է,— ամենուրեք՝ Christbäume**, փողոցներում այս որերին արտասովոր աշխույժ էր տիրում։ Այս որերս յես գնացել էյի Վիեննա, և ուրախությամբ կատարեցի այդ ճամփորդությունը միքանի շաբաթվա նստակյաց կյանքից հետո։ Սակայն անախորժ է միայն ձմեռը՝ առանց ձյունի։ Ըստ էության նույնիսկ ձմեռ էլ չի, այլ մի տեսակ վատ աշուն, խոնավություն ու ցեխ։ Լավ է, վոր ցուրտ չի, և յես միանգամայն յոլա յեմ գնում առանց ձմեռվա վերարկուի, սակայն առանց ձյունի մի տեսակ անախորժ է։ Ձանձրացնում է այդ ցեխը, և հաճույքով եմ մտաբերում իսկական ռուսական ձմեռը, սահնակներով յերթևեկությունը, սառնամանիքի մաքուր օդը։ Այս առաջին ձմեռն է, վոր յես անց եմ կացնում արտասահմանում, առաջին ձմեռը, վոր բոլորովին նման էլ չի ձմեռվա, և չեմ կարող ասել, վոր շատ էլ գոհ լինեմ, թեև մեկ-մեկ պատահում են հրաշալի որեր, նման այն որերին, վոր մեզանում լինում են լավ ուշ աշունքին։

Ապրում եմ առաջվա նման, բավական միայնակ և... ցավոք սրտի, բավական անիմաստ։ Հուսով եմ տածում միշտ, վոր անա, սիստեմատիկ բնույթ կտամ իմ պարապմունքներին, բայց մի տեսակ չի հաջողվում։ Իսկ գարնանից այդ բոլորը այլ կերպ կընթանա և կընկնեմ նորմալ «հունի» մեջ։ Շուշենսկում նստելուց հետո Ռուսաստանում և Յեվրոպայում թափառելով, յես հիմա կարոտել եմ նորից խաղաղ գրքային աշխատանքը և միայն արտասահմանյան շրջապատի անսովորությունն է, վոր խանգարում է ինձ մի լավ լծվելու դրան։

Լիովին արդյոք առողջ ես, թանգագինս։ Շատ չե՞ս տխրում արդյոք առանց Անյուտայի։ Ի՞նչ դրության մեջ է Մանյայի գործը։ Ի դեպ՝ մոռացա հաղորդել նրան, վոր Պուշկինն ստացա, — շատ շնորհակալ եմ, — ստացա նաև նրա դեկտեմբերի 6-ի նամակը։ Մինչև այժմ չեյի պատասխանում, վորով[հետև] արգելքը հանդիսացավ իմ մեկնելը[1], իսկ հետո էլ, յես շատ եյի զբաղված։

Պինդ համբուրում եմ քեզ, թանգագինս, և ուղարկում եմ շատ բարևներ մերոնց բոլորին։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Հավանական է, վոր Վ. Ի. այդ ժամանակ յեղել է նաև Լայպցիգում, «Искра»-յի տպարանում, ուր նա գնում էր առաջին №-ի տպագրության հետ կապված բոլոր աշխատանքներն ավարտելու համար։

32

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մոսկվա. Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. Բախմետևսկի փող[ոց], Շարոնովի տուն։ Russland. Moskau.

[19/XII 1900] 1/I [19]01. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, շնորհավորում եմ նոր տարին և ցանկանում եմ ամեն հաջողություն, մանավանդ կատարյալ առողջություն։ Բոլոր մերոնց — Միտյան,

* Ծննդյան տոն։— Խմբ.:

** Տոնածառ— Խմբ.:

հուսով եմ, նույնպես ձեզ մոտ է — ուղարկում եմ նույնպես բարևներս և լավագույն ցանկությունները: Մանյաշային թղթակալի մեջ ինձ քարտեզ ուղարկելու համար (այս օրերս ստացա) մեծ merci: Նրա ընկերուհին[1] տեղեկացրեց ինձ գրքերի անդորրագիրն ստանալու մասին:

Նոր տարում Մանյաշային անշուշտ արդեն կվերադարձնեն տեղափոխվելու ազատությունը:

Nochmals beste glück-Wünsche*:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Թե ում մասին է խոսքը, պարզել չհաջողվեց:

33

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մոսկվա. *Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային. *Բախմետյևսկի փող., Շարոնովի տուն.* Sussland. Moskau.

[3] *16/I* [19]*01.* [*Մյունխեն*]

*Թանկագին մայրիկ, ստացա քո՝ դեկտեմբերի 26-ի նամակը՝ Մանյաշայի կցագրով և շատ ուրախացա, որ Միտյան ձեզ մոտ է և որ տներին ավելի ուրախ է ձեզ մոտ: Ափսոս, որ այդպիսի սոսկալի ցրտեր է անում այդտեղ. յերբ յես հաղորդում եմ այստեղ նեմեցներին (կամ չեխերին) t° 28° R մասին, մարդիկ ախ ու վախ են անում ու զարմանում, թե ինչպես են ապրում ռուսները: Այստեղ ցուրտ է, furchtbare Kälte** յեն համարում, յերբ 8—10-°R է լինում և գրեթե ամենքը բավականանում են լոկ աշնանային վերարկուներով (ասենք, մեծ մասամբ տակից հագած ունեն նաև բրդից փուփայկա): Տներն էլ այստեղ բոլորովին հարմարեցրած չեն շատ ցուրտ յեղանակներին, պատերը բարակ են, պատուհանները չեն փակում ամուր կերպով, շատ հաճախ չի լինում նույնիսկ Winterfenster***: Իմ մասին իզուր ես անհանգիստ լինում. լավ սնվում եմ մի պանսիոնում, որը չեմ փոխել աշնանից: Ինձ լավ եմ զգում, — յերևի այն պատճառով, որ քիչ եմ նստում, շատ եմ վազվզում: Հիմա արդեն այնքան էլ հեռու չէ և Նադյայի գալը. 2½ ամս[ից] նրա ժամկետը լրանում է[1] և այն ժամանակ յես ամբողջովին կսարքվեմ ինչպես հարկն է:*

Միտյային և Մարկին ուղարկում եմ մեծագույն բարևներս, իսկ Մանյաշային մեծ շնորհակալություն ուղարկած գրքերի և մանավանդ այն չափազանց գեղեցիկ և հետաքրքրական լուսանկարների համար, որ ուղարկել է զարմիկս (кузен) *Վիեննայից[2]. շատ ուրախ կլինեյի հաճախ ստանալ նման ընծաներ:*

Պինդ համբուրում եմ քեզ, թանկագինս, և ցանկանում կատարյալ առողջություն:

Քո Վ. Ու[*լյանով*]

[1] Ն. Կրուպսկայայի աքսորի ժամկետը լրացավ 1901 թվի մարտի 11/24-ին:

[2] Վ. Ի. նկատի ունի «Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության մանիֆեստը»՝ ուղարկված Գ. Բ. Կրասինի միջոցով, մի ինչ-որ լուսանկարներով ալբոմի մեջ: Այդ Մանիֆեստի առթիվ «Искра»-յի № 5-ում զետեղված էր Գ. Պլեխանովի հոդվածը՝ «Հին տիկերում նոր գինի» վերնագրով, որը նվիրված է էսէռների այն պնդումների վերլուծությանը, որ իբր թե «ռուսական հեղափոխական մտքի մեջ այժմ կատարվում է „Революционная Россия"-յի հրատարակիչների «նախագուշակած» շրջադարձը դեպի „Народная воля"-յի սկզբունքները» („Рев. Россия" № 1):

Հիշյալ Մանիֆեստն առիթ և հիմք էր տալիս քննադատության յենթարկել այդ պնդումը («Մենք կարդացինք «Մանիֆեստը» և... հուսախաբ յեղանք մեր սպասումների մեջ: «Նախագուշակած» շրջադարձից նրա մեջ մի հետք, մի ստվեր անգամ չկա: Միանգամայն հակառակը») և հանգել այն յեզրակացության, որ «...բացառությամբ մի տեղի (նկատի ունի այն դիտողությունը, որ մեր ժամանակակից գյուղական համայնքը կարող է թեթևացնել հեղափոխականների աշխատանքը գյուղում:- -Խմբ.), մնացած ամբողջ մանիֆեստն իրենից ներկայացնում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքների շարադրանքը, և մենք չենք հասկանում, թե ինչպես նրա հեղինակները կարող էին չկռահել այդ մասին և կամ հարկավոր գտնել թաքցնել այդ»:

* Նորից իմ լավագույն ցանկությունները, որ բախտավոր լինես: Խմբ.
** Սոսկալի ցուրտ: Խմբ.
*** Կրկնակի շրջանակ: Խմբ.:

34

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մոսկվա, *Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային. *Բախմետյևսկի փող., Շարոնովի տուն.* Russland, Moskau.

[14] *27/I* [19]*01.* [*Մյունխեն*]

Թանկագին մայրիկ, օրերս Մանյաշայից ստացա նամակ և մի բացիկ լուսանկարով և Պրոտոպոպովի գիրքը[1]: Այդ բոլորի համար՝ մեծ շնորհակալություն: Շատ ուրախացրեց Միտյայի նկարը. բատիս նկարը հաջող է: Յես արդեն սկսել եմ կարոտել լուսանկարների և անպատճառ խնդրելու յեմ Նադյայից, որ բերի իմ ալբոմը, իսկ յեթե ձեզ մոտ նոր լուսանկարներ էլ լինեն, ուղարկեցեք:

Տաք բաներ ինձ այժմ հարկավոր չեն: Այստեղ ձմեռն ասես արդեն անցել է, — այսինքն՝ իսկական ձմեռը ձյունով, զերոյից ցածր t°-ով: Մինչև դեկտեմբերի վերջերը տաք էր, ձյուն չկար, անձրևներ էին տեղում: Հետո յեկավ ձյուն և t° սկսեց հասնել մինչև 10-15° R (առավոտները), և գերմանացիք աղաղակում էին «սարսափելի» ցրտերի մասին: Նրանց տներում, ասենք, իսկապես սարսափելի ցուրտ է, նույնիսկ յերբ դուրսը — 3° է. այդ կողմից շենքերը շատ վատ են: Մոտ մի շաբաթ առաջ սկսվեց ձյունհալը, ամբողջ ձյունը մի գիշերում հալվեց և այժմ մեր մարտ ամիսների կամ նույնիսկ Սիբիրի ապրիլի նման յեղանակ է: Կարելի յե սպասել, — նույնիսկ հավանական է, — որ ձյունը դեռևս գալու յե, բայց ամենակարճ ժամանակով: Ամենացուրտ ժամանակներն անցել են և անցյալ ամիսը Holz u[nd] Kohle-*ն* ինձ ամբողջ 5 ռուբլի նստեց, փոխանակ նախորդ ամիսների 1—2-ի:*

Բոլորովին առողջ եմ և ապրում եմ առաջվա նման: Անյուտայի հետ նամակագրություն ունեմ և հուսով եմ շուտով տեսնվելու նրա հետ:

* Ցախ և ածուխ: Խմբ.

Պինդ համբուրում եմ քեզ, Թանգագինս, և ուղարկում շատ բարևներս բոլոր մերոնց:

Քո Վ. Ու[լյանով]

P. S. Մինչև ժամկետը Նադյային արդեն մնում ե 2 ամսից պակաս. շուտով նա կմեկնի և անշուշտ կտեսնվի քեզ հետ: Իսկ ամառը, հուսով եմ, մենք ել կտեսնվենք:

¹ Թե Պրատապոպովի վոր գրքի մասին ե խոսքը, պարզել չհաջողվեց:

35

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մոսկվա. *Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային. *Բախմետյեվսկի փ., Շարոնովի տուն:* Russland. Moskau.

[27.I] 9/II [19]01. [*Մյունխեն*]

Թանգագին մայրիկ, ինչպես եք ապրում դուք: Ի՞նչ նորություն, ի՞նչ ե գրում Միտյան Յուրյեվից. նա այժմ, յերևի, ավելի մեծ յեռանդո՞վ ե աշխատում քննությունների նախորյակին:

Քիչ առաջ ստացա Մանյաշայից թե հին ձեռագրերը[1] *և թե Վիեննայի ընծաները*[2]*: Շատ* merci *դրա համար:*

Այստեղ յեղանակը նորից շրջադարձ ե անում դեպի ձմեռը, այսինքն ձյուն ե յեկել: Սակայն ցուրտ չի, ցերեկը հալում ե:

Այս օրերս յեղա ոպերայում, մեծ հաճույքով լսեցի «Ժիդովկա»-ն. մի անգամ լսել եյի այդ Կազանում (յերբ Զակրժևսկին եր յերգում), յերևի մոտ 13 տարի առաջ, սակայն միքանի մոտիվներ մնացել են հիշողությանս մեջ: Յերաժշտությունն ու յերգեցողությունը լավն եյին: Թատրոններում (գերմանական) նույնպես յեղա միքանի անգամ և յերբեմն հասկանում եյի,— գոնե ընդհանուր առմամբ: Հաճախո՞ւմ եք, արդյոք, դուք Մոսկվայի թատրոնները:

Անյուտան մոտերքս գրում եր, վոր աշխատանքը դեռ վորոշ ժամանակով ել իրեն հետ ե գցում:

Մտադիր չե՞ս արդյոք, Թանգագինս, խնդրագիր տալու, վոր Նադյային գոնե միքանի օրով թույլ տան գալ քեզ հետ տեսնվելու: Նա յերևի այդ շատ կուզենար, սակայն մայրաքաղաքները սովորաբար բացառվում են,— և միայն մայրաքաղաքներն Ուֆայից հետո[3]*, ինչպես նա գրում ե:*

Մանյաշային կխնդրեմ, վոր միքանի տողով իմաց տա, թե յերբ ե բաժանորդագրվելու հանդեսներին[4] *ինձ համար, վորպեսզի գիտենամ, վոր արդեն կարող եմ տեղեկանալ փոստում:*

Պինդ գրկում եմ քեզ, Թանգագինս, և ուղարկում բարևներս բոլոր մերոնց:

Քո Վ. Ու[լյանով]

¹ Թե ինչ ձեռագրերի մասին ե խոսքը, պարզել չհաջողվեց:

² Տես 33-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը:

³ Ուֆայից անցնելիս Ն. Կ. միքանի օրով կանգ առավ Մոսկվայում:

⁴ Թե ինչ հանդեսների մասին ե խոսքը, պարզել չհաջողվեց: Հավանական ե, վոր խոսքը «Мир божий» և «Русское богатство»-ի մասին ե:

36

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[25/II] 12/II 1901. [*Ուֆա*]

Թանգագին Մանյաշա. մեծ շնորհակալություն քաղվածների համար: Կարդացի դրանք մեծ հետաքրքրությամբ: Հիմա ստացա ծանրոցի ծանուցագիրը: Կասկածում եմ, վոր դա Կաուցկին[1] *ե. յեթե այդ այդպես ե, հենց վաղը կուղարկեմ քեզ: Շատ ցավալի յե, վոր այդպիսի ուշացում տեղի ունեցավ: Չգիտե՞ս, կարելի՞ յե արդյոք ձեռք բերել* «Очерки и этюды»[2], *ինձ շատ են խնդրում, վոր ճարեմ. գրում են, թե վոչ մի տեղ չեն վաճառում:*

Մի ամիս ե մնացել: Այդ հրաշալի յե, չե,—իսկ կլինի մի ժամանակ, յերբ մեկ օր ե միայն մնալու: Այո, ամեն ինչ կլինի: Քիչ մնաց, մոռանայի: Մայրիկս քեզ մեծ խնդիրք ունի: Նա խնդրում ե ապահովագրել իր վիճակախաղի տոմսը. այդ պետք ե անել մինչև մարտի 1-ը, սերիայի №-ը՝ 7.328, Ուֆայում այդ անել չի կարելի, վորովհետև այն դեպքում, յեթե տոմսը շահի, այդ կպարզվի այստեղ միայն ապրիլ ամսին, հարկ կլինի նորից դրա համար վերադառնալ Ուֆա, մի խոսքով՝ չարժի: Անդորրագիրը քեզ մոտ կթողնես: Ապահովագրելը կնստի մոտ 3 ռուբլի, մայրիկն ուզում եր իսկույն ուղարկել, իսկ յես համոզեցի նրան, վոր կարող ե տալ տեսակցելու ժամանակ: Այս այսպես:

Մի՞թե Անիայի հետ չենք հանդիպի: Յես շատ եմ ուզում նրան տեսնել: Գրիր, նա յերբ ե մտադիր գալու: Յես պետք ե մեկնեմ նաև Աստր[ախան][3]*, ուստի և չգիտեմ, յե՞րբ գալ Մոսկվա. դրանից առա՞ջ, թե հետո՞, մտադիր եմ այն անել, նայած թե յերբ կգա Անյան:*

Դեհ, առայժմ ցտեսություն: Այս ամբողջ շաբաթ մեզ մոտ մի աներևակայելի ցեխ եր տիրում, և յես չափազանց ուրախ եմ, վոր տոները վերջացել են:

Պինդ համբուրում և գրկում եմ քեզ և Մարիա Ալեքսանդրովնային:

Մայրիկը բարևում ե քեզ:

Ց մոտակա տեսություն:

Քո Նադյա

Ֆիլիպովն արդյոք քեզ վորևե բան պատասխանե՞լ ե: Այ, քեզ կուռք:

¹ *Խոսքն ըստ յերևույթին Կ. Կաուցկու գրքի թարգմանության (ձեռագիր) մասին ե, վոր կատարել եր Լենինը. գրքի վերնագիրն ե՝* «Bernstein und das sozialdemokratische Programm. Eine Antikritik» Stuttgart, 1899 *(Բեռնշտայնը և սոց.-դեմ. ծրագիրը: Հակաքննադատություն: Շտուտգարտ, 1899 թ.): Տես Կ. Կաուցկի, հոդվածների ժողովածու, հրատ. Գ. Ֆ. Լվովիչի, ՍՊԲ, 1905, եջ 190: Այդ հրատարակության մեջ թարգմանչի անունը չի հիշված: Յերկրորդ հրատարակությունը՝* թարգմանություն Լենինի՝ *հիշատակումով, նույն հրատարակչությունը լույս եր ընծայել 1906 թվին: Այս գրքի յերրորդ հրատարակությունը լույս ե տեսել 1922 թվին, Կիեվ, Պետհրատ, եջ 115:*

² *Վլադիմիր Իլյին (Վ. Լենին), «Տնտեսական ետյուդներ և հոդվածներ», հրատ. Վոդովոզովայի, Պետերբուրգ, 1899 թ.: Այս ժողովածվի մեջ մտել են հետևյալ հոդվածները՝ Տնտեսական ռոմանտիզմի բնութագրի շուրջը.— Պերմի տնայնագործական վիճակագրություն.— Նարոդնիկական պրոժեկտյորության*

ղոհարները.—Ի՞նչ ժառանգությունից ենք հրաժարվում.— Մեր փաբրիկա-գործարանային վիճակագրության հարցի շուրջը: Տես Լենին, Երկեր, ռուս. հրատ. հատ. II, 2-րդ հրատ.:

³ Այն ժամանակ Աստրախանում աքսորի մեջ էր գտնվում Լիդիա Միխայլովնա Կնիպովիչը, որին Ն. Կ. պատրաստվում էր այցելել: Լ. Մ. Կնիպովիչը (1856—1920) 70-ական թվականներին մասնակցում էր նարոդովոլեցական կազմակերպություններին, հետագայում ակտիվ «իսկրայական» և բոլշևիկ: Նրա մասին կենսագրական տեղեկություններ տես՝ Լենինի Երկեր, հատ. VI, 2-րդ ռուս. հրատարակություն, էջ 463, նաև «Пролетарская революция»-յի № 8—9, 1929 թ., էջ 162:

37

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[7] 20/II [19]01. [*Մյունխեն*]

Թանգագին մայրիկ, վաղուց է, ինչ որ քեզնից ոչ մի նամակ չունեմ: Միայն Մանյաշայից վերջին անգամ փոքրիկ լուր ունեմ ամսի 6-ից, որի համար մեծապես շնորհակալ եմ նրան: Ի՞նչպես եք: Արդյոք չափից դուրս չե՞ք մրսում: Առո՞ղջ եք արդյոք:

Այստեղ այժմ վերստին ցրտեր են, և այնքան շատ ձյուն է յեկել, որ մոտ 18 տարի յե, ասում են, այսպիսի բան չեն հիշում: Դեպքեր են յեղել, որ գնացքները են ուշացել ձյան կիտումների պատճառով: Սակայն այդ արդեն, ըստ յերևույթին, ձմեռվա վերջին ճիգերն են: Ցես արդեն ընտելացել և հարմարվել եմ այստեղի ձմռանը.—թեև այնուամենայնիվ հաջորդ ձմեռը, յեթե հարկ լինի անցկացնել այս յերկիրներում, պիտի բերել տամ բամբակով վերարկու: Առանց դրա պետք է կամ փուփայկաներ հագնել և կամ (ինչպես յես այդ անում եմ) յերկու զույգ հագուստ: Սիբիրներում այդ այնքան էլ հարմար չեր, իսկ այժմ վաղուց արդեն ընտելացել եմ: Այստեղի ցրտերն էլ, իհարկե, Ռուսաստանի ցրտերը չեն: 10^0—այդ արդեն «սարսափելի շատ է»:

Երեկ այստեղ վերջացավ կառնավալը: Առաջին անգամն է, որ տեսնում եմ կառնավալի վերջին օրն արտասահմանում—փողոցում դիմակավոր մարդկանց թափորներ, համատարած մասկարություն, կոնֆետտի (գունավոր թղթի մանր կտորտանք) տարափ, որ շպրտվում է յերեսներին, թղթե ոդապարիկներ և այլն, և այլն: Այստեղ գիտեն հրապարակորեն փողոցներում զվարճանալ:

Ցես լիովին առողջ եմ,—յերևի այն պատճառով, որ համեմատաբար շատ եմ վազվզում և քիչ եմ նստում:

Առհասարակ ապրում եմ առաջվա նման:

Շուտով լրանալու յե Նադյայի ժամկետը (այստեղի տոմարով՝ մարտի 24-ին, իսկ ձեր տոմարով՝ մարտի 11-ին): Այս անգամ կուղարկեմ խնդրագիր նրան անցագիր տալու մասին: Ահա թե ինչ կուզեյի, որ Մանյաշան նրա հետ ուղարկեր ինձ՝ մի տուփ «իմ» գրչածայրերից: Ցերևակայիր, այստեղ ոչ մի տեղ չգտա: Հիմար ժողովուրդ են այս չեխերն ու նեմեցները: Անգլիական գրիչներ չկան, կա միայն սեփական արտադրանքից՝ չափազանց անպետք:

Ի՞նչ է գրում Միտյան: Ցե՞րբ է վերջացնում նա քննությունները:

Ի՞նչպես է մտադիր անցկացնել Մարկը այս ամառ:

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում լիակատար առողջություն: Բարևներս ամենքին:

Քո Վ. Ու[լյանով]

Լինում եք արդյոք թատրոնում: Այդ ի՞նչ նոր պիես է Չեխովի «Յերեք քույրերը»: Տեսե՞լ եք այդ պիեսը և ի՞նչպես եք գտել: Ցես լրագրերում կարդացել եմ գնահատականը: Հրաշալի յեն խաղում «Գեղ[արվեստական] Հանրամատ[չելի] Թատրոնում». մինչև օրս հաճույքով եմ մտաբերում իմ անցյալ տարվա հաճախումը խեղճ Կ[ոլումբ]ի[1] *հետ միասին: Առո՞ղջ է արդյոք նա: Միշտ պատրաստվում եմ գրել նրան, սակայն գործերը խանգարում են:*

¹ Կոլումբ—Ի. Խ. Լալայանցի մականունն էր: Լ. (ծն. 1870 թ.) հեղափոխական աշխատանքը սկսել է 80-ական թվականների վերջից Կազանում և Ն.-Նովգորոդում: 1898 թվի սկզբին ծանոթացել և մտերմացել էր Լենինին Սամարայում: Վ. Ի. և Ա. Պ. Սկլյարենկոյի հետ միասին կազմում էր իրենց շուրջը կազմակերպվող մարքսիստների խմբակի կենտրոն, ուստից յերիտասարդության մեջ մարքսիստական խմբակներ ղեկավարում: Կազանի գործով 10 ամսով բանտարկվում է ՍՊԲ-ի «Кресты»-յում: Յեկատերինոսլավում հանդիսանում է ակտիվ կազմակերպիչ Յեկատերինոսլավի Պայքարի Միության, 1899 թվի վերջերին ուրիշ ընկերների հետ միասին կազմակերպում է «Южный рабочий» լրագիրը: 1900 թվի սկզբներին տեսնվում է Լենինի հետ Մոսկվայում և բանակցություններ վարում նրա հետ՝ կուսակցության յերկրորդ համագումարը հրավիրելու առթիվ, որը նախատեսվում էր նույն տարվա գարնանը, և «Рабочая газета»-յի վերահրատարակության գծով, իբրև համակուսակցական օրգանի, նրա խմբագրելու իրավունքը Լենինից, Մարտովից և Պոտրեսովից կազմված յեռյակին հանձնելու առթիվ: Հետագայում աշխատում է Ռուսաստանում և արտասահմանում բոլշևիկյան կազմակերպություններում, մի քանի անգամ յեղել է աքսորում, իսկ 1908 թվին զին.-դատ. դատարանի կողմից դատապարտվում է 6 տարվա տաժանակիր աշխատանքի: Մանր. տես «Լենինյան ժողովածու», VII, ռուս. հրատ. էջ 66:

38

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մոսկվա, *Մարիա Ալեքսանդրովնա* Ուլյանովային. *Բախմետյևսկի փող., Տարոնովի տուն:* Russland. Moskau.

[14] 27/II [19]01. [*Մյունխեն*]

Թանգագին մայրիկ, ստացա Մանյաշայի 2. II. 01 նամակը և «Промышленный мир» *ժուռնալը*[1]: Merci *դրա համար:* «Н[аучное] об[озрение]»-*ից վերադարձված հոդվածները*[2] *այժմ թերևս չարժի ուղարկել, այլ ավելի լավ է ուղղակի հանձնել Նադյային:*

Դեհ, ի՞նչպես գրել Ա[լեքսեյ] Վ[ասիլյևիչ]-ին[3] *Նիկոլաին: Ցես նրան մի անգամ արդեն գրել եմ Խարբին, սակայն հասկացողություն չունեմ՝ հասե՞լ է նամակը, թե չէ: Հաղորդեք ինձ նրա մանրամասն հասցեն (իսկ նրան, յեթե գրելու լինեք՝ իմը), յես կուզեյի գեթ յերբեմն որևէ տեղեկություն ունենալ նրա մասին:*

Անյան, ինչպես յերևում է, միշտ հետաձգել է իր մեկնելը: Նա, յերևի, ձեզ գրել է ինքը:

Ների՛ր նամակիս համառոտության համար։ Այժմ շատ զբաղված եմ։ Մասորերս ավելի յերկար կգրեմ։

Մեծ վողջույն ամենքին։

Պինդ համբուրում եմ քեզ։

Քո Վ. Ու[լյանով]

¹ Խոսքը, ինչպես յերևում է, ֆինանսա-արդյունաբերական տեխնիկական ամենօրյա լրագրի մասին է, վոր 1899 թվից լույս եր տեսնում Ա. Ս. Զալշուպինի խմբագրությամբ։ 1905 թվին լրագիրը վերանվանվում է «Русский экономист»։

² Թե ինչ հոդվածների մասին է խոսքը, պարզել չհաջողվեց։ Հավանական է, վոր խոսքը վերաբերում է Լենինի ռեցենզիային՝ Կաուցկու «Բեռնշտայնը և ս.-դ. ծրագիրը։ Հակաքննադատություն» գրքի մասին և դարձյալ նրա ռեցենզիային՝ Պրակոպովիչի «Բանվորական շարժումն Արևմուտքում» գրքի մասին։ Տես «Լենինյան ժողովածու» VII, ռուս. հրատ. եջ 19—38։

³ Տես 27-րդ նամակի 3-րդ ծանոթագրությունը։

39

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[17/II] 2/III [19]01. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, հաղորդում եմ քեզ իմ փոխված հասցեն։ Յես տեղափոխվել եմ իմ բնակարանատիրոջ հետ միասին¹՝ Herrn Franz Modráček. V r š o v i c e bei Prag., № 384. Oesterreich.

Մեկնում եմ այժմ Վիեննա²։ Դուրս է գալիս, վոր այստեղ չկա ռուսական հյուպատոս (!), մինչդեռ ինձ հարկավոր է Նադյային անցագիր տանելու մասին խնդրագրիս տակ վավերացնել իմ ստորագրությունը։ Հուսով եմ Վիեննայից ինձ կհաջողվի ելի միքանի բան գրել քեզ։

Ափսոսում եմ, վոր չեմ զբաղվել չեխերենով։ Հետաքրքրական է, շատ մոտ է լեհերենին, բազմաթիվ հինավուրց ռուսերեն բառեր։ Միքանի ժամանակ առաջ յես մեկնել եյի այստեղից, և Պրագա վերադառնալիս առանձնապես աչքի յե ընկնում նրա «սլավոնական» բնույթը, ազգանունները «չիկ»-ով, «չեկ»-ով և այլն, «լզյա»-ի «լեկարնյա»-յի նման բառերը և այլն և այլն։ Յեղանակն այժմ տաք է, գարնանային, այնպես վոր իմ Վիեննա ճամփորդելը, պետք է կարծել, վատ չի լինի։

Արդյոք բոլո՞րդ ել առողջ եք։ Ի՞նչպես են Միտյայի գործերը։ Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և բարևում եմ ամենքին։

Քո Վ. Ու[լյանով]

¹ Վ. Ի. ապրում եր Մյունխենում, և վոչ Պրագայում։ Ֆ. Մոդրասեկի հասցեն տրվել եր նամակների համար՝ կոնսպիրատիվ նկատառումներով։

² Պ. Բ. Ակսելրոդին 1901 թ. 27/II ուղղված նամակում (տես 28-րդ նամակը, III «Լենինյան ժողովածու», ռուս. հրատ. եջ 137) Վ. Ի. գրում է. «Մենք վաղը մեկնում ենք այս վերջինի [Բլյումենֆելդի] հետ միասին, — նա Վիեննայով ավելի հեռու, յես՝ Վիեննայով՝ Պրագա իմ սեփական գործով։

40

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մոսկվա, Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. Բախմետյեվսկի փող., Շարոնովի տուն։ Russland. Moskau.

[19/II] 4/III. [19]01. Վիեննա

Թանգագին մայրիկ, այստեղ յեկա Նադյայի համար «թուղթ» ձեռք բերելու նպատակով։ Դուրս է գալիս, վոր Պրագայում չկա ռուսական հյուպատոսություն, իսկ Նադյային արտասահմանյան անցագիր տալու մասին դիմումս անպատճառ պիտի վավերացված լինի։ Վիեննան ահագին, աշխուժ, գեղեցիկ քաղաք է։ «Պրովինցիայից» հետո, վորտեղ յես ապրում եմ, հաճելի յե դիտել և մայրաքաղաքը։ Նայելու բան այստեղ շատ կա, այնպես վոր անցնելիս (յեթե ձեզնից մեկնումեկը անցնելիս լինի) արժի այստեղ կանգ առնել։ Նադյային այդ նպատակով ուղարկել եմ մի փոքրիկ Führer durch Wien*։ Հուսով եմ, Նադյան հիմա շուտով կտեսնվի ձեզ հետ — անցագրի հարցն արդեն չի կարող արգելք լինել նրա մեկնելուն։ Մանյաշայից կխնդրեյի, վոր քաղաքի կենտրոնում լինելու դեպքում Նադյայի համար գնի Henschel's Telegraph** (2 մարկ) (այդպիսի գիրք այստեղից չարժե ուղարկել)։

Այստեղ ի միջի այլոց յեղա Museum der bildenden Künste***-յում և նույնիսկ թատրոնում, տեսա վիեննական ոպերետ։ Քիչ դուր յեկավ։ Յեղա նաև մի ժողովում, վորտեղ կարդացվում եր Volksuniversitätscurse****-ի կուրսերից մեկը։ Այցելությունս անհաջող եր, և շուտով հեռացա։

Հղում եմ բարևներս բոլոր մերոնց և պինդ համբուրում եմ քեզ, թանգագինս։

Քո Վ. Ու[լյանով]

Ցերեկի Անյուտայից — իսկ դուցե և քեզնից կամ Մանյայից — նամակ է յեկել և սպասում է ինձ տանը։

Համենայն դեպս՝ կրկնում եմ իմ նոր հասցեն¹՝ Herrn Franz Modráček Vršovice bei Prag, Oesterreich.

¹ Տես նախորդ նամակի 1-ին ծանոթագրությունը։

41

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[6] 19/V [19]01. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, այս րոպեյիս ստացա քո նամակը և նրան կցված Մարկի նամակը և յերկուսն ել իսկույն ուղարկեցի Անյուտային, վոր արդեն

* Վիեննայի ուղեցույց։ Խմբ.

** Հենշելի յերկաթուղիների ուղեցույց։ Խմբ.

*** Գեղեցիկ արվեստների թանգարան։ Խմբ.

**** Ժողովրդական համալսարան։ Խմբ.

Բեռլին է մեկնել: Նա այնտեղ ուզում է պարապել գրադարաններում: Հուսով եմ, վոր նրա համար ավելի հարմար կլինի Բեռլինում, քան այստեղ, վորովհետև Պրագայի գրադարանները շատ էլ փայլուն չեն: Շատ եմ ցավում, վոր բնակարանի կողմից քեզ չի հաջողվել լավ սարքվել, և ամառանոցը վատն է դուրս յեկել, իսկ ամառը, ըստ յերևույթին, բարեհաջող չի լինելու: ամառանոցավորների համար, դոնե դատելով սկզբի և այստեղի յեղանակների հիման վրա՝ յերկինքը ամպամած, անձրևներ: Մեզ համար այդ լավ է, քանի վոր մենք ամառը քաղաքումն ենք մնում, իսկ քեզ համար, անշուշտ, վատ է: Գուցե Միտյային դեռևս հաջողվի՞ գտնել դրանից լավը: Մեծ հույս ունեմ նույնպես, վոր Մարկին և Մանյաշային շուտով կհաջողվի լինել քեզ հետ միասին[1]: Մարկի նամակին նայած, նա արդեն վորոշ չափով հարմարվել է նոր պայմաններին և կարողացել դասավորել իր ժամանակն այնպես, վորպեսզի համ ձանձրույթ չզգա, համ էլ առողջությունը, վորքան հնարավոր է, քիչ տուժի: Յես գրում եմ նրան և Մանյաշային և խնդրում քեզ այս նամակներն ուղարկել նրանց:

Պինդ համբուրում եմ քեզ, Թանգագինս, և ամբողջ հոգով ցանկանում եմ քեզ կայտառություն և առողջություն, իսկ մանավանդ՝ վոր շուտով Մ[անյաշա-յի] և Մ[արկի] հետ լինես:

Քո Վ. Ու[լյանով]

Բարևս Միտյային: Նա, յերևի, բավական ծանրաբեռնված է աշխատանքով:

[1] Մ. Ի. Ուլյանովան և Մ. Տ. Յելիզարովը ձերբակալվել եյին 1901 թվի մարտի լույս մեկի գիշերը] ՌՍԴԲԿ Մոսկվայի կազմակերպության գործով:

42

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[6] 19/V [19]01. [Մյունխեն] (ստացվել է մայիսի 18[31]-ին)[1]

Մտադրվեցի գրել քեզ, Թանգագին Մանյաշա, միքանի խոսք, թե չէ դու գուցե կմտածես, վոր էլ բոլորովին խոզ եմ դառել: Զարմանալի յե իսկապես, յես այստեղ հաճախ եմ մոռանում իմ պարտականությունները: Ճիշտ է, այժմ, յերբ յեկել են Նադյան և Յե[լիզավետա] Վ[ասիլյեվնա]ն, մենք ավելի լավ ենք սարքվել, առանձին բնակարանով, և յես սկսել եմ ավելի կանոնավոր պարապել, սակայն ժխորն ու աղմուկը, այնուամենայնիվ, ելի քան շատ են:

Դու ինչպես ես քեզ զգում: Հուսով եմ, վոր արդեն սահմանել ես ավելի կանոնավոր ռեժիմ, վորն այնքան կարևոր է մենակության մեջ: Յես Մարկին հենց այժմ նամակ գրեցի և արտասովոր մանրամասնությամբ նկարագրեցի նրան, թե ամենից լավ ինչպես է հարկավոր «ռեժիմ» հաստատել. մտավոր աշխատանքի բնագավառում յես առանձնապես խորհուրդ եմ տալիս թարգմանություններ անել, այն էլ յերկկողմանի, այսինքն՝ նախ օտար լեզվից ռուսերենի գրավոր և ապա՝ ռուսերեն թարգմանությունից նորից օտար լեզվի: Յես իմ փորձից յեկել եմ այն յեզրակացության, վոր դա լեզուն ուսումնասիրելու ամենառացիոնալ միջոցն է: Իսկ ֆիզիկական աշխատանքի տեսակետից յես ամենայեռանդուն կերպով խորհուրդ եմ տալիս նրան, նույնն էլ քեզ եմ կրկնում. ամեն օր մարմնամարզություն արա և մարմինդ ջրով շփիր: Մենակության մեջ այդ ուղղակի անհրաժեշտ է:

Քո մի նամակից, վոր մայրիկն ուղարկել է այստեղ, յես տեսա, վոր քեզ հաջողվել է արդեն կանոնավորել միքանի պարապմունքներ: Հուսով եմ, վոր դրա շնորհիվ դու գեթ յերբեմն կմոռանաս շրջապատի մասին, և ժամանակը (վոր բանտերում սովորաբար արագ է սահում, յեթե չկան առանձնապես աննպաստ պայմաններ) ավելի ևս աննկատելի կերպով կանցնի:

Խորհուրդ եմ տալիս նույնպես կանոնավոր կերպով դասավորել պարապմունքները ըստ յեղած գրքերի այնպես, վոր նրանք միապաղաղ չլինեն. յես շատ լավ եմ հիշում, վոր ընթերցանության կամ աշխատանքի փոփոխումը՝ թարգմանությունից ընթերցանության, գրելուց մարմնամարզության, լուրջ ընթերցանությունից գեղարվեստականի անցնելը չափազանց շատ է օգնում: Յերբեմն տրամադրության վատանալը, վոր բավական փոփոխական է լինում բանտում, ուղղակի կախված է միատեսակ տպավորություններից կամ միատեսակ աշխատանքից հոգնելուց, և բավական է լինում փոխել այն, վորպեսզի նորմալի մեջ մտնես և տիրապետես ջղերիդ: Ճաշից հետո, յերեկոները, հանգստի համար, յես հիշում եմ, regelmässig* զբաղվում եյի բելլետրիստիկայով, և վոչ մի տեղ յես այնպես արագ ու հետաքրքրությամբ չեմ կարդացել այն, վորքան բանտում: Իսկ վոր գլխավորն է՝ մոռացության չտաս ամենօրյա պարտադիր մարմնամարզությունը, ստիպիր քեզ կատարել միքանի տասնյակ (առանց զիջումների!) ամեն տեսակ շարժումներ: Այդ շատ կարևոր է: Դեհ, ցտեսություն առայժմ: Պինդ համբուրում եմ քեզ և ցանկանում կայտառություն և առողջություն:

Քո Վլադ[իմիր] Ուլյանով

[1] Այս նամակը հանձնվել է Մարիա Իլյինիչնային բանտում, և նրա վրա կա Մոսկվայի դատական պալատի դատախազի օգնականի կնիքը:

43

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[25/V] 7/VI [19]01. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, ստացա քո մայիսի 10-ի նամակը և լրագրեր Միտյայից: Լրագրերի և նամակիդ համար մեծ շնորհակալություն: Միտյային յես շատ կխնդրեյի հետագայում էլ ուղարկել ռուսական լրագրերից ձեռքն ընկած ամեն տեսակ հետաքրքրական համարներ. այստեղ գրադարան չկա, և բացի „Русские ведомости“-ից գրեթե վոչինչ չես տեսնում...

Անյուտան Բեռլին է և արդեն ինձ գրել է, վոր ստացել է իրեն ուղարկված հոնորարը և վոր քո նամակները նա այժմ ընդհանրապես ավելի շուտ է ստանում, քան առաջ:

Շատ ուրախ եմ, վոր քեզ ամառանոցը դուր է գալիս և հաջողվում է քեզ շատ ժամանակ անցկացնել բացօթյա: Թե չէ Անյուտայի խոսքերից յես ինձ ձեր նոր ամառանոցը պատկերացնում եյի արդեն շատ վատ և ցուրտ: Իսկ անձրևներին ինչպես է լինում այդտեղ:

Ցավալի յե, վոր Մարկի և Մանյաշայի վիճակի մեջ փոփոխություն չկա: Անյուտայի մեկնելուց հենց առաջ յես նրանց գրեցի նամակներ զանազան շա-

* Կանոնավոր կերպով: Խմբ.:

տախտտուլժյուններով բանտում ժամանակ անցկացնելու մասին։ Զգլխեմ՝ սառացնել են նամակները և հասել ի նրանց ձեռքը։

Մենք այստեղ միանդամայն լավ ենք սարքվել մեր բնակարանի տեսակետից։ Բնակարանի վարձադներն այստեղ ավելի ցածր են, քան Ռուսաստանի նման (համեմատաբար) մեծ քաղաքներում։ Կահ-կարասի մենք էժան գնեցինք արդեն գործածված իրերից, տնտեսությունը Ցե[լիզավետա] Վաս[իլյեվնա]-ն և Նադյան կարողանում են վարել իրենք առանց առանձին դժվարությունների, տնտեսությունն այստեղ շատ ավելի պարզ է։ Տեղն էլ շատ լավն է՝ քաղաքի ծայրամասը, ջուրը մոտիկ և կանաչով առատ այգի։ Իսկ հաղորդակցությունը կենտրոնի հետ, շնորհիվ էլեկտրատարների, շատ լավ է։ Իմ հրատարակչուհուց[1] այս օրերս ստացա 250 ռ[ուբլի], այնպես որ ֆինանսների կողմից էլ գործերս այժմ վատ չեն։ Առհասարակ, ես այստեղ ամեն կողմից հարմար եմ սարքված և միայն մի բան եմ ուզում՝ որ որքան կարելի յե շուտ ազատեն մերոնց, այնպես որ դու գրեթե մենակության մեջ չմնաս։ Ցե[լիզավետա] Վաս[իլյեվնա]-ն և Նադյան առողջ են և մեծամեծ ողջույններ են ուղարկում քեզ և մերոնց։ Նադյան օրերս մտադիր է նամակ գրելու։

Պինդ համբուրում եմ քեզ, Թանգագինս, և ցանկանում կատարյալ առողջություն։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Խոսքն, ըստ յերևույթին, Մ. Ի. Վոդովոզովայի մասին է (տես 44-րդ նամակը), որի հրատարակչությամբ լույս է տեսել Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գիրքը, տես Լենինի Յերկեր, հատ. III, աստ. 2-րդ հրատ.։

44

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[29/V] *11/VI.* [19]*01.* [*Մյունխեն*]

Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա. չեյի գրում յես այս ամբողջ ժամանակ նախ այն պատճառով, որ հուսս դրել եյի սկզբում Անյուտայի վրա, որ նա կնկարագրի մեր նիստուկացը և ապա՝ որ մայրիկն ու Վոլոդյան էլ գրել են։ Մենք ամենքս առողջ ենք. Վոլոդյայի մոտ կատարրի վոչ մի հետք չի յերևում։ Մայրիկն էլ առողջ է, նա գտնում է, որ մեր կյանքը շատ միապաղաղ է ընթանում. իմ կարծիքով այդ այդպես չէ։ Ճիշտ է, մենք Վոլոդյայի հետ կարգին ծանրաշարժ ենք՝ յես մինչև օրս յեղել եմ միայն պատկերների մեկ գալերեյայում, իսկ քաղաքին գրեթե բոլորովին ծանոթ չեմ։ Սակայն այդ բացատրվում է նրանով, որ այժմ ամառ է, և յերբ զբոսնելու յես գնում, գնում ես վոչ թե քաղաք, այլ դաշտ։ Մենք արվարձանում ենք ապրում. այստեղ մեծ քաղաքի հարմարությունները՝ խանութները, էլեկտրաքարշը և այլն՝ միանում են բնության ծոցի մոտիկության հետ։ Ահա, յերեկ, օրինակ, մենք հրաշալի զբոսանք կատարեցինք ճանապարհով։ Հիանալի ճանապարհ է, յերկու կողմից բարդիներ, չորս կողմը դաշտեր ու այգիներ։ Հեռու տեղ մեկ անգամ ենք միայն գնացել, բայց անհաջող, վրա հասավ ամպրոպ, անձրև և շատ հոգնեցինք։ Մտադրություն ունենք մի կերպ ուղևորվելու դեպի սարերը։ Անյուտան միշտ խորհուրդ եր տալիս ամառը անցկացնել գյուղում, մայրիկն էլ կարծում է, որ

այդ ավելի լավ կլիներ, սակայն շատ նկատառումներով այդ անհարմար կլիներ։ Հեռու ապրել չի կարելի, վորովհետև Վ[ոլոդյան] ամեն օր քաղաք պիտի գնար ու գար, իսկ այդ շատ պիտի հոգներ նրան։ Նա, բացի դրանից, բավական հաճախ լինում է գրադարանում։ Իսկ պարկը մեզնից հեռու չէ և մինչև լողարանը 20 րոպեյի ճանապարհ է։ Առհասարակ մեզանում կյանքը կամաց-կամաց իր հունի մեջ է մտել. Վոլոդյան գնալով կանոնավորում է իր աշխատանքները...

Գալով ինձ, յես առայժմ շատ քիչ եմ պարապում և կամ ավելի ճիշտը՝ բոլորովին չեմ պարապում։ Ժամանակը ուր-որ կորչում է, իսկ թե ուր, չգիտեմ։

Մտադիր եմ հաճախել այստեղի դպրոցները. յերեխաների մի տեսակ թագավորություն է այստեղ։ Բոլորն էլ այնքան ուշադիր են դեպի նրանց, յերեխաներն էլ այնքան գուրեկան, առողջ տեսք ունեն։ Ցես լինում եյի մեր քաղաքային դպրոցներում և ակամա համեմատում եմ ու գտնում, որ յերեխաներն այստեղ անհամեմատ ավելի լավ են ապրում։ Ասենք իմ մտադրությունը յերևի հենց լոկ մտադրություն էլ կմնա, սակայն բան չկա, դեռ շատ ժամանակ ունեմ... Վոդովոզովայից 600 մարկից քիչ ավել չեկ է ստացվել[1]), սակայն դրամը դեռ չի ստացվել, չի ստացվել նաև նամակը։ Առհասարակ Ռուսաստանից մեզ սաստիկ քիչ են գրում, կարելի յե կարծել, որ բոլոր հին մտերիմները մոռացության են մատնել մեր գոյությունը։ Ահա, օր[ինակ] Զինայից[2], Բազիլից[3] ձեն ու ծպտուն չկա... Այնպես էլ չգիտենք՝ թողել է արդյոք Գլ[եբ]-ը[4], վերջապես, իր Տայգան...

Ի՞նչպես եք ապրում, Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա։ Առողջ եք արդյոք։ Դ[միտրի] Ի[լյիչ]-ին բարևեք իմ կողմից։

Կցվող նամակը Մանյաշայի համար է, Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]-ին՝ իմ բարևներս։ Չկա՞ արդյոք վորևէ նորություն։ Պարզվե՞լ է մի բան, թե՞ չէ։

Մերոնք բարևում են, իսկ յես պինդ-պինդ համբուրում եմ։

Ձեր Նադյա

P. S. *Վոլոդյան խնդրում է Դ[միտրի] Ի[լյիչ]-ին բժշկի անունով[5] ուղարկել «Կ[ապիտալիզմի] Զ[արգ[ացում]»ից 3 օրինակ։*

[1] Տես 43-րդ նամակի ծանոթագրությունը։

[2] Զ. Ն. Կրժիժանովսկայա։

[3] Վ. Վ. Ստարկով։

[4] Գ. Մ. Կրժիժանովսկի, որը այդ ժամանակ ըստ իր մասնագիտության Տայգա կայարանում եր աշխատում։

[5] Բժիշկ Լեմանի հասցեն Մյունխենում, որով Վ. Ի.-ի համար ուղարկվում եյին նամակներ արտասահմանից և գրականություն։ Լ. Մյունխենի սոցիալ-դեմոկրատներից եր, մեծ ծառայություններ եր անում «Искра»-յին նրա գոյության մյունխենյան ժամանակաշրջանում. նրա հասցեյով, ի միջի այլոց, ուղարկվում եր գլխավոր խմբ. նամակագրությունը։

45

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[18/VI] 1/VII [19]01. [*Մյունխեն*]

Թանգագին մայրիկ, վաղուց է ինչ քեզնից վոչ մի լուր չունեմ։ Առողջ ես արդյոք։ Օրերս Անյայից ստացա Մարկի՝ քո վերաառաքած նամակը, որի մեջ

իմ անունով ել միքանի տող կա։ Շատ ուրախացա, վոր մի լուր ստացա նրանից (Մանյաշայից իմ նամակին պատասխան դեռ չկա), սակայն ցավեցի կարդալով, վոր նրանց կամերաները բավական վատ են սարքված։ Նրանց վատ ել ժամանակ վիճակվեց նստել՝ ամառը։ Ի դեպ՝ այստեղ ամառը շոգեր չի անում, առատ ե անձրևներով։ Ձե՞զ մոտ ինչպես ե։

Միտյայից ստացա նրա ուղարկած փողը (75 ռ[ուբլին]), վոր նա ստացել ե, յերևի, իր հրացանը վաճառելուց։ Merci դրա համար։ Նա ստացե՞լ ե արդյոք Նադյայի նամակը, վորով նա խնդրում ե նրանից ուղարկել ինձ 3 որինակ իմ՝ Կապիտալիզմի մասին գրքից։

Ունե՞ք արդյոք ծանոթներ Պոդոլսկում։ Տեսնվու՞մ եք այն պարոնի հետ, վորի հետ մենք անցյալ տարի զբոսանք կատարեցինք նավակով[1]։ Մասկվա դու, յերևի, գնում ես ամեն շաբաթ, այն ել վոչ մեկական անգամ։ Արդյոք անցնելիս ձեզ մոտ չի՞ յեկել սիբիրցի մտերիմներից վորևե մեկը[2]։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում առողջություն։ Ամենամեծ վողջույններ բոլորից՝ Միտյային, Մարկին և Մանյաշային։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Վ. Ի. նկատի ունի Վյաչեսլավ Ալեքսանդրովիչ Լևիցկուն՝ մեր ընտանիքի մոտիկ ծանոթին, վորն այդ ժամանակ սանիտարական բժշկի պաշտոն եր կատարում Մասկվայի նահանգի Պոդոլսկի գավառում։ Վ. Ի. Լևիցկու հետ ծանոթացել եր հարազատների մոտ, ամառանոցում Պոդոլսկում, արտասահման մեկնելուց առաջ և խնդրել եր Վ. Ա.-ին թղթակցել «Искра»-յին։ Լևիցկու մեկ թղթակցությունը՝ «Աղյուսագործների արթնացումը» վերնագրով զետեղվել եր «Искра»-յի № 1-ում։

[2] Խոսքն, ըստ յերևույթին, Գ. Կրժիժանովսկու, Վ. Ստարկովի, Մ. Սիլվինի և այլ ընկերների մասին ե, վորոնք Վ. Ի.-ի հետ միաժամանակ յեղել են աքսորում։

46

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[3] 16/VII [19]01. [Մյունխեն]

Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա,

Անյուտան ուղարկել ե մեզ Ձեր՝ Վալոդյային ուղղած նամակը և Մանյայի նամակը։ Այդ ինչո՞ւ իմ նամակը չեն հանձնել Մանյային։ Հրաշալի յե։ Շատ լավ կլիներ, յեթե մոտալուտ ազատվելու մասին լուրերն արդարանային... Յերբ Մանյային կտեսնեք, ասացեք, վոր յես նրան պինդ-պինդ համբուրում եմ և հղում իմ ջերմ վողջույնը։ Ձեր նամակի մեջ ինձ շատ զարմացրեց այն, վոր Ձեր նիստուկացի մասին Վալոդյան կարող եր տեղեկանալ Ձեր՝ մայրիկին գրած նամակից։ Նամակն ուրեմն կորել ե, քանի վոր մայրիկը Ձեզնից նամակ չի ստացել և քիչ առաջ պատվիրեց հարցնել Ձեզնից՝ ստացե՞լ եք Դուք արդյոք նրա նամակը։ Մայրիկս շարունակ տկար ե, հազում ե, վատ ե քնում։ Այսոր նա մեզ հետ գնացել եր լողանալու և սաստիկ հոգնել ե, մինչդեռ ամբողջ ճանապարհը 15 րոպե յե, վոչ ավել։ Մենք գրեթե ամեն որ գնում ենք լողանալու. լողարանը սքանչելի յե. առհասարակ մենք, թեև քաղաքում ենք ապրում, սակայն նրա շրջակայքը մեզնից շատ մոտիկ ե։ Տեղն ամեն կողմից լավն ե։ Հիմա կարգին շոգեր ե անում, սակայն վոչ այն աստիճան, վոր անտանելի լինի։

Ժամանակը մի տեսակ չափազանց արագ ե ընթանում, չես ել նկատում թե ինչպե՛ս ե անցնում շաբաթը շաբաթի հետևից. բանն այն չի, վոր չափազանց շատ գործ ունենք, այլ հենց մի տեսակ, ասես, «գործ ել չես անում, և չես ել վազվզում առանց գործի»։ Յես նորից ձեռնարկում եմ գերմ[աներեն] լեզ[վին], անհարմար ե առանց լեզվի. գտել եմ մի գերմանուհի, վոր ինձ ավանդելու յե գերմ[աներենը], ռուսերենի փոխարեն։ Տեսնենք։ Ամեն որ հավաքվում ենք Վալոդյայի հետ գնալու գերմ[անական] թատրոն, սակայն այդ կողմից մենք կարգին թմբլ ենք, ասում ենք՝ «պետք ե գնալ», և դրանով ել բավականանում ենք, այս կամ այն բանը խանգարում ե։ Անյուտան այդ կողմից ավելի շարժուն ե։ Սակայն այն ել պետք ե ասել, վոր այժմ տրամադրությունները այնքան ել հարմար չի դրա համար։ Արտասահմանից լիովին ոգտվելու համար պետք ե գալ այստեղ առաջին անգամ յերիտասարդ հասակում, յերբ ամեն մի մանր բան հետաքրքրում ե... Սակայն, այնուամենայնիվ, յես այժմ գոհ եմ ընդհանրապես մեր կյանքից, սկզբներում մի տեսակ տաղտկալի յեր, ամեն ինչ խորթ, իսկ այժմ, յերբ կամաց-կամաց մտնում ես այստեղի կյանքը, այդ զգացումը չքանում ե։ Ափսոս միայն, վոր Ռուսաստանից շատ ժլատ են գրելու կողմից։ Դեհ, վերջացնում եմ։ Պինդ գրկում եմ Ձեզ, թանգագինս։ Ցանկանում եմ Ձեզ առողջություն և աշխուժություն։

Մայրիկն ուղարկում ե Ձեզ և Դմ[իտրիյ] Ի[լյիչին] իր վողջույնը։ Սպասում ենք նրանից նամակի։ Դեհ, ցանկանում ենք ամեն տեսակ բարիք։

Ձեր Նադյա

47

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[4] 17/VII [19]01. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, որերս ստացա քո նամակը, վոր ինձ ուղարկել ե Անյուտան։ Չափազանց ուրախացա իմանալով, վոր հույս կա, թե մերոնք շուտով կարող են ազատվել։ Գուցե իրոք կհամոզվեն, վոր վոչ մի «գործ» դուրս չի գա։ Սակայն, յեթե նույնիսկ «գործ» դուրս գա, այնուամենայնիվ պետք ե վոր շուտով ազատեն, վորովհետև այժմ մինչև իսկ անհամեմատ ավելի կարևոր գործերով ավելի շուտ են արձակում «մինչև գործի ավարտումը»։ Լավ ե գեթ այն, վոր Մանյաշան իրեն աշխուժ ե զգում, ինչպես յերևում ե նրա նամակից, վոր ինձ ուղարկել ե Անյուտան։

Անյուտան այս որերս գրում եր ինձ, վոր մտադիր ե բնության ծոցը քոչելու. այդ վատ չեր լինի, թեև արտասահմանյան քաղաքները, պետք ե ասել, ամառն անցկացնելու համար ավելի լավ են հարմարեցված, այսինքն՝ ավելի շուտ-շուտ են ջրում փողոցները և այլն և այլն, այնպես վոր այստեղ ավելի հեշտ ե քաղաքում անցկացնել ամառը, քան Ռուսաստանում։ Մենք, որ[ինակ], հնարավորություն ունենք թե ամեն որ լողանալու շատ լավ լողարանում համեմատաբար եժան գնով, թե զբոսնելու տեղ կա և հեռու ել չի քաղաքից դուրս գալը։ Շարժումը փողոցներում այստեղ անհամեմատ պակաս ե, քան նույնպիսի մեծ ռուսական քաղաքում։ Այդ նրանից ե, վոր ելեկտրաքարշերն ու հեծանիվ-

ները բոլորովին հեռուն կողմ են վանում կասկերը։ Իսկ առևտրական շարժումը մեր ապրած արվարձանում բոլորովին չնչին է։ Ուստի և դոհ ենք մեր բնակավայրից և միտք չունենք գյուղ կամ ամառանոց գնալու։

Պինդ գրկում եմ քեզ, Թանգագինս, և առողջություն ցանկանում։

Շատ բարևներ Միտյային և մանավանդ Մարկին ու Մանյաշային։

Քո Վ. Ու[լյանով]

48

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[20/VII] 2/VIII [1901]. [Մյունխեն]

Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա, յերեկ ստացանք Վոլոգդայից ուղղած Ձեր նամակը։ Նրանից դժբախտաբար յերևում է, որ ամեն ինչ ձեզանում առաջվա պես է, իսկ յես վերջին անգամ Մանյաշային էլ նրա համար չգրեցի, որովհետև կարծում եյի, թե նա շուտով Ձեզ հետ կլինի։ Ի դեպ՝ լավը միշտ գալիս է այն պահին, յերբ դրան ամենից քիչ ես սպասում։ Ցերբեմն, յերբ յերկար ժամանակով դուրս ես գալիս տանից ու մտքերդ բոլորովին այլ բաներով են զբաղված, և ապա մտնում ես տունդ, թվում է, թե ահա կգաս և անսպասելի հեռագիր կգտնես, թե մերոնք Ձեզ հետ են...

Ծնդրեմ, Թանգագինս, յերբ տեսակցության կգնաք, համբուրեք իմ կողմից Մանյաշային պինդ, պինդ, իսկ Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]ին՝ բարև արեք։ Մանյաշային յես գրում եմ։

Մեզ մոտ ամեն ինչ առաջվա նման է։ Վոլոդյան այժմ բավական յեռանդուն է պարապում, յես շատ ուրախ եմ այդ առթիվ՝ յերբ նա ամբողջովին անձնատուր է լինում որևէ աշխատանքի, իրեն՝ լավ և աշխույժ է զգում— այդպես է նրա բնավորությունը. նա բոլորովին առողջ է. նրա կատարրից, ըստ յերևույթին, վոչ մի հետք չի մնացել. անքնություն նույնպես չունի։ Նա ամեն օր շփում է իրեն սառը ջրով և, բացի դրանից, գրեթե ամեն օր գնում ենք լողանալու։ Իսկ մայրիկը մի տեսակ շարունակ տկար է. կամ ռեվմատիզմ, կամ թուլություն, կամ մրսում է։

Մի շաբթից մոտավորապես մենք Վոլոդյայի հետ պատրաստվում ենք կարճ ժամանակով ուղևորվելու Շվեյցարիա՝ Անյուտայի մոտ[1]։ Յես շատ ուրախ եմ, որ Անյուտան ժնևում է վոչ թե Բյուզեն, ինչպես այդ ուզում եր առաջ, այլ Թունի լիճ։ Այնտեղ հավանաբար ավելի լավ է։ Մենք գնալու յենք միքանի օրով, սակայն յես մեծ հաճույքով եմ մտածում այդ ճամպորդության մասին, նախ՝ ուզում եմ տեսնել Անյուտային և յերկրորդ՝ ուզում եմ տեսնել սարեր. այդ ինչ բան են սարերը, յես կյանքումս չեմ տեսել, միայն նկարների վրա յեմ տեսել։ Մորս մոտ այդ ժամանակամիջոցում կտեղափոխվի մեր մի ծանոթը, այնպես որ նա չի վախենա մենակ մնալուց։ Մայրիկն աշնանը պատրաստվում է Պիտեր գնալու, իսկ յես համոզում եմ նրան ձմեռը մեզ հետ անցկացնել. չգիտեմ, թե ինչ կվճռի նա։ Անհավանական, ամառն էլ վերջանալու վրա յե, իսկ յես չեմ էլ նկատել, թե ինչպես է անցել այն. ասես ամառը չի էլ յեկել՝ քաղաքում ամառն էլ մի տեսակ անառվա նման չի։

Դեհ, ցտեսություն, Թանգագինս, պինդ գրկում եմ Ձեզ, ցանկանում եմ

շատ ույժ և առողջություն։ Դ[միտրի] Ի[լյիչին] իմ բարևներս և շնորհակալություն գրքի համար, վորը վաղուց է ստացվել։ Մայրիկը բարևում է բոլորին։

Ձեր Նադյա

[1] Խոսքն, ըստ յերևույթին, «Искра»-յի խմբագրության անդամների խորհրդակցությանը գնալու մասին է, վորը նախատեսված եր «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միության», «Искра»—«Заря»-յի և «Борьба»-յի խմբակի համագումարի նախօրյակին։ Այս համագումարը, վոր հրավիրված եր Ժընևի հունիսյան կոնֆերանսի վորոշմամբ, արտասահմանի ռուսական բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները միացնելու համար,—վորպիսի միացումը, սակայն, գլուխ չեկավ,—հետաձգվում է հրավիրման տեղի շուրջը յեղած վեճերի պատճառով։ «Искра»-յի խմբագրությունը կամենում եր, վոր համագումարը կայանա Ցյուրիխում, «Борьба»-յականները Պարիզի վրա եյին պնդում։ Տես «Լենինյան ժողովածու» III, նամակներ՝ Մարտովինը Ակսելրոդին (նամակ 16, եջ 51), Պլեխանովինը Լենինին (65, եջ 234), Ակսելրոդինը Լենինին (70, եջ 248), Լենինինն Ակսելրոդին (72, եջ 251), Ակսելրոդինը խմբագրության մյունխենյան մասին (75, եջ 259—260) և Լենինինը Պլեխանովին (79, եջ 266)։ Համագումարը կայացավ Ցյուրիխում, հոկտեմբերի 4—5-ին։

49

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[21/VII] 3/VIII [19]01. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ,

Ստացա քո հունիսի 13-ի նամակը։ Մեծ merci դրա համար։ Այդ չափազանց տարօրինակ է, որ նույնիսկ Միտյային տեսակցություն չեն տալիս։ Մի բան միայն մխիթարական է, որ գործը մոտենում է իր վախճանին և վոր շուտով կսկսեն բաց թողնել և աքսորել։ Գուցե հաջողվի սարքվել Մասկվայից վոչ այնքան հեռու. խոսքս Մանյաշայի մասին է, քանի վոր Մարկը, ինչպես դու գրում ես, վճռել՝ է ուղևորվել յեզրոր[1] մոտ։ Վորովհետև Մարկի գործը, հաստատ կարելի յե ասել, վոչնչով չի վերջանա, գուցե, դեռևս հույս կա, վոր նա կավարտի կուրսը[2], յեթե վոչ ըստ հերթի, գեթ մեկ տարի կորցնելով. դեռ կարող են նրան թույլ տալ, մանավանդ այն նկատառումով, վոր նա ավարտել է մաթեմատիկական ֆակուլտետը։

Ցերբ է մեկնում Միտյան, և արդյոք յերկար ժամանակով։ Ցերբ նա կավարտի իր բոլոր քննությունները[3] և ինչ ծրագրեր ունի հետագայի համար, առաջվա նման ձգտում ունի՞ սանիտարական բժիշկ դառնալու։

Ապրում ենք առաջվա նման։ Մտադրվել եյինք միքիչ ճամպորդել Նադյայի հետ[4], սակայն յեղանակը ինչ-վոր շատ փոփոխական է։ Այժմ նորից անձրևային օրեր են սկսվել։ Այս ամառը հենց այնպիսի ամառ է, վոր նույնիսկ ավելի լավ է անցկացնել քաղաքում, քան գյուղում։

Անյուտայից օրերս նամակ եմ ստացում նրա նոր բնակավայրից։

Պինդ գրկում եմ քեզ, Թանգագինս, և ցանկանում եմ առողջություն։ Շատ բարևներ Միտյային, Մարկին և Մանյաշային։

Քո Վ. [Ուլյանով]

[1] Սիզրան, Պ. Տ. Ցելիզարովի մոտ։

[2] Մ. Տ. Յելիզարովը այդ ժամանակ ուսանում եր Մոսկվայի ճարտարապետական Դպրոցում։

[3] Դ. Ի. Ուլյանովը ավարտել է Յուրյևի համալսարանի բժշկական ֆակուլտետը։

[4] Տես 48-րդ նամակի ծանոթագրությունը։

50

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[19/VIII] 1/IX [19]01. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, այս օրերս ստացա քո՝ Նադյային ուղղած նամակը՝ Մանյաշայի նամակով հանդերձ։ Սաստիկ ցավալի յեր իմանալ, վոր մեր գործերն այդքան տխուր են։ Սիրելիս, յես արդեն չգիտեմ էլ՝ ինչ խորհուրդ տամ։ Մի հուզվիր, խնդրեմ, չափից դուրս—այն հանգամանքը, վոր դատախազությունը մերոնց հանդեպ բծախնդրությամբ ամեն մի դատարկ բանի հետևից է ընկնում,—այդ, ըստ յերևույթին, վերջին փորձերն են վոչնչից «գործ» հերյուրելու. այդ փորձերի անհաջողությունից հետո նրանք ստիպված կլինեն նրանց թողնել։ Գուցե անօգուտ չլիներ, վոր դու ուղևորվեյիր Պետերբուրգ, յեթե միայն առողջությունդ ներում է, և բողոքեյիր այնտեղ այդպիսի չտեսնված բանի դեմ, ինչպես 6 ամսվա ընթացքում նրանց չհարցաքննելն է։ Այդ մի այնպիսի ճշտորոշ և բացահայտ ապօրինի փաստ է, վոր ամենից հարմար է հենց այդ փաստը դարձնել գանգատի հիմքը։ Ընդհանրապես Պետերբուրգը, համենայն դեպս, յերևի բացատրություն կպահանջեր Մոսկվայից և կդրդեր մինչև դեն նետել իրենից պրովինցիալ սանձարձակությունը (ինչպես այդ տեղի ունեցավ, չէ վոր, այն ժամանակ էլ, յերբ նստած եր Միտյան)։ Ահա նկատառումներ՝ Պետերբուրգ գնալու օգտին։ Սակայն կան, իհարկե, նկատառումներ նաև մեկնելու դեմ, վորի հետևանքները կասկածելի յեն, իսկ հուզումներ այն շատ և շատ կպատճառի։ Տեղում դու ավելի լավ կարող ես տեսնել, թե արժի՞ արդյոք ձեռնարկել մի այդպիսի բան, և ծանոթներիդ հետ դու, յերևի, արդեն խորհրդակցել ես այդ մասին։ Արժի, ըստ իս, գանգատվել նաև այն բանի դեմ, վոր Մանյաշային մերժել են տեսակցել Միտյայի հետ[1], վորովհետև այդ իրոք վոր չափազանց արտասովոր բան է։

Գալով Անյուտային, յես, իհարկե, նրան գրելու չեմ այն, ինչ վոր դու հաղորդել ես, վորպեսզի նրան չհուզեմ չափից դուրս։ Հույս ունեմ շուտով, գուցե մի քանի շաբաթից[2], տեսնվելու նրա հետ և ամեն ջանք գործ կդնեմ գեթ մինչև նրան հանգստացնելու։

Գրիր ինձ, խնդրեմ, թանգագինս, յերբ ազատ ժամանակ կունենաս,—ինչպես ես քեզ զգում, արդյոք բոլորովին առո՞ղջ ես, ինչպես ես մտադիր աշնանը սարքվելու։ Փոխադրվելո՞ւ յես Մոսկվա, թե՞ առայժմ մնալու յես Պոդոլսկում։ Յե՞րբ է մեկնում Մ[արիա] Վ[ասիլյեվնա]ն[3]։ Իսկ յերբ նորից տեսնես Մանյաշային և Մարկին, մեր ամենքիս կողմից շատ բարև կանես։ Ամառն այժմ անցել է,—ամառն ամենավատ ժամանակն է բանտում նստելու համար,—և հարցաքննությունից հետո նրանք, հավանական է, մինչև ավելի պարզորոշ կպատկերացնեն իրենց նրանց գործի ամբողջ անլրջությունը։

Պինդ, պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում աշխուժություն

և առողջություն։ Միտդ է, յերբ յես էլի նստած, դու նույնպես գործը պատկերացնում եյիր քեզ շատ ավելի լուրջ և վտանգավոր, քան այդ դուրս յեկավ. իսկ չէ՞ վոր Մանյաշայի և Մարկի գործը վոչ մի համեմատության չի կարող դրվել իմ գործի հետ։ Վոր նրանց այսքան յերկար են պահում, այդ մասամբ կախված է, յերևի, նրանից, վոր ձերբակալվածները շատ-շատ են, և դեռևս չեն կարողանում գործի եյությունը կարգին ըմբռնել. անշուշտ Պետերբուրգում այդպիսի անհեթեթությունն անհնարին կլիներ։

Մի անգամ էլ համբուրում եմ քեզ։ Քո Վ. Ու[լյանով]

Մենք ապրում ենք ինչպես [առաջ՝ Յել[իզավետա] Վաս[իլյեվնա] մինչև տկար է,—այստեղ նորից ինֆլուենցիա յե սկսվել։ Նադյան ասես հարմարվել է այստեղի կյանքին և բավական ընտելացել։

[1] Դ. Ի. Ուլյանովին մերժել եյին տեսակցել քրոջ հետ այն հիման վրա, վոր նա ինքը քիչ ժամանակ առաջ պատասխանատվության եր կանչվել քաղաքական գործով։

[2] Տես 48-րդ նամակի ծանոթագրությունը։

[3] Մ. Վ. Զվորիկինա—Մ. Ի. Ուլյանովայի դասընկերուհին գիմնազիայում։ Մի ժամանակ նա ապրում եր Մ. Ա. Ուլյանովայի հետ միասին Պոդոլսկում։

51

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[8] 21/IX [19]01. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, ստացա քո օգոստոսի 22-ի նամակը։ Merci դրա համար, նաև փողի (35 ռուբ[լի]) համար, վոր մենք վերջիվերջո ստացանք յերկար ձգձգումներից հետո. ձգձգումները պատահաբար տեղի ունեցան իմ մեկ մոտիկ ծանոթիս մեղքով։ Դրամի կողմից մենք ընդհանրապես այնքան էլ նեղություն չենք զգում։ Իմ հրատարակչուհին մի բան ուղարկել է ինձ, և յես հույս ունեմ դրանով դեռ բավականին յերկար յոլա գնալ, մանավանդ, վոր այստեղ սեփական տնտեսությամբ ապրելն այնքան էլ թանկ չի նստում։ Ուղարկելու կարիք չկա, merci։

Նադյային գրած քո նամակը նույնպես ստացել ենք մի քանի ժամանակ առաջ և յես ի պատասխան այդ նամակի գրել եմ քեզ։ Ստացե՞լ ես։

Անյուտայից տեղեկություն ստացա, վոր մերոնց գործի առթիվ հետաքննությունն ավարտված է և գործը հանձնվել է դատախազին։ Այդ լավ է՝ այժմ հավանաբար մերոնք էլ ավելի հանգիստ կլինեն, արդեն ավելի քիչ էլ ժամանակ է մնացել նստելու։ Գուցե բավարարեն և քո խնդրագիրը՝ յերաշխավորությամբ բաց թողնելու մասին։ Յեվ մի՞թե հետաքննությունից հետո էլ դեռ էլի կպահեն։ Այդ քիչ հավանական է։

Գալով Պետերբուրգի մեր ծանոթներին՝ այդ կողմից մեր գործերը բավական վատ են։ Ասենք,—մարդ էլ չի մնացել այնտեղ մեր ծանոթներից,—յեթե չհաշվենք այն մեր հին բարեկամին[1], վորին դու էլ ես ճանաչում և վորի կինը յեղել է քեզ մոտ Մոսկվայում, յերբ քեզ մոտ եր նաև Յել[իզավետա] Վաս[իլյեվնա]ն։ Սակայն նրանից օգուտը քիչ է։ Նադյան մի հին ծանոթ ունի՝ Ապոլլինարիա Իվանովնա Կնիպովիչ[2], Петерб[ургская] сторона, Большой просп[ект],

տ[ուն] № 42, բ[նակարան] № 16,— սակայն նրանից էլ, չգիտեմ, կարելի՞ է արդյոք որևէ օգնություն ստանալ։ Բայց և այնպես գրում եմ այդ ի դեպ, եթե կլինես Պետերբուրգում և կուզենաս այցելել։

Մենք ապրում ենք առաջվա նման։ Այստեղ եղանակն այժմ քիչ լավացել է բավականին երկար վատ օրերից հետո, և մենք օգտագործում ենք ժամանակն ամեն տեսակ զբոսանքներ կատարելով գեղեցիկ շրջակայքում. քանի որ չհաջողվեց մեզ գնալ ամառանոց, գեթ այսպես պետք է օգտվել։ Ցե[լիզավետա] Վաս[իլյեվնա]ն այժմ առողջացել է և ավելի լավ է զգում իրեն։ Մեծամեծ բարևներ է ուղարկում նա թե քեզ, թե բոլոր մերոնց. Նադյան նույնպես։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում, որ առողջ լինես և որ շուտով ազատեն մերոնց։ Գրիր, երբ ձմեռվա համար որևէ կերպ սարքված կլինես։ Արդեն ցուրտ չէ՞ արդյոք ամառանոցում։

Քո Վ. Ու[լյանով]

¹ Իվ. Նիկ. Չեբոտարյով, Մ. Տ. Ելիզարովի համալսարանական ընկերը, մեր ամբողջ ընտանիքի հին ծանոթը։

² Ն. Կ.-այի հին ծանոթ—Նիկոլայ Միխայլովիչ Կնիպովիչի կինը՝ այժմ մեռած։ Ն. Մ. Կնիպովիչը (ծն. 1862 թ.) Լ. Մ. Կնիպովիչի եղբայրն է, 90-ական թվականներին կրտսեր զոոլոգի պաշտոն էր վարում Գիտությունների Ակադեմիայի Թանգարանում և պրիվատ-դոցենտ էր Պետերբուրգի համալսարանում։ Պատկանում էր Բլագոևի սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակին, որի համար 1887 թվին կանչվել էր հարցաքննության և 3 ամսվա բանտարկության ենթարկվել և ապա՝ 2 տարով ոստիկանության գաղտնի հսկողության։ Դատի էր կանչվել նաև 1896 թվին Պետերբուրգի պայքարի Միության գործով։ Ներկայումս ակադեմիկ է։

52

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[13] 26/II [19]02 [Մյունխեն]

Ուղարկում եմ քեզ, թանգագին մայրիկ, Նադյայի նամակը¹։ Քո և Մանյայի հունվարի 2-ի նամակներն ստացա։ Շնորհակալություն Միտյային, որ նա իր վրա է վերցնում գրքեր ուղարկելու բոլոր հոգսերը։

Մարկի ծրագրի մասին ինձ գրել է նաև Անյուտան։ Դեհ, ես կարծում եմ, այժմ Խարբինն այնքան էլ չափից դուրս հեռու չի, և շուտով էլ ավելի մոտիկ կլինի, երբ մինչև այդ քաղաքը շինվող երկաթուղին կավարտվի։ Ցեվ վերջապես շատ էլ երկար, երևի, մնալու չէ այնտեղ Մարկը։ Իսկ եթե ոչ մի տեղ այլ կերպ գործ գտնել չի կարելի, ապա չէ՞ որ անգործ մնալն էլ ավելի վատ է։ Շատ բարև նրան բոլոր մերոնցից և ցանկություն, որ նա շուտ վերադառնա իր հեռավոր թափառումներից։

Ցե[լիզավետա] Վ[ասիլյեվնա]ն այժմ առողջ է. ուղարկում է իր մեծ ողջույնը քեզ, նաև Մանյաշային, Միտյային և Մարկին։ Պատրաստվում է շուտով Ռուսաստան գալու, չգիտեմ, կգա, թե չէ, սակայն լուրջ կերպով է խոսում այդ մասին։

Մանյաշային մի անգամ է շնորհակալություն եմ հայտնում գրքերի

համար. ես բոլորը ստացա։ Գորկու 5-րդ հատորը մենք արդեն (պատահաբար) ունենք։ Թող իմ կողմից ամենամեծ բարևներս հաղորդի «Հարևան ագարակի» բնակչին². շատ ուրախացա, որ գտնվել է հին ծանոթս, որի հետ մենք մի ժամանակ շատ լավ երեկոներ էինք անցկացնում։ Հույս ունեմ շուտով նրան հանգամանորեն նամակ գրել։

Ձեր խմբակի մասին էլ ես արդեն գրել եմ իմ նախորդ նամակում, որ նա ինձ շատ է դուր եկել։

Պինդ համբուրում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում առողջություն։

Քո Վ. Ու[լյանով]

¹ Այդ նամակը չի պահպանվել։

² Ալեքսեյ Անդրեյևիչ Պրեոբրաժենսկի։ Տես «Լենինյան ժողովածու» V, Վ. Ի. Լենինի՝ Ա. Ա. Պրեոբրաժենսկուն գրած նամակի 2-րդ ծանոթագրությունը, էջ 168։ «Հարևան ագարակը»՝ երկրագործական գաղութ միքանի վերստ հեռու Ալակաևկա ագարակից, որտեղ Վ. Ի. Սամարայում ապրելիս անց էր կացնում ամառը։

53

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[11] 24/III [19]01¹. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ, շատ վաղուց է, որ ձեզանից ոչ մի լուր չեմ ստանում։ Ինչպե՞ս եք ապրում։ Մեզ մոտ վերջին ժամանակներս միանգամայն գարնանային եղանակ է—ման ենք գալիս ամառվա վերարկուներով և բոլորովին անվերարկու։ Ձմեռ այս տարի, կարելի է ասել, չի էլ եղել։ Իսկ ձեզ մոտ, երևի, հիմա էլ դեռ ձմեռ է։ Սամարայում, երևի, ձյունը հիմա՞ սկսել է հալվել՝ սկսում է անանցանելի ցեխ կամ ձյան տակ թաքնված լճակներ...

Ի՞նչ հեռանկարներ ունեք ամառվա նկատմամբ։ Լա՞վ կլիներ մեկնել գեթ Ժիգուլի, եթե միայն չհաջողվի ավելի հեռու ուղևորվել (իսկ ես դեռ հույսս չեմ կորցրել, որ կհաջողվի)։ Ինչպե՞ս է այժմ քո առողջությունը, թանգագինս։ Գարնանը ձեզ մոտ երևի նույնպես ամեն տեսակ մրսելուց առաջացած և այլ հիվանդություններ կան։

Ի՞նչ հեռանկարներ բացվեցին Մարկի համար։ Անյուտան գրել էր, որ Մանջուրիայի փոխարեն նա արդեն հույս ունի Վոլգայի շրջանում տեղ ստանալու։ Հաջողվե՞լ է արդյոք նրան ստանալ այդ տեղը և որտե՞ղ է մտադիր ապրելու։

Միտյայից ես էլ նամակներ չեմ ստացել և չգիտեմ՝ Մոսկվա՞ յէ նա այժմ, թե հարավում, և ստացե՞լ է պաշտոն, թե չէ։

Իսկ Մանյաշա՞ն, դեռ շարունակո՞ւմ է աշխատել քաղաքային վարչության մեջ։ Դե, նրան էլ անհրաժեշտ է ամառվա ամիսներին փախչել Սամարայից— այժմ էլ ես չեմ կարող մոռանալ, թե որքան զզվելի է այդ քաղաքը շոգերին։

Մենք էլ ենք մտածում ամառն անցկացնելու մասին, թեև այստեղ քաղաքը բոլորովին այն չի, ինչ Ռուսաստանում։

Մեկ-մեկ տեսնում եմ ռուսական ժուռնալներ — ոչ բոլորը և ոչ կանոնավոր։ Ձեզանում գո՞հ են Վերեսաևի նոր պատմվածքից՝ „Мир Божий" հան-

դեսում[2]։ Նայած նրա սկզբին, յես ավելի եյի սպասում, սակայն շարունակությունն ինձ այնքան էլ չի գոհացնում։

Պինդ գրկում եմ քեզ, Թանգագինս, և մեծ ողջույն հղում Մանյաշային ու մեր բոլոր ծանոթներին։

Քո Վ. [Ուլյանով]

[1] Թվականը սխալմամբ է նշված՝ «1901». նամակը վերաբերում է, ըստ յերևույթին, 1902 թվին, վորովհետև 1901 թ. մարտ ամսին Մ. Ա. և Մ. Ի. Ուլյանովաները Մոսկվա եյին, իսկ Սամարա փոխադրվեցին 1901 թվի ուշ աշնանը։

[2] «На повороте»: Տես «Мир Божий» 1902 թ. № № 1, 2 և 3։

54

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[20/III] 2/IV [19]02. [Մյունխեն]

Թանգագին մայրիկ,

Այս որերս ստացա Մանյաշայի նամակը։ Շատ շնորհակալ եմ նրանից։ Ցես միքանի որ առաջ արդեն գրել եյի ձեզ, վոր ձեզնից վաղուց լուր չունեմ։ Մտադրվեցի նույնիսկ Անյուտայից էլ նամակներով հարցուփորձ անել։

Մանյաշային խնդրում եմ առայժմ ինձ գրքերը[1] չուղարկել, մինչև նոր հասցես ուղարկելը։ Գրքերս կարգի բերելու համար մեծ շնորհակալություն նրան։ Գերմաներեն գրքերից յես կուզեյի ստանալ այստեղ միայն այնպիսիները, վորոնք հարկավոր չեն (կամ նույնիսկ հարկավոր չեն կարող լինել) Ռուսաստանում ձեզ կամ ծանոթներին։ Պատճառն այն է, վոր գերմաներեն գրքեր յես այստեղ հեշտությամբ ձեռք կբերեմ. դրանց պակասը չի զգացվում։ Իսկ ռուսերեն գրքերի պակաս է զգացվում այստեղ, ուստի կխնդրեյի ջոկել դրանց միջից ինչ վոր հնարավոր է հատուկ արկղի մեջ, նույնիսկ ամբողջ վիճակագրությունը, վորին յես միքիչ սկսում եմ կարոտել, և այն մտադիր եմ բոլորը փոխադրել։

Ռուս կլասիկների գրքերից ավելացնելու համար առանձնապես շնորհակալ եմ Մանյաշային։

Ի՞նչպես է այժմ քո առողջությունը, Թանգագինս։ Շարունակո՞ւմ ես արդյոք մտածել ամառն արտասահման մեկնելու մասին։ Ցեթե միայն այդ քեզ չափից դուրս չի հոգնեցնի՝ հրաշալի բան կլիներ։

Շատ բարև Մարկին։ Արդյոք նա վերջիվերջո ստացա՞վ յերթևեկության իրավունքը։

Իսկ ի՞նչ լուր Մանջուրիայի «բժշկից»[2]։ Այնուամենայնիվ, յես շատ կուզեյի նամակագրություն ունենալ նրա հետ։ Դեռևս հայտնի չի՞ նրա հասցեն։

Հաղորդեց արդյոք Մանյաշան իմ մեծ ողջույնը «հին ծանոթիս»[3], վորին յես այցելում եյի ագարակում։ Շատ ուրախացրեց ինձ նրա մասին ստացած լուրը։

Լավ կլիներ Մանյաշան էլ հանգստանար ամառը՝ Ժիգուլիի կողմերում, հը՞։

Պինդ գրկում եմ քեզ, Թանգագինս, և բարևում բոլոր մերոնց։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Վ. Ի.-ի գրքերը, վորոնք Սիբիրից ուղարկվել եյին Մ. Ա. Ուլյանովա-յին։ Այդ գրքերի մեծ մասը ներկայումս գտնվում է Լենինի Ինստիտուտում։

[2] Տես 27-րդ նամակի 3-րդ ծանոթագրությունը

[3] Տես 52-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը։

55

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[25/IV] 8/V [19]02. [Լոնդոն]

Թանգագին մայրիկ, միքանի որ առաջ Մանյաշայից բացիկ ստացա Վոլգայի տեսարանով և շնորհավորանքով։ Մեծ շնորհակալություն նրան։ Չգիտեմ վերջերս կանոնավո՞ր եյիք ստանում արդյոք իմ բոլոր նամակները։ Ցես ձեզնից, բացի այդ բացիկից, վաղուց է, ինչ վոչինչ չեմ ստացել։

Արդյոք նամակագրություն ունե՞ս Ցե[լիզավետա] Վ[ասիլյեվնայի] հետ, վորն այժմ Ս.-Պետերբուրգում է գտնվում և կարծես շատ էլ գոհ չէ նրանից, այնպես վոր մտածում է վերադառնալու մասին։

Հույս ունեմ շուտով տեսնվել քեզ հետ, Թանգագինս։ Միայն թե չափազանց չհոգնեցնի քեզ ճամփորդությունը։ Անպատճառ պետք է ընտրել ցերեկվա գնացքներ և իջնել՝ հյուրանոցներում գիշերելու համար։ Արտասահմանում հյուրանոցները թանկ չեն և հրաշալի կերպով կարելի յե գիշերել։ Իսկ առանց հանգստանալու, նկատի ունենալով այստեղի գնացքների արագությունը և կարճ կանգառումները, միքանի որ անընդհատ ճամփորդելը բոլորովին անկարելի բան է։

Անհամբեր սպասելու յեմ լուրերի քո ուղևորվելու մասին։ Գուցե կհեռագրես Ռուսաստանից կամ արտասահմանից, յերբ ուղիղ գնացքով մեկնես այստեղ։ Այդ շատ ավելի հարմար կլիներ։

Ուզում եյի խնդրել քեզ, վոր հետդ բերես միքանի կտոր իմ այդտեղ թողած սպիտակեղենից, իսկ այժմ այն կարծիքի յեմ, վոր չարժի. այն, ինչ մնացել է իմ իրերից, յերևի պետք են յեկել Միտյային, և նա վերցրել է, իսկ նորերը գնել Ռուսաստանում և բերել այստեղ՝ չարժի։ Սակայն յեթե մնացել է վորևէ բան, վոր վոչ վոքի համար պիտանի չէ, ապա կարելի յե վերցնել (անշուշտ փոքր քանակով, վոր քեզ չծանրաբեռնի)։

Գերմանիայում և Ավստրիայում խորհուրդ եմ տալիս ընտրել արագընթաց գնացքներ (վոչ մեծ հավելյալ վճար 3-րդ կարգում, սակայն ահագին արագացում), իսկ չվացուցակը կազմել տանը, գնելով Henschel's Telegraph*։ Մանյաշան, որ[ինակ], յերևի այդ ուղեցույցին ծանոթ է։

Պինդ գրկում եմ քեզ, Թանգագինս, և մեծ ողջույն հղում բոլոր մերոնց։

Քո Վ. [Ուլյանով]

[1] 1902 թ. ամառը Մ. Ա. Ուլյանովան մեկնել եր արտասահման, տեսնվելու Վ. Ի.-ի հետ և ապրել նրա ու Ա. Ի.-ի հետ մոտ մի ամիս, Loguivy գյուղակում՝ Ֆրանսիայի հյուսիսային մասում՝ Côtes du Nord դեպարտամենտում։

* Հենշել՝ Ցերկաթուղիների ուղեցույց։—Խմբ.։

56

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[25/V] 7/VI [19]02. [Լոնդոն]

Թանկագին մայրիկ, ստացա Մանյաշայի նամակը և շատ շնորհակալ եմ նրանից։ Ինչ վերաբերում է հասցեյին՝ գրքեր ուղարկելու համար, ապա յես կաշխատեմ շուտով ուղարկել քեզ։ Չափից դուրս ցավալի է, որ դուք դեռևս ստիպված եք գլուխներդ ցավացնել այդ հոգսերով։ [Սակայն հույս ունեմ, որ այժմ արդեն շուտով կվերջանա այդ բոլորը, — և դուք կազատվեք բոլոր դըրքերից։

Մենք շարունակ սպասում ենք քեզ, թանկագինս, և յես թղթակցում եմ Անյուտայի հետ նրա [ծրագրերի առթիվ՝ ինչպես և վորտեղ տեղավորվել] քեզ հետ։ Այստեղ այժմ, ըստ յերևույթին, սկսվել են լավ յեղանակներ, — թե մեզ մոտ և թե Անյուտայի բնակության վայրերում[1]։ Յե[լիզավետա] Վա[սիլյևնան] գրում է, որ նա էլ յերևի շուտով կուղևորվի։ Նրան, ասես, շատ էլ դուր չի յեկել իր ճամփորդությունը (սակայն յես նրան ամբողջ ժամանակ խորհուրդ չեյի տալիս, ապացուցելով, որ միտք չունի մեկնելը և որ նա շուտով կարոտ կքաշի)։

Իմ առողջության մասին բան չեմ գրում, որով[հետև] առողջ եմ։ Նադյան՝ նույնպես։

Ի՞նչպես են Մարկի գործերը ծառայության կողմից։ Ընդունե՞լ է Տոմսկի պաշտոնը և յե՞րբ է գնում։

Իսկ Մանյայի պատմածը, թե ինչպես նա նավակով զբոսանք է կատարել, — ինձ գրգռեցրեց... Եհ, հրաշալի բան կլիներ ամառը լինել Վոլգայի վրա։ Ինչ հրաշալի ճամփորդեցինք մենք քո և Անյուտայի հետ միասին 1900 թվի գարնանը[2]։ Դեհ, յեթե ինձ Վոլգայի վրա լինել չի հաջողվում — վոլգացիները պետք է գան այստեղ։ Այստեղ էլ լավ տեղեր կան, թեև այլ տեսակի։

Ցտեսություն, *թանկագինս։*

Պինդ գրկում է քեզ քո Վ. [Ուլյանովը]։

P. S. *Գորկու, Սկիտալեցի գրվածքները ստացա և շատ մեծ հետաքրքրությամբ կարդացի։ Թե ինքս կարդացի և թե ուրիշներին տվեցի։*

[1] *Ա. Ի. Յելիզարովան այն ժամանակ Դրեզդենի շրջակայքում եր ապրում։*

[2] *1900 թվի ամառը Մ. Ա. Ուլյանովան և Ա. Ի. Յելիզարովան ուղեկցում եյին Վ. Ի.-ին, յերբ նա շոգենավով Ուֆա յեր գնում։*

57

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[1] 14/IX [19]02. [Լոնդոն]

Թանկագին մայրիկ,

Մենք ամենքս չափազանց ուրախացանք, ստանալով ձեր հեռագիրը, իսկ հետո և քո բացիկը։

Արդյոք հաջող շարունակեցիք ճանապարհը։ Շատ հո չհոգնեցրեց ճանապարհը։

Գրիր, խնդրեմ, մի յերկու խոսք այդ մասին, յերբ կհանգստանաս և միքիչ էլ կսարքվես։

Անյուտայի լուսանկարները (այսինքն՝ նրա ուղարկածները[1]) ստացա ժամանակին և բոլորովին անվնաս։

Մեզանում ամեն ինչ առաջվա պես է։ Ամենքս առողջ ենք։ Չնայած աշունքին՝ զարմանալի լավ յեղանակներ են այժմ, — յերևի ի հատուցումն վատ ամառվա։ Մենք Նադյայի հետ բազմիցս արդեն արշավանք ենք կատարել փնտրելու — և գտել ենք — լավ արվարձաններ՝ «իսկական բնությամբ»։

Պինդ գրկում եմ քեզ, թանկագինս, և հղում իմ մեծամեծ բարևներս Մանյաշային և Անյային։

Քո Վ. [Ուլյանով]

[1] *Խոսքը Ա. Ի. Ուլյանովի լուսանկարների մասին է, որ Աննա Իլյինիչնան ուղարկել եր Վ. Ի.-ին, վախենալով տեղափոխել դրանք սահմանից, նկատի ունենալով իր հնարավոր ձերբակալումը։ Վ. Ի.-ին ուղղած իր քիմիական նամակի մեջ, որի պատճենը պահվում է Լենինի Ինստիտուտում, Աննա Իլ.-ն հետագայում հարցնում է՝ «քեզ մոտ վո՞րտեղ են իմ պատկերներն ու թղթերը յես կուզեյի ստանալ դրանք մի հավատարիմ մարդու միջոցով»։*

58

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[14] 27/IX [19]02. [Լոնդոն]

Թանկագին մայրիկ, ինչ-որ շատ վաղուց է ձեզնից լուր չունեմ։ Ձեզնից դեռ տեղեկություն չունեմ, թե ինչպես եք հասել Սամարա, ինչպես եք սարքվել։ Մանյաշան, յերևի, այլևս հին բնակարանում չի ապրում, բայց յես նրա հասցեյով եմ գրում, որովհետև ուրիշ հասցե չգիտեմ, և կարծում եմ, որ նամակը նոր հասցեյով էլ կհասցնեն։ Ո՞ւր է Անյուտան։ Ի՞նչ լուրեր Միտյայից և Մարկից։ Ի՞նչպես եք մտադիր սարքվելու ձմեռը։

Առո՞ղջ ես արդյոք, թանկագինս. շատ հո չի՞ հոգնեցրել ճանապարհը։

Մեզանում ամեն ինչ առաջվա պես է։ Միայն վերջին ժամանակներս մեր կյանքը մի քիչ ավելի անհանգիստ եր անցնում։ Սակայն այժմ յես ավելի յեմ մտել հունի մեջ, ուստի և աշխատում եմ ավելի ժամանակ անցկացնել գրադարանում։

Զարմանալի լավ յեղանակներ է անում այստեղ՝ ի հատուցումն զզվելի ամառվա։ Յեվ մենք Նադյայի հետ արդեն բավական շատ ենք ման յեկել քաղաքի շրջակայքում, գտել ենք և սիրուն տեղեր։ Յեթե ձեզ մոտ նույնպիսի յեղանակներ են, պետք է որ դուք էլ օգտվեք այդ յեղանակներից, ժամանակն անցկացնելով վորևե տեղ բնության ծոցում. թե չե հենց իրեն Սամարայի մեջ ապրելը մինչև իսկ այսպիսի ժամանակ, ինձ թվում է, այնքան էլ հաճելի չէ։

Պինդ գրկում եմ քեզ, թանկագինս, և ցանկանում առողջություն։ Ամենքին ամենամեծ բարևներ ինձնից, Ն[ադյայից] և Յե[լիզավետա] Վ[ասիլյեվնա]յից։

Քո Վ. [Ուլյանով]

Թանկագին Մարիա Ալեքսանդրովնա. վաղուց է, ինչ որ ձեզնից նամակ չունենք և այդ բավական անհանգստացնում է... Ի՞նչպես եք Դուք ձեզ զգում։

Վո՞րտեղ է այժմ Անյան։ Յեթե նա դեռ Ձեզ հետ է, պինդ համբուրեցեք նրան իմ կողմից։ Ի՞նչպես է Մանյաշան։ Արդյոք համապատասխան բնակարան վարձե՞լ եք։

Մենք ամենքս առողջ ենք։ Հրաշալի աշուն է, և մենք Վոլոդյայի հետ հաճախ ենք դուրս գալիս բնության ծոցը։ Մայրիկը կամաց-կամաց ընտելանում է նոր շրջապատին, թեև նա մեծ քաղաքները չի սիրում։ Ամենքից նա հղում է իր ողջույնը։ Պինդ գրկում եմ Ձեզ և Մանյաշային, և Անյային, յեթե նա Ձեզ հետ է։

Ձեր Նադյա

59

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[27/X] 9/XI [19]02. [Լոնդոն]

Թանգագին մայրիկ, բավական վաղուց է, ինչ ստացել եմ քո նամակը, բայց ինչ-որ չեյի կարողանում պատասխանել, համ էլ պատասխան էյի սպասում նախորդ նամակիս։ Միտյայի ազատվելը[1], որի մասին յես անցյալ անգամ գրել էյի, թե հավատացած եմ, որ նրան կազատեն, — դուրս է գալիս ավելի շուտ տեղի ունեցավ, քան յես սպասում էյի։ Առանձնապես յես ուրախ եմ Անյուտայի համար, որ նա ստիպված չեղավ զանազան «առեննական» շեմքեր մաշել (մի գործ, որ հաճախ առանձնապես անախորժ է, ավելի անախորժ, քան նստելը[2]) և որ վերջիվերջո հաջողվեց մեկնել Մարկի մոտ։ Թե չէ, շատ վաղուց է, որ նա, այսպես ասած, ապաստարան չուներ և «թափառում էր» տեղից տեղ։

Ի՞նչ լուրեր կան այժմ նրանից։ Գո՞հ է Մարկը իր ծառայությունից։ Միտյան վաստակ ունի՞, և մտադիր չէ՞ արդյոք այցելելու ձեզ։ Դու, հուսով եմ, առողջ ես, թանգագինս։

Գալով մեզ, մենք ապրում ենք ինչպես առաջ, կամաց-կամաց։ Տաք յեղանակ է այստեղ, մեր ոգոստոսյան յեղանակի նման, — չոր և նույնիսկ ամառվա վերարկուով (ասենք սակայն von unten warm angezogen*, արտասահմանյան փուփայկա հագած)։ Յես բավական արդեն հարմարվել եմ այստեղի կյանքին և գործնականորեն յուրացնում եմ լեզուն։ Յե[լիզավետա] Վ[ասիլյեվնան] այժմ առողջ է և այնքան էլ շուտ-շուտ չի հիվանդանում։ Նադյան մի քիչ հոգնում է, սակայն ընդհանուր առմամբ վատ չի։

Ստացել եմ միքանի նոր ռուսերեն գրքեր, օրինակ՝ Ժելեզնով (Քաղ[աքա]-տնտ[եսությունը])[3], սակայն դեռ չեմ կարողացել կարդալ։ Թերթեցի մի քիչ, այնքան էլ ասես դուր չեկավ։ Լրագրերից մ[եծ] մաս[ամբ] կարդում եմ Մոսկվայի մամուլը, — ինչպես և առաջ։ Տեղական թերթերը աչքի յեմ անցկացնում ընթերցարաններում։

Ի՞նչպես եք ձեզ զգում ընդհանրապես այս ձմեռ։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ամենամեծ բարևներ եմ հղում ամենքին։

Քո Վ. Ու[լյանով]

* Տակից տաք սպիտակեղեն հագած։ Խմբ.։

[1] Դ. Ի. Ուլյանովը ձերբակալվել էր 1902 թ. օգոստոս ամսին Օդեսսայի շրջակայքում գտնվող Հաջի-Բեյսկի լիմանում, որտեղ նա ծառայում էր իբրև բժիշկ, մեղադրվելով, որ «տարածում էր թռուցիկներ, որոնք գյուղացիներին կոչ էյին անում միանալու բանվորների հեղափոխական շարժմանը» — և 3 շաբթից հետո արձակվել։

[2] Մեր ընտանիքի անդամների ձերբակալության դեպքերում ձերբակալվածների նկատմամբ հոգսերի մեծագույն մասը (գրքեր, ուտելիք, փող հանձնել և այլն), նաև միջնորդությունները՝ տեսակցություն թույլ տալու, յերաշխավորությամբ բաց թողնելու մասին և այլն, ընկնում էյին, բացի մորից, Աննա Իլյինիչնայի վրա։

[3] Ժելեզնով Վ. Յ. «Քաղաքատնտեսության ուրվագծեր», 1898 թ.։

60

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[4] 17/XII [19]02. [Լոնդոն]

Թանգագին մայրիկ, այս օրերս ստացվեց Մանյաշայի՝ Նադյային ուղղած նամակը քո կցված գրությամբ. շատ ուրախացա ձեր մասին լուր ստանալով, որովհետև վաղուց է ձեզնից նամակ չունեյինք։ Մոտերս Անյուտայից ստացանք մի փոքրիկ նամակ, ըստ յերևույթին նա գոհ է իր նոր բնակավայրից։ Միտյային իր կնոջ հետ դուք շուտով կտեսնեք[1], ինչպես գրում է Մանյաշան։ Սրտագին բարև արեք նրան իմ և բոլոր մերոնց կողմից։ Գուցե Անյուտան էլ այցելության գա, այնպես որ տոներին միքիչ կհամախմբվեք միատեղ։ Այդ լավ կլիներ։

Մեզանում այստեղ ամեն ինչ առաջվա նման է։ Միքանի շաբաթ ցրտեր էյին (այստեղի հասկացողությամբ «ցրտեր», այսինքն՝ ոչ ձյունահալ օրեր, սակայն ձյուն չկար), և մենք միքիչ մրսեցինք ու տկար էյինք զգում։ Սակայն այժմ բոլորս առողջ ենք։ Նորից խոնավ յեղանակ է. յես գուցե սկսեմ մոռանալ մեր ձմեռը։

Մանյաշայի նամակից իմացա, որ Ժելեզնովի գրքույկը նրան դուր է գալիս։ Ձե՞ր որ յես այդ գրքույկը չեմ կարդացել, այլ միայն թերթել եմ, այնպես որ դատել չեմ վստահանում։ Կկարդամ, այն ժամանակ կգրեմ։ Իսկ այն, ինչ յես հաղորդել էյի, այդ միայն իմ առաջին արտաքին տպավորությունն էր։

Մանյաշան գրում է նույնպես, որ սկսել է պարապել լեզուներով, դրանց թվում նույնիսկ անգլիերենով։ Յես մտադրություն ունեյի ուղարկելու նրան արտասանության մի դասագիրք, շատ լավը, գերմաներեն։ Միքանի ժամանակ առաջ յես էլ էյի պարապում, յես շատ գոհ եմ այդ դասագրքից. խոսք չեմ գտնում գովասանելու. դասագիրքը կոչվում է Henry Sweet: Elementarbuch des gesprochenen Englisch. Oxford*). 1901, արժե մոտ 1 ռ. 25 կոպ.։ Թե որ ուզում է Մանյաշան, կուղարկեմ իրեն, քանի որ ինձ այլևս հարկավոր չէ։ Միայն, յեթե նա արդեն ունի Տուսսենը, չգիտեմ, արժե՞ արդյոք ուղարկել, որովհետև Տուսսենը շատ լավ դասագիրք է։ Առաջ յես չեյի հավատում այդ

*) Հենրի Սուիտ. Սկզբնական գիրք անգլիերեն խոսակցական լեզվի։ Օքսֆորդ։ Խմբ.։

սիստեմին, իսկ այժմ համոզվեցի, վոր այդ միակ լուրջ և գործնական սիստեմն է։ Յեվ յեթե Տուսսենի առաջին պրակն անցնելուց հետո մի 2—3 դաս էլ վերցվի իսկական օտարերկրացուց՝ անպայման լավ կարելի յե սովորել։ Այժմ կան և Տուսսենի բառարաններ՝ արտասանության նշումներով։ Շատ եմ խնդրում տալիս Մանյաշային գնել այդ, վորովհետև մեր Ալեքսանդրովը շատ է ստում։ (Օր[ինակ] Muret-ի գրպանի բառարան Տուսսենի մեթոդով, Taschen-Wörterbuch der englischen und deutschen Sprache, Theil I, Englisch-deutsch, Preis 2 Mark. Berlin. 1902. Langenscheidtsche Verlagsbuchhandlung**)—շատ եմ խնդրում տալիս գնել)։

Դեհ, բավ է. Նամակումս շատ տեղ նվիրեցի գրքերին... Մտադիր եմ դուրս գրել «Իդեալիզմի պրոբլեմները»², դա ըստ յերևույթին պարոն դասախոսների «մարտական» ժողովածուն է։

Յե[լիզավետա] Վ[ասիլյևնան] և Նադյան բարևներ են հղում ամենքիդ։ Ցանկանում եմ ձեզ շուտով տեսնել հյուրերին և միքիչ հանգստանալ մենակությունից։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս։

Քո Վ. Ու[լյանով]

¹ 1902 թ. ձմեռը Դ. Ի. Ուլյանովը կնոջ հետ յեկել եյին Սամարա։

² «Իդեալիզմի պրոբլեմներ» ժողովածուն լույս է տեսել 1902 թ. նոյեմբերին Մոսկվայի Հոգեբանական ընկերության հրատարակությամբ, Պ. Ի. Նովգորոդցեվի խմբագրությամբ։ Ժողովածուն պարունակում է հոդվածներ՝ Ս. Ն. Բուլգակովի, իշխ. Յե. Ն. Տրուբեցկոյի, Պ. Գ.-ի, Ն. Ա. Բերդյայեվի, Ս. Լ. Ֆրանկի, Ս. Ա. Ասկոլդովի, իշխ. Ս. Ն. Տրուբեցկոյի, Պ. Ի. Նովգորոդցեվի, Բ. Ա. Կիստյակովսկու, Ա. Ս. Լապպո-Դանիլևսկու, Ս. Ֆ. Օլդենբուրգի և Դ. Յե. Ժուկովսկու։

61

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[13] 26/XII [19]02. [Լոնդոն]

Թանգագին մայրիկ, կցված նամակը խնդրեմ ուղարկել Անյուտային. յես չունեմ նրա հասցեն, յերևի կորցրել եմ (դեռ վոչ մի անգամ չեմ գրել նրան)․ գուցե նա այժմ Տոմսկ էլ չի գտնվում, այլ ձեզ մոտ է։ Դու կարծեմ հույս ունեյիր, վոր տոներին ձեզ ամենքիդ կհաջողվի հավաքվել միասին, Միտյային նույնպես։ Գրիր ինձ՝ արդյոք այդպես դուրս յեկավ և ծանոթացա՞ք Միտյայի կնոջ հետ։

Մեզ մոտ նորություն ինչ-վոր չկա ու չկա։ Ցրտերն անցան. այժմ աշնանային (ինչպես մեզ մոտ) յեղանակ է և, իբրև բացառություն, չոր յեղանակ, վորը շատ հաճելի յե։ Տոներն այստեղ, ըստ յերևույթին, բավական տաղտկալի կլինեն. քիչ ժողովներ, ընթերցարանները կփակվեն, թատրոններում սոսկ ճա-

**) Մյուրե, Գրպանի բառարան անգլիերեն և գերմաներեն լեզուների։ Մասն 1, անգլո-գերմաներեն. գինը 2 մարկ. Բեռլին, 1902. հրատ. Լանգենշեյդտի։ Խմբ.։

ռելը հեշտ բան չի, վորովհետև ամեն տեղ լեփ-լեցուն է։ Սակայն յես մտադրություն ունեմ այդ ժամանակամիջոցում տեսնվելու միքանի նոր ծանոթների հետ։

Վերջին ժամանակներս յես սովորականից ավել եյի զբաղվում գերմանական լրագրերով. Գերմանիայում անցքերը¹ հետաքրքրական եյին և ուզում եյի հետևել յերբեմն թարմ աղբյուրների միջոցով։ Այժմ, ըստ յերևույթին, այնտեղ էլ գործերը հանդարտվելու վրա յեն։

Ի՞նչպես է ընթանում ձեզ մոտ կյանքը։ Անցա՞ն արդյոք դաժան սառնամանիքները։ Կա՞ն արդյոք նոր մարդիկ։

Դեհ, ցանկանում եմ շատ ուրախ անցկացնել տոները և ամենքիդ՝ առողջ լինել։

Քո Վ. Ու[լյանով]

¹ Գերմանիայում ամբողջ 1902 թվի ընթացքում համառ պայքար եր մղվում պետության առաջարկած մաքսային տարիֆի նախագծի շուրջը։ Յերկրագործությունը հովանավորելու նպատակով հացի գների բարձրացման պահանջը աջերի և կենտրոնի կողմից սկզբունքային առարկություններ չեր հանդիպում, սակայն ագնվական-ագրարները կառավարության նշածից էլ հեռու եյին գնում, իսկ արդյունաբերության ներկայացուցիչներն ընդհակառակը՝ ձգտում եյին փոփոխել նախագիծը համաձայն սեփական շահերի։ Միայն ազգային-լիբերալների շրջանում կառավարական նախագիծն ընդհանուր առմամբ հավանություն գտավ իբրև միջին գիծ, վորն, ըստ գրաֆ Բյուլովի խոսքերի, պետք պահպանվի արդյունաբերության և գյուղատնտեսության միջև։ Սակայն այդ նախագիծն ամենակտրուկ բողոքի հանդիպեց ձախերի — սոցիալ-դեմոկրատների և ազատամիտների — կողմից, ընդվորում գյուղատնտեսական պրոտեկցիոնիզմի անսահման հավակնությունների դեմ մղվող պայքարի ամբողջ ծանրությունը իր վրա յեր կրում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը Բեբելի ղեկավարությամբ։ Պայքարը ձախերի համար անհուսալի յեր, վորովհետև նրանք փոքրամասնություն եյին կազմում, սակայն հաղթանակը պետությանն ու իր դաշնակիցները կարողացան ձեռք բերել միայն պարլամենտական յերկարատև ճիգերից հետո, ընդվորում վիճելի կետերից և վոչ մեկը չմնաց առանց համակողմանի հասարակական լուսաբանության։ Վերջիվերջո օպոզիցիան աշխատում եր ուղղակի հետաձգել վերջնական վճիռը օբստրուկցիայի միջոցով։ Մի շարք կետերի վերաբերմամբ նա պահանջում եր անվանական քվեարկություն, առանձին առաջարկներ եր մտցնում, աշխատանքների կարգի փոփոխման եր ձգտում և այլն։ Կայսերական սեյմի դեկտեմբերի 13—14-ի վերջին նիստը տևեց 19 ժամ անընդհատ. պատգամավորներից մեկը՝ Անտրիկը, ճառ արտասանեց ավելի քան 8 ժամվա ընթացքում, և այնուամենայնիվ քվեարկությունից չեր կարելի խուսափել։ Օբստրուկցիայի ազդեցության տակ աջերն ու կենտրոնը ավելի զիջող դարձան միմյանց հանդեպ, և մաքսային տարիֆի վերաբերյալ կառավարական նախագիծն ընդունվեց 202 ձայնով ընդդեմ օպոզիցիայի 100 ձայնի։

62

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[22/I] 4/II [19]03. [Լոնդոն]

Թանգագին մայրիկ, վաղուց է, շատ վաղուց, վոչ մի նամակ չեմ ստանում վոչ քեզանից և վոչ էլ մերոնցից վորևէ մեկից։ Յերևի կորել է ձեր նամակներից վորևէ մեկը, վորովհետև յես չեմ կարող յենթադրել, վոր այս ամբողջ ժամանակ վոչ վոք ինձ նամակ գրած չլիներ։ Յես տեղեկություն չունեմ՝ յեկա՞վ արդյոք ձեզ մոտ Միտյան, վո՞րքան ժամանակ մնաց քեզ հետ, ինչ ծրագրեր ունի նա և վո՞րտեղ է այժմ։ Ստացե՞լ եք վորևէ լուր Անյուտայից, ուղևորվե՞լ է արդյոք նա Պորտ-Արտուր[1] և յերբ։ Առո՞ղջ ես արդյոք դու։ Մի՞թե ձեզ մոտ դեռևս շարունակվում են համառ ցրտերը։

Մեզ մոտ լավ յեղանակ է, ձմեռը բացառիկ հաջող դուրս յեկավ՝ մեղմ, անձրև ու մառախուղ (առայժմ) շատ քիչ յեղավ։

Յե[լիզավետա] Վ[ասիլյեվնան], ճիշտ է, այնուամենայնիվ հաճախ հիվանդանում է. ահա, այժմ էլ է տկար, բայց վոչ շատ, այնպես վոր կարողանում ենք յոլա գնալ տնային միջոցներով կամ ռուսական դեղատոմսերով։ Նրա համար, գուցե, լավ կլիներ, վոր ավելի հարավային յերկրում ապրեր։ Մենք Նադյայի հետ առողջ ենք և ապրում ենք առաջվա նման՝ կամաց-կամաց։ Նորերս, առաջին անգամ այս ձմեռվա ընթացքում, յեղանք լավ համերգում և շատ գոհ մնացինք,— մանավանդ Չայկովսկու վերջին սիմֆոնիայից (Symphonie pathétique)[2]։ Ձեզ մոտ Սամարայում արդյոք լինո՞ւմ են լավ համերգներ։ Մի անգամ յեղանք գերմանական թատրոնում,— մեծ հաճույքով կուզեյինք լինել ռուսական Գեղարվեստական թատրոնում, տեսնել «Հատակում»-ը...

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ամեն տեսակ բարիք ցանկանում, մանավանդ առողջություն։ Վողջույններս մերոնց։ Գուցե լավ կլիներ Անյուտային վերուղարկել նամակը, թե չէ, ո՞վ գիտի, յե՞րբ պիտի իմանամ նրա հասցեն։

Քո [Վ. Ուլյանով]

Ուղի՞ղ եմ արդյոք գրում հասցեն։

[1] Ա. Ի. Յելիզարովան ուղևորվել էր Պորտ-Արտուր Մ. Տ. Յելիզարովի մոտ

[2] Պաթետիկ սիմֆոնիա։ Խոսքը № 6 (H-mol) սիմֆոնիայի, «պաթետիկ» op. 74-ի մասին է, վորը Պ. Չայկովսկու վերջին և ամենամեծ ժողովրդականություն գտած սիմֆոնիկ յերկն է։

63

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[9] 22/II [19]03. [Լոնդոն]

Թանգագին մայրիկ, ստացա քո նամակը, մեծ merci դրա համար։ Չափազանց հետաքրքրական էր տեղեկանալ Անյուտայի մասին։ Ի դեպ՝ ուղարկիր խնդրեմ նրան այս նամակը։ Յես չգիտեմ նրա հասցեն։ Ճիշտ է, մոտերս մի փոքրիկ գրություն ստացա նրանից, վորի համար շատ շնորհակալ եմ, սակայն իր հասցեն մոռացել է հաղորդել և առհասարակ ամեն բանի մասին այնքան

անորոշ կերպով է արտահայտվել, վոր յես կատարյալ տարակուսանքի մեջ եմ։ Միայն քեզանից իմացա «Չինական» բնակիչների[1] մասին։ Դա էլ չէ վոր մի տեսակ ավելի մոտիկ է Յեվրոպային կամ Նոր Աշխարհին։ Ուշագրավ բան, ըստ իս, և նույնիսկ շատ ուշագրավ։

Իսկ մեր հին բարեկամին[2] յես շատ և շատ խղճում եմ...

Ավելի արագ չե՞ր լինի իմ նամակագրությունը Չինուհու[3] հետ Յապոնիայով կամ վորևէ անգլիական նավահանգստով։ Ճիշտ է, ծովի վրայով ավելի հեռու յե, սակայն չե՞ վոր յեվրոպացիք քանիցս ավելի ճշտապահ են։

Մենք ապրում ենք ինչպես և առաջ։ Առանձնապես լավ վոչ մի նոր բան չկա, սակայն վատն էլ չկա, և ընդհանուր առմամբ յես ինձ շատ ավելի պակաս ueberarbeitet* եմ զգում, քան առաջ։ Մտադիր եմ մոտ որերս զբոսանք կատարել Գերմանիա[4]։ Զարմանալի լավ յեղանակ է՝ թեթև վերարկուով շրջում ես. արև, տաք, շատ տաք քամի... սիրտս այնպես զբոսնել է ուզում։

Ձեզանում ի՞նչ կա։ Ո՞ւր է այժմ Միտյան և իր կինը։ Ի՞նչպես է զգում իրեն Մանյաշան։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում առողջություն։

Քո Վ. Ու[լյանով]

Մեծ վողջույն բոլոր մերոնց և մանավանդ Անյային և Մարկին։

[1] Խոսքը Մ. Տ. և Ա. Ի. Յելիզարովների մասին է։

[2] Ա. Պ. Սկլյարենկո։ Ա. Ի.-ն հաղորդել էր Վ. Ի.-ին, վոր Սկլյարենկոն Մանջուրիայում բավական խմում է, վորի համար էլ Վ. Ի. «խղճում է» նրան։

[3] Այսպիսի անուն է տալիս Վ. Ի. Աննա Իլյինիչնային։

[4] Վ. Ի. գնացել էր Պարիզ, վորտեղ դասախոսում էր ագրարային հարցի մասին «Բարձրագույն ռուսական դպրոցում»։ Տես «Լեն. Ժող.» IV, Լենինի՝ Պլեխանովին ուղղած 42-րդ նամակ, 4-րդ ծանոթ., ռուս. հրատ., էջ 206։

64

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[16] 29/III [19]03. [Լոնդոն]

Թանգագին մայրիկ, այս որերս ստացա քո նամակը։ Մեծ merci դրա համար։ Այսպես ուրեմն՝ Անյուտան Հեռավոր Արևելքում մնում է ավելի, քան կարծում էր։ Իսկ յես կարծում էի, վոր նա արդեն ձեզ մոտ է։ Յերևի այսպիսի հեռավոր ճամփորդություն ձեռնարկելը միանգամից հեշտ բան չէ։ Միտյան էլ նույնպես, ուրեմն, չի վորոշել իր բնակության վայրը։ Իսկ խեղճ Մանյաշան, շա՜տ է տխրում։

Լավ է, վոր ձեզ մոտ էլ որերն սկսել են տաքանալ, թե չէ շատ ցուրտ ձմեռները չափազանց հոգնեցնում են։ Լա՞վ ես զգում դու քեզ այժմ, թանգագինս։

Մեզանում տաք է։ Վերջերս մեծ զբոսանքի դուրս բերինք նաև Յե[լիզավետա] Վ[ասիլյեվնային], ճաշի տեղ հետներս վերցրինք բուտերբրոդներ և մի ամբողջ որով շարժվեցինք ins Grüne** կիրակի՝ որը (մի տեսակ ակամայից ամեն ինչ դուրս է գալիս արտասահմանյան ձևով, վոր հենց կիրակի որն ենք

* Աշխատանքից չափազանց հոգնած։ Խմբ.:

** Քաղաքից դուրս, բնության գիրկը։ Խմբ.:

զբոսնում, թեև այդ անհարմար է, վորովհետև ամեն տեղ լեփ-լեցուն է): Շատ լավ զբոսանք դուրս յեկավ: Ողջ մեզ ամենքիս հարբեցրեց ինչպես յերեխաների, և յես հետո բավականաչափ պառկեցի, ասես Սիբիրի վորսից հետո: Առհասարակ մենք զբոսնելու առիթը բաց չենք թողնում: Այստեղի բոլոր ընկերների միջից մենք ենք միայն, վոր ուսումնասիրում ենք քաղաքի բոլոր շրջակա վայրերը: Գտնում ենք զանազան «գյուղական» կածաններ, գիտենք մոտիկ տեղերը, մտադրություն ունենք ավելի հեռուներ թափառելու: Վերջին ժամանակներս յես ինձ լավ եմ զգում, աշխատանքս կանոնավորվել է, և ժխորն ինձ չի նեղացնում, Նադյան և Յե[լիզավետա] Վ[ասիլյեվնան] նույնպես ողջ և առողջ են:

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս: Ժամանակ առ ժամանակ գրիր, խընդրեմ (և կամ Մանյաշային խնդրիր) ձեր կյանքի և անելիքների մասին:

Քո Վ. Ուլյանով

65

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[26 դեկտ. 1903] 8/I 19]04. [Ժընև]

Թանգագին մայրիկ,

Յես մոռացա պատասխանել Մանյաշային 150 ռուբլու առթիվ, վորի մասին նա հարցնում է ինձ: Թող առայժմ (համենայն դեպս) այդ փողը մնա ձեզ մոտ: Յես խնդրում եմ միայն այդ փողից գնել ինձ համար միքանի գիրք Ռ[ուս]-ֆր[անսերեն] բառարանի մասին յես գրել եյի[1]: Դրան ավելացնում եմ Սեչենովի «Մտքի տարրերը»[2] (վերջերս լույս տեսած գիրք):

Մոտ օրերս մենք Նադյայի և մեկ լավ ծանոթիս[3] հետ մի հրաշալի զբոսանք կատարեցինք դեպի Սալեվ: Ներքև Ժընևում ամեն տեղ մառախուղ է, մթնշաղ, իսկ սարի վրա (մոտ 1200 մետր բարձրությամբ ծովի մակերևույթից)— սքանչելի արև, ձյուն, սահնակներ, իսկական ռուսական լավ ձմեռային օր: Իսկ ներքևում, սարի տակ, — la mer du brouillard*, — մառախուղի, ամպերի մի իսկական ծով, վորոնց հետևում վոչինչ չի յերևում, միայն սարերն են յերևում, այն էլ շատ բարձր սարերը: Նույնիսկ փոքր Սալեվը (900 մետր) ամբողջովին պատած է մառախուղով:

Մենք սկսում ենք ծանոթանալ Շվեյցարիային և նրա տեսարաններին: Գարնանը մտադիր ենք մի մեծ զբոսանք կատարել վոտքով:

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս: Ի՞նչպես է առողջությունդ: Ի՞նչպես եք ապրում:

1 Այդ նամակը չի պահպանվել:

2 Սեչենով՝ «Մտքի տարրերը» (նախկին հոդվածն է, ուղղումներով և նշանակելի հավելումներով). Հրատ. «Научное слово» ժուռնալի, 1903 թ.:

3 Ֆ. Վ. Լենգնիկ (ծն. 1873 թ.): Սկսել է մասնակցել հեղափոխական բանվորական շարժմանը Պետերբուրգում 1893 թվից, վորտեղ և ձերբակալվել է 1896 թվին, «Պայքարի միության» գործով, 1898 թ. աքսորվել է Յենիսեյսկի նահանգի Մինուսինսկի գավառը: 1901 թ. մտնում է «Искра»-յի կազմակերպության մեջ և աշխատում է հաջորդաբար Յեկատերինոսլավ, Սամարա, Կիյեվ քաղաքներում: «Պսկովի խորհրդակցությունից» հետո կուսակցության 2-րդ համագումարի հրավիրման Կազմակերպական Կոմիտեյի կազմի մեջ է մտնում

* Մառախուղի ծով: Խմբ.:

2-րդ համագումարում հեռակա ընտրվում է Կենտկոմի անդամ: 1903 թվին Կենտկոմի արտասահմանյան ներկայացուցիչ է և Խորհրդի անդամ Կենտկոմի կողմից, ներկա յե լինում Լիգայի 2-րդ համագումարին: Արտասահմանում ապրելիս նա Լենինի հետ միասին Կենտկոմի առաջ հաստատուն գիծ եր պաշտպանում ոպոզիցիայի վերաբերմամբ և կուսակցության Խորհրդի մեջ պայքար եր մղում 3-րդ համագումարը հրավիրելու համար: Հետագայում աշխատում է Ռուսաստանում: Ներկայումս ԲԳՏ Ժողովրդական Կոմիսարիատի Կոլեգիայի անդամ է: Մանրամասնությունները տես Լենինի յերկեր, հատ. VI, ռուս. 2-րդ հրատ., եջ 467:

66

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ [1]

Կիյեվ, Լաբորատորնայա, 12, բնակ. 14

Ժընև [2] 15/I 1904 թ.

Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա,

Ձեր նամակը զարմացրեց մեզ. չափազանց վշտալի յե նա[2]: Մնում է հուսալ, վոր բոլորին շուտով բաց կթողնեն: Ասում են՝ Կիյեվում համատարած խուզարկություններ և ձերբակալություններ են յեղել: Այդպիսի հարձակումների ժամանակ շատ շատերին անհիմն են ձերբակալում: Նկատի ունենալով, վոր բոլորին են ձերբակալել, գործը շատ թեթև կլինի: Չգիտեմ, ինչպես են այժմ Կիյեվում նստելու պայմանները: Առաջներում տանելի եյին: Տվի՞ն ձեզ վորևե մեկի հետ տեսնվելու թույլտվություն: Յես իմ ծանոթ մի կնոջ խնդրեցի այցելել Ձեզ: Վախենում եմ, վոր Դուք Կիյեվում վոչ մի ծանոթ չունենաք: Այնքան կարճ ժամանակ է, վոր Դուք փոխադրվել եք Կիյեվ՝ այդ մեծ, անծանոթ քաղաքը: Շատ ցավում եմ, վոր կորցրել եմ Անյայի ընկերուհու[3] հասցեն և չեմ կարողանում գրել նրան: Անհամբեր սպասելու յեմ Ձեր նամակին. գուցե այդ նամակն ավելի ուրախ լուրեր բերի:

Մենք ապրում ենք Ժընևում վոչինչ, մայրիկը հաճախ հիվանդանում է: Մի տեսակ դուրս ենք ընկել հունից. վատ ենք աշխատում:

Ընդունո՞ւմ են արդյոք հանձնումներ և նամակներ: Նամակներ արդեն ունենք մերոնցից: Մարկ Տիմոֆեյեվիչը մտադիր չէ՞ արձակուրդ վերցնելու և մինչև Ձեզ մոտ մնալու: Մայրիկն ափսոսում է, վոր Ռուսաստանում չի, Ձեզ հետ միասին: Ցանկանում եմ Ձեզ առողջություն և աշխուժություն:

Ձեր Նադյա

1 Այս նամակի բնագիրը չկա: Մեջ ենք բերում նրա պատճենը՝ Կիյեվի ժանդարմական վարչության գործից:

2 1904 թվի հունվարի 1-ին Կիյեվում կուսակցության Կենտրոնական և Կիյեվի կոմիտեների գործով ձերբակալվել եյին Դ. Ի. Ուլյանովը՝ կնոջ հետ, Ա. Ի. Յելիզարովան և Մ. Ի. Ուլյանովան, և հենց այդ մասին եր գրել Մ. Ա. Ուլյանովան Ն. Կ.-ին և Վ. Ի.-ին:

3 Աննա Մորիցևնա Լուկաշեվիչը, վոր այդ ժամանակ ապրում եր Պարիզում: Լ. (ծն. 1862) առաջին անգամ ձերբակալվել է Պետերբուրգում 1885 թվին և վարչական կարգով աքսորվել Ուֆայի նահանգը 3 տարով: 90-ական թվա-

կաններին սկզբին ապրում էր Սամարայում, որտեղ և ծանոթանում է Աննա Իլյինիչնայի հետ։ 1899 թվին Մոսկվայում ձերբակալվում է ս.-դ. գործով, Սմիդովիչի հետ միասին, և աքսորից առաջ անցնում է արտասահման։ Էմիգրացիայի ժամանակ մասնակցում է լեհական հեղափոխական շարժմանը Կրակովում։ Ներկայումս ապրում է Վարշավայի մոտ։

67

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ [1]

Կիև, Լաբորատորնայա, 12, բնակ. 14

[7] *21/I 1904 թ.* [*Ժընև*]

Թանգագին մայրիկ, լավ է, որ դու քեզ միքիչ ավելի հանգիստ ես զգում՝ միայն թե առողջ լինեն մեր կալանավորները։ Քանի որ ձերբակալությունները մասսայական են եղել, կարող է պատահել, որ նրանց էլ բռնել են հանուն կոմպանիայի…

Ուղարկիր ինձ Մ[արկ] Տ[իմաֆեյեվիչի] հասցեն. յես նրա հետ մի գրական գործ ունեմ։ Նա Պիտերումն է… Ստացա՞ր Նադյայի նամակը. նա քեզ մոտ որերս գրել էր։ Իմ հասցեն՝ Ժընև…

[1] *Այս նամակը չկա։ Վերև բերված տողերը ժանդարմների արած քաղվածքներն են, որ պահպանվում են Ցենտրարխիվում, Կիևի ժանդարմական վարչության գործի մեջ։*

68

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ ՅԵՎ Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[*19/VI*] *2/V* [1] [*1904 թ.*] [*Լոզան*]

Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա, յերեք որ առաջ ստացանք Մանյաշայի նամակը, իսկ յերեկ՝ Ձերը։ Վորքան ուրախ եմ։ Այժմ մնում է միմիայն, վոր Անյային շուտով բաց թողնեն։ Պինդ գրկում եմ ձեզ, թանգագիններս։ Լավ չէ միայն, վոր ձեր յերկուսիդ առողջությունը վատ է։ Ձեզ անպայման հարկավոր է հանգստանալ — գլխավորապես ազատ շունչ քաշել թարմ օդում։ Կիևն այնուամենայնիվ քաղաք է։ Մի բան միայն՝ ամառը հյուսիսում վատ է — մայրիկն ապրում է Պիտերի մոտերքը, ամառանոցում իր ծանոթների մոտ և գանգատվում է, վոր սաստիկ ցրտեր են և անձրևներ։

Մ[արկ] Տ[իմաֆեյեվիչի] մոտ ամառանոցում ամեն ինչ, կարծեմ, հարմարեցված է հանգստի համար։

Մենք էլ ենք այժմ հանգստանում։ Հանձնեցինք մեր տունը, վորպիսի հանգամանքն ինձ սաստիկ ուրախացրեց. թե չէ տունը կարգի բերելը և տնտեսությունը խլում էր ամբողջ որը. Նկատի ունենալով այն հերհոցը, վոր մեզ մոտ տիրում է յերբեմն, մշտապես տնտեսության մասին մտածելու անհրաժեշտությունը շատ է ձանձրացրել։ Դուրս ես գնում զբոսնելու՝ առանց կաթի յես մնում, ժ[ամի] 7-ին չվերկացար՝ մսի համար պիտի գնաս քաղաք և այլն և այլն։ Համ էլ ցուրտ է ձմեռը։ Այժմ արդեն ավելի հարմար կարգվինք։ Յես

առհասարակ յերազում եմ աշխան մասին։ Միտք ունեմ ընդհուպ նստելու աշխատանքի։ Ամեն տեսակ միջոցներ եմ խորհում, վոր[պեսզի] վերացնեմ այն անվերջ հերհոցը, վորը սաստիկ հոգնեցնում է։ Այժմ մենք Լոզանումն ենք։ Արդեն մի շաբաթ կլինի, ինչ դուրս ենք յեկել Ժընևից և հանգստանում ենք բառիս բուն իմաստով։ Գործերն ու հոգսերը թողել ենք Ժընևում, իսկ այստեղ քնում ենք որական տասը ժ[ամ], լողանում, զբոսնում. Վոլոդյան նույնիսկ լրագիր էլ կարդալ չի կարդում, առհասարակ շատ քիչ գրքեր ենք վերցրել հետներս, այն էլ չկարդացած վաղը Ժընև ենք ուղարկում, իսկ մենք ինքներս առավոտյան ժ[ամի] 4-ին շալակում ենք մեր պարկերը և մի-յերկու շաբթով գնում լեռները[1]*։ Կհասնենք Ինտերլակեն, այնտեղից Լյուցերն, կարդում ենք Բեդեկերը և մանրազնին ծրագրում մեր ճամպորդությունը։ Մի շաբթվա միջոցում մենք արդեն բավական «տեղն ընկանք»։ Նույնիսկ առողջ տեսք ենք ստացել։ Ձմեռն այնչափ ծանր էր, ջղերն այնքան քայքայված, վոր մեղք չի լինի, յեթե մի ամիս հանգստանանք, թեև յես արդեն սկսում եմ ամաչել։ Ցեղանակը միայն ինչ-վոր կասկածելի յե. անձրև չկա, բայց մի տեսակ մառախուղ է։ Մեր կյանքից այլևս գրելու բան չկա առայժմ։ Մենք Վոլոդյայի հետ պայման ենք կապել վոչ մի գործի մասին չխոսել — գործը աբջ չի, անտառ չի փախչի — չխոսել և, վորքան հնարավոր է, նաև չմտածել։*

Մանյաշային յես կգրեմ, յերևի, այս յերեկո, իսկ առայժմ պինդ-պինդ գրկում եմ ձեզ, թանգագիններս, և պինդ համբուրում։

Ձեր Նադյա

Թանգագին մայրիկ, նամակին շտապ կցում եմ մի յերկու խոսք իմ կողմից. շատ և շատ բարևներս Մանյաշային և շնորհավորում եմ նրա ազատությունը։ Միայն պետք է ամառն անպատճառ հանգստանալ։ Խնդրում եմ գնացեք մի վորևէ տեղ, բնության ծոցը։ Մենք զբոսնում ենք և շատ լավ հանգստանում։ Պինդ գրկում եմ քեզ։

Քո Վ. Ու[լյանով]

[1] *Տես 69-րդ նամակի 1-ին ծանոթագրությունը։*

69

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ [1]

Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. *Լաբորատորնայա փող., տ. 12, բնակ. 14. Կիև,* Kiev, Russie. Russland.

[*24-25/VI*] *7—8/VII 1904 թ.*[2] [*Շվեյցարիա*]

Թափառաշրջիկներից բարևներ թանգագին մայրիկին և Մանյաշային։

Ձեր Վ. Ուլյանով

[1] *Նամակը մի բացիկ է Ցրուտիգենի մոտ գտնվող Կանդերստեգի տեսարանով, վորտեղ Վ. Ի. և Ն. Կ. յեղել են՝ սարերով վոտքով զբոսնելիս։ Այդ զբոսանքի մասին Ն. Կ. մտաբերում է հետևյալը. «1904 թվի հունիսի վերջին մենք Վ. Ի.-ի հետ շալակեցինք մեր պարկերը և մի ամսով ուղևորվեցինք դեպի սարերը՝ թափառելով առանց վորոշ ծրագրի։ Մի շաբաթ մնացինք Լոզանում, մի քիչ ուժեր հավաքեցինք և հետո բարձրացանք Մոնտրեյից վեր մի ինչ-վոր*

տեղ, վայրի և խուլ անկյուն, ինչ-որ անտառահատների մոտ, որոնք պատմեցին մեզ, թե ինչպես պետք է գտնել ճանապարհը և որտեղ գիշերել։ Էգլի (Aigle) միջով իջանք Ռոնի հովիտը, անցանք Էքս-Լե-Բեն (Aix-Les-Bains) իմ՝ դպրոցի և կուրսերի դասընկերուհու մոտ, հետո յերկար ժամանակ թափառեցինք Ռոնի ափերով, մոտ 30 վերստ անցանք. այդ մեր ճամփորդության ամենահանգստացուցիչ մասն էր։ Իվերջո Գեմմի-պասի (Gemmipass) վրայով անցանք Օբերլանդ, յեղանք Յունգ-Ֆրաույի ստորոտում, հետո ջարդված ոտքերով և խիստ հոգնած բնակվեցինք Բրիենի լճի (Brienzersee) վրա՝ Իզենտալում (Isental), որտեղ մոտ մի շաբաթ ապրեցինք, որպեսզի հետո նորից ելի ճանապարհ ընկնենք, Ինտերլակենի և Զիմմենտալի վրայով հետ, դեպի Ժնևի կողմերը։ 1903—1904 թվի ձմեռը բացառիկ ծանր էր, մեր ջղերն խիստ քայքայվել եյին. ուզում եյինք, որքան կարելի յեր, հեռանալ մարդկանցից, մոռացության տալ միաժամանակ բոլոր գործերն ու հոգսերը։ Լեռները փրկեցին։ Տպավորությունների փոփոխությունը, լեռնային օդը, մենակությունը, առողջ հոգնածությունը և առողջ քունը ուղղակի բուժիչ ազդեցություն գործեցին Վլադիմիր Իլյիչի վրա։ Նորից վերադարձան նրան ուժն ու աշխուժությունը, ուրախ տրամադրությունը։ Օգոստոս ամիսը մենք անցկացրինք Լակ-դը-Բրեյում (Lak-de-Bré), որտեղ Բոգդանովի հետ միասին Վ. Ի. նշեց մենշևիկների դեմ հետագայում պայքարելու ծրագիրը։

[2] Գրելու թվականը որոշվում է փոստի շտեմպելով՝ Ցյուրիխեն (26/VI) 8/VII 1904 թ.

70

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՅԵՎ Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՆԵՐԻՆ [1]

Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. Լաբորատորնայա փող., տ. 12, բնակ. 14. Կիյեվ, Kiev, Russie. Russland.

[3] 16/7 [19]04. [Իզենտալ]

Ողջույն մեր մոնբլայից։ Մոտ օրերս նորից ճանապարհվում ենք։ Առողջ է մայրիկը։ Վաղուց է, ինչ լուր չունենք։ Գրեցեք։

Ձեր Վ. Ուլյանով

[1] Նամակը բացիկ է Iseltwald (Իզելտվալդ) am Brienzersee (Բրիենի լճի վրա) տեսարանով։ Տես 69-րդ նամակի 1-ին ծանոթագրությունը։

71

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[15] 28/8 [19]04. [Ժնև]

Թանգագին մայրիկ,

Վաղուց է չեմ գրել ձեզ. պատճառը՝ հաստատ համոզված չեյի հասցեյի վերաբերյալ։

Այսօր ստացա Ցել[իզավետա] Վ[ասիլյեվ]նայի և Մանյաշայի նամակները։ Շնորհակալ եմ նրանից թարգմանությունների վերաբերյալ հոգսերի համար։

Նադյան նրան մանրամասն կգրի այդ մասին։ Յես այժմ ստացել եմ Հոբսոնի գիրքը իմպերիալիզմի մասին և սկսել թարգմանել այն[1] կամաց-կամաց, որովհետև դեռես շարունակում եմ վարել ամառային կենցաղը՝ լողանում, զբոսնում, անգործություն անում։ Առհասարակ այս ամառ յես հրաշալի հանգստացա։

Իսկ դուք ինչպես։ Լա՞վ է արդյոք ամառանոցը Սաբլինում։ Հանգստանո՞ւմ եք արդյոք այդտեղ, ինչպես հարկն է։ Ի՞նչ հեռանկարներ ունեք։ Առո՞ղջ է արդյոք մայրիկը։ Ի՞նչպես են իրենց զգում բանտից հետո Անյուտան և Մանյաշան։ Գրեցեք ինձ այդ մասին, թե չէ՝ Մանյաշան նամակում միայն թարգմանության մասին է խոսում։

Ամուր գրկում եմ թանգագին մայրիկիս և բոլորիդ հղում բարևներս։

Ձեր Վ. Ուլյանով

Ճի՞շտ եմ գրում արդյոք հասցեն։

Նրա փոխվելու մասին վաղօրոք հաղորդեցեք։ Իմ հասցեն Rue de la Colline 3, Genève, սակայն անպատճառ հենց ծրարի վրա մակագրել՝ անձամբ։ Վ. Ի. Ու[լյանով]ին։

[1] Իմպերիալիզմի մասին Հոբսոնի գրքի Լենինի թարգմանությունը, որքան մեզ հայտնի յե, տպագրված ձևով գոյություն չունի. չի պահպանվել նաև այդ թարգմանության ձեռագիրը։

72

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՅԵՎ Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

27.VI [10/VII] [19]07. [Ստիրսուդդեն]

Թանգագին մայրիկ, վաղուց է վոչինչ չեմ գրել քեզ։ Անյուտան պատմած կլինի, յերևի, մեր հանգստանալու ծրագրի մասին։ Յես սաստիկ հոգնած վերադարձա։ Այժմ լիովին հանգստացել եմ։ Հանգիստն այստեղ[1] հրաշալի յե, լող, զբոսանքներ, տեղի անմարդաբնակություն, անգործություն։ Անմարդաբնակությունն ու անգործությունը՝ ինձ համար ամենքից լավն է։ Մի-յերկու շաբաթ էլ հույս ունեմ մնալու, իսկ հետո վերադառնալու աշխատանքի։ Նադյան և Ցելիզ[ավետա] Վաս[իլյեվնան] ողջ և առողջ են և հրաշալի կերպով հանգստանում են։

Ի՞նչպես եք դուք ամենքդ այդտեղ սարքվել։ Առողջ ես արդյոք։ Տեսնվե՞լ ես Անյուտայի հետ և ո՞րտեղ է նա այժմ, Մարկի՞, թե ձեզ մոտ։ Առիթի դեպքում գրիր ինձ և կամ խնդրիր Միտյային, որ նա միքանի խոսք գրի։

Ամուր գրկում եմ քեզ։

Քո Վ. [Ուլյանով]

Միտյային և նրա կնոջ մեծ բարևներ իմ կողմից։

Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա, Վ[ալոդյան] սովորություն չունի բարևներ գրելու, ուստի յես ինքս իմ և մայրիկի կողմից եմ հղում Ձեզ բարևներս։ Բարևում ենք նույնպես բոլոր մերոնց։ Կարող եմ հաստատել, որ հրաշալի կերպով ենք հանգստանում, մենք ամենքս այնքան չաղացել ենք, որ անհարմար է մարդկանց աչքին յերևալ... Սոճու անտառ, ծով, հրաշալի յեղանակ։ Առհասարակ ամեն ինչ հիանալի յե այստեղ։ Լավ է և այն որ վոչ մի անտե-

սություն չենք վարում։ Իսկ Դո՞ւք ինչպես եք հանգստանում։ Ի՞նչպես է Ձեր մալարիան, անցե՞լ է վերջնականապես, գնո՞ւմ եք սունկի։ Առհասարակ ի՞նչպես եք ապրում։ Մենք այստեղ կտրված ենք ամբողջ աշխարհից, թեև փոստը շաբաթական գալիս է 6 անգամ, սակայն վոչ վոք վոչինչ չի գրում։ Նորից պինդ գրկում եմ։

Ձեր Նադյա

¹ Ստիրսուդդենում (Ֆինլանդիայում)՝ Ն. Մ. Կնիպովիչի ամառանոցում, վորտեղ Վ. Ի. հանգստանում եր կուսակցության V համագումարից հետո։

73

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

15 [28]/X [19]07. [Կուոկկալա (Ֆինլանդիա)]

Թանգագին մայրիկ, վաղուց է, ինչ չեմ գրել քեզ։ Իմ վերջին նամակը կարծեմ, յես ուղարկել եյի քեզ իմ ամառային «մոնրեպոյից»[1]։ Այժմ մենք, ձմեռվա համար սարքվել ենք մեր հին տեղում[2] ընտանեբար։ Հույս ունենք, վոր ձմեռը նախորդ տարվա նման ցուրտ չի լինի։ Ասենք այժմ արդեն մենք ավելի լավ կհարմարվենք և կփակվենք։ Յես կատարելապես գոհ եմ թե շենքից և թե մեր ամբողջ սարքավորումից։ Մանյաշան հյուր յեկավ մեզ մոտ, այժմ ել այստեղ է, սակայն այսոր պատրաստվում է մեկնելու ձմեռվա գալու պատճառով. այսոր առաջին անգամ ձյուն յեկավ, յեղանակը ցրտեց։

Ի՞նչպես ես քեզ զգում այդտեղ։ Լա՞վ կլինի արդյոք գյուղում, յերբ իսկական ցրտերը կսկսվեն։ Միտյային խնդրեմ շատ բարևիր իմ կողմից։ Ափսոսում եմ, վոր աշնանը չեր կարելի գալ նրա մոտ[3], թե չե, հիանալի վորս պիտի անեյինք—աշունը ամբողջ ժամանակ սքանչելի յեր։ Յե՞րբ է նա արձակուրդ վերցնում, քանի՞ ժամանակով և ո՞ւր է ուղևորվում։

Անյուտայից մի զույգ նամակ ունենք արդեն։ Նա իր ճամփորդությունից[4], ըստ յերևույթին, շատ գոհ ե։ Մարշրուտը շատ հետաքրքրական է, իսկ հարավում այժմ, յերևի, առանձնապես լավ կլինի։

Այստեղ մենք ապրում ենք լավ բարեկամների կոմպանիայում[5]։ Ունենք գրքեր, աշխատանք։ Զբոսնում ենք ծովափին։ Մանյաշան, կարծես, վատ չեր զգում իրեն այստեղ, շատ եր աշխատում՝ թարգմանում եր։

Մոտ օրերս գրեթե ամենքս հատուկ տուրք տվինք աշնանը՝ մի-յերկու օրով հիվանդացանք ինֆլուենցայով։ Այժմ առողջ ենք կամ առողջանալու վրա։ Յել[իզավետա] Վաս[իլյեվնան] ել իրեն լավ է զգում, միայն յերբեմն չափազանց վրդովվում է տնային գործերով։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և համբուրում։ Ցանկանում եմ առողջություն։

Քո Վ. [Ուլյանով]

¹ Տես նախորդ նամակի ծանոթագրությունը։

² Կուոկկալայում, Վազա ամառանոցում։

³ Դ. Ի. Ուլյանովն այդ ժամանակ զեմստվային բժշկի պաշտոն եր կատարում Մոսկվայի նահանգում։

⁴ Ա. Ի. արտասահման եր գնացել։

⁵ Կուոկկալայում այն ժամանակ ապրում եյին՝ Ա. Ա. Բոգդանովը, Ի. Դուբրովինսկին, Ն. Ռաժկովը, Գ. Լեյտայզենը։

74

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

ՆԳՍ Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Петерб[ургская] Сторона, Գավ-չովսկայա փող., տ. 6, բնակ. 16, Պետերբուրգ. Russie. St.-Petersbourg.

Հասցես՝ Vl. Oulianoff. 17 Rue des deux Ponts. 17. (Chez Küpper) Genève.

[1] 14/I [19]08. [Ժընև]

Թանգագին Մանյաշա,

Ուղարկում եմ քեզ «Образование» ժուռնալը[1], վոր սխալմամբ հետս բերել եմ այստեղ։ Այժմ, կարծեմ, գրքերի կողմից ինձ վրա այլևս պարտք չի մնում։ Թե վոր կա, հաղորդիր, խնդրեմ։

Միքանի որ է արդեն, վոր ենք ընկած այս անիծյալ Ժընևում[2]։ Մի զզվելի անկյուն է սա, սակայն ինչ արած։ Կհարմարվենք։ Ի՞նչպես եք ապրում։ Ձե՞ք սառչում։ Առո՞ղջ է արդյոք մայրիկը։ Համբուրիր նրան, խնդրեմ, իմ կողմից և բարևիր Անյուտային, նաև Միտյային, յեթե նա դեռ չի մեկնել։

Յերեկ յես գրեցի Լեվ Բոր[իսովի]չին հոդվածի առթիվ[3] և խնդրեցի ճարել ինձ համար 3-րդ Դումայի արձանագրությունները (սղագրական հաշվետվությունների պաշտ[ոնական] հրատարակությունը, ինչպես նաև Դումա մտցվող դիմումները, հարցապնդումներն ու օրինագծերը)։ Այդ ձեռք բերել կարելի յե միայն անձնական կապերի միջոցով։ Աշխատիր, խնդրեմ, վոր մեկն ու մեկը համաձայնվի ինձ տալ այդ, և ուղարկիր բոլորը առանց բացառության։ Խնդրում եմ նույնպես ուղարկել ինձ բոլոր պրոֆեսիոնալ ժուռնալները, վորոնք դեռ լույս են տեսնում Ռուսաստանում (ՍՊԲ, նաև Մոսկվա), գնելով դրանք անմիջապես։ Այն գումարից, վոր յես պիտի ստանամ հրատարակչից հուն[վարի] 4-ին, Յելիզ[ավետա] Վաս[իլյեվնայից] վերցրու 50 ռուբլի ծախսերի համար և ուղարկիր ինձ, խնդրեմ, մե[նշեվի]կների բոլոր նոր հրատարակությունները (յեթե նրանք վորևէ բան հրատարակում են) և այլն։ Հունվարի մեկից յես բաժանորդագրված եմ «Товарищ»-ին[4] («Наш век») և հետևելու յեմ նոր հրատարակություններին։ Յեթե Լեվ Բ[որիսովի]չը ծուլանա գրել և կամ զբաղված լինի, իմացիր խնդրեմ, նրանից պատասխան (իմ հարցերին) և հաղորդիր ինձ։ Ի միջի այլոց՝ ինձ հարկավոր է պատասխան Գրանատի վերաբերյալ (Ռուսաստանի պատմության). նրա հետ արդյոք պայմանագիր կնքվե՞լ է իմ հոդվածի[5] մասին, թե՞ գործը խանգարվել է։ Թող Լ[և] Բ[որիսովի]չը տեղեկանա այդ մասին և հաղորդի քեզ։

Ամուր սեղմում եմ ձեռքդ։

Քո Վ. Ուլյանով

t[ournez la page] s' i v.[ous] pl[ait]*

Ուղարկե՞լ ես իմ և Նադյայի փաստաթղթերը։ Յեթե չես ուղարկել, շուտ ուղարկիր, խնդրեմ, պատվիրված ծրարով։ Ինձ անհրաժեշտ են այդ թղթերը permis d'établissement** ստանալու համար։

* Շրջեք, խնդրեմ, եջը կամ տեսեք մյուս յերեսը։

** Բնակության իրավունքի թույլտվություն։ Խմբ.։

¹ Գրական, հանրամատչելի-գիտական և հասարակական-քաղաքական ժուռնալ, վորին մասնակցում եյին մարքսիստները: Մանրամասն. տես Լենինի Յերկեր, հ. XII, ռուս. 2-րդ հրատ., ծանոթ. 20, եջ 454:

² 1907 թ. նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին Վ. Ի. ստիպված յեղավ, թաքնվելով վոստիկանությունից, մեկնել Կուոկկալայից: Մի փոքր ժամանակ նա անցկացրեց Ոգլբյույում (Հելսինգֆորսի մոտերքում), հետո անցավ արտասահման և 2 շաբաթ մնալով Ստոկհոլմում, վորտեղ նա սպասում եր Ն. Կ.-ին, և կարճ ժամանակով կանգ առնելով Բեռլինում, 1908 թվի հունվարի 7-ին հասավ Ժընեվ: Այդ՝ նրա յերկրորդ եմիգրացիան տևեց մինչև 1917 թվի ապրիլ ամիսը:

³ Լ. Բ. Կամենևի անունով նամակը, վորի մասին հիշվում ե այստեղ, ինստիտուտի արխիվում չկա, ուստի չի հաջողվել պարզել, թե վոր հոդվածի մասին ե խոսքը:

⁴ «Наш век»-ը լույս եր տեսնում «Товарищ»-ի փոխարեն: Տես Լենինի Յերկերը, հ. XII, ռուս. 2-րդ հրատ., ծանոթ. 3, եջ 449:

⁵ 1907 թվի վերջին Վ. Ի. Գրանատի Ենցիկլ. Բառարանի համար ավարտել եր «Ագրարային հարցը Ռուսաստանում 19-րդ դարի վերջում» հոդվածը, վորը սակայն գրաքննական պայմանների պատճառով չտպագրվեց այնտեղ և լույս տեսավ միայն 1918 թվին «Жизнь и знание»-ի հրատարակությամբ: Տես Լենինի Յերկերը, հ. XII, ռուս. 2-րդ հրատ., ծանոթ. 122, եջ 487:

75

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՅԵՎ Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[9] 22/I [19]08. [Ժընեվ]

Թանգագին մայրիկ, այսոր ստացա քո և Մանյայի նամակը և շտապում եմ պատասխանել: Շատ ուրախացրին ինձ անմիջականորեն ձեր հաղորդած լուրերը. Մանյաշայի բոլոր նախորդ նամակները չեն ստացված: Դժվար են գլուխ գալիս այդ հանձնումները, վորոնց ստիպված եյինք դիմել մինչև մեր Ժընեվ գալը:

Շատ անհանգստացրեց մեզ ձեր հաղորդած տեղեկությունը, վոր Անյուտան ծանր հիվանդ ե ինֆլուենցայով: Յերևի ձեր բնակարանը վատ ե (Նադյան ասում ե՝ խոնավ ե), քանի վոր առաջացել ե այդ բարդությունը: Ամենքդ առողջ եք, արդյոք, այժմ: Ի՞նչպես ե Միտյան: Մեկնե՞լ ե, արդյոք, կրկին իր ծառայության վայրը:

Մենք այստեղ կամաց-կամաց սարքվում ենք և կսարքվենք, անշուշտ, առաջվանից վոչ վատ: Անախորժ եր միայն փոխադրության առաջին մոմենտը, իբրև անցում լավից դեպի վատը: Սակայն այդ անխուսափելի յեր: Հասանք թե չե, իսկույն ստացա Գորկու նամակը¹, վորն ինձ կանչում ե իր մոտ՝ Կապրի: Մենք Նադյայի հետ անպատճառ մտադիր ենք ընդունել այդ առաջարկը և ուղևորվել Իտալիա (Կապրիում այժմ, ինչպես գրում են «Գորկիները», նարգիզը ծաղկում ե), միայն վոչ այժմ: Անհրաժեշտ ե նախ կանոնավորել բոլոր գործերը և ապա արդեն մեկնել զբոսանքի:

Մանյաշային յերեկ, թե անցյալ որը նամակ գրեցի, տալով նորից հանձ-

նարարություններ գրքերի մասին: Գուցե շա՞տ եմ ծանրաբեռնում նրան իմ հանձնարարություններով:

Ամուր գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում լիակատար առողջություն: Ամենքին իմ և Նադյայի կողմից բարևներ:

Քո Վ. Ու[լյանով]

Իմ թանգագիններս, այդ ինչ խաթի մեջ ընկաք այդ անիծյալ ինֆլուենցայի պատճառով: Գուցե դա խոնավ բնակարանի՞ց ե: Լավ ե, վոր այժմ սկսել եք արդեն առողջանալ... Պինդ համբուրում եմ ձեզ ամենքիդ. ցանկանում եմ ձեզ շուտով կազդուրվել և վերջնականապես լավանալ:

Ձեր Ն[ադյա]

¹ Մաքսիմ Գորկին Վ. Ի.-ին հրավիրում եր իր մոտ՝ Կապրի: Տես այդ առթիվ Լենինի՝ Գորկուն ուղղված նամակը՝ «Լեն. ժողովածվի» մեջ, I, եջ 84-85:

76

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

ՍՊ[ետեր]բ[ուրգ]. Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Պետերբ[ուրգսկայա] ստարանա, Պավլովսկայա փող., տ. 6, բնակ. 16, Պետերբուրգ. Russie. St.-Petersbourg.

[25/I] 7/II [19]08. [Ժընեվ]

Թանգագին Մանյաշա, ստացա քո 20/I թվակիր նամակը, յերիտասարդ գրականագետի¹ նամակը նույն բանի մասին և այսոր՝ Речь-ը²: Վերջինիս համար մեծ, շատ մեծ շնորհակալություն. իսկապես չափազանց հետաքրքրական հոդված ե:

Ուեբբի մասին պատասխանել եմ յերիտ[ասարդ] գրակ[անագետ]ին և հավատարմաթղթի պես մի բան առաքել նրան: Համենայն դեպս կրկնում եմ. 1) առաջին հրատ[արակության] որինակների քանակը չգիտեմ. 2) խմբագրության վարիչն այն ժամանակ Ստրուվեն եր, նա ել խմբագրել ե առաջին հատորը. 3) յերկրորդ հատորը թարգմանել ե Յե. Սմիրնովը (Գուրևիչ): Յես այդ ժամանակ առաջին հ[ատորի] թարգմանության համար ստանում եյի ժամուլից 20-ական ռուբլի և 2-րդի խմբագրելու համար 10-ական: Թող յերիտ[ասարդ] գրակ[անագետը] սակարկի,— ծայրահեղ դեպքում նույնիսկ իջեցնի մինչև ½-ը, սակայն անպատճառ նշի որինակների քանակը, վորը նախատեսվելու յե պայմանագրով:

Գրանատի մասին ել յերեկ նամակ ստացա կոլեգայից: Այնտեղ ել գործերը վատ չեն դասավորվում ինձ համար:

Գալով մեր ամուսնության վկայականին³ և Կրասնոյարսկում թողնված «նվերներին», խորհուրդ եմ տալիս՝ շատ ել չմիջնորդել, փոքրիշատե զգալի «նվերները» չտալ: Ըստ յերևույթին առանց այդ ել գործը գլուխ կբերենք:

Մի ամսից կամ գուցե յեվ առաջ, մտադիր ենք սարքվել այստեղ սեփական բնակարանում:

Գալով Մարքսի հիշատակին նվիրվող ժող[ոված]վին, յես ել նրան ըստ յերևույթին չեմ մասնակցի. անհնարին ե շտապ կերպով գրել տպագրելի բան⁴:

Զարմանալի յերկար է տևում մերոնց առողջանալը: Այդ ուղղակի դժբախտություն է: Այս տարվա ինֆլուենցան, ըստ յերևույթին, առանձնապես չարորակ է, և կամ յեղանակները ձեզանում շատ վատ են: Գրիր, ի՞նչպես է մայրիկի առողջությունը:

Յես դեռ լրիվին չեմ սարքվել այստեղ, — որ[ինակ] դեռ չեմ մտել իմ «ակումբը»[5], վորտեղ հեշտ է կարդալ ժուռնալներ և ձեռք բերել նոր գրքեր: Կաշխատեմ (մտնելուն պես, յերևի մոտ օրերս) փնտռել, ինչ վոր կարելի յե, քեզ համար թարգմանելու բաներ: Ստանո՞ւմ ես Neue Zeit[6]: Այդ ժուռնալի գիտական հավելվածի առաջին №-ում զետեղված է՝ «Ազգայնություն և միջազգայնություն» վերնագրով Կաուցկու հոդվածը: Յես դեռ չեմ տեսել: Պիտանի չէ՞ դա, արդյոք, թարգմանելու համար: Կարդացի Կաուցկու «Սոցիալիզմը և գաղութային քաղաքականությունը» (նոր բրոշյուր 80 եջից): Կարծում եմ, վոր դա լեգալ է: Խոսիր Зерно-յի հետ*[7]. այդ արժի թարգմանել: Զարմացնում է ինձ նույնպես, վոր Parvus-ի («Kolonialpolitik u[nd] Zusam[m]enbruch»)[8] թարգմանության մասին հայտարարություններ չեն յերևացել: Միթե վոչ վոք նախաձեռնություն չունի: Հարցում արա Зерно-յին: Հեղինակի հետ յես այստեղ արտասահմանում կկարողանայի բանակցել:

Ամուր սեղմում եմ ձեռքդ և համբուրում մայրիկին:

Քո Վ. Ու[լյանով]

P. S. Բոնչի «Ընտ[իր] յերկերը»[9] չեն ստացել:

Պրոֆ[եսիոնալ] ժուռնալներից ստացել եմ Гудок-ը, Текст[ильное]дело-ն: Խնդրում եմ հետագայում էլ ուղարկել նման բոլոր ժուռնալները:

1 Խոսքն, անշուշտ, Լ. Բ. Կամենևի մասին է, վորն այդ ժամանակ նամակագրություն ուներ Վ. Ի.-ի հետ, ժողովածուներին՝ «Ժամանակի հովեր» և «Կարլ Մարքսի հիշատակին», «Ագրարային հարցի» հրատարակության և այլն նրա մասնակցության առթիվ: Լ. Բ. Կամենևին ուղղված՝ Վ. Ի.-ի նամակները չեն պահպանվել:

2 Հավանական է խոսքը «Речь»-ի № 12-ի մասին է (1908 թ. 15/I), վորտեղ զետեղված եր Բադվի սոցիալ-դեմոկրատների բանաձևը եքսպրոպրիացիաների և տեռորի դեմ:

3 Ամուսնության վկայականը հարկավոր եր բնակության իրավունք ստանալու համար:

4 «Կարլ Մարքս» (1818—1883) ժողովածուի համար Վ. Ի. այնուամենայնիվ հոդված գրեց՝ «Մարքսիզմ և ռեվիզիոնիզմ» վերնագրով: Այդ ժողովածուն լույս տեսավ Ո. և Մ. Կեդրովների հրատարակությամբ, ՍՊԲ-ում 1908 թ.: Տես Լենինի յերկերը հ. XII, ռուս. 2-րդ հրատ., եջ 179—189:

5 Վ. Ի. Ժընևում աշխատում եր Societé de lecture ակմբին կից գրադարանում: Այնտեղ աշխատելու իրավունքի համար հարկավոր եր անդամագրվել այդ ակմբին և մուծել վորոշ, ճիշտ է, աննշան անդամավճար:

6 «Neue Zeit»-ը («Նոր ժամանակ») գերմանական սոցիալ-դեմոկրատիայի տեսական օրգանն եր, վոր հրատարակվում եր 1883-ից մինչև 1922 թ.: Ժուռնալի խմբագիրն իմպերիալիստական պատերազմից առաջ Կարլ Կաուցկին եր:

* Հարցրու նույնպես՝ չեմ կարող արդյոք նրանց հասցեյով ուղարկել քեզ համար նորույթներ, վորոնք թարգմանության համար կարող են պիտանի լինել:

7 «Зерно»-յի հրատարակչության մասին Մ. Ս. Կեդրովը՝ այդ հրատարակչության կազմակերպիչը՝ հաղորդեց մեզ հետևյալը.

«Зерно»-յի հրատարակչությունը կազմակերպվել է 1906 թվին: Հրատարակչությանն ամենաակտիվ մասնակցություն ունեյին ընկերներ՝ Ն. Ի. Պոդվոյսկին, Ն. Ս. Անգարսկին (Կլեստով), Ստ. Ստ. Դանիլովը, Ն. Ն. Բատուրինը, Մ. Ա. Գարշկովան, Դիդրիկիլը և այլն: «Зерно»-յի հրատարակությամբ լույս են տեսել Վ. Իլյինի «12 տարվա ընթացքում» և «Ագրարային հարց», I մասը: «Ագրարային հարցի» II մասը բռնագրավվել եր տպարանում և ՍՊԲ Դատական Պալատի (և կամ Նահանգ. ժանդ. վարչության) վորոշմամբ վոչնչացվել: Նույն հրատարակությամբ լույս եր տեսել նաև Կ. Մարքսի մահվան 25-ամյակին նվիրված ժողովածուն, նաև «Օրացույց ամենքի համար» (բանվորների համար), վորտեղ զետեղված եր Շտուտգարտի կոնգրեսի վերաբերյալ Վ. Ի.-ի հոդվածը և այլն:

«Зерно»-յի հրատարակած գրեթե ամբողջ գրականությունը բռնագրավվում եր մամուլի գործերի Կոմիտեյի կողմից: Այդ գրականությունը այնուամենայնիվ տարածելու հնարավորություն ունենալու նպատակով ընդունված եր նախքան գրաքննության ներկայացնելը, նոր լույս ընծայվող գրքերն ու բրոշյուրները տարածել: «Вперед» հրատ. (Բոնչ-Բրուևիչ) փակվելուց հետո «Зерно»-ն դարձավ կուսակցական տարածող ապարատ: «Зерно»-յի լիկվիդացիայի ժամանակ, 1908 թ., ամբողջ լեգալ պահեստը վոչնչացվում է ժանդարմների կողմից, անլեգալը՝ Փետրվարյան հեղափոխությունից հետո հանձնվում է կուսակցությանը: Հրատարակչության գործերով Մ. Ս. Կեդրովը բազմիցս դատի յե կանչվում Քր. Կոդ. 102, 129, 131 հոդվածների հիման վրա և դատապարտվում բանտարկության զանազան ժամկետներով»:

8 Պարվուս՝ «Գաղութային քաղաքականությունը և կապիտալիստական հասարակակարգի խորտակումը», թարգմանություն Գրաուեի, հրատ. «Новый мир»-ի, 1908 թ., ՍՊԲ:

9 Բոնչ-Բրուևիչ՝ Ռուսական պոեզիայի ընտիր յերկեր: ՍՊԲ, 1908 թ.:

77

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[1] 14/II [19]08. [Ժընև]

Թանգագին Մանյաշա,

Մոտ օրերս միքանի տող եյի գրել քեզ թարգմանությունների մասին: Այժմ յես կուզեյի ավելացնել, վոր կարդացի այստեղ Neue Zeit-ի Erganzungsheft-ի* № 1-ը — Կաուցկու Nationalität und Internationalität հոդվածը[1]: Դու, հիշում եմ, ասացիր, վոր N[eue] Z[eit]-ը ստանում ես, այնպես վոր այստեղից չեմ ուղարկում (ի դեպ՝ տուր հասցեդ օտարազգի գրքեր և հոդվածներ քեզ ուղարկելու համար): Ըստես, այդ միանգամայն լեգալ բան է և անպայման արժանի յե թարգմանության: Առաջարկիր հրատարակչին (36 եջից է): Ամենից լավ կլիներ հրատարակել այդ հոդվածը (դա Բաուերի քննադատությունն է)

* Հավելված: Խմբ:

Otto Bauer-ի «Die Nationalitätenfrage und die Socialdemokratie»[2] գրքի հետ միասին (այդ գիրքը, հավանաբար, Անյայի մոտ պիտի լինի, որը նրանից մի գլուխ թարգմանել է):

Այստեղի կոլեգաներից մեկը խնդրում է հարցնել հրատարակչից՝ չե՞ն ուզենա արդյոք հրատարակել Huschke-յի «Landwirtschaftliche Reinertragsberechnungen» գիրքը[3], որից ես քաղվածներ եմ բերում Ագրարային հարցում մ[աս] I[4]: Եթե հարմար դեպք պատահի, հարցրու հրատարակչին. նախաբանը ես պատրաստ եմ գրելու: Սակայն, ճիշտն ասած՝ դա չափազանց մասնագիտական բան է...

Իմ Acte de mariage* մասին ես յերեկ զրույց ունեցա վոստիկանության դեպ[արտամեն]տի դիրեկտորի հետ: Դուրս է գալիս՝ հարկավոր է այդ բանը[5]: Առաջարկիր ծանոթ փաստաբանի մտածել հետևյալ միջոցի մասին ևս՝ Կրասնոյարսկից պատճենը ձեռք բերելու վերաբերյալ (քանի որ «նվերների» վրա հույսերը, յերևի, մեծ չեն): Չէ՞ որ գոյություն ունի ապացույցներով ապահովելու պրոցեդուրան (դատական): Չի՞ կարող, արդյոք, Ելիզ[ավետա] Վաս[իլ-յեվնան] դիմել հաշտ[արար] դատավորին կամ համապատասխան հիմնարկի ՍՊ[ետեր]բ[ուրգում] և պահանջել մակագրություն, որով իրեն տրվի վկայական՝ Կրասն[ոյարսկի] հոգ[ևոր] կոնսիստորիայից ամուսնության մասին մետրիկայի պատճենը ստանալու համար (կամ իր աղջկա դեմ դատ բանալու և կամ կտակարար կարգադրությունների նպատակներով և այլն): Չի՞ կարելի, արդյոք, այդ ճանապարհով պահանջել մետրիկական և կամ նրա պատճենը: Խորհրդակցիր փաստաբանի հետ:

Ի՞նչպես է մերոնց առողջությունը: Բոլորովի՞ն, արդյոք, առողջացել են մայրիկն ու Անյուտան:

Քո Վ. Ու[լյանով]

P. S. Շատ և շատ մեծ շնորհակալություն 3-րդ Դ[ումայի] արձանագրությունների համար: Շատ յեռանդագին խնդրում եմ հետագայում էլ ուղարկել ինձ, այն էլ շուտ-շուտ, այն էլ օրինագծերի և հարցապնդումների հետ միասին:

1 Հոդվածը զետեղված էր «Neue Zeit»-ի № 1-ում (1908 թ. հունվարի 18-ին): Կա Կ. Կաուցկի՝ «Ազգայնություն և միջազգայնություն» ռուսերեն թարգմանությունը՝ տպված Կաուցկու «Մեր ժամանակի ազգությունը» ժողովածվի մեջ և ուրիշ հոդվածներ: Թիֆլիս, հրատ. ՌԿԿ Անդրյերկոմի, 1922 թ.:

2 Օտտո Բաուեր՝ «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան»: Թարգմ. գերմաներենից Մ. Ս. Պանինի, խմբ. Գ. Ժիտլովսկու, ՍՊԲ, «Зерно», 1909 թ.:

3 Leo Huschke: Landwirtschaftliche Reinertragsberechnungen bei Klein- Mittel- und Grossbeitrieb dargelegt an typischen Beispielen Mittelthüringens» (Jena, 1902, Gustav Fischer): Լեո Հուշկե՝ «Մանր, միջակ և խոշոր գյուղատնտեսական արդյունաբերության յեկամտաբերության հաշվարկումը, սահմանված Միջին Թյուրինգիայի տիպիկ օրինակների վրա» (Յենա, 1902. Գուստավ Ֆիշեր):

4 Տես «Ագրարային հարցը» և «Մարքսի քննադատները»: Լենինի յերկեր, հատ. IV, ռուս. 2-րդ հրատ., ծանոթ. 238 էջում:

5 Տես 76-րդ նամակի 3-րդ ծանոթագրությունը:

* Ամուսնության վկայականը: Խմբ.:

78

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[4] 17/II [19]08. [Ժնև]

Թանկագին Մանյաշա, ուղարկիր ինձ, խնդրեմ, հետևյալ գրքերը.

1. «Минувшие годы» № 1 (հունվար, գինը 85 կ.) Մարքսի նամակներով Միխայլովսկուն և Միխայլովսկու նամակներով Լավրովին:
2. Ռուս[ական] հակահեղափոխության պատմության նյութերը, հ[ատոր] 1, գ[ին]ը՝ 2 ռ. 50:
3. Մեր պատգամավորները* (3-րդ գումարման). 50 կ. («Основа» — գրախանութ):
4. Լսկոտ. Ռուսաստանի բյուջետային և հարկային քաղաքականությունը: 1 ռուբ.:
5. Ալմազով. Մեր հեղափոխությունը (1902—7 թ.). 1 ռ. 50: (Աշխատանք)— չգիտեմ, արժե՞ արդյոք վերջին գիրքը, որի մասին ես ոչ մի տեղեկություն չունեմ. արժե այնուամենայնիվ աչքի անցկացնել:
6. 1903—6 թ. թ. Բաքվի նավթարդ[յունաբերական] շրջանի բանվորների գործադուլային շարժման ուրվագիծ: Բաքու, 1907 թ., գ[ին]ը 1 ռ. 50:

Դումայի արձանագրությունները 20-րդ նիստից հետո չեմ ստացել: Իսկ այդ պետք է ստանալ օրինագծերի հետ միասին: Օր[ինակ], մոտ օրերս «Стол[ичная] почта»-ն հաղորդեց, որ լույս է տեսել «Ձախավոր գյուղացիների խմբակի» ծրագիրը[1]: Խնդրում եմ, ճարիր ինձ համար այդ: Շատ լավ կլիներ, յեթե որևէ կապ ունենք Դումայի հետ, որ ձեռք բերեյիր նույնպես ակտյաբրիստների, աջերի, կադետային խմբակի և այլն ծրագրերը, ազդերն ու թերթիկները: Դումայում, անշուշտ, այդ բոլոր «թղթերը» հատակի վրա թափված են, և ոչվոք չի էլ վերցնում:

Այս օրերս գրել էյի քեզ թարգմանությունների (Կաուցկու) մասին. ստացե՞լ ես այդ նամակը: Ստացե՞լ եք արդյոք իմ 2-րդ հատորի 2-րդ մասի[2] ձեռագիրը (այստեղից ուղարկված է 5. II. 08 նոր տոմարով, շուրջանակի ճանապարհով):

Փողի մասին գրում եմ մայրիկին:

Քո Վ. Ու[լյանով]

Կցվող թերթիկը հանձնիր, յեթե առիթ պատահի, Մ. Ո[լմինսկ]ուն[3]: Հետաքրքրական կլիներ ստանալ թե նրանից և թե Լինդովից ուղղակի հասցեն՝ թղթակցելու համար: Ասա նրանց այդ մասին: Ի՞նչպես վերջացավ Լինդովի «վեճը» Բոնչի հետ և այդ հողի վրա հրատարակչության մեջ յեղած կոնֆլիկտը[4]:

1 «Столичная почта»-յի № 224-ում 1908 30/I (12/II) տպագրված էր «չափավոր-աջ գյուղացիական պատգամավորների հողային նախագիծը»: «Стол. почта»-յի մասին տես Լենինի Երկեր, XII հատ., ռուս. 2-րդ հրատ., էջ 468, ծանոթ. 59:

* Եթե նման հրատարակություն կա նկարներով, ամենից լավ կլիներ գնել այն:

[2] Խոսքը «Ագրարային հարցի» 2-րդ հատորի 2-րդ մասի մասին է վերաբերում («Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը ռուսական առաջին հեղափոխության ժամանակ՝ 1905—1907 թ.թ.»։ Տես հատ. XI, ռուս. 2-րդ հրատ., էջ 329—499), որ լույս պիտի ընծայվեր „Зерно"-յի հրատարակությամբ։

[3] Մ. Ս. Ալեքսանդրով (Օլմինսկի, Գալյորկա) — հին ականավոր բոլշևիկ-գրականագետ, բանվորական մամուլի հիմնադիրներից մեկը Ռուսաստանում։ Տես Լենինի յերկեր, հատ. VII, ռուս. 2-րդ հրատ., էջ 501։

[4] Պարզել, թե ինչ «վեճի» և ինչ կոնֆլիկտի մասին է խոսքը, չհաջողվեց։ Լեյտեյզեն Գ. Դ. (Լինդով) (1877—1919)—ս.-դ., բոլշևիկ, կուսակցական գրականագետ, „Искра"-յի և „Заря"-յի և հետագա բոլշևիկյան լեգալ օրգանների թղթակից։ Բան.-շարժ. մասնակցում է 90-ական թվականների սկզբից Յեկատերինոսլավում, աշխատում է կուսակցական կազմակերպություններում արտասահմանում, իսկ ռեակցիայի շրջանում՝ Ռուսաստանում։ 1929 թ. հունվարի 20-ին սպանվեց Արևելյան ֆրոնտում 4-րդ բանակի կոմիսարի պաշտոնում։ Մանրամասն. տես Լենինի յերկ., VI հատ., ռուս. 2-րդ հրատ., էջ 467։

Վ. Դ. Բոնչ-Բրուևիչ (ծն. 1873) — բոլշևիկ։ Բանվորական շարժմանը սկսում է մասնակցել 90-ական թվականների սկզբից, աշխատակցում է «Աշխատանքի ազատագրման» խմբակի արտասահմանյան հրատ., հրատարակում էր „Рассвет" ս.-դ. լրագիրը աղանդավորների համար, 1904 թ. կազմակերպում է բոլշևիկյան անլեգալ գրականության հրատարակչություն Վ. Ի. Լենինի և Վ. Դ. Բ.-Բրուևիչի ֆիրմայի տակ։ Հետագայում ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բոլշևիկների հրատարակչական գործունեության մեջ Ռուսաստանում („Звезда"-յի և „Правда"-յի հրատ. և այլն)։ 1917 թ. հոկտեմբերից հետո աշխատում է Ժողկոմխորհի գործերի կառավարչի պաշտոնով։ Մանրամասն. տես Լենինի յերկեր, հատ. VI, ռուս. 2-րդ հրատ., էջ 454—455։

79

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[1908 թ. ապրիլ ամսի յերկրորդ կեսը] [1] *[Ժընև]*

Թանգագին Մանյաշա,

Հուսով եմ, որ այժմ դու ինքդ էլ արդեն կարող ես կարդալ և որ դու դրեթե առողջ ես։ Այդ քո չափազանց յերկար հիվանդությունից հոգնել, յերևի, դուրս յեկավ։ Իսկ գլխավորն այն է, որ կրկնություններ չլինեն։ Այդ՝ հիվանդությունից հետո ամենավտանգավորը կլիներ, յեթե դու քեզ որևէ հոգնության կամ ջղային հուզմունքների յենթարկես։ Այ, ինչ լավ կլիներ քեզ Սորրենտո[2] ուղարկել։ Յերբ լիովին առողջ կլինես, կգրես ինձ մի յերկու խոսք։ Մի շաբաթով յես Իտալիա յեմ գնում։ Վերադարձին կգրեմ։

Ամուր գրկում եմ քեզ և ցանկանում, որ մի լավ կազդուրվես։

Քո Վ. Ուլյա[նով]

[1] Թվականի հիմնավորումն է՝ նամակում յեղած հիշատակությունը Իտալիա մեկնելու մասին, որտեղ (Կապրի, Գորկու մոտ) Վ. Ի. մեկնել է 1908 թ. ապրիլի յերկրորդ կեսին։ Տես Լենինի Յերկեր, հատ. XII, ռուս. 2-րդ հրատ., էջ 565։

[2] Տես 72-րդ նամակի ծանոթագրությունը։

80

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[7] 20/VI [19]08. [Ժընև]

Թանգագին մայրիկ, վաղուց է, ինչ քեզ նամակ չեմ գրել։ Վերջին անգամ, կարծեմ, մի բացիկ եմ միայն ուղարկել Լոնդոնից[1]։ Այնտեղից յեկա հիվանդ, աղիքների կատարը ստացա։ Այժմ լավացել եմ, սկսել եմ կարգին ուտել, դիետից հետո միշտ սոված եմ զգում ինձ։ Լծվել եմ աշխատանքի։

Ապրում ենք առաջվա նման։ Յեղանակները չափազանց փոփոխական են, յերբեմն շոգ, տոթ ու ամպրոպ։ Մերթ այսօրվա նման անձրև ու ցուրտ։ Կանոնավոր ամառ չի հաստատվում։

Ի՞նչպես եք դուք ապրում գյուղում։ Հուսով եմ՝ Մանյաշան բոլորովին լավացել է։ Կսպասենք նրան մեզ մոտ։ Սրտագին բարևներս Միտյային։

Ամուր գրկում եմ քեզ, թանգագինս։

Քո Վ. Ուլյանով

P. S. Ափսոս, որ Մոսկվայի փիլիսոփա հրատարակիչը[2] հրաժարվել է հրատարակել իմ գիրքը։ Յեթե կարելի յե, յես կխնդրեյի գրել Մոսկվայի ծանոթ գրականագետներից որևէ մեկին, գուցե նրանք կարողանան ճարել մի հրատարակիչ։ Յես այժմ այդ ուղղությամբ կապեր չունեմ։

Անյուտան, ասում են, սրբագրում էր իմ ագրարային գրքի[3] վերջին մամուլները։ Յես մինչև այժմ վոչ մի օրինակ չունեմ։ Իսկ ինձ համար չափազանց կարևոր է, բազմաթիվ պատճառներով, ունենալ 2-3 օրինակ, թեկուզ նրանք կազմված չլինեն[4]։ Իհարկե, յես շատ լավ եմ հասկանում, որ ուղղակի և անմիջապես պահանջել այդ ամեն կողմից անհարմար, անզգույշ, անվայել կլիներ և այլն և այլն։ Սակայն, յեթե որևէ հնարավորություն կա մասնավոր կերպով այդ գլուխ բերելու և կամ յեթե Անյուտայի մոտ կա գեթ մեկ օրինակ այդ գրքից, յես շատ կխնդրեյի ուղարկել այդ ինձ գեթ առժամանակ։ Դա ինձ չափազանց հարկավոր է հենց այժմ։ Բարևներ բոլոր մերոնցից։

Ձեր Վ. Ու[լյանով]

[1] Այդ բացիկը չի պահպանվել։ Լոնդոնում Վ. Ի. աշխատում էր Բրիտանական թանգարանում, նախապատրաստելով իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը։

[2] Խոսքն, ըստ յերևույթին, Պավել Գեորգյևիչ Դաուգեյի մասին է, որը 1906-1907 թ. թ. ռուսերեն լեզվով հրատարակեց Յոզեֆ Դիցգենի փիլիսոփայական աշխատությունները և մի շարք այլ աշխատություններ մարքսիստական փիլիսոփայությունից և հրապարակախոսությունից։ Նրա հրատարակությամբ լույս տեսավ նաև «Զորգեյի նամակագրությունը Մարքսի, Էնգելսի, Դիցգենի, Բեկկերի և այլոց հետ» Վ. Լենինի առաջաբանով։ Այդ հրատարակությունների շնորհիվ Դաուգեն պարտքերի մեջ ընկավ, որոնք նա ծածկում էր բացառապես իր առևտրական վաստակից։ Հենց այդ ֆինանսական պատճառներով Դաուգեն ստիպվեց հրաժարվել Վ. Ի.-ի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքի հրատարակումից, որը լույս տեսավ Կրումբյուգելի «Звено» հրատարակությամբ։

Պ. Գ. (ծն. 1869 թ.)—լատ. Ս.Դ.Բ.կ. հիմնադիրներից մեկն էր: Սկսած 1888 թվից մինչև 1893-ը ժող. ուսուցիչ: 1893—94 թ. թ. ակտիվ մասնակցում է գերմանական բանվորական շարժմանը: 1903 թվից հարում է բոլշևիկներին: 1905—1906 թ. թ. Կուսակցության Մասկվայի կոմիտեյին կից դասախոսների խմբակի անդամ էր: Մասնակցում է յերկու կուսակցական համագումարներին Ռիգայում (1905 և 1906):

1905 թվի ապստամբության և 1917 թվի Հոկտեմբերյան հեղաշրջման մասնակիցներից էր: Խորհրդային իշխանության հաղթանակից հետո Կարմիր Լատվիայի լուսավորության ժողկոմ: 1918 թվի հուլիսից մինչև 1920 թ. — Հողժողկոմատի Կոլեգիայի անդամ: Խորհրդային ատամնաբուժության հիմնադիրն ու ղեկավարը (տես Բժշկ. Մեծ Ենց.): Ստոմատոլոգիայի և օդոնտոլոգիայի և այլն Պետ. Ինստիտուտի կազմակերպիչը, Կոմ. Ակադեմիայի անդամ: 1892 թվից մինչև վերջին օրերս աշխատակցում է լատ. մարքսիստական մամուլին և ռուսական բոլշևիկյան լրագրերին ու հրատարակություններին: Թարգմանել է լատիշերեն Մարքսի, Ենգելսի, Լենինի և այլոց մի շարք յերկեր: Ներկայումս կոնսուլտանտ է ՀԺԿ-ում և պրոֆեսոր սոց. առողջապահության և պրոֆպաթոլոգիայի ԳԻՍՕ-յին կից: Հին բոլշևիկների ընկերության Բյուրոյի անդամ է:

[3] Տես 78-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը, ինչպես և 76-րդ նամակի 7-րդ ծանոթագրությունը:

[4] 1908 թ. օգոստոսի 24—26-ին Ժընևում տեղի ուներ Ռուսական Ս.-Դ. Բ. Կ. Կենտ. Կոմիտեյի պլենումը: Վ. Ի., դուցե, մտադիր եր ծանոթացնել ընկերներին իր այդ աշխատության հետ խորհրդակցությունից առաջ կամ նրա ժամանակ: Վ. Ի.-ի խնդիրն ըստ յերևույթին չհաջողվեց կատարել:

81

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[30/VI] 13/VII [19]08 [*Ժընև*]

Թանգագին Մանյաշա, նոր ստացա քո նամակը և Անյուտայի կցագիրը: Շատ ուրախացա լուրերի առթիվ: Չափազանց ուրախ եմ, վոր հույս կա, թե աշնանը բաց կթողնեն[1]: Սակայն իմ բավական կարևոր հարցին քո՝ Պետերբուրգի թղթակիցը մոռացել է պատասխանել:

Այն է՝ չեմ կարող, արդյոք, յես ձեռք բերել գեթ մեկ օրինակ ջարդված գրքից, միևնույն է, լինի դա կազմված թե չէ[2]: Քանի վոր աշնանը գիրքը լույս է տեսնում, ուրեմն դա անկարելի բան չի: Յես մեկ օրինակի համար պատրաստ եմ վճարել հենց այս րոպեյիս 5 և նույնիսկ 10 ռ.: Բանը այն է, վոր ինձ չափազանց անհրաժեշտ է հենց այժմ, և հենց մինչև աշուն, ծանոթացնել այդ գրքին վորոշ մարդկանց, վորոնք չեն կարող կարդալ ձեռագիրը: Յեթե յես մինչև աշուն այդ անձանց չծանոթացնեմ գրքին, յես ամեն կողմից կարող եմ շատ բան կորցնել: Ահա ուրեմն՝ քանի վոր դու ունես Պետերբուրգի հասցեն և այդ հասցեատերը քեզ պատասխանում է և մոտ է կանգնած այդ բոլորին,—շատ եմ խնդրում՝ գրել նրան և խնդրել, յեթե վորևէ հնարավորություն կա, ձեռք բերել ինձ համար մեկ օրինակ, թեկուզ կարիքի դեպքում «նվիրելով», ուր հարկն է, մի 5 ռուբլի:

Փիլիսոփայության վերաբերյալ իմ աշխատությանը մեծապես խանգարեց հիվանդությունս: Իսկ հիմա յես արդեն բոլորովին լավացել եմ և գիրքը կգրեմ անպայման:

Շատ աշխատեցի մախիստների վրա, և կարծում եմ, վոր վերլուծեցի արդեն (նույնպես և «եմպիրիոմոնիզմը») բոլոր անասելի լպիրշությունները[3]: Մ[արիա] Ի[վանով]նային[4] նամակ կուղարկեմ Պարիզ և յերաշխավորություն կտամ:

Պինդ համբուրիր իմ կողմից մայրիկին: Մեծ վողջույն իմ կողմից ամենքին: Անյուտային մոռացել եմ գրել, վոր 430 ռ[ուբլի] ստացել եմ: Առայժմ փողի կարիք չունեմ: Միտյային, Մարկին և Անյուտային, — բոլորին իմ սրտագին բարևներս:

Քո Վ. Ուլյա[նով]

P. S. *Յեթե պատահմամբ Մասկվա լինես, գնիր ինձ, խնդրեմ,* Չելպանովի *2 գիրքը՝ 1) «Ավենարիուսը և նրա դպրոցը», 2) «Իմմանենտ փիլիսոփայություն»: Մի-մի ռուբլի յե գինը: «Փիլիսոփայության և հոգեբանության խնդիրների» հրատարակություն: Այդ յերկու գրքերն էլ, իբրև պրակներ, մտնում են ընդհանուր մի սերիայի մեջ, վորը կոչվում է... կամ Ուրվագծեր և հետազոտություններ կամ ուղղակի հետազոտություններ և կամ մոնոգրաֆիաներ[5] և այլն:*

Ի՞նչպես է անցնում ձեր ամառվա հանգիստը: Մեզանում լավ յեղանակներ է անում: Զբոսնում եմ հեծանիվով: Լողանում եմ: Նադյան և Ցե[լիզավետա] Վ[ասիլյեվնա]ն ամենքին հղում են իրենց սրտագին բարևները:

[1] Տես 78-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը:

[2] Տես 80-րդ նամակի 4-րդ ծանոթագրությունը:

[3] Վ. Ի. նկատի ունի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գիրքը:

[4] Մարիա Իվանովնա Վերետեննիկովա — Վ. Ի.-ի մորաքրոջ աղջիկն է:

[5] Ժողովածուներ՝ «Փիլիսոփայական հետազոտություններ, տեսություններ և այլն, հրատ. պրոֆ. Չելպանովի խմբագրությամբ» վերնագրով: Հատ. I., պրակ 1, Չելպանով Գ. Ի.—Իմմանենտ փիլիսոփայություն, հատ. I, պրակ 2, Չելպանով Գ. Ի.—«Ավենարիուսը և նրա դպրոցը»:

82

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[27/VII] 9 *օգոս[տոսի]* 1908. [*Ժընև*]

Թանգագին Մանյաշա, ուղարկում եմ քեզ այն տեղերի նկարը, վորտեղից յես հիմա վերադարձա: Ուղևորվել եյի սարերը՝ զբոսնելու: Վատ յեղանակը խանգարեց ավելի յերկար մնալու այնտեղ: Այնուամենայնիվ, յես հրաշալի զբոսանք կատարեցի: Այժմ հույս ունեմ վերջապես մոտ մեկ ու կես ամսվա մեջ ավարտել իմ չափազանց ձգձգված աշխատությունը: Իսկ հետո միասին կզբոսնենք: Յես մեծ հույս ունեմ, վոր աշնանը դու մեզ մոտ կգաս յերկար ժամանակով: Այդպես չէ: Անպատճառ կգաս: Շատ լավ կլիներ, վոր մայրիկն էլ կարողանար գալ: Այս տարի ամառը շատ էլ լավը չի, անձրևներն ու ամպրոպները սովորականի[ց] հաճախ են լինում: Հույս ունեմ, վոր սեպտեմբերին լավ կլինի այստեղ: Ցեկեք:

Անցնելիս մեզ այցելության յեկավ Մարիա Իվանովնան: Դեսից-դենից

մինչև զրույց արինք: Յես անցյալ կիրակի օրը յերեկոյան նրա մոտ եյի: Մի յերկու օր նա մնաց Ժընևում և ճանապարհ ընկավ Իտալիա: Պարիզում քիչ մնաց՝ ընդամենը 2 շաբաթ: Առհասարակ շատ շտապ է կատարում նա իր արտասահմանյան ճանապարհորդությունը:

Պինգ-պինգ համբուրիր իմ կողմից մայրիկին:

Քո Վ. Ու[լյանով]

Մերոնք բոլորն էլ առողջ են և հղում են իրենց մեծամեծ բարևները:

P. S. Vers l'Eglise-*ն հեռու չէ* Diablerets-*ից*[2]*: Մենք քեզ հետ միասին այնտեղ չենք յեղել: Ժընևից 2 1/2 ժ[ամվա] ճանապարհ է յերկաթ[ուղով] և մ[ոտ] 4 ժամվա ճանապարհ վոտով:*

[1] *Տես նախորդ նամակի 4-րդ ծանոթագրությունը:*

[2] *Լեռնային բարձրություն է՝ Բեռնի արևմտյան Ալպերում, սահմանակից է շվեյցարական Վաադտ, Վալլիս և Բեռն կանտոններին: Նրա ամենաբարձր գագաթ՝ Դոմը հասնում է 3246 մետր բարձրության ծովի մակերևույթից:*

83

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[17] 30.]X [19]08 [*Ժընև*].

Թանգագին մայրիկ, վաղուց է, ինչ նամակ չեմ գրել քեզ: Հույս ունեյի, վոր Մանյաշան կգա և կպատմի, սակայն նրա գալը շարունակ հետաձգվում է: Լավ կլիներ, վոր նա գար այստեղի հոկտեմբերի յերկրորդ կեսին. մենք այդ ժամանակ միասին կուղևորվեյինք Իտալիա: Այդ ժամանակ յես մտադիր եմ հանգստանալ մոտ մի շաբաթ, աշխատությունս ավարտելուց հետո[1] *(վորն արդեն ավարտվելու վրա յե): 11/X-ին մի 3 օրով գնալու յեմ Բրյուսել*[2]*, իսկ հետո պիտի վերադառնամ այստեղ և մտադիր եմ գնալ Իտալիա: Ինչու Միտյան էլ չգա այստեղ: Չէ՞ վոր նա էլ կարիք ունի հանգստանալու հիվանդներին խնամելուց հետո: Իսկապես, հրավիրիր նրան էլ,— մենք հրաշալի կզբոսնեյինք միասին: Թե վոր արգելքը դրամի կողմից է, պետք է վերցնել Անյայի գրքույկով: Յես այժմ հույս ունեմ շատ վաստակելու:*

Շատ լավ կլիներ զբոսնել իտալական լճերի վրա: Այնտեղ ուշ աշնանը, ասում են, լավ է լինում: Անյուտան շուտով կգա, յերևի, քեզ մոտ, և դու այն ժամանակ ուղարկիր թե Մանյաշային և թե Միտյային:

Ամուր գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում առողջություն:

Ի՞նչպես աշուն է ձեզ մոտ գյուղում: Այստեղ վատ չի: Ամառը վատն եր, իսկ այժմ յերբեմն ուղղակի ամառվա օրեր է անում:

Մերոնք բոլորն էլ առողջ են և շատ խնդրում են իրենց կողմից բոլորին էլ բարև անել:

Քո Վ. Ու[լյանով]

[1] *Հոկտեմբերի վերջերին Վ. Ի. ավարտեց իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը՝ «Քննադատական դիտողություններ մի ռեակցիոն փիլիսոփայության մասին»: Տես Լենինի Յերկեր,* հատ. XIII, *2-րդ հրատ.:*

[2] *Վ. Ի. գնում եր Բրյուսել՝ Միջազգային Սոցիալիստական Բյուրոյի նիստին: Տես «Միջազգային Սոցիալիստական Բյուրոյի նիստը» հոդվածը Լենինի Յերկեր, հատ.* XII, *ռուս. 2-րդ հրատ., եջ 342—356: Մ. Ս. Բ. այդ նիստը առաջինն եր, վորին Վ. Ի. գործոն մասնակցություն ունեցավ:*

84

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — ՈՒԼՅԱՆՈՎՆԵՐԻՆ

[*1908 թվի ամառը*][1] [*Ժընև*]

P. S.

Մի զվարճալի ֆելիետոն կարդացի այսօր Մարսի բնակիչների մասին ըստ Lowell-*ի «Մարսը և նրա ջրանցքները» անգլիական նոր գրքի: Այդ* Lowell-*ը աստղագետ է, վոր յերկար աշխատել է հատուկ և, կարծեմ, աշխարհի լավագույն օբսերվատորիայում (Ամերիկա):*

Աշխատությունը գիտական է: Ապացուցում է, վոր Մարսի վրա բնակիչներ կան, վոր նրա ջրանցքները տեխնիկայի հրաշալիքներ են, վոր այնտեղ մարդիկ այստեղի մարդկանցից 2 2/3 անգամ մեծ են, այն էլ կնճիթավոր և ծածկված փետուրներով կամ գազանի մորթով, չորս կամ վեցոտանի: Հըմմ... Մեր հեղինակը[2] *մեզ մի քիչ խաբել է, Մարսի գեղեցկուհիներին նկարագրելով վոչ լրիվ, յերևի ըստ հետևյալ րեցեպտի՝ «մեզ համար բյուր ճշմարտություններից ավելի թանգ է մեզ վեր սլացնող խաբեությունը»...*

Լույս տեսավ Գորկու «Վերջինները» նոր պատմվածքը:

[1] *Նամակը, վորին վերաբերում է այս պոստ-սկրիպտումը, չի պահպանվել: Թվականի հիմնավորումը՝ Գորկու «Վերջինները» պատմվածքի մասին հիշատակությունը, վորը լույս տեսավ 1908 թ. մայիսի վերջերին* „Знание"*-ի 22-րդ ժողովածվի մեջ:*

[2] *Խոսքը Ա. Բոգդանովի (Ա. Ա. Մալինովսկու) և նրա «Կարմիր աստղ» ուտոպիկ վեպի մասին է, վորը լույս է տեսել 1907 թվի նոյեմբերի վերջին*

85

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[8] *21/V* [*19*]*09.* [*Պարիզ*]

Թանգագին մայրիկ,

Մեծ merci *քո ապրիլի 25-ի նամակի համար: Չափազանց ուրախացանք մենք ամենքս, տեղեկանալով, վոր դուք սարքվել եք Ղրիմում և վոր դու վերջապես փոքրիշատե կարգին կհանգստանաս: Ինչ վերաբերում է Մանյաշային, գործերն այսպես են: Նա արդեն գրվել է քննության*[1] *և այժմ յեռանդով աշխատում է: Մնում է սպասել արդյունքներին. միքանի շաբթից կպարզվի՝ հաջողությամբ կավարտի քննությունները, թե վոչ: Յես չեմ կասկածում, վոր հաջողությամբ կպսակվի ամեն ինչ, վորովհետև նա չափազանց մեծ բարեխղճությամբ է աշխատում: Այժմ նա բոլորովին առողջ է: Մերթընդմերթ մենք նրան քարշ ենք տալիս զբոսանքի — մոտ օրերս տարանք* Clamart *անտառը, Պարիզից մի քանի վերստ հեռու, վորտեղ հրաշալի օդ է:*

Խոսք չկա՝ ամենալավը կլիներ, վոր նա այս ձմեռ էլ մնար այստեղ և մենք ամենքս միասին ապրեյինք: Քննությունները վերջանան թե չէ, այդ մենք կաշխատենք գլուխ բերել: Մենք ամառը կմեկնենք հանգստանալու (մոտավորապես հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբին, կարծում եմ),—նրան մեզ հետ քարշ

կտանք,— և ապա աշնանը նա այստեղ կգա քեզ, և մենք ամենքս հրաշալի կերպով կկարգվեյինք Պարիզում։ Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում, վոր մի լավ հանգստանաս։ Մերոնք ամենքն էլ առողջ են և բարև են անում։

Քո Վ. Ուլյա[նով]

P. S. Անյուտային մեծ վողջույն։ Գիրքն [2] ստացա։ Հրատարակված է շատ լավ։ Ամենքը դանդաղում են միայն գնի նկատմամբ (2 ռ. 60 կոպ.), սակայն այդ արդեն, լերևի, հրատարակչի մեղքն է։

[1] Քննություն Սորբոննում՝ ֆրանսերենի ուսուցչուհու կոչում ստանալու համար։

[2] 1909 թ. գարնանը լույս տեսավ Վ. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը։ Քննադատական դիտողություններ մի ռեակցիոն փիլիսոփայության մասին։ Մոսկվա, «Звено»-յի հրատ.։

86

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Դ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԻՆ

Հասցես Mr. Wl. Oulianoff. 24. Rue Beaunier. 24. Paris (XIV). Ֆրանսիա.

[1909 թ. հունիսի—հուլիսի սկիզբը[1]. Պարիզ]

Թանգագին Միտյա, Մանյաշան արդեն գրել է քեզ իր հիվանդության մասին։ Ուզում եմ ես էլ խորհրդակցել։ Բժիշկները նրա մոտ գտել են կույր աղիքի ընձյուղի բորբոքում (ապենդիցիտ, կարծեմ, այդպես է)։ Հարցրի այստեղի մի շատ լավ վիրաբույժի։ Հաստատում է՝ ապենդիցիտ է։ Խորհուրդ է տալիս վիրահատել։ Բոլորն ասում են, վոր անվտանգ է և արմատապես բուժում է։

Այդ վիրաբույժին բոլորը գովում են (Dr. Dubouchez)։ Մոտ օրերս (նույն) վիրահատությունն արեց բարեկամիս կնոջը—հրաշալի. մի թեյի գդալ արյուն. 8 օրից սկսեց վեր կենալ։ Լավ հիվանդանոց է։

Ցավը այժմ սաստիկ չէ։ Ջերմության բարձրացում չկա։ Ցավերը շատ էլ ուժեղ չեն։ Խնդրում եմ քեզ անհապաղ ինձ պատասխանել. ես հակվում եմ դեպի վիրահատությունը, սակայն առանց քո խորհրդի վախենում եմ վճռել։ Պատասխանիր անհապաղ։

Վոր վիրահատությունն այստեղ լավ կանեն, այդ անկասկած է։ Մեկնել վորևէ տեղ նախքան վիրահատությունը՝ բժիշկը խորհուրդ չի տալիս։

Մայրիկին չեմ գրում, վորովհետև չեմ ուզում զուր տեղը նրան վախեցնել։ Վոչ մի վտանգ. Մանյաշան նույնիսկ պառկած չէ միշտ։ Անյուտային էլ չեմ գրում, վորովհետև մայրիկը կարող է կարդալ։

Գրիր, խնդրեմ, Մարկին և—նրա միջոցով—(յեթե կարելի յե այնպես, վոր մայրիկին չվախեցնեն)—Անյուտային։ Սակայն գերադասելի յե, գուցե, դրանց բնավ չգրել, վորովհետև նրանք կվախենան։

Ուրեմն՝ սպասում եմ պատասխանիդ. խորհուրդ են տալիս շտապեցնել վիրահատությունն այստեղ։ Դու էլ, արդյոք, խորհուրդ ես տալիս։

Սեղմում եմ ձեռքդ։ Քո Վ. Ուլյանով

[1] Նամակը թվական չունի։ Վերաբերում է 1909 թ. հունիս-հուլիսի սկզբին, երբ Մ. Ի. Ուլյանովան հիվանդ էր ապենդիցիտով։

87

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Հասցես՝ Mr. Wl. Oulianoff. 4. Rue Marie Rose. 4. Paris. XIV.

[6] 19/VII [19]09. [Պարիզ]

Թանգագին մայրիկ, այսօր ստացա քո բացիկը Ղրիմի տեսարանով (բացիկը դրած էր ծրարի մեջ, վորի մեկ անկյունը կտրած էր. այդ մեզ շատ զարմացրեց. դու ես արել այդ, թե այստեղ փոստում)։

Դու հարցնում ես փողի մասին Մանյաշայի համար։ Յես պատասխանեցի քեզ քո նախորդ նամակին, բայց վոչ իսկույն (մենք այդ ժամանակ նոր բնակարան եյինք տեղափոխվում), այնպես վոր քո բացիկը և իմ պատասխանը տարազատվել են։

Յես առաջարկել եմ փող Մանյաշային. յես փող ունեմ։ Նա կտրականապես մերժում է վերցնել. ասում է, թե պետք չէ իրեն, և ցույց է տալիս, վոր 70 ֆրանկ ունի։

Հանգստանալու մենք գնում ենք Բրետան[1],— յերևի, այս շաբաթ որը Ց[ելլիզավետա] Վ[ասիլյեվնան] արդեն մեկնել է այնտեղ։ Մանյաշան արագորեն լավանում է, այժմ յես կարող եմ պատմել քեզ այն, ինչ վոր յեղել է։ Նա ապենդիցիտ ուներ, այսինքն՝ կույր աղիքի ընձյուղի բորբոքում։ Ժամանակին միջոցներ ձեռք առնելու դեպքում այդ հիվանդությունը բնավ վտանգավոր չի և արմատապես բուժվում է վիրահատությամբ։ Խորհրդակցելով Միտյայի և այստեղի լավագույն բժիշկների հետ, մենք վճռեցինք իսկույն վիրահատություն անել։ Մի շաբաթով Մանյաշային տեղափոխեցինք վիրաբուժական (շատ լավ) հիվանդանոց։ Վիրահատությունը շատ հաջող կատարեցին. մի շաբաթից Մանյաշան արդեն դուրս յեկավ հիվանդանոցից, և հիմա յերրորդ որն է, վոր նա մեզ մոտ տանն է։ Արդեն ման է գալիս և ամեն ինչ ուտում է։ Կազդուրումն ընթանում է արագությամբ։ Ընձյուղը հեռացնելուց հետո տրամադրությունը միանգամայն լավացավ։ Շաբաթվա վերջին նրան կարելի կլինի յերկաթ[ուղով] գնալ, և մենք միասին մտադիր ենք ուղևորվել Բրետան։

Այսպես ուրեմն, կարող ես բոլորովին հանգիստ լինել։ Այդ լավ է, վոր այստեղ վիրահատություն արեցին Մանյաշային, վորովհետև վիրաբույժներն այստեղ հրաշալի յեն։ Քրոնիկական ապենդիցիտը յերկար տանջում էր և դեռ կտանջեր նրան, յեթե վիրահատություն չանեյինք։ Այժմ կատարելապես առողջ է։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում առողջություն։ Մի նեղանար, վոր անմիջապես չգրեցի քեզ Մանյաշայի մասին։

Քո Վ. Ուլյանով

P. S. Բոլոր մերոնք ղրկում են իրենց բարևները։

[1] Վ. Ի.-ն Ն. Կ.-ի հետ, ինչպես և Մ. Ի. հետ, այդ ժամանակ հանգստանալու ուղևորվեցին վոչ Բրետան, այլ Bonbon գյուղաքաղաքը Պարիզի մոտ

88

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

ՆԳԱ Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. Դեվիչյե Պոլե, Բոժենինսկի նրբանցք, տ. Դավիդովի, բնակ. 4. Russie. Moscou. *Մոսկվա։*

[22/X] 4/XI [19]09. [Փարիզ]

Թանկագին մայրիկ,

Այս օրերս ստացա Մանյաշայի նամակը նոր հասցեյով։ Ի՞նչպես եք սարքվել նոր բնակարանում։ Տաք է արդյոք բնակարանը։ Ինչ վերաբերում է մեզ, մեր՝ վառելիքով բնակարանը դուրս յեկավ նույնիսկ չափազանց տաք. պետք է ասել՝ յեղանակն այստեղ մինչև այժմ շատ տաք է։ Լավ է արել Մանյաշան, որ այցելել է հմուտ բժշկի, այժմ արդեն հարկավոր է, որ նա ամենախիստ կերպով կատարի բժշկի խորհուրդները։

«Россия»-ն [1] *ստացա։ Մեծ շնորհակալություն։ Ստացա նույնպես լուրեր պատմաբանից, որն, ըստ յերևույթին, փուտյարային մարդ է։ Ափսոս, որ պատրաստվում է գրել տխմարություններ։ Ինչպես յերևում է, նա այն մարդկանցից է, որից պետք է ձեռք քաշել* [2]։

Վաղը գնում եմ Բրյուսսել [3], *այնտեղ կմնամ մեկ օր։ Անյուտային արդեն պատասխանը գրել եմ Սարատով, այն հաշվով, որ նա արդեն այնտեղ է։*

Պինդ գրկում եմ քեզ, թանկագինս, և ամենամեծ բարևներս հղում Մանյաշային և Միտյային։ Մերոնք բոլորը նույնպես։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Խոսքը, յերևի, Պետ. Դումայի հաշվետվությունները պարունակող լրագրական № №-ի մասին է։ Այդ ժամանակամիջոցում (նոյեմբերի կեսին) Պետ. Դումայում քննարկվում էր հողաշինարարության վերաբերյալ օրինագիծը։

[2] Մ. Գորկուն ուղղված նամակում (23) 1913 թ. հունվարին Ի. Ի. Սկվորցով-Ստեպանովի հետ ունեցած իր նամակագրության առթիվ Վ. Ի. գրում է հետևյալը. «Ահավասիկ, Դուք հարցնում եք (Ի. Ի.) Ստեպանովի մասին։ Իսկ ինչպիսի մարդ դուրս յեկավ նա (թեև պետք է ասել, լավ տղա յե, աշխատող, գիտուն և այլն) քայքայման ու տատանումների շրջանում (1908—1911)։ Ուզում էր հաշտեցնել վպերյոդականների հետ։ Սակայն չէ՞ որ դա նշանակում է, որ նա ինքն էլ էր տատանվում։

Գրում էր ինձ նամակներ, որ Ռուսաստանում դեմոկրատական հեղափոխության վրա պետք է խաչ դնել, որ մեզանում առանց հեղափոխության գործերը կընթանան այնպես, ինչպես Ավստրիայում։ Ցես նրան այդ լպիրշությունների համար լիկվիդատոր անունը շպրտեցի։ Նեղացավ...» («Լենին. ժողովածու» I, ռուս. հրատ., էջ 130)։

Ի. Ի. Սկվորցով-Ստեպանովի և Վ. Ի.-ի միջև այդ ժամանակաշրջանի նամակագրությունից պահպանվել է, ըստ յերևույթին, Վ. Ի.-ի մեկ նամակը միայն։ Տես Լենինի Յերկեր, XIV հատ., ռուս. 2-րդ հրատ., էջ 212—216։

[3] Նոյեմբերի 7-ին Վ. Ի. ներկա յեր Միջազգային Սոցիալիստական Բյուրոյի նիստին։ Նա քվեարկեց հօգուտ նրա, որ հոլանդական ձախ սոց.-դեմ. կուսակցության տրիբունիստներին թույլատրվի մասնակցել Ինտերնացիոնալի կոնգրեսին։

89

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Դեվիչյե Պոլե, Բոժենինսկի նրբանցք, տ. Դավիդովի, բնակ. 4. Russie. Moscou. *Մոսկվա.*

[20—21.XI/3-4.XII.1909 թ.][1]. [Փարիզ]

Թանկագին Մանյաշա, այսօր ստացա „Утро Рос[сии]“*-ի №-ը, որտեղ զետեղված են գռեհիկ տխմարություններ Գորկու մասին*[2]*։ Ահավասիկ միքանի օր է, ինչ միքանի լրագրեր Փարիզում* (L'Eclair) *և Բեռլինում* (Berl[iner] Tageblatt) *վարժվում են նույն տեսակի սուտ տարածելով։ Մոտ օրերս* Vorwärts*-ից նրանք ստացան այդ լիակատար սուտի մի լավագույն հերքում, որտեղ շատ արդարացի կերպով ցույց էր տված և խիստ սրամտորեն պատմած, թե որպիսի կատարյալ անհեթեթություն և հերյուրանք է այդ բոլորը։ Մի ինչ-որ հիմարի մեկը «լսել է ձայն, և չի հասկացել՝ որտեղից է այն» և ամեն ինչ խեղաթյուրել է՝ հատ ու կտոր լսած կարծիքներ օտզովիզմի, դպրոցի, փիլիսոփայության մասին և այլն և այլն։* „Утро России“*-ն, յերևի, մի ամբողջովին սրիկայական թերթուկ է, որն «ինտերվյու» յե հնարում—միայն թե ավելի բորբոքի։ Այսօր* „Речь“*-ն էլ է, ասենք, սկսել վարժվել նույն բամբասանքը թխելու մեջ։ Ուրախ են կադետները, որ առիթ կա սուտ փչելու և բամբասելու։*

Դու ինչպես ես։ Առողջ է մայրիկը։ Վաղուց է, ինչ ձեզնից լուր չունենք։ Գրիր մի կերպ՝ ինչպես եք սարքվել, ինչպես եք ապրում, ինչպես է Միտյան։ Մեզանում ամեն ինչ առաջվա նման է։ Ձմեռը մոտենում է, հաճախում եմ գրադարան։ Բնակարանը տաք է։ Ցե[լիզավետա] Վ[ասիլյեվնա]ն մի քիչ տկար է։ Նադյան մեծ յեռանդով զբաղվում է ֆրանսերենով։

Ամուր սեղմում եմ ձեռքդ և բազում անգամ համբուրում մայրիկին։

Քո Վ. Ու[լյանով]

P. S. *Ստացե՞լ ես պատասխանը պատմաբանին*[3]*։ Ինչ վերաբերում է Սաբլինում գտնվող իմ գրքերին, լավ կլիներ, յեթե առիթ լինի, խնդրեյիր Պիտերի բարեկամներից որևէ մեկին, որ այստեղ ուղարկեն յեթե ոչ բոլորը, գեթ այն ամենը, ինչ կա Մարքսից և Էնգելսից և լավագույն կլասիկներից։*

[1] Ժամանակը որոշվում է փոստի դրոշմից՝ «Մոսկվա 25/XI 1909 թ.»։

[2] „Утро России“-ի 1909 թ. № 1 (34)-ում զետեղված էր հաղորդագրություն հետևյալ վերնագրով. «Մ. Գորկու վտարումը ս.-դ. կուսակցությունից», որի մեջ ասված էր, թե Մ. Գորկին վտարվել է սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից և որ «վտարումը պատճառաբանված է գրողի բուրժուական հակումներով»։ № 2 (35)-ում այդ նյութին „Утро России“-ի էջերում նվիրված էր արդեն միքանի սյունակ, բարձրագոչ վերնագրով՝ «Մաքսիմ Գորկու հրաժարեցումը» և խոշոր շրիֆտով շարված յենթավերնագրով։ «Ի՞նչ էր վտարման պատճառը» վերտառությունը կրող՝ Բագիրի ստորագրությամբ հոդվածում անհերքելի տոնով դիտողություններ էյին կուտակված Կապրիի դպրոցի, օտզովիզմի և էմպիրիոկրիտիցիզմի մասին և այդ բոլորը ծայրահեղ քաղքենի մեկնաբանությամբ. այնուհետև բերվում է «ինտերվյուն» «Մոսկվայի ականավոր փաստաբաններից մեկի, բոլշևիկի, սոցիալ-դեմոկրատական գեներալի հետ, որը մի անգամ չէ պատգամավոր յեղել կուսակցական համագումարներում»։ Այդ, ան-

շուշտ, հնարած ինտերվյուն ավելի մեծ անամոթությամբ տարածվում էր այն վերաբերմունքի շուրջը, որ իբր թե ունեն կուսակցության վերին խավերը Գորկու հանդեպ, «վտարման» պատճառների մասին և այլն։

№ 5 (38)-ում զետեղված էր Ա. Պ. Չեխովի կարծիքը Գորկու մասին (ինտերվյու գեղարվեստական թատրոնի ռեժիսոր Լ. Ա. Սուլերժիցկու հետ)։ № 6 (39)-ում, ֆելիետոն՝ «Գորկու դատը (Սոցիալ-դեմոկրատական գործողություն)» Ալ-դ՛Որ-ի ստորագրությամբ։

Այդ սենսացիոն հաղորդագրության կրկներգերը տեղ գտան նաև „Речь"-ում (№ 317—18/XI 1909 թ.) — «Գորկու վտարումը սոց.-դեմ. կուսակցությունից», որտեղ, ճիշտ է, վերապահություն էր արվում, որ «մեզ հայտնի չէ, արդյոք կայացե՞լ է արդեն Կենտկոմի վորոշում վտարման մասին...», սակայն ավելացվում էր, որ «անկասկած, վտարվելու մասին խոսակցություններ տեղի յեն ունեցել»։

№ 318-ում (2/XII 1909 թ.)—«Վերստին Գորկու վտարման մասին սոց.-դեմ. կուսակցությունից» հոդվածում գրողին, ի միջի այլոց, ցավակցություն էր հայտնվում։

„Русское слово"-ն № 264-ում (30/17/XI 1909 թ.) Պարիզից սխալական թղթակցի հեռագիր էր հրատարակել «Մաքսիմ Գորկի» վերնագրով, վորտեղ վտարման մասին լուրերը վաղաժամ եյին ճանաչվում, բայց ըստ եյության չեյին հերքվում, և այն համոզմունքն էր հայտնվում, որ կոնֆլիկտը կհարթվի։

„Новое время"-ն № 12 (107)-ում—(7/XII/24/XI 1909) տպագրել էր Պ. Պերցովի հոդվածը՝ «Գորկին՝ բուրժույ» վերնագրով։

Այս բամբասանքին արձագանքեցին և ոտարերկրյա բուրժուական «L'Eclair» և «Berl. Tageblatt» լրագրերը։

«Vorwärts»-ում (№ 281) զետեղված էր հետևյալ հաղորդագրությունը

ՍԵՆՍԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սոց.-դեմ. կուսակցության Կենտրոնական Կոմիտեյին մոտիկ շրջաններից մեզ գրում են.

«Berliner Tageblatt»-ը տպագրել է սենսացիոն հեռագիր «Գորկու վտարումը սոց.-դեմ. կուսակցությունից» վերնագրով։ Թղթակիցն իբրև թե արժանահավատ աղբյուրներից տեղեկություն է ստացել, որ անցյալ շաբաթ օրը Գորկին պոլեմիկայի համար (!) ս.-դ. կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի՝ Պարիզում հանած վորոշումով վտարված է կուսակցությունից։

Քանի որ վողջ բուրժուական մամուլը յերևի ագահությամբ ձեռները կմեկնի դեպի այդ համեղ պատառը, պետք է հայտնել ի գիտություն բոլորի, վոր այդ ամբողջ պատմությունը սկզբից մինչև վերջ հնարված է յեվ վոր դրա մեջ մազաչափ ճշմարտություն չկա։ Վոչ «պոլեմիկա» յե ունեցել Գորկին կուսակցության հետ, վոչ հարց է ծագել առհասարակ նրան կուսակցական դատի հանձնելու մասին, վոչ էլ իրավունք ունի Կենտրոնական Կոմիտեն վտարելու կուսակցության վորևե անդամին, վոչ էլ յերբևիցե կուսակցության ղեկավար շրջաններում խոսակցություն է յեղել վորևե առիթով Գորկու դեմ հանդես գալու մասին։

Ցեթե Գորկու և կուսակցության միջև գուցե և գոյություն ունեն—ինչպես այդ տեղի ունի նրա միքանի ընկերների վերաբերմամբ—տակտիկական տարաձայնություններ Դումայի ֆրակցիայի գործունեյությունը գնահատելու

հարցում, — յես գուցե յեմ ասում, վորովհետև ինքը Գորկին մինչև այժմ վոչ մի անգամ չի արտահայտվել կուսակցությանը հուզող այդ հարցի մասին,—ուստի և վտարման և նման սարսափների մասին այդ առթիվ միայն կարող էր հղանալ մի ուղեղում, վորի մեջ մտածելու ամեն մի ընդունակություն դադարում է հենց վոր խոսք է ծագում սոցիալիստական կուսակցության մասին։

Սակայն ամենայն հավանականությամբ այդ բաղը դուրս է թռել բոլորովին այլ բնից և շատ փոքր առընչություն ունի սոցիալ-դեմոկրատների մեջ յեղած տարաձայնությունների հետ։ Այս գործը, իրոք վոր, մի պիկանտ կողմ ունի, վորի մասին արժի այստեղ հիշատակել ընթերցողին զվարճացնելու համար։ Ցեթե «B. T.-ի» թղթակիցը մի հասարակ դոհ չէ վորևե հանաքչու ձեռքին ռուս ընկերների շրջանից,—ապա նա, ամենայն հավանականությամբ, մի փոքր սխալ է թույլ տվել. այն է՝ համաշխարհային հռչակ ունեցող Գորկուն շփոթել է մի տխրահռչակ Գերցիկի հետ, վորը մեղադրվում է պրովոկացիայի մեջ և վորը, չնայած արդարացվել էր ժընևյում ռուսական սոց.-դեմոկրատական մի խմբակի կողմից, ապացույցների պակասության պատճառով, պահանջել է վերանայել, և այդ գործը ներկայումս իրոք վոր քննվում է կուսակցական դատարանում Պարիզում։ Ցեվ շատ հավանական է, վոր այն դառը վիճակը, վոր «B. T.» վերագրել է մեծ գրողին, ընկել է վերոհիշյալ Գերցիկին,—թեև այդ առթիվ մենք դեռ վոչինչ վորոշակի ասել չենք կարող։

Վ. Ի. այդ առթիվ մի փոքրիկ հոդված գրեց, վոր զետեղվեց «Пролетарий»-ի № 50-ում (11/XII 1909) հետևյալ վերնագրով՝

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԳՈՐԿՈՒ ՎՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ահավասիկ միքանի որ է, ինչ բուրժուական լրագրերը Ֆրանսիայում («L' Eclair», «Le Radikal»), Գերմանիայում («Berliner Tageblatt») և Ռուսաստանում («Утро России», «Речь», «Русское слово», «Новое время») մի առանձին ախորժակով են ծամծմում ամենասենսացիոն նորությունը՝ Գորկու վտարումը սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից։ «Vorwärts»-ն արդեն զետեղեց այդ անհեթեթության հերքումը։ «Пролетарий»-ի խմբագրությունը նույնպես հերքում ուղարկեց միքանի լրագրերի, սակայն բուրժուական մամուլն անտես է առնում այդ և շարունակում է ուռցնել բամբասանքը։ Այդ բամբասանքի աղբյուրը պարզ է. մի աննշան գրչակի մեկը, վոր ականջի ծայրով լսել է ոտզովիզմի և աստվածաշինարարության հետ կապված տարաձայնությունների մասին (մի հարց, որ գրեթե արդեն մեկ տարի բացահայտ քննության առարկա յե կուսակցության մեջ ընդհանրապես և «Пролетарий»-ում մասնավորապես), չտեսնված կերպով այլանդակել է հատուկտոր լսած տեղեկությունները և «կարգին վաստակել» շարադրելով «ինտերվյու»-ներ և այլն։

Բամբասանքային կամպանիայի նպատակն էլ պակաս պարզ չէ։ Բուրժուական կուսակցությունները կուզենային, վոր Գորկին դուրս գար սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից։ Բուրժուական լրագրերը կաշվից դուրս են գալիս, վորպեսզի բորբոքեն սոց.-դեմ. կուսակցության մեջ գոյություն ունեցող տարաձայնությունները և դրանք պատկերացնեն այլանդակ ձևով։

Իզուր են ջանք թափում բուրժուական լրագրերը։ Ընկեր Գորկին իր մեծ գեղարվեստական յերկերով չափազանց ամուր է կապել իրեն Ռուսաստանի

և համայն աշխարհի բանվորական շարժման հետ, վորպեսզի նա մի այլ պատասխան տա, բացի արհամարհանքից (Տես Լենինի Յերկերը, XIV հատ., ռուս. 2-րդ հրատ., եջ 211)։

3 Ի. Ի. Սկվորցով-Ստեպանով։

90

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. Դեվիչյե Պոլե, Բոժենինսկի նրբանցք, տ. Դավիդովի, բնակ. № 4. Մոսկվա. Russie. Moscou.

[1909 *թ. նոյեմբերի վերջերը—դեկտեմբերի սկիզբը*][1]

Թանգագին մայրիկ, ստացա քո և Մանյայի նամակը։ Մեծ merci դրա համար։ Այսոր յես ստացա Մանյայի նաև յերկրորդ նամակը՝ հաճելի լուրով, վոր հարկ չկա ինձ համար յերկրորդ անգամ գրելու ծանոթին։ Անհանգստացնում է ինձ, վոր ցուրտ բնակարան ունեք. ձմեռը ինչ պիտի լինի, յեթե այժմ ջերմությունը 12 աստիճանից ավելի չէ։ Վախենում եմ մրսեք։ Չի՞ կարելի, արդյոք, վորեւե միջոց ձեռք առնել. գուցե լավ կլիներ մի փոքրիկ յերկաթե վառարան դնել, այստեղ հաճախ այդպես են անում (մենք կարիք չունենք, մենք շոգով ջեռուցում ունենք և շատ տաք է). մենք էլ Սիբիրում այդպես էյինք անում։ Այստեղ գոնե մինչ այժմ շատ ցուրտ չի արել, սակայն ձմեռը դեռ նոր է սկսվել։

Մանյաշային շատ-շատ շնորհակալ եմ հաղորդած լուրերի համար։ Թե վոր հարմար դեպք ներկայանա, յես կխնդրեյի նրան ճարել ինձ համար Մոսկվայի նոր գ[յուղա]տ[նտեսական] վիճակագրությունը (1907—09 թ. թ.) և տեղեկանալ (գոնե խանութում), թե ինչ արժի «Հողաշինարարական հանձնաժողովների տեղեկագիրը»[2]. վոչ մի կերպ չի հաջողվում ծանոթներիս միջոցով ձեռք բերել այդ հրատարակությունը, իսկ դա ինձ պետք է։

Պինդ գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում առողջություն։ Մանյաշային ամենամեծ վողջույն թե ինձնից և թե բոլոր մերոնցից։

Քո Վ. Ու[լյանով]

1 Գրելու ժամկանի հիմնավորումը. հաջորդ՝ 1909 թ. դեկտեմբերի 10-11-ի նամակում հիշատակվում է «Հողաշինարարական հանձնաժողովների տեղեկագիր» հրատարակությունը, «վորի մասին,—գրում է Վ. Ի.,—յես անցյալ անգամ գրել եյի»։

2 «Գավառական հողաշինարարական հանձնաժողովների գործունեյության տեսություն» (1907—1908 թ. թ.) ՍՊԲ. 1909 թ. (Հողաշինարարության և յերկրագործության գլխավոր վարչություն։ Պետական հողային գույքերի դեպարտամենտ)

91

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Դեվիչյե պոլե, Բոժենինսկի նրբանցք, տ. Դավիդովի, բնակ. 4. Russie. Moscou. *Մոսկվա։*

[25—XI|8—XII. 1909]. [*Պարիզ*][1]

Թանգագին Մանյաշա, պատահաբար տեղեկացա մոտ որերս, վոր Ծննդյան

տոներին Մոսկվայում վիճակագրագետների համագումար պիտի կայանա կամ ավելի ճիշտ՝ բժիշկների և բնագետների համագումարի բաժիններից մեկը կլինի վիճակագրագետների համագումարը[2]։ Մի-յերկու ծանոթիս անունը յես արդեն լսել եմ, վորոնք այնտեղ կլինեն (մեկը Մոսկվայից, մյուսը՝ պրովինցիայից). կասկած չկա, ծանոթներից այնտեղ կլինեն վոչ յերկու, այլ ավելի։ Չափազանց կարեւոր է օգտվել դրանից՝ ինձ համար զեմստվային-վիճակագր[ական] հրատարակություններ ձեռք բերելու նպատակով։ Շատ եմ խնդրում քեզ գեթ մեկ ծանոթ վիճակագրագետ գտնել համագումարում, հաղորդել նրան իմ հասցեն և խնդիրը, վոր նա ուղարկի ինձ զեմստվային վիճակագր[ական] հրատարակությունները՝ 1) գյուղացիական և հողատիրական տնտեսության վերաբերյալ,— մանավանդ ընթացիկ վիճակագրությունը և ցուցակագրությունն ըստ ծխերի, 2) տնայնագործների և արդյունաբերության վերաբերյալ, 3) 9. XI. 06-ի որենքի[3] և բաժնեհողերի բաշխման վերաբերյալ։ Հասցեն, կարծում եմ, կարող ես ուղղակի իմը տալ։ Յեթե ասեն, վոր արտասահման ուղարկել անհնար է, այդ դեպքում տուր, խնդրեմ, քո հասցեն, և յես քեզ փող կփոխադրեմ, վոր դու ինձ ուղարկես այդ վիճակագրությունը։ Այդ ինձ անհրաժեշտորեն հարկավոր է։ Յեթե օգտակար լինի, յես կարող եմ գրել մի կարճ դիմում-խնդիրք վիճակագրագետներին (կցում եմ այն, համենայն դեպս, վարվիր քո հայեցողությամբ)[4], վորպեսզի ծանոթ վիճակագրագետները կարողանան բաժանել այդ (կամ ցույց տալ) ուրիշ քաղաքների վիճակագրագետներին, իրենց կողմից ավելացնելով խնդիրք (և կամ աշխատելով համաձայնություն ստանալ հրատարակություններն ուղարկելու մասին)։

Գրիր ինձ, խնդրեմ, գտե՞լ ես արդյոք մեկին, վորի միջոցով այդ կարելի յե անել։ Յեթե վոչ, յես քեզ ելի կգրեմ։

Այն հրատարակությունը, վորի մասին անցյալ անգամ յես քեզ գրեցի, կոչվում է, կարծեմ, վոչ թե «Հողաշինարար[ական] հանձն[աժող]ովների տեղեկագիր»[5] (թեև յես լսել եմ, վոր այդպիսի հրատարակություն էլ կա), այլ Ներք[ին] գո[րծերի] մինիստր[ության][6] Զեմստվային բաժնի Տեղեկագիր։ Չունե՞ք արդյոք մի ծանոթ ատենանավոր, վորի միջոցով ձեռք բերենք այս բանը։

Պինդ սեղմում եմ ձեռքդ և համբուրում մայրիկին։

Քո Վ. Ու[լյանով]

1 Նամակն անթվակիր է. գրված է նա ըստ յերևույթին «դիմում-խնդիրքի» հետ միաժամանակ, այն է՝ դեկտեմբերի 9-ին. տես 4-րդ ծանոթագրությունը

2 Բնագետների և բժիշկների XII համագումարը, վորտեղ աշխատում եր նաև վիճակագրագետների յենթասեկցիան, կայացավ Մոսկվայում 1909 թ. 28/XII մինչև 1910 թ. 6/I։

3 Ստոլիպինյան ռեֆորմը, վոր հանգում եր ճորտատեր-կալվածատերերի տնտեսական և քաղաքական դերակշռության պահպանմանը։ Ռեֆորմը թույլ եր տալիս համայնքի գյուղացիներին ամրացնել իրենց վրա բաժնեհողերն իբրև սեփականություն, վորպիսի հանգամանքը նպաստեց կուլակային տնտեսությունների ստեղծման։

4 Այդ դիմում-խնդիրքը չի պահպանվել։ Նրա պատճենները հանձնվել և ուղարկվել եյին վիճակագրագետներին, իսկ բնագիրը բռնագրավվել եր Մ. Ի. Ուլյանովայից 1909 թվի խուզարկության ժամանակ։ Այն մեջ ենք բերում Մոսկվայի ժանդարմական վարչության գործից (գործ Մ. Ի. Ուլյանովայի—1906—1909), վոր պահվում է Ցենտրոարխիվում։

Այդ խուզարկության ժամանակ բռնագրավված իրերի մեջ հիշատակվում են՝ «7 թերթ ընդօրինակման թղթից, որի վրա կա հետևյալ տեքստը.

«Վ. Իլյինը, աշխատելով իր յերկի շարունակության վրա՝ Ռուսաստանի ագրարային հարցի մասին ընդհանրապես և գյուղատնտեսական կապիտալիզմի մասին մասնավորապես, թախանձագին խնդրում է զեմստվային, քաղաքային և կառավարական հիմնարկների վիճակագիրներին ուղարկել իրեն վիճակագրական տեղեկություններ և այլն»:

Պարիզ 9/XII. Վ. Ուլյանով.

[5] Տես 90-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը:

[6] «Զեմստվային բաժնի տեղեկագիր»—ամսագիր էր Հրատ. Ներքին գործոց մինիստրության: Լույս էր տեսնում 1904 թվից մինչև 1917 թ.:

92

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[1909 թվի վերջը կամ 1910 թվի սկիզբը] [1]. [Պարիզ]

Թանկագին Մանյաշա. ստացա քո բացիկը, merci հաղորդած լուրերի համար: Հեծանվի մասին յես կարծում եյի, որ շուտով վարձատրություն կստանամ, սակայն գործը ձգձգվեց: Դատ եմ վարում, հույս ունեմ գործը տանելու: Յես գալիս եյի Ժյուվիզից [2], և ավտոմոբիլը ջարդեց իմ հեծանիվը (յես ժամանակին վայր թռա): Մարդիկ օգնեցին ինձ գրելու №-ը, տվեցին վկաներ: Յես ճանաչեցի ավտոմոբիլի տիրոջը (վիկոնտ էր, գրողը նրան տանի) և այժմ դատ եմ բացել նրա դեմ (փաստաբանի միջոցով): Ասենք, միևնույն է, յես՝ այժմ կարիք չեյի ունենալու հեծանվի. ցուրտ է (թեև լավ ձմեռ է, ոտքով զբոսանքներ կատարելու համար՝ հրաշալի յեղանակ):

Կցում եմ հողաշինարարության վերաբերյալ ինձ չափազանց անհրաժեշտ յերկու ճշգրիտ գրքի անունները: Հաջողվե՞ց արդյոք քեզ գտնել որևէ մարդ, որ կարողանա ճարել այդ գրքերը:

Պինդ սեղմում եմ ձեռքդ: Մայրիկին համբուրիր իմ կողմից: Շա՞տ է մրսում նա ձեր բնակարանում:

Քո Վ. Ու[լյանով]

1) Հողաշինարարության և յերկրագործության Գլխավոր վարչության գործունեյության տեսությունը 1907 և 1908 թ.թ.: ՍՊԲ, 1909:

2) Գավառական հողաշինարարական հանձնաժողովների գործունեյության տեսությունը (1907—1908 թ.թ.):

[Հաստատ չգիտեմ՝ յերկու առանձին բաներ են դրանք, թե միևնույն [3]:
Յեթե յերկուսն են, յերկրորդն ավելի կարևոր է ինձ համար:]

3 Հողաշինարար[ության] և յերկրագործ[ության] Գլխ[ավոր] Վարչ[ության] տարեկան հանդես: ՍՊԲ, 1908.

[1] Նամակի թվականը որոշվում է յերկու գրքերի հիշատակումով նրա մեջ, որոնց մասին խոսվել է նախորդ նամակներում:

[2] Պարիզից ոչ հեռու փոքրիկ քաղաք, որ ընկած է Որժ և Սենա գետերի միացման վայրում: Վ. Ի. գնացել էր այնտեղ նայելու ավիո-թռիչքները, որոնցով նա շատ էր հետաքրքրվում:

[3] Միևնույն բանն է: Տես 90-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը:

93

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

ՆԳՍ. Մարիա Իլյինիչնա Ուլյանովային: Դեվիչյե պոլե, Բոժենինսկի նրբանցք, տ. Դավիդովի, բնակ. 4. Russie. Moscou. Մոսկվա.

[20/XII 1909 թ.] 2/I [19]09. [1] [Պարիզ]

Թանկագին Մանյաշա, այսօր ստացա մայրիկի նամակը (ուղղված Նադյային և ինձ) և քո կցագիրը: Շատ և շատ ուրախ եմ, որ լավ եք սարքվել, որ մայրիկը գոհ է տնտեսություն չունենալուց: Հուսանք, որ ձմռան վերջը չի խաբի: Մինչև այժմ այստեղ ձմեռը, ասես, ձմեռ չի, այլ գարուն: Այսօր, օրինակ, ուղղակի գարնանային, արևոտ, չոր և ջերմ օր էր, որն օգտագործեցինք մենք Նադյայի հետ՝ առավոտյան հրաշալի զբոսանք կատարելով Բուլոնի անտառում: Առհասարակ, տոներին «լավ ման յեկանք», յեղանք թանգարաններում, թատրոնում, հաճախեցինք Musée Grevin-ը[2], որից յես շատ-շատ գոհ մնացի: Պատրաստվում եմ այսօր էլ գնալու մի զվարճալի պանդոկ՝ լսելու goguette révolutionnaire *, «յերգասացների» մոտ (chansonniers բառի անհաջող թարգմանություն): Ափսոսում եմ, որ ամառը ֆրանսացիների հետ շաղակրատելը չօգտագործեցի, որպեսզի սիստեմատիկորեն ուսումնասիրեյի ֆրանսական արտասանությունը,—իսկ այժմ, յերբ յես վերցրի Ֆոնետիկայի վերաբերյալ միքանի գիրք, տեսնում եմ, թե որչափ այդ կողմից թույլ եմ: Կցվող նամակը կարդա, խնդրեմ, և հանձնիր Ֆեոդոր Ագեսսկուն [3]: Նա ուրիշ հասցե չի տվել: Նամակը պետք է կարդաս, որ գիտենաս իմ ուզածը: Մոսկ[վայի] Քաղ[աքային] վիճակագր[ությու]նը ստացա և մեծ շնորհակալություն եմ հայտնում: Խնդրեմ ուղարկիր ինձ Մոսկ[վայի] քաղաք[ային] վիճակագ[ր]ությ[ան]՝ վերաբերող 3 բրոշյուր՝ 1, 2 և 3 Դումայի ընտրությունների մասին: Ստացա մի նամակ էլ Ռյազանից վիճակագրության մասին. այդ հրաշալի է, ըստ յերևույթին շատերից օգնություն պիտի լինի ինձ:

Պինդ սեղմում եմ ձեռքդ և ցանկանում քեզ, որքան կարելի յե, քիչ վազվզել, շատ հանգստանալ և առողջ լինել: Միտյային կբարևես: Մայրիկին համբուրում եմ և գրկում: Շնորհավոր Նոր Տարի:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Թվականի մեջ սխալ կա: Նամակը վերաբերում է 1910 թ. հունվարին, որովհետև 1909 թ. Մ. Ի. արտասահման էր, իսկ Մոսկվա վերադարձավ միայն 1909 թ. աշնանը:

[2] Musée Grevin-ը իրենից ներկայացնում էր մեծ նմանությամբ և հագուստների ճշտությամբ կատարված՝ մոմե ֆիգուրների գալերեյա (զանազան պատմական անձնավորությունների՝ Գամբետայի, Նապոլեոնի, թագավորական տոհմի՝ Տեմպլում և այլն): Այդ թանգարանը խորտակվեց հրդեհից:

[3] Զհաջողվեց պարզել, թե ում մասին է խոսքը:

* Հեղափոխական յերգեր, կուպլետներ: Խմբ.:

94

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Դեվիչյե պոլե, Բոժենինսկի նրբանցք. տ. Դավիդովի, բնակ. 4. Russie. Moscou. Մասկվա:

[30/XII 1909 թ.] 12/I 19[10]. [Պարիզ]

Թանգագին Մանյաշա,

Հենց այժմ ստացա քո նամակը և շտապում եմ իսկույն պատասխանել քեզ, վորովհետև յերկյուղ եմ կրում, վոր մոտ օրերս զբաղված կլինեմ [1]: Գերմանական Շվեյցարիայում յեղած մարդու [2] մասին կաշխատեմ տեղեկանքներ հավաքել: Այն դեպքում, յեթե այդ շատ կարգով է հարկավոր, հաղորդիր ճիշտ ժամկետ, թե յերբ պետք է գտնել այդ մարդուն, վորպեսզի (յեթե յես չգտնեմ) իր ժամանակին կազմակերպիչներն իրենք սկսեն փնտրել:

Վկայականը ստացա: Մեծ merci:

Անյուտային մեծ բարև կանես իմ կողմից: Մարկին նույնպես:

Մայրիկին պինդ-պինդ գրկում եմ և ցանկանում առողջություն:

Ի՞նչպես եք: Ձմեռն ինչպես է: Մեզանում տաք է: Յես սկսեցի հաճախ լինել թատրոններում, տեսա Բուրժեյի նոր պիեսը՝ «La Barricade»-ն [3]: Ռեակցիոն է, սակայն հետաքրքրական:

Պինդ սեղմում եմ ձեռքդ.

Քո Վ. Ու[լյանով]

[1] Այդ ժամանակ Պարիզում տեղի ունեցա՞ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Կենտկոմի միացյալ պլենումի նիստը, վորտեղ Վ. Ի. ընտրվեց Կենտրոնական Օրգան «Սոցիալ-դեմոկրատի» խմբագրության կազմի մեջ և Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցության ներկայացուցիչ՝ Միջազգային Սոցիալիստական Բյուրոյի մեջ:

[2] Թե ում մասին է խոսքը, պարզել չհաջողվեց:

[3] «Բարրիկադը» պիեսում Բուրժեն հանդես է գալիս իբրև բանվորական հեղափոխական շարժման կատաղի թշնամի:

95

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Դեվիչյե պոլե, Բոժենինսկի նրբ[անցք], տ. Դավիդովի, բնակ. 4. Russie. Moscou. Մասկվա:

[17—18/30—31 հունվ. 1910 թ.][1] [Պարիզ]

Թանգագին Մանյաշա, միքանի որ առաջ ստացա քո նամակը և շարունակ պատրաստվում էյի պատասխանելու: Սակայն վերջին ժամանակներս յես շատ գործով [2] էյի զբաղված և մի ազատ ժամ չէյի գտնում: Պատմաբանի [3] նամակը յես էլ ստացա և նրան կպատասխանեմ—(պատեհ առիթով հաղորդիր այդ),—իսկ այժմ (իսկույն ևեթ) չեմ կարող:

Միտյայից նամակ եմ ստացել: Շատ զարմացած եմ, վոր նրան այդպիսի դժբախտություն [4] է պատահել: Նա գրում է, վոր լավանում է, շուտով կսկսի տովորել ման գալ: Գրիր ինձ, խնդրեմ՝ ինչպես է ընթանում նրա առողջացումը: Զրկվե՞լ է արդյոք պաշտոնից, թե պաշտոնը պահել են նրան և կպահեն մինչև առողջանալը: Կկարողանա՞ առողջանալուց հետո շրջել իր ռայոնում առաջվա նման:

Անյուտայի մասին բան չես գրում, յես էլ նրանից վաղուց է, վոր մի լուր չունեմ: Ի՞նչպես հավանեցիր նոր քաղաքը [5]:

Ի՞նչպես է այժմ մայրիկի առողջությունը: Առողջացե՞լ է արդյոք ինֆլուենցայից:

Մեզանում տեղի ունեցավ (և այժմ էլ շարունակվում է) Պարիզում վաղուց չտեսնված հեղեղ: Դու յերևի լրագրերից իմացած կլինես այդ մասին: Ինձ յերկու անգամ հաջողվեց հասնել մինչև Սենա (ձիաքարշերը յերթևեկում են կրճատված մարշրուտով. մետրոներն ու ելեկտրաքարշերը կանգնած են): Սոսկալի խիստ չափազանց տարօրինակ «Վենետիկ Պարիզում»: Գործազուրկների ահագին բազմություն: Ցերեկի ջուրը նստելուց հետո էլ կպատահեն բազմատեսակ աղետներ, փլուզմներ և այլն:

Մեզանում ամեն ինչ առաջվա նման է, հանգիստ: Նադյան վազվզում է գպրոցից-գպրոց, վորտեղ ֆրանս[իերեն] են սովորում, և մեծ առաջադիմություն է ցուցաբերում այդ ասպարեզում: Հեծանիվի գործը [6] վճռվեց իմ օգտին: Մասկ[վայի] քաղաք[ային] վկայականը ստացա. մեծ merci:

Իմ կողմից պինդ համբուրիր մայրիկին: Մեծ բարևներ բոլոր մերոնցից

Քո Վ. Ու[լյանով]

Ներիր, վոր կցկտուր եմ գրում: Խանգարեցին:

[1] Թվականը վորոշվում է փոստի դրոշմով՝ Մասկվա [4. II] 23. I. 1910 թ.

[2] Տես 94-րդ նամակի I ծանոթ.:

[3] Ի. Ի. Սկվորցով-Ստեպանով:

[4] 1909—1910 թվի ձմեռը Դ. Ի. Ուլյանովը կոտրեց իր վոտքը, և անրակը դուրս ընկավ:

[5] Ա. Ի. այդ ժամանակ Սարատովումն էր:

[6] Տես 92-րդ նամակը:

96

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Դ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԻՆ

[31/I] 13/II 1910. [Պարիզ]

Թանգագին Միտյա, վաղուց է ստացել եմ նամակդ, իսկ հետո և «Нива»-ն խնդրումդ հանդերձ—և, ի նախատինս իմ, ուշացրի պատասխանը: Ի՞նչպես է ընթանում առողջացումդ: Հուսով եմ, վոր բժիշկները համենայն դեպս զգույշ են լինում և թույլ չեն տալիս լծվել գործի՝ նախքան լրիվին առողջանալը: Յես այստեղ հաճախակի մտածել եմ ավարիաների վտանգի մասին, յերբ հեծանիվով յերթևեկում էյի Պարիզի կենտրոնում, վորտեղ անասելի շարժում կա: Իսկ գյուղում, ձմեռն ընկնել այնպես, ինչպես դու! Ցերեկի ձին բոլորովին կատաղած էր, դու էլ կատաղի թափով էիր քշում:

Գրիր մի կերպ, թե արդյոք լրիվ՞ն ես լավացել: Անյուտան գրում է, վոր վատ հույս ունեն լավացնել (լրիվին արդյոք), կկարողանա՞ս յերթևեկել հեծան-

վում), իսկ ուսը՝ վոչ։ Այդպես է արդյոք։ Ցես դժվարանում եմ հավատալ, վոր կոտրված ուսը առհասարակ անբուժելի լինի, պետք է հիմնականորեն սկսել բժշկել և բոլորովին լավանալ։

Մանյաշայի մասին յես կարծում եմ, վոր լավ կլիներ նրա համար ամառը, վորքան կարելի յե, յերկար հանգստանալ։ Մայրիկն էլ նույնն է գրում, բայց վախենում եմ, վոր չկարողանա նրան համոզել... Սակայն այդ անհրաժեշտ է։

Մեզանում ամեն ինչ առաջվա նման է։ Անդորր կյանք։ Ցեղանակն այնքան լավ է, վոր յես պատրաստվում եմ հեծանիվով նորից զբոսանք սկսելու, մանավանդ դատն իմ ոգտին վճռվից, և շուտով յես փող եմ ստանալու ավտոմոբիլի տերոջից։

Ամուր սեղմում եմ ձեռքդ։ Լավացիր շուտով և հիմնովին, բոլոր մերոնք հղում են իրենց բարևները։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Խոսքը Դ. Ի. Ուլյանովի շախմատային խնդրի մասին է, վորը տպված էր «Нива»-յի հավելվածում։

97

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովոյին. *Տրիումֆալնայա Սադովայա. Կարետնիկովսկի նրբանցք, տ. 10, բնակ. 7.* Russie. Moscou. *Մոսկվա.*

[28/III] 10/IV [19]10. [Պարիզ]

Թանգագին մայրիկ, հուսով եմ, վոր դու այս նամակը կստանաս ապրիլի 1-ին։ Շնորհավորում եմ անվանակոչության որդ, նույնը և Մանյաշայինը։ Պինդ-պինդ գրկում եմ ձեզ յերկուսիդ։

Այս որերս նոր հասցեյով նամակդ ստացա, դրանից քիչ առաջ ստացա և Միտյայի նամակը։ Ցես չգիտեյի, վոր ձեր հին բնակարանն այդքան հեռու յեր կենտրոնից։ Մի ժամվա ճանապարհ տրամվայով՝ սոսկալի բան է։ Այստեղ տրամվայով մինչև գրադարան[1] կես ժամվա ճանապարհ է։ Սակայն այդ էլ յես գտնում եմ հոգնեցուցիչ։ Իսկ ամեն որ կորցնել մեկ ժամ այնտեղ, մեկ ժամ էլ վերադարձին,—այդ արդեն չափազանց շատ է։ Լավ է, վոր այժմ Ուպրավայի մոտիկ բնակարան եք գտել[2]։ Միայն թե լա՞վ է արդյոք ոդն այդ տեղերում։ Արդյոք շատ փոշի չի՞ անում այդտեղ և ոդը ծանր չէ՞։ Գամ[մարան]ին[3] նամակի համար շատ շնորհակալ եմ. յես նրան արդեն պատասխանել եմ։

Գալով մեր տեսակցությանը[4] ոգոստոսին՝ շատ հրաշալի կլիներ, յեթե միայն ճանապարհը քեզ չհոգնեցնի։ Մոսկվայից մինչև Պիտեր պետք է վերցնես ննջարանային վագոնի տոմս, նույնը և Պիտերից մինչև Աբո։ Աբոյից մինչև Ստոկհոլմ «Բուրե» շոգենավը շատ լավ է կահավորված, բայց ծովով 2—3 ժամ է գնում, իսկ լավ յեղանակին՝ [illegible] ես գնում։ Կան հետադարձ տոմսեր Պիտերից։ Յեթե միայն հոգնեցուցիչ չլիներ յերկաթուղին, Ստոկհոլմում կարելի յեր հրաշալի կերպով մի շաբաթ անցկացնել։

Ամառանոցի մասին մենք դեռ վոչինչ չենք վճռել։ Տատանվում ենք՝ լավ չի՞ լինի արդյոք անցյալ տարվա նման պանսիոնում ապրել, վորի պայմաննե-

րում Նադյան և Ցե[լիզավետա] Վաս[իլյեվնա]ն կատարյալ հանգիստ կվայելեն թե՞ միգուցե վարձենք ամառանոց, վորտեղ նրանք իրենք պետք է կերակուր պատրաստեն. Ցե[լիզավետա] Վաս[իլյեվնա]յին այդ շատ է հոգնեցնում։

Մեզ մոտ գարուն է։ Արդեն դուրս եմ բերել Նադյայի հեծանիվը։ Մարդ այնպես ուզում է զբոսնել վոտքով կամ հեծանիվով։ Քեզ պինդ գրկում եմ, թանգագինս, և ցանկանում առողջություն։ Մանյաշային ամենամեծ բարևներս։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Ազգային գրադարանը, վորտեղ Վ. Ի. աշխատում էր։

[2] Մ. Ի. ծառայում էր Նահանգական Զեմստվային Ուպրավայում։

[3] Ի. Ի. Սկվորցով-Ստեպանովին։

[4] Խոսքը Մ. Ա. և Մ. Ի. Ուլյանովաների հետ Ստոկհոլմում 1910 թ. սեպտեմբեր ամսին տեղի ունեցած տեսակցության մասին է։

98

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ[1]

Սավելյեվին *(Մ. Ի. Ու.-ի համար). Սեփական ամառանոց. Գյուղ* Ինո-Նեմի. Տերիոկի *կայարան—Ֆինլանդական յերկաթ[ուղի]։*

[5] 18/VI [19]10. [Պարիզ]

Թանգագին Մանյաշա, բարևներ իմ և Նադյայի կողմից։ Զբոսնում ենք Մյոդոնի անտառում։ Հրաշալի յե։ Քո (մեծ) նամակն ստացա յերեկոյան, այն որը, յերբ քեզ իմ նամակն եյի ուղարկում։ Այսպես, ուրեմն, ամեն ինչ ստացված է։ Գրում և ուղարկում ենք նորություններ։ Salut et fraternité!*

Քո Վ. Ու[լյանով]

[1] Նամակը բացիկ է Forêt de Meudon—Etang de Villebon-ի (Մյոդոնի անտառ—Վիլյեբոնի լճակ) տեսարանով։ «Մյոդոնը Պարիզից 9 կիլոմետրի վրա գտնվող փոքրիկ քաղաք է։ Տոն որերին, ամառը, հազարներով այնտեղ են ուղևորվում Պարիզի բնակիչները՝ բնության գրկում ժամանակ անցկացնելու։ Մենք հաճախակի ուղևորվում եյինք այնտեղ լի որերը,—մտարերում է Նադեժդա Կոնստանտինովնան,—ընկճված տրամադրությունից ազատվելու, հրաշալի Մյոդոնի անտառում հեծանիվներով զբոսանք կատարելու համար»։

99

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Վ. Ա. Սավելյեվին. *Մ. Ի. Ու.-յի համար. Սեփական ամառանոց։ Գյուղ* Ինո-Նեմի. *Կայարան* Տերիոկի *Ֆինլանդ. յերկաթ[ուղի]*[1]։

[15] 28/VII [19]10. [Պորնիկ]

Թանգագին Մանյաշա, գրում եմ քեզ Պորնիկից։ Ահավասիկ, դրեթե մի շաբաթ է, ինչ հաստատվել եմ այստեղ Ցել[իզավետա] Վ[ասիլյեվնայի] և Նա-

* Բառացի՝ վողջույն և յեղբայրություն։ Շատ բարև։ Խմբ.։

դյայի հետ։ Հրաշալի հանգստանում ենք։ Լողանում ենք և այլն։ Ի՞նչպես են ընթանում ձեզանում գործերը։ Ի՞նչպես է մայրիկի առողջությունը։ Ի՞նչպես է Կոպենհագենի և Ստոկհոլմի հարցը։ Գրիր․ Pornic (Loire Inférieure)—Rue Mon Désir· K. Les Roses· Mr. Oulianoff.

Ամենքիդ բարևներս։ Քո Վ. Ու[լյանով]

Մայրիկին մի շաբաթ առ[աջ] գրել եմ[2] Պարիզից Միխնևո[3]։ Ստացվե՞լ է նամակս։

[1] Նամակը բացիկ է Pornic (L. Inf.)—La plage de Gourmalon-ի տեսարանով։ (Պորնիկ (Ներքին Լուարայի դեպարտամենտ). Գուրմալոնի պլյաժը)։

Պորնիկում գտնվելու մասին Ն. Կ. պատմում է հետևյալը. «1911 թվի աշնանը մենք մի քանի շաբաթ անցկացրինք ծովեզրյա Պորնիկ քաղաքում (Ներք. Լուարայի դեպարտ., հռչակավոր Վանդեային կից)։ Պորնիկից մի քանի կիլոմետրի վրա գտնվում էր ֆրանսիական սոցիալիստական կուսակցության հանգստյան տունը, որտեղ և բնակվեցի յես՝ իմ մոր հետ։ Մոտավորապես մի շաբաթից հետո ժամանեց Վլադիմիր Իլյիչը և մենք տեղափոխվեցինք Պորնիկ, որտեղ վարձեցինք 2 սենյակ։ Մի յերկու շաբաթ էլ ապրեցինք այդտեղ։ Ճաշում էյինք ծանոթների (Կոստիցինների) մոտ, շատ էյինք լողանում ծովում, զբոսնում հեծանիվներով։ Բնակարանատերը, որ մաքսատան պահապան էր, շատ էր հյուրասիրում Իլյիչին կրաբներով, իսկ բնակարանատիրոջ կինը, որ լվացք անող էր, պատմում էր, թե ինչպես նա դուրս արավ քսյոնձին, որը յեկել էր իրեն համոզելու, որ նրանք իրենց որդուն վանքի դպրոց տան սովորելու»։

[2] Նամակը չի պահպանվել։

[3] Միխնևո կայարանը Ռյազան-Ուրալի յերկաթուղու վրա յէ, որին մոտ Լիպիտինո գյուղում Դ. Ի. բժշկի պաշտոն էր վարում։

100

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

ՆԳՄ. Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. Յեկատերինա Լյասեննենի ամառանոցը. Գյուղ Լեպպենենո, Տերիոկի կայարան ֆինլ. յերկաթ[ուղի]. Finland. Terioki, via Stockholm.

[22/VIII] 4/IX [19]10. [Կոպենհագեն][1]

Թանգագին մայրիկ, ուղարկում եմ քեզ և Անյուտային իմ ամենաջերմ ողջույնը Կոպենհագենից։ Կոնգրեսը[2] փակվեց յերեկ։ Մանյաշայի հետ նամակագրությամբ վորոշեցինք սեպտ[եմբերի] 4-ին հին տոմարով, այսինքն՝ 17/IX-ին նոր[ով], սպասում եմ ձեզ Ստոկ[հոլմում], նավահանգստում։ Ստ[ոկհոլմում] ընկերս ինձ համար կվարձի 2 սենյակ մի շաբաթ ժամանակով (17—24/IX)։ Իմ այստեղի հասցեն Մանյաշան ունի։ Ստոկ[հոլմ] պետք է գրել ինձ՝ Hr. Ulianof· Poste restante *։ Ամուր գրկում եմ։

Առայժմ ցտեսություն...

Այստեղ մնալու յեմ մինչև 15/IX. [19]10.

Քո Վ. Ու[լյանով]

* Ուլյանովին, ցպահանջ։ Խմբ.։

[1] Նամակը բացիկ էր Kjobenhavn· Cirkus National og Tivoli (Կոպենհագեն. Կրկես, Ազգային թատրոն և Տիվոլի) տեսարանով։

[2] II Ինտերնացիոնալի՝ Կոպենհագենի 8-րդ կոնգրեսը կայացավ 1910 թ. [օգոստոսի 28—սեպտեմբերի 3-ին] սեպտեմբերի 10—15-ին։

101

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[26/III] 8/IV [19]11. [Պարիզ]

Թանգագին մայրիկ, այս նամակը դու կստանաս, յերևի, ապրիլի 1-ին ռուսական տոմարով։ Շնորհավորում եմ քո և Մանյաշայի անվանակոչության օրը։ Ցանկանում եմ, որ շուտ և հիմնովին լավանաս։ Այսօր տեսա բժշկին[1] — Անյուտայի «սանիկի» հորը — նա ասում է, որ իշիասից հետո պետք է շատ զգույշ լինել, որպեսզի նորից չկրկնվի։ Ի միջի այլոց՝ նրա կինը յերեխաների հետ միասին պատրաստվում է գալ Ռուսաստան, իսկ առայժմ ամառն ուզում են գնալ գյուղ։

Ստացա քո նամակը, թանգագինս, որտեղ նկարագրում ես Սարատովի կյանքը և մտքեր ես հայտնում Մանյաշայի մասին։ Վաղորոք մի անհանգստանա. գուցե մինչև ամառվա վերջը գործերը կդարգվեն այլ կերպ, քան դու յենթադրում ես։

Վո՞րտեղ եք մտադիր անցկացնել ամառը։ Հենց Սարատովու՞մ։ Լա՞վ է արդյոք այնտեղ ամառը։

Մեզ մոտ այստեղ մի ամբողջ շաբաթ իսկական ձմեռ էր՝ ձյուն, ցուրտ։ Այժմ նորից օրը պտտեց դեպի գարուն։ Յել[իզավետա] Վաս[իլյեվնա]ն մրսեց ցրտերի ժամանակ և պառկած է։ Առհասարակ ապրում ենք առաջվա նման կամաց-կամաց։ Մանյաշայից, դժբախտաբար, քիչ լուր ունեմ։ Ի՞նչպես է իրեն զգում։ Մեծ ողջույն նրան և բոլոր մերոնց։

Ամուր գրկում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում առողջություն։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Միխայիլ Ֆեոդորովիչ Վլադիմիրսկի (ծն. 1874 թ.)։ 1895 թ. աշխատում էր իբրև պրոպագանդիստ Նիժնի-Նովգորոդում։ 1898 թ. անդամ է ՌՍԴԲ Կուսակցության Մոսկվայի առաջին Կոմիտեյի։ 1899 թվին աքսորվում է և մեկնում արտասահման։ 1903 թվին աշխատում է Նիժնի-Նովգորոդի և հետո Մոսկվայի մարզային կազմակերպության մեջ։ 1906—1917 թ. էմիգրանտ էր։ Ռուսաստան վերադառնալով, աշխատում է Մոսկվայի կազմակերպության մեջ, մասնակցում է Հոկտեմբերյան ապստամբությանը։ Հոկտեմբերյան հաղթանակից հետո աշխատում է անտեսական գծով։ Ներկայումս ՌՍՖՍՀ Առժողկոմ է, ԽՍՀՄ և Համառուս. ԿԳԿ անդամ։ Կուսակցության 7-րդ համագումարում ընտրվում է Կենտկոմի կազմի մեջ։

102

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ[1]

ՆԳՍ. Վասիլիյ Ալեքսանդրովիչ Սավելյեվին, Մ[արիա] Ի[լյինիչնայի] համար Սեփական ամառանոց: Գյուղ Ինո-Նեմի: Տերիոկի կայարան Ֆինլանդ. յերկաթ[ուղու]: Finland Terioki (Via Stockholm).

[6—7/19—20 օգոստոսի 1911 թ.][2] [Ֆոնտենբլո]

Թանգագին Մանյաշա, Նադյայի հետ գրոսնելիս հղում ենք մեր բարևները: Ցնկել ենք այստեղ ամբողջ օրով:

Քո Վ. Ու[լյանով]

Salut chalereux *.

[1] Նամակը բացիկ է հետևյալ տեսարանով. Forêt de Fontainebleau. Médaillon-Portrait des Peintres Millet et Théodore Rousseau (Ֆոնտենբլոյի պարկ. Մայե և Թեոդոր Ռուսսո նկարիչների բարելյեֆ-պատկեր):

[2] Նամակագրության թվականը վորոշվում է փոստի դրոշմով՝ Ֆոնտենբլո. [7] 20/VII 1911 թ.:

103

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ[1]

Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային. Ուգոդնիկովսկայա փող., տ. № 26. Սարատով. Russland. Saratov.

[10] 23/IX [19]11 թ. [Լյուցեռն][2]

Թանգագին մայրիկ, գրում եմ Լյուցեռնից: Անսպասելի կերպով (Մ[իջազգային] Ս[ոցիալիստական] բյուրոյի՝ Ցյուրիխի ժողովի պատճառով[3]) ընկա Շվեյցարիա: Շրջագայում եմ ռեֆերատով[4]: Ցերեկ մագլցելով բարձրացա Պիլատի վրա՝ 2122 մետր: Յեղանակն այժմ հրաշալի յե, հրաշալի ել զբոսնում եմ: Ամուր գրկում եմ և ամենքիդ հղում մեծագույն բարևներս:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Նամակը բացիկ է հետևյալ տեսարանով՝ Luzern—Blick auf Bahnhof, Friedersmuseum, Pilatus (Լյուցեռն, կայարանի տեսարան, Խաղաղության թանգարան, Պիլատ):

[2] Նամակագրության թվականը վորոշվում է փոստի դրոշմով՝ Լյուցեռն, 23/IX 1911 թ.:

[3] Միջազգ. Սոց. Բյուրոյի նիստը կայացավ 1911 թ. 23—24 (10—11) սեպտ. Ցյուրիխում և նվիրված եր Մարոկկոյի անցքերի քննարկությանը:

[4] Խոսքը «Ստոլիպինը և հեղափոխությունը» զեկուցման մասին է, վոր Լենինը կարդաց Ցյուրիխում (26/IX), Ժընևում (2/X) և Փարիզում (31/X):

* Ջերմ վողջույն: Խմբ.:

104

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[1912 թ. նոյեմբեր][1] [Կրակով]

Թանգագին Մանյաշա,

Ամենամեծ շնորհակալություն լուսանկարների[2] և նամակների համար: Վերջապես: Այժմ քեզ ինչպես ես զգում:

Վոր դու ընտրել ես հյուսիսը[3], այդ ինձ չի զարմացնում, յես ել, գուցե, հյուսիսն ընտրեյի: Հուսով եմ, վոր, այնուամենայնիվ, շատ ել հեշտ չեն ուղարկի, այնտեղ կան և վատ տեղեր: Տեղ հասնելուն պես՝ գրիր, խնդրեմ:

Մեզ մոտ վերջին օրերս մեծ իրարանցում եր, հենց այդ պատճառով ել չկարողացա իսկույն պատասխանել:

Այստեղ պատերազմի մասին է միայն, վոր գրում ու խոսում են, ինչպես սակայն յերևում է նաև լրագրերից: Պատերազմի դեպքում ստիպված կլինեմ Վիեննա տեղափոխվելու (կամ մինչև իսկ այն քաղաքը, վորտեղ մենք տեսնվեցինք վերջին անգամ)[4]: Սակայն յես չեմ հավատում, վոր պատերազմ լինի:

Պինդ համբուրում եմ քեզ, թանգագինս: Ցե[լիզավետա] Վ[ասիլյեվնան] և Նադյան նույնպես:

Քո Վ. Ու[լյանով]

P. S. Գրիր՝ ստանալու՞ յես Neue Zeit-ը:

[1] Նամակը թվական չունի: Ինչպես յերևում է նրա բովանդակությունից, գրված է՝ բանտից Մ. Ի.-ի ազատվելուց անմիջապես հետո (1912 թ. հոկտեմբեր) և, ըստ յերևույթին, վերաբերում է 1912 թ. նոյեմբեր ամսին:

[2] Մ. Ա.-յի, Ա. Ի.-ի և Մ. Ի.-ի լուսանկարները:

[3] ՌՍԴԲ Կուսակցության (բ) Սարատովի խմբակի գործով վորոշված եր Մ. Ի.-ին աքսորել Աստրախանի նահանգը: Ծնողների խնդրանոք Աստրախանի նահանգը փոխարինեցին Վոլոգդայի նահանգով:

[4] Ստոկհոլմ:

105

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

ՆԳՍ. Մարիա Իլյինիչնա Ուլյանովային, ցպահանջ. Վոլոգդա. Russland. Vologda.

[24—25] 11—12/XII [1912][1]

Թանգագին Մանյաշա, վերջապես հաջողվեց ստանալ քեզնից գեթ մի համառոտ տեղեկություն: Գրիր՝ ինչպես ես սարքվել, ովքեր են ծանոթներդ, հնարավորություն ունե՞ս արդյոք վաստակելու: Արդարացրին արդյոք տեղական իշխանությունները իրենց տված խոստումը, վոր արգելք չեն լինի քեզ վաստակ գտնելու գործում[2]:

Մոտ օրերս յես նամակ ստացա մայրիկից, վորտեղ նա գրում է, թե Մարկը Պիտերից վերադարձել է հիվանդ: Այդ ինչո՞ւ յե նա հիվանդանում: Մեկնելիս ինչ դրության մեջ թողիր դու նրան. առո՞ղջ եր նա առհասարակ:

Իսկ դու, յերևի, տառապում ես այժմ «բանտային սակավարյունությամբ», և կամ գուցե նախկին սակավարյունությունդ էլ ավելի սրվել է:

Պետք է միջոցներ ձեռք առնես, չմուշկներով սահնակես: Իսկապես այդ մի արհամարհիր: Այստեղ այժմ անձրև ու ցեխ է, իսկ անցյալ տարի յես «սառը» տեղն ընկա թե չէ, իսկույն գնացի սառցավայրը և փորձեցի, թե չեմ մոռացել արդյոք սահնակելը:

Ֆրանս[երենից] և գերմ[աներենից] թարգմանությունների մասին այժմ առանձին դժվարություններ են ստեղծվում գր[ական] սեփականության վերաբերյալ պայմանագրի հետևանքով: Յես այստեղ, դժբախտաբար, այժմ բոլորովին կտրված եմ հրատարակչական կապերից: Լավ կլիներ՝ գրեյիր Պիտեր և Մասկվա, թե վոր ծանոթներ ունես, վորպեսզի նրանք այցելեն հրատարակիչներին. Թարգմանելն, այնուամենայնիվ, ամենալավ զբաղմունքն է և բավական թարգմանական գրքեր են այժմ հրատարակվում: Գրիր՝ ինչ հեռանկարներ կան այդ տեսակետից:

Ցե[լիզավետա] Վ[ասիլյեվնա]ն և Նադյան շատ խնդրում են բարևել:
Ամուր սեղմում եմ ձեռքդ:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Թվականը վորոշվում է փոստի դրոշմով՝ Վալոգդա, [29] 16 XII 1912 թ.:
[2] Տես 104-րդ նամակի 3-րդ ծանոթագրությունը:

106

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Կազանսկայա հրապարակ, տ. Մուրոմցևի, բնակ. Գորոխովայի. Russland. Vologda. Վալոգդա.

28. XII. [15. XII 19]12 [Կրակով]

J'ai bien reçu [chère Marie ta] [1] lettre avee l'adresse [et je me] presse d'utiliser ce[lle-ci. As]-tu reçu ma lettre, envoyée poste-restante?

Avec le Journal «Gleichheit», qui parait deux fois par mois, on pourrait probablement s'arranger de la sorte, que nous enverrons cette revue. La question se pose seulement: si la censure laissera passer cette revue? Demande ou bien il faudra envoyer.

Quand recevez vous les journaux de St-Pétersbourg? 24 heures plustard ou plus tard encore?

Mille félicitations et salutations à tous les amis.

Tout à toi Wl. U[lianof]

[Թարգմանություն]

Թանգագին Մանյաշա, ստացա քո նամակը՝ հասցեյով հանդերձ և շտապում եմ պատասխանել: Ստացե՞լ ես արդյոք իմ նամակը, վոր ուղարկել եյի «ցպահանջ»:

Գալով «Gleichheit» [2] ժուռնալին, վոր ամիսը յերկու անգամ է լույս տեսնում, կարելի յե, գուցե, այնպես անել, վոր մենք ուղարկենք քեզ այդ ժուռնալը: Հարցը միայն այն է՝ կթույլատրի՞ արդյոք գրաքննությունը: Փորձիր իմանալ և կամ մենք ուղղակի կուղարկենք այն:

Յե՞րբ ես ստանում Պետերբուրգի լրագրերը, որուն՞ց, թե՞ ավելի ուշ:

Հազար բարև և փողջույն բոլոր մտերիմներին:

Ամբողջովին Քո Վլ[ադիմիր] Ու[լյանով]

[1] Նամակը բացիկ է: Նրա մի ծայրը կտրված լինելու պատճառով բովանդակությունը մենք 3 տեղ վերականգնում ենք՝ համաձայն իմաստի:
[2] «Հավասարություն» — սոց.-դեմ. կանանց ժուռնալ: Մանրամասն տես Լենինի Յերկերը, հատ. XII. ռուս. 2-րդ հրատ., ծանոթ. 37, եջ 449:

107

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[29 — 30 ապր. /12 — 13 մայիսի 1913 թ.] [1] [Պորոնին]

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. 40. Յեկատերինինսկո-Դվորյանսկայա, 40. Վալոգդա. Russland. Vologda.

Թանգագին Մանյաշա, կարծեմ մեղավոր եմ քո հանդեպ (իսկ վոր մեղավոր եմ Մարկ Տիմ[աֆեյեվիչի] հանդեպ, այդ արդեն կասկածից դուրս է): Վերջապես գրում եմ: Մոտ որերս, ամառը անցկացնելու համար, տեղափոխվեցինք (մասամբ Նադյայի հիվանդության՝ Բազեդյան ախտի պատճառով, վորն ինձ մեծ մտատանջություն է պատճառում) սարերը, Պորոնին գյուղը՝ Զակոպանեյից 7 կիլոմետրի վրա: Դա Տատր * լեռների մոտ է, յերկաթուղով 6 — 8 ժամվա ճանապարհ Կրակովից դեպի հարավ, հաղորդակցությունը թե Ռուսաստանի և թե Յեվրոպայի հետ Կրակովի վրայով է: Հեռու յե Ռուսաստանից, սակայն ինչ արած:

Վարձեցինք ամառանոց (ահագին — չափազանց մեծ) ամբողջ ամառվա համար — մինչև հոկտեմբերի 1-ը նոր տոմարով — և մեծ դժվարություններով փոխադրվեցինք: Նադյայի հիվանդությունն այդ ճամփորդությունից, կարծես, ավելի վատացավ: Հարկավոր կլինի, գուցե, տանել նրան Բեռն՝ բժշկելու...

Տեղը հրաշալի յե: Օդն սքանչելի, — բարձրությունը մոտ 700 մետր: Վոչ մի համեմատություն ցածր տեղերի հետ, վորոնք միքիչ խոնավ են Կրակովում: Լրագրեր շատ ունենք և աշխատել կարելի յե:

Բնակչությունը լեհ գյուղացիներ են, «գուրալներ» (լեռնային բնակիչներ), վորոնց հետ յես զրուցում եմ ** մի անասելի կոտրատած լեզվով, վորից գիտեմ հինգ խոսք, իսկ մնացածը՝ աղավաղում եմ ռուսերենը: Նադյան քիչ-միչ խոսում և կարդում է լեհերեն:

Գյուղը գրեթե ռուսական տիպի յե: Հարդե կտուրներ, աղքատություն: Վոտաբոբիկ կանայք և յերեխաներ: Տղամարդիկ հագած են գուրալների զգեստներ՝ սպիտակ մահուդե վարտիքներ և նույն տեսակ թիկնոցներ՝ կիսապլաշչ-կիսակուրտկա: Տեղը մեզ մոտ կուրորտային չէ (Զակոպանեն կուրորտ է), ուստի և շատ հանգիստ է: Հուսով եմ, այնուամենայնիվ, վոր այս հանգստության և լեռնային օդի պայմաններում Նադյան կլավանա: Մենք այստեղ վարում ենք գյուղական կյանք, — վաղ վեր ենք կենում և գրեթե աքաղաղների հետ միաժամանակ պառկում:

Ամեն որ գնում ենք փոստ և կայարան: Կանոնավոր կերպով նայո՞ւմ ես «Правда»-ն և «Просвещение»-ն [2]: Այստեղ մեզ ուրախացրին հոբելյանական

* Տատրները միջնակարգ լեռներ են, մինչև 2600 մետր բարձրությամբ: Իսկ և իսկ Շվեյցարիա:
** Հայերի հետ գերադասում եմ գերմաներենը:

համարը [3] և մետաղագործների միության մեջ բանվորների հաղթանակը լիկվիդատորների նկատմամբ [4]։

Դու ինչպես ես ապրում։ Դասերն ամառը չե՞ս կորցնի արդյոք։ Ճարո՞ւմ ես բավականաչափ գրքեր։

Իմ փողջույնը լեհ բարեկամներին [5] և ցանկություն, որ ամեն կերպ օգնեն...

Ցե[լեզավետա] Վ[ասիլյեվնա]ն և Նադյան շատ բարև են անում և համբուրում քեզ։ Ցես եր։ Քո Վ. Ու[լյանով]

Հասցեն՝ Herrn Ulianow. Oesterreich. Poronin. (Galizien) Ավստրիա։

P. S. Այս նամակը գուցե լավ կլինի ուղարկել մայրիկին, եթե նա շուտով չպիտի գա քեզ մոտ։

[1] Թվականը որոշվում է փոստի կնիքով՝ Վոլոգդա [16/V] 3/V 1913 թ.։

[2] «Просвещение»-ն բոլշևիկյան ժուռնալ է, որն սկսել է հրատարակվել 1911 թ. դեկտեմբերից, փակված «Мысль»-ի փոխարեն։ «Գործը պետք է փոխադրել Պիտեր, — գրում է Լենինը Գորկուն 1911 թ. ապրիլին, պատմելով «Мысль»-ի փակվելու մասին,—և սկսել սկզբից» («Լեն. ժող.» I, եջ 117)։ Ժուռնալը գոյություն ունեցավ մինչև 1914 թ. հունիս ամիսը։ 1917 թվի աշնանը լույս տեսավ յերկյակ համար (№ 1 — 2, սեպտ. — հոկտ.), որտեղ զետեղված եր Լենինի հոդվածը՝ «Կպահպանեն արդյոք բոլշևիկները պետական իշխանությունը»։ Ավելի մանրամասն տես Լենինի Յերկեր, XV հատ., ռուս. 2-րդ հրատ., եջ 648 — 649։

[3] «Правда»-յի հոբելյանական համարը (№ 92 — 296) լույս տեսավ 23/IV 1913 թ.։

[4] Մետաղագործների Միության Վարչության վերընտրությունների ժամանակ 1913 թ. ապրիլի 21-ին անցավ բոլշևիկների ցուցակը (Ա. Կիսելյովի ղեկավարությամբ)։ Նրանք ստացան 13 տեղ 15-ից։ Նորընտիր վարչությունը Լենինին ուղարկեց հեռագիր, որով ողջունում եր նրան, «իբրև բանվոր դասակարգի իսկական առաջնորդի»։

[5] Վոլոգդայում Մարիա Իլյինիչնայի հետ միաժամանակ աքսորի մեջ եր գտնվում Վ. Վ. Վարովսկին, որին և Լենինն ուղարկում է իր ողջույնը։ Վարովսկին (1871 — 1923 թ.) ականավոր կուսակցական (բոլշևիկյան) գրականագետ եր և պրակտիկ-հեղափոխական։ Տես «Լեն. ժող.» VII, եջ 215։

108

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ [1]

ՆԳԱ Մարիա Իլյինիչնա Ուլյանովային Մ. Ա.-յի համար. Յեկատերինինսկո-Դվորյանսկայա փող., տ. 40. Վոլոգդա, Russland, Vologda.

[11] 24/VI 1913 [Վիեննա]

Թանգագին մայրիկ, ստացա քո նամակը հենց մեկնելուց առաջ։ Յեկել ենք Նադյայի հետ Վիեննա և այսոր էլ մեկնում ենք առաջ։ Բեռնից [2] կգրեմ։ Ամուր գրկում եմ քեզ, Մանյաշային և Անյուտային նույնպես։ Լավ ենք գնում։ Դիտեցինք Վիեննան։ Լավ յեղանակ է։

Քո Վ. Ու[լյանով]

Ներողություն եմ խնդրում Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]ից, որ չպատասխանեցի նրա հետաքրքրական նամակին։ Թող չնեղանա։

[1] Նամակը բացիկ է հետևյալ տեսարանով. Meidling Wien XII/1. Schönbrun-Eingang (Վիեննայի արվարձան՝ Մեյդլինգում Շյոնբրուն պարկը մուտքի կողմից)։

[2] Վ. Ի. և Ն. Կ. Բեռն ուղևորվում եյին պրոֆ. Կոխերի մոտ, որը Բազեդյան ախտի մասնագետ եր։ Բազեդյան ախտով հիվանդ եր Ն. Կ.։ Շվեյցարիայում յեղած ժամանակ, 1913 թ. հուլիսի սկզբին, Լենինը ռեֆերատներ է կարդում Ժընևում, Բեռնում, Ցյուրիխում և Լոզանում՝ «Սոցիալ-դեմոկրատիան և ազգային հարցը» թեմայով։

109

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային (Մ[արիա] Ալեքս[անդրովնա] Ուլյանովայի համար)։ Յեկատերինինսկո-Դվորյանսկայա, տ. 40, Վոլոգդա. Russie, V o l o g d a.

[15 —16/28—29 հունիսի 1913 թ.] [1] [Բեռն]

Թանգագին մայրիկ,

Անհամբերությամբ միջանի որ է՝ մենք Նադյայի հետ Բեռն ենք ապրում։ Կոխերը դեռ չի ընդունել։ Բժահան մարդ է։ Հռչակավոր է և... կոպտավում է։ Ցյուրիխի հասկացող բժիշկները մինչև յերկինք են բարձրացնում նրան, և լիակատար հաջողություն են խոստանում։ Կսպասենք։ Առայժմ գրիր հետևյալ հասցեյով. Herrn Schklowsky (Վ[լադիմիր] Ի[լյիչի] համար). 9. Falkenweg. B e r n. Suisse.

Այստեղ ստիպված կլինենք, յերևի, մնալ միջանի շաբաթ։

Ամուր գրկում եմ քեզ, թանգագինս, և ամենամեծ բարևներ եմ հղում Անյուտային և Մանյաշային։ Նադյան նույնպես։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Թվականը որոշվում է փոստի դրոշմից՝ Բեռն 29/VI 1913 թ.։

110

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Շաբ[աթ 13] 26/VII 1913. [Բեռն]

Թանգագին մայրիկ,

Չորեքշաբթի որը, վերջապես, յերկու շաբաթվա «նախապատրաստումից» հետո Նադյային կլինիկայում վիրահատության յենթարկեցին։ Վիրահատությունն ըստ յերևույթին հաջողությամբ վերջացավ, որովհետև արդեն յերեկ Ն[ադյայի] տեսքը բավական առողջ եր, սկսեց ախորժակով խմել։ Վիրաբուժությունն ըստ յերևույթին բավական դաժան եր. մոտ 3 ժամ տանջում եյին Նադյային, առանց նարկոզի, սակայն նա արիաբար տարավ։ Հինգշաբթի որը

շատ վատ էր՝ սաստիկ տաքություն և զառանցանք, այնպես որ յես բավական վախեցա: Սակայն յերեկ արդեն պարզ կերպով լավանալու նշաններ յերևացին. տենդ չկար, զարկերակն ավելի լավ եր և այլն: Կոխերն, այնուամենայնիվ, յերևելի վիրաբույժ է, և Բազեդի ախտ ունեցողը նրան պիտի դիմի. բազմաթիվ ռուս և մանավ[անդ] հրյա հիվանդներ ունի նա:

Այժմ արդեն մտածում եմ վերադարձի մասին. ոգոստ[ոսի] 4-ին մտադիր ենք մեկնել (յեթե Կոխերը չարգելի. այդ էլ է պատահում յերբեմն): Գիշերելու կիջևանենք Ցյուրիխում, Մյունխենում և Վիեննայում և ապա՝ տուն: Դեռ մի նամակ էլ կարող եմ ստանալ քեզնից այստեղ, իսկ հետո արդեն պիտի գրես Poronin)-ի * հասցեյով: Թե որ մնացի այստեղ, ելի կգրեմ:

Այն հանգամանքը, որ փակվել է լրագիրը, վ[որտեղ] յես գրում եյի[1], ինձ շատ կրիտիկական դրության մեջ է դնում: Այժմ ավելի մեծ ջանքով եմ փնտրելու ամեն տեսակ հրատարակիչներ և թարգմանություններ. շատ դժվար է դարձել այժմ գրակ[ան] աշխատանք գտնելը:

Ամուր գրկում եմ քեզ, թանգագինս, և Մանյաշային ու Անյուտային ամենամեծ բարևներ հղում: Նադյան շատ և շատ բարևում է:

Քո Վ. Ու[լյանով]

[1] „Правда“-ն փակվել եր 1913 թ. (5) 18/VII-ին 356 համարի վրա, սակայն հուլիսի (13) 26-ին նորից սկսեց լույս տեսնել „Рабочая правда“ անունով: Մանրամասն. տես Լենինի Երկերը, XV հատ., ռուս 2-րդ հրատ., եջ 663—665:

111

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Մասկովսկայա փող., տ. Սամարինի, բնակ. 3, Վոլոգդա. Russland. Vologda.

[8] 21/XII [1913] [Կրակով].

Թանգագին Մանյաշա,

Այսոր ուղարկում եմ քեզ գերմաներեն գրքերի ցուցակը բանդերոլով. Աչքի անցկացրու և գրիր մի յերկու խոսք՝ հետաքրքրակա՞ն են արդյոք քեզ համար (իսկ օգտագործելուց հետո—դա ծայրի համար չեմ ասում—վերադարձրու)

Ի՞նչպես եք դուք ապրում այդտեղ մայրիկի հետ: Պատրաստվու՞մ եք արդյոք տոներին տեսնելու Մարկին կամ Անյային: Միտյայից [նամակներ] ունե՞ք:

Մեզ մոտ ամեն ինչ առաջվա նման է... Յես արդեն բավական ընտելացել եմ Կրակովի կյանքին, բոլքերին, — մի կյանք, որ անձուկ է, հանդարտ, քնաթաթախ, սակայն որոշ տեսակետից Պարիզի կյանքից ավելի հարմար:

Ներիր նամակներիս սակավությանը,—գործերը խանգարում են միշտ:

Ամուր համբուրիր իմ փոխարեն մայրիկին: Նադյան և Ել[իզավետա] Վաս[իլևնա]ն նույնպես բարևում և համբուրում են:

Քո Վ. Ու[լյանով]

112

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ ՅԵՎ Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[13] 26/XII [1913, [Կրակով]

Թանգագին Մարիա Ալեքսանդրովնա, մի ամբողջ հավիտենականություն է, ինչ նամակ չեմ գրել Ձեզ: Առհասարակ նամակների վերաբերմամբ վերջին ժամանակներս մի տեսակ իտալական գործադուլ եր տեղի ունենում: Մասամբ մեղավոր է Վալոդյան: Նա ինձ գրավել է «զբոսալիքների» կուսակցության մեջ: Մենք հանաքով ասում ենք, որ այստեղ ունենք զանազան կուսակցություններ՝ «սինեմիստների» (սինեմա հաճախել սիրողների)[1], «անտիսինեմիստների» կամ անտիսեմիտների և «պրոգուլիստների» կուսակցություն, վորոնք միշտ համամիտ են զբոսանքի փախչելու: Վալոդյան վճռական անտիսինեմիստ է և կատաղի «պրոգուլիստ»: Յեվ ահավասիկ նա ինձ էլ է ներգրավում իր կուսակցությունը, իսկ հետո յես վոչ մի բանի համար ժամանակ չեմ գտնում: Օրերն էլ, ասես դիտամամբ, այժմ զարմանալի յեն: Ձյուն է յեկել, ուղղակի յերևելի յե: Աշունն էլ շատ լավն եր: Դե Կրակովում մարդ ինչ անի, յեթե չզբոսնի: Վոչ մի կուլտուրական զվարճություն: Մի անգամ փորձեցինք գնալ համերգ՝ Բեթհովենի կվարտետ եր, նույնիսկ միացյալ հաշվով աբոնեմենտ վերցրինք, սակայն համերգը — չգիտեմ ինչու—սաստիկ ձանձրույթ պատճառեց, թեև մեր մեկ ծանոթուհին, վորը հոյակապ յերաժշտուհի յե[2], հիացած եր: Լեհական թատրոն գնալու ցանկություն չունենք: Սինեմաներն այստեղ չափազանց անհեթեթ են, բոլորն էլ հրեշավոր մելոդրամներ են... Վճռել ենք Վալոդյայի հետ տոներից հետո լծվել այստեղի համալսարանի գրադարանի հետազոտությանը, թե չէ ամոթ է, վոչ մի անգամ այնտեղ չենք յեղել: Իսկ ամենամեծ սովը, վորից մենք այստեղ տառապում ենք, այդ բելլետրիստիկայի բացակայությունն ե: Վալոդյան գրեթե բերանացի յե արել Նադսոնը և Նեկրասովը, և «Աննա Կարենինայի» բաժան-բաժան յեղած մեկ հատորիկը հարյուրերորդ անգամն է կարդացվում: Մենք մեր ամբողջ գեղարվեստական գրականությունը (այն, ինչ Պիտերում մեր ունեցածի մի չնչին մասն է կազմում) թողել ենք Պարիզում, իսկ այստեղ ռուսերեն գիրք չի ճարվում: Յերբեմն նախանձով կարդում ենք բուկինիստների հայտարարությունները՝ Ուսպենսկու 28 հատորի, Պուշկինի 10 հատորի մասին և այլն և այլն:

Վալոդյան էլ, ասես դիտամամբ, այստեղ սաստիկ «բելլետրիստ» է դարձել: Յեվ սաստիկ ազգասեր: Լեհ նկարիչների ցուցահանդեսներին զոռով էլ չի գնա, ինչ-վոր ծանոթների մոտ, որ[ինակ], գտել է Տրետյակովի գալլերեյայի կատալոգը, վորը ով գիտե վորտեղ եր վեր գցած, և բազմիցս խորասուզվել նրա մեջ:

Մենք ամենքս առողջ ենք: Վալոդյան ամեն օր սառը ջուր է ընդունում, զբոսանք է կատարում և ազատվել է անքնությունից: Շարունակում է գովաբանել այստեղի ճահիճը: Մայրիկը շուտ-շուտ տկարանում է, մերթ փլյուս, մերթ հազ: Նա շատ բարև է անում: Մանյաշայի նամակն ստացել եմ, սակայն նա, ըստ սովորության, այնպես է խզմզել, վոր բան չհասկացա: Թող շուտ-շուտ գրի: Պինդ, պինդ գրկում եմ նրան,—նրան և Ձեզ, ցանկանում եմ առողջություն և ամենայն բարիք: Դեհ, մի անգամ էլ համբուրում եմ:

Ձեր Նադյա

Ամուր համբուրում եմ քեզ, թանգագինս, և ցանկանում աշխուժություն

և առողջությունը։ Մեծագույն բարև Մանյաշային (այս օրերս գրել եմ նրան) և Անյուտային, վորը, յերևի, Ձեզ մոտ է։

Քո Վ. Ու[լյանով]

[1] Կինեմատոգրաֆ։

[2] Խոսքը, ըստ յերևույթին, Ինեսսա Ֆեոդորովնա Արմանդի մասին է։ Ա. (1875—1920) կուսակցության հին անդամ է, Վ. Ի.-ի մոտիկ բարեկամը։ 1904 թ. Ա. հարում է բոլշևիկներին և աշխատում կուսակցության Մոսկվայի կազմակերպության մեջ։ 1907 թ. փախչում է արտասահման և ակտիվ մասնակցում «կուսակցությանն աջակցող պարիզյան խմբակի» աշխատանքներին, 1911 թ.՝ Լոնժյումոյի կուսակցական դպրոցի աշխատանքներին և այլն։ 1912 թվին Ա. անլեգալ կերպով ուղևորվում է Ռուսաստան, վորտեղ և նրան շուտով ձերբակալում են։ Ա. 1913 թ. գալիս է Կրակով և նորից մոտիկանում Վ. Ի.-ի խմբակին, մտնում «Работница»-յի խմբագրության արտասահմանյան մասի մեջ և զետեղում նրա մեջ մի շարք հոդվածներ։ Մանրամ. տես «Ինեսսա Արմանդի հիշատակին» նվիրված ժողովածուն. Гиз, 1926 թ. կամ Խոր. Մ. Ենցիկլ., հատ. 3 եջ 362—363։

113

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[1913 թվի աշնանը կամ ձմեռը] [1] [Կրակով]

Թանգագին Մանյաշա, իմ և Նադյայի նամակն ուղարկելուց միքանի օր հետո ստացա քո նամակը։ Դու ինձ ամաչացրիր իմ լռության համար։ Ցես իսկապես մեղավոր եմ. մեր տեղափոխության և ինֆլուենցայի պատճառով պատասխանս չափազանց ձգձգվեց։ Այժմ մեզանում տկար է Ցել[իզավետա] Վա-ս[իլյեվնա]ն. սաստիկ ինֆլուենցա ուներ, այժմ լավանալու վրա յե։

Գերմանական նոր գրականության մասին. հենց նոր վերջացրի կարդալ Մարքսի և Ենգելսի նամակագրության չորս հատորի [2] ընթերցումը։ Ուզում եմ գրել դրա մասին «Просве[щение]»-յում [3]։ Հետաքրքրական շատ բան կա։ Ափսոս, վոր թանգ են հրատարակել անպիտանները — «նեմչուրան»՝ 40 մ[արկ]! Դեռ չեմ կարդացել Բեերի նոր գիրքը՝ «Սոցիալիզմի պատմությունը Անգլիայում» [4], սակայն շուտով կկարդամ։

Մոտ օրերս լույս տեսավ Կունովի [գիրքը]՝ կրոնի ծագման մասին [5]։ Կուղարկեյի յես քեզ այն (յես գնելու յեմ), միայն յերկյուղ եմ կրում, թե չի հասնի։ Ցեթե դու ստանում ես կամ ճարում Neue Zeit-ը, ապա այնտեղ կա բոլոր հետաքրքրական բաների թվարկումը։ Բուրժուական նոր գրականությունից բան չեմ տեսնում։ Թե ուզում ես՝ կուղարկեմ քեզ առհասարակ բոլոր նոր գրքերի ցուցակը գերմ[աներեն] լեզվով (դա Լայպցիգի գրավաճառ Hinrichs-ի [6] փոքրիկ հրատարակությունն է. ամեն ամիս ստանում եմ)։

Ամուր սեղմում եմ ձեռքդ։ Մայրիկին պինդ համբուրիր իմ և Նադյայի կողմից։

Քո Վ. Ու[լյանով]

Անյուտայից վաղուց է լուր չունենք։

Կարդում եմ Octave Mirbeau-յի «Dingo»-ն [7]։ Ըստ իս վատ է։

[1] Նամակը թվական չունի։ Նա յերևի վերաբերում է 1913 թ. աշնանը կամ ձմեռվան, դատելով նրա մեջ հիշատակված Մարքսի և Ենգելսի նամակագրությունից և Կունովի գրքից, վորոնք լույս են տեսել 1913 թ.։

[2] «Briefwechsel zwischen Friedrich Engels und Karl Marx». Herausgeg. von A. Bebel und Ed. Bernstein. 4 Bände. Verl. J. H. W. Dietz Nachf. Stuttgart. 1913 («Ֆրիդրիխ Ենգելսի նամակագրությունը Կարլ Մարքսի հետ», խմբ. Ա. Բեբելի և Եդ. Բերնշտայնի, չորս հատոր։ Հրատարակություն Ի. Հ. Վ. Դիտցի ժառանգների։ Շտուտգարտ, 1913)։

[3] Տես Լենինի չավարտված հոդվածը՝ «Մարքսի նամակագրությունը Ենգելսի հետ»։ Լենինի Ցերկերը, հատ. XVII, ռուս. 2-րդ հրատ., եջ 29—34։

[4] Beer Max — «Geschichte des Sozialismus in England. Stuttg. Dietz», 1913։ Կա Մ. Բեերի «Սոցիալիզմի պատմությունն Անգլիայում» ռուսերեն թարգմանությունը։ Թարգմանություն գերմաներենից Մ. Ցե. Լանդաուի, Ց. Ա. Ռոտշտեյնի առաջաբանով։ Гиз, 1923։

[5] Cunow H.: «Ursprung der Religion und der Gottesglaubens. Berlin, 1913. (Հենրիխ Կունով՝ «Կրոնի և առ աստված հավատի ծագումը», թարգմանություն և առաջաբան Ի. Ստեպանովի։ Հրատ. «Կոմունիստ». Մոսկվա, 1919 թ.։

[6] Monatliche Uebersicht der bedeutenderen Erscheinungen des deutschen Buchhandels J. E. Hinrichs'sche Buchhandlung. (Գերմանական գրական շուկայի. ամենաաչքի ընկնող նորույթների ամենամսյա տեսություն։ Գրախանութ Ցե. Հինրիխսի)։

[7] Ֆրանսական գրող Օկտավ Միրբոն իր վեպերում և դրամաներում կըրքոտ հակառակորդ է հանդիսանում արդի հասարակության, վորը ճնշում և այլանդակում է մարդու անհատականությունը։ Իր «Dingo» վեպում Միրբոն հերոս է դուրս բերում մի վայրենի շուն, վորը շառավիղ է ազատության մեջ ապրած ռազմաշունչ տոհմի և վորի մեջ արթնացող խռովարար զգացումների համար տեղ չկա կուլտուրական Փարիզում։

114

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Մոսկովսկայա փող., տ. Սամարինի, բնակ. 3, Վոլոգդա. Russland. Vologda.

[3] 16/II 1914. [Կրակով]

Թանգագին Մանյաշա, մոտ օրերս վերադարձա ճամփորդությունից (յեղա, ի միջի այլոց, Պարիզում, դասախոսեցի ազգային հարցի մասին) [1] և ժամանակ չեղավ քեզ գրելու։

Ի՞նչպես ես։ Ցե՞րբ է լրանում ժամկետը։

Ի՞նչպես է մայրիկի առողջությունը։ Բոլորովին է լավացել։

Վաղուց է վոչ մի լուր չունեմ թե Մարկից և թե Միտյայից։ Վոչ մի տեղեկություն չունեմ նրանց ապրուստի և մտադրությունների մասին։

Մեզանում ամեն ինչ առաջվա նման է։ Կամաց-կամաց ապրում ենք։ Ըստ յերևույթին Նադյայի Բազեդի ախտը կրկնվում է։ Դեռ թույլ նշաններ են, բայց կան։ Գուցե գարնանը նորից ստիպված լինեմ տանել նրան վիրահատության...

Սակայն այդ դեռ հաստատ չէ և լավ է առայժմ նրան բան չգրես: Յես լիովին առողջ եմ: Յե[լիզավետա] Վ[ասիլյևնա]ն էլ նույնպես ղոչաղ է:

Պինդ սեղմում եմ ձեռքդ: Պինդ-պինդ համբուրիր իմ կողմից մայրիկին:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Վ. Ի. Պարիզ մեկնեց 1914 թվի հունվարի սկզբին և Կրակով վերադարձավ [24/I] 6/II-ին: Պարիզում հունվարի 23-ին նա կարդաց իր՝ «Ազգային հարցը» թեմայով ռեֆերատը: Վ. Ի.-ի Պարիզում և Բրյուսսելում ունեցած ելույթների մասին տես՝ Լենինի Երկեր, հատ. XVII, ռուս. հրատ., եջ 810—811:

115

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[8]21/II 1914. [Կրակով]

Թանկագին մայրիկ, ստացա քո բացիկը. merci: Տես թե ինչ տարբերություն կա ձեր յեղանակի և այստեղի յեղանակի միջև: Այստեղ կատարյալ գարուն է, ձյուն վաղուց է չկա, բոլորովին տաք է, առանց կրկնակոշիկի յենք ման գալիս, արևգակը Կրակովի համար մի անսովոր լույսով է փայլում, մարդ չի հավատում, որ դա «թաց» Կրակովն է: Ափսոս, որ դու Մանյաշայի հետ սահմանված ես այդ վատ քաղաքում ապրելու: Յես Պարիզում եյի և ոչ թե Լոնդոնում[1]: Լավ ճամփորդություն էր: Պարիզը համեստ միջոցների տեր մարդու համար շատ անհարմար և շատ հոգնեցուցիչ քաղաք է, սակայն լինել այնտեղ կարճ ժամանակով, այցելել միայն, զբոսանք միայն կատարել այնտեղ,—դրանից լավ և ուրախ քաղաք չկա: Լավ թարմացա:

Ամառը, յերևի, նորից կմեկնենք Պորոնին:

Պինդ գրկում եմ քեզ, թանկագինս, և մաղթում առողջություն: Մանյաշային մեծ բարև:

Քո Վ. Ու[լյանով]

P. S. Նադյան և Յե[լիզավետա] Վ[ասիլյեվնա]ն նույնպես պինդ համբուրում են:

[1] Տես 114-րդ նամակի ծանոթագրությունը:

116

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[28. III] 10/IV 1914. [Կրակով]

Թանկագին մայրիկ, ամուր գրկում եմ քեզ և շնորհավորում թե քեզ և թե Մանյաշային ձեր անվանակոչության օրը: Այժմ, հուսով եմ, ամառը Վոլոգդայում արդեն ավելի լավ կլինի, քան ձմեռը, իսկ չէ՞ որ սա վերջին ամառն է[1]:

Այս վերջին օրերս յես մի քիչ մրսեցի (գարնանն առանց այդ չի լինում), իսկ այժմ լավացել եմ:

Շուտով, մայիսի առաջին օրերին, մենք կրկին Պորոնին ենք գնում:

Ամուր գրկում եմ և մաղթում առողջություն:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Մ. Ի. աքսորի ժամկետը լրացավ 1914 թվի աշնանը:

117

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ — Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Russland. Վոլոգդա, Մոսկովսկայա փողոց, տ. Սամարինի, բնակ. 3. Նորին գերազանցության Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային.

[2]15/IV [1914] [Կրակով]

Թանկագին Մարիա Ալեքսանդրովնա, շնորհավորում ենք ամենքս Ձեր տոնը: Մաղթում ենք առողջություն, ամեն տեսակ բարիքներ: Մեզանում ամառ է, յերեկ այնքան շոգ էր,—ուղղակի Աֆրիկա: Ամեն ինչ բացվել է: Մենք ամենքս առողջ ենք: Ամուր գրկում եմ ձեզ և Մանյաշային:

Ձեր Նադյա

118

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Մոսկովսկայա փ., տ. Սամարինի, բնակ 3 Վոլոգդա. Russland. Vologda.

[9] 22/IV [1914]: [Կրակով]

Թանկագին Մանյաշա, լուր եմ ստացել, թե իբր դու դժգոհ ես իմ յերկարատև լռությունից: Իսկապես որ նամակների հարցում շատ մեղավոր եմ. շատ դժվար է մեր (թե քո և թե մանավանդ իմ) նամակագրությունը վարել այնպես, ինչպես ուզում ես:

Յերեկ ստացանք ինձ և Նադյային գրած՝ մայրիկի նամակը: Պինդ համբուրիր իմ կողմից մայրիկին: Յերևի ամառը ձեզ համար ավելի լավ կլինի, քան ձմեռը:

Մոտ օրերս տեղեկություններ ստացա Ալանեցկի աքսորի մասին[1]: Այնտեղ նյութեր եյին հավաքում աքսորյալների վիճակի և կազմի մասին. առավելին մեծամասնություն են կազմում բանվորները, նորեկները (հետհեղափոխական), գավառում 150-ից 2-ը լիկվիդատոր են, քիչ են, ձախ նարոդնիկները: Ըստ յերևույթին աքսորյալների կազմը շատ է փոխվել, հետաքրքրական կլիներ տվյալներ հավաքել այդ մասին և յերբեմն հրատարակել Просв[ещение]-յում[2]. Նադյան քեզ ուղարկել է նամակ և դարձյալ պատրաստվում է գրելու:

Մի յերկու շաբաթից հետո մենք նորից Պորոնին ենք գնում: Լեռներ կան այնտեղ, և յես հույս ունեմ, որ Նադյայի բազեդկյան կանցնի: Այդ հիվանդությունը լեռներով են բուժում: Յեղանակն այստեղ այժմ հիանալի յէ. յես հաճախակի զբոսանքներ եմ կատարում հեծանիվով:

Ընդհանրապես ինչքան էլ խուլ և վայրենի յե այստեղի մեր քաղաքը, այնուամենայնիվ, ավելի գոհ եմ այստեղ, քան Պարիզում: Գաղութային կյանքի իրարանցումն այնտեղ անչափ մեծ էր, ջղերս քայքայվում եյին չափից դուրս և իզուր, աշխատել Պարիզում անհարմար է. Bibliothèque nationale-ը*) վատ է դրված. բազմիցս հիշել ենք Ժընևը, որտեղ ավելի լավ էր աշխատել, հարմար էր գրադարանը, պակաս ջղային և անիմաստ էր կյանքը: Իմ բոլոր թափառ-

*) Ազգային գրադարան: Խմբ.:

վայրերի միջից յես կընտրեյի Լոնդոնը կամ Ժընևը, յեթե յերկուսն էլ այդքան հեռու չլինեյին: Ժընևը առանձնապես լավ է իր ընդհանուր կուլտուրականությամբ և կյանքի չափազանց մեծ հարմարություններով: Իսկ այստեղ, անշուշտ, կուլտուրայի մասին խոսք լինել արդեն չի կարող. նույն է, ինչ Ռուսաստանը. գրադարանը վատ է չափազանց անհարմար. սակայն յես էլ գրեթե յերբեք չեմ լինում այնտեղ...

Աշնանը Տատրիներում (այդպես են կոչվում սարերը, վորոնց մոտ մենք ապրում ենք Պորոնինում) հրաշալի էր. գոնե անցյալ տարի աշունը, անձրևային ամառից հետո, այնտեղ հմայիչ էր: Չէ՞ վոր աշնանը լրանում է քո ժամկետը և յես յերբեմն յերազում եմ, վոր մեզ կհաջողվի տեսնվել աշնանը: Յեթե լավ աշուն լինի, մենք հոկտեմբեր ամիսն էլ մտադիր ենք անցկացնել գյուղում:

Ամուր սեղմում եմ ձեռքդ: Քո Վ. Ու[լյանով]

[1] Ալանեցկի աքսորավայրի մասին տեղեկություններ Վ. Ի. ստացել էր, յերևի, Վ. Տիխոմիրովից, վորն այդ ժամանակ Ալանեցկի աքսորից յեկել էր արտասահման և Վ. Ի. հետ ապրում էր Պորոնինում:

[2] «Просвещенне»-ի № 11-ում (1913 թ.) զետեղված էր Միխ. Սադկոյի փոքրիկ հոդվածը՝ «Աքսորյալների կազմը» վերնագրով:

119

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Russland. Վոլոգդա. Մասկովսկայա փող., տ. Սամարինի, բնակ. 3. Նորին գերազանցության Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային:

[26/V] 8/VI [1914] [Պորոնին]

Թանգագին Մարիա Ալեքսանդր[ովնա], պինդ համբուրում եմ Ձեզ և Մանյաշային: Մանյայի բացիկը և մի փոքրիկ նամակն ստացա և նույն օրն էլ պատասխանեցի:

Ի՞նչպես եք այդտեղ ապրում:

Մեզ մոտ անձրև է առավոտից մինչև գիշեր. ամբողջ շաբաթ է տանից վոչ մի տեղ դուրս գալ չի լինում առանց պլաշչի և կրկնակոշիկների:

Մայրիկն ինչ-վոր միշտ տկար է. նրա սիրտը շատ անհանգիստ է: Այս տարի բավական շուտ-շուտ եյին պատահում [սրտի բաբախումներ][1], իսկ հիվ[անդության և] անձրևների պատճառով նրա տրամ[ադրությունն] էլ վատ է: Մենք ճամպորդում ենք: Յես [գյուտ] եմ արել, վոր «բազեդկան» շատ է [լավա-ն]ում սարերում զբոսնելուց, իսկ այսպիսի յեղանակներին, իհարկե, վոչ մի տեղ չի կարելի գնալ: Սակայն պետք է ասել՝ բազեդկան ընդհանրապես այնքան էլ իրեն զգալ չի տալիս այս տարի:

Ահա այսպես: Նորից գրկում եմ:

Ձեր Նադյա

[1] Նամակի անկյունը կտրված է և նշված 6 տեղերում տեքստը նորոգված է ըստ իմաստի:

120

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Սիրոմյատնիկի, Կոստոմարովսկի նըրբ[անցք], տ. 15, բնակ. 336. Մոսկվա. Russie. Moskou.

Expédié par Wl. Oulianoff. Distelweg 11. Berne (Suisse).

[9] 22/XII [1914. Բեռն]

Թանգագին Մանյաշա, ստացա քո 14/XI-ի նամակը և շատ ուրախացա: Դու մեր հին բնակարանի հասցեյով ես գրել: Այժմյան հասցեն՝ Distelweg, 11.

Գալով այն հարցին, թե այստեղ գոյություն ունի՞ արդյոք ռուս գերիների մասին տեղեկանքների բյուրո, կաշխատեմ իմանալ այդ մասին, ինչպես և այն գերու վերաբերյալ, վորի մասին դու հարցնում ես[1]: Գուցե, առաջիկա տոների պատճառով միանգամից չկարողանամ այդ իմանալ, սակայն համենայն դեպս՝ կաշխատեմ:

Մենք ապրում ենք վոչինչ, սուս ու փուս և խաղաղ քնաթաթախ Բեռնում: Լավ են այստեղի գրադարանները, յես էլ լավ եմ սարքվել գրքերով ոգտվելու տեսակետից: Դուրեկան է նույնիսկ կարդալ ամենօրյա լրագրային աշխատանքից հետո: Նադյան ունի այստեղ մանկավարժական գրադարան էլ և մանկավարժական աշխատություն է գրում:

Յես գրել եմ Անյուտային, վոր տեղեկանա, թե կարելի՞ յե արդյոք հրատարակիչ գտնել ագրարային գրքի համար. յես կգրեյի այստեղ: Յեթե առիթ լինի, դու էլ տեղեկացիր:

Ինչու՞ վոչինչ չես գրում քո մասին: Ի՞նչպես է առողջությունդ: Ունե՞ս վորևէ վաստակ: Ի՞նչպիսի, վո՞րտեղ, բավարարու՞մ է արդյոք:

Թե պետք լինի՝ գրիր:

Պինդ-պինդ սեղմում եմ ձեռքդ: Քո Վ. Ուլյանով:

Նադյան և Յե[լիզավետա] Վաս[իլյեվնա]ն շատ բարև են անում:

Թե դեպք լինի՝ իմացիր (յեթե այդ շատ գլխացավանք չի պատճառի)՝ Գրանատն ստացե՞լ է արդյոք Մարքսի մասին իմ հոդվածը: Լավ կլիներ աշխատանք ունենալ Էնցիկլ[ոպեդիկ] Բառարանի համար, սակայն հաջողեցնել այդ, յերևի, հեշտ բան չի, յեթե անձամբ առիթ չունենաս ծանոթանալու խմբագրության քարտուղարի հետ:

[1] Իր նամակի մեջ Վ. Ի. գրում է Վ. Ա. Կարպինսկուն («Լեն. ժող.» XI, 4-րդ նամակ, եջ 133)—«P. S. Կա՞ արդյոք Ժընևում տեղեկատու բյուրո Գերմանիայում գտնվող ռուս գերիների վերաբերյալ»:

Ռազմագերի Ահարոն Ռոզենֆելդի մասին խնդրել էր տեղեկանալ իր յեղբայր Վլադ. Ցեֆիմովիչը,— կուսակցության հին անդամ: Տես 126-րդ նամակը

121

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. *Սիրոմյատնիկի. Կոստոմարովսկի նըր-բ[անցք], տ. 15, բնակ. 336.* Մոսկվա. Russie. Moskou.

Uljanow. Distelweg. 11 (Suisse) Berne.

[27/I] 9/II. 1915. [*Բեռն*]

Թանկագին Մանյաշա, ստացա քեզնից յերկու բրոշյուր՝ Ոգան[ով]կունը[1] և Մ[ա]ս[լո]վինը[2]: Ամենամեծ շնորհակալություն: Յերկուսն էլ ամենավատանգավոր տիպը, փաթթարադույն օպորտունիստներ են (միթե կան այնպիսիք, վորոնք համամիտ են նրանց և Պլ[եխան]ովին: Այդ չափազանց վատ բան է): Սակայն իմանալ նրանց գրվածքները շատ օգտակար է: Ուստի անչափ շնորհակալ կլինեմ, յեթե ուղարկես նման նյութեր, ինչպես նաև լրագրերից (և ժուռնալներից) քաղվածներ, վորոնք վերաբ[երում են] նման թեմաներին: Որ[ինակ] Յե. Սմիրնովը[3] «Рус[ские] вед[омости]» *լրագրում վաղուց (8 կամ 9-րդում) վերին աստիճանի գռեհկություններ և գրում վարկերի քվեարկման առթիվ և այլն: Այդ յես տեսել եմ: Իսկ դրանից բացի նրա և նման անձանց գր[ական] գործունեյության մասին վոչինչ չգիտեմ:*

Այստեղ գրադարաններում լավ ենք ստացվել օտար[երկրյա] լրագրերի և գրքերի տեսակետից: Ապրում ենք վոչինչ: Բեռնը տաղտկալի և փոքրիկ, սակայն կուլտուրական քաղաք է: Յե[լիզավետա] Վ[ասիլյևնա]ն տառապում է ինֆլուենցայով:

Գերմանացիների մեջ հակաշովինիստական տրամադրություններ են աճում. պառակտում տեղի ունի թե Շտուտգարտում և թե Ֆրանկֆուրտում՝ Մայնի վրա[4]: Բեռլինում լույս են տեսնում «Lichtstrahlen»*-ի[5] հրատարակությունները հակաշովինիստական տրամադրություններով: Յեթե այդ քեզ դժվարություն չի պատճառի և մոտ գտնվելու առիթ լինի (խնդրեմ, դրա համար հատկապես գնաս՝ այդ* ամենևին *շտապ չի), իմացիր Գրանատներից, վորոնք Ենց[իկլոպե-դիկ] Բառ[արանի] համար[6] ընդունել են իմ հոդվածը, ուղարկել են արդյոք նրանք հոնորարը Մ. Տ. Յելիզարովին (ինչպես յես խնդրել եյի) և չի՞ կարելի արդյոք այնտեղ ելի աշխատանք ունենալ Ենց[իկլոպեդիկ] Բառ[արանի] համար: Յես գրել եյի այդ մասին քարտուղարին[7], սակայն նա չի պատասխանում:*

Ամուր սեղմում եմ ձեռքդ և ամենամեծ բարևներ եմ հղում իմ և Նադյայի կողմից:

Քո Վ. Ուլյանով

[1] Ոգանովսկի Ն. Պ.—*Ինչի՞ց բռնկեց յեվրոպական մեծ պատերազմը.* «Задруга» *Մոսկվա, 1914 և 1915 թ. թ.:*

[2] *Մասլով Պ.—«Համաշխարհային պատերազմի տնտեսական պատճառները» Մոսկվա, 1915 թ.:*

[3] *Սմիրնով Յե. (Ն. Գուրեվիչ) — ժուռնալիստ, մենշևիկ-պաշտպանողական, ներկայումս աշխատում է Մարքսի և Ենգելսի Ինստիտուտում: Տես Լեն. Երկերը, հատ.* XVIII, *ռուս. 2-րդ հրատ., 25-րդ ծանոթ., եջ 426:*

[4] *Խոսքն այն պառակտման մասին է, վոր տեղի ունեցավ մի կողմից սոց.-դեմ. կուսակցության ներսի օպորտունիստական և ցենտրիստ-կաուցկիական մեծամասնության և մյուս կողմից այդ կուսակցության ձախ արմատական թևի միջև: Այդ ձախ արմատական հոսանքը, վորի համար մասսայական պայքարի տակտիկան կիրառելու անհրաժեշտությունն ավելի ու ավելի ակներև եր դառնում, գերմանական սոց.-դեմ. կուսակցության մեջ սկսել եր զարգանալ պատերազմից դեռևս մի քանի տարի առաջ,—առաջին հերթին այն կազմակերպություններում, վորտեղ ձախերն ունեյին իրենց, թեև առաջին ժամանակաշրջանում վոչ մեծ, հենակետները: Այդ խմբակները հետագայում համախմբվեցին «Ինտերնացիոնալ» ժուռնալի շուրջը, վորի առաջին համարը լույս տեսավ 1915 թվի ապրիլի 15-ին, Ռ. Լյուքսեմբուրգի և Ֆ. Մերինգի խմբագրությամբ: Շտուտգարտի կազմակերպությունն առաջին շարքերում եր: Այդ հանգամանքի վրա քիչ ազդեցություն չունեցավ ինդուստրիայի արագ աճումը Վյուրտենբերգում՝ պրոլետարիատի նոր յերիտասարդ, ավելի հեղափոխական կադրերով, վորոնք մեծ քանակությամբ լցնում եյին կազմակերպության շարքերը: Դրա շնորհիվ, ինչպես գրում եր հոլանդական ձախ սոցիալիստ Պաննեկուկը Շտուտգարտի ձախերի առաջնորդ Վեստմայերին (տես* «Прол. револ.» *№ 7 1929 թ.)—«ուրիշ տեղերում ամենուրեք ապատիա յե տիրում կուսակցական կյանքի միօրինակության պատճառով. այստեղ (Շտուտգարտում. — Խմբ.)—նոր, աղբյուրի նման բղխող ուժ է աճում»: Սակայն օպորտունիստների դեմ ձախերի պայքարին մեծ չափով արգելք եր հանդիսանում կաուցկիականների տակտիկան: Այդ տակտիկան եր պատճառը «գերմանական բոլոր ձախերի թուլության, վորոնք ամեն կողմից պատած եյին կաուցկիական յերկերեսանությամբ, պեդանտությամբ, օպորտունիստների հանդեպ «բարյացակամության» լպիրշ ցանցով» (Լենին, հ.* XIX, *ռուս., եջ 190): Շտուտգարտցիներն առաջինը եղան, վորոնք յերկարատև պայքարից հետո հաղթահարեցին, ինչպես գրում է Պաննեկուկը, «հաջողության դժվար հաղթահարելի արգելքը՝ ամրապնդված հարգանքը դեպի կուսակցությունն ու նրա միասնությունը»: Ձախ հակաշովինիստական տրամադրության զարգացմանը քիչ չօգնեց սոց.-դեմ. ֆրակցիայի մեծամասնության բացահայտ դավաճանությունը, վորն արտահայտվեց վարկերի քվեարկման մեջ: 1915 թվի փետրվարին Շտուտգարտի ձախերն ստեղծեցին իրենց մարզային հանձնաժողովը (հրաժարվելով դեռևս 1914 թ. նոյեմբերին յենթարկվել կուսակցության մարզային վարչությանը), կազմակերպեցին իրենց «Սոցիալ-դեմոկրատ» լրագիրը, վոր լույս եր տեսնում պատերազմի ամբողջ ընթացքում: Շտուտգարտի ձախերն իրենց հատուկ ներկայացուցչությունն ունեյին նաև Ցիմմերվալդի կոնֆերանսում: Նրանց գիծն այն ժամանակ դեռևս լրիվին հստակ հեղափոխական չեր (օրինակ, «Ինչ էլ լինի՝ պայքար խաղաղության համար» լոզունգը, փոխանակ իսկական հեղափոխական լոզունգի, այն է՝ «Իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի հանուն սոցիալիզմի»), սակայն հետագայում այդ գիծն ուղղվեց: Քիչ ուշ պառակտում է տեղի ունենում նաև կուսակցության մյուս կազմակերպություններում, մասնավորապես Ֆրանկֆուրտում Մայնի վրա: Ձախերին այնտեղ գլխավորում եր Պաուլ Լևին:*

[5] «Lichtstrahlen»*-ը («Լույսի ճառագայթները»)* «I. S. D.» *(«Գերմանիայի ինտերնացիոնալ սոցիալիստների») ձախ սոց.-դեմ. խմբակի ամսագիրն եր, վոր*

հրատարակում և խմբագրում էր Յու. Բորհարդը: Մանրամասն. տես Լենինի յերկերը, XIX հ., ռուս. 2-րդ հրատ., ծանոթ. 118, էջ 473:

6 Խոսքը վերաբերում է Լենինի հոդվածին Մարքսի մասին: Տես XVIII հատ., ռուս. 2-րդ հրատ., էջ 1—43:

7 Գրանատի Էնցիկլոպեդիկ բառարանի քարտուղարին ուղղված իր՝ 1915 թ. 4/I նամակում (այդ նամակը պահվում է Լենինի Ինստիտուտի արխիվում) Վ. Ի. ի միջի այլոց գրում է. «...Հետո, յես ինձ թույլ եմ տալիս առաջարկել իմ ծառայությունը բառարանի խմբագրությանը, յեթե հետագա հատորներից կան դեռ չբաշխված հոդվածներ: Յես ներկայումս բացառապես լավ պայմանների մեջ եմ գտնվում Բեռնի գերմանական և ֆրանսիական գրադարաններից օգտվելու տեսակետից և բացառապես վատ պայմանների մեջ՝ գրական աշխատանքների տեսակետից առհասարակ: Ուստի մեծ հաճույքով կստանձնեյի հոդվածներ քաղաքատնտեսության, քաղաքականության, բան[վորական] շարժման, փիլիսոփայության և այլ հարցերի վերաբերյալ: Իմ կինը, Ն. Կրուպսկայա անվան տակ, գրել է մանկավարժության վերաբերյալ «Рус[ская школа» և «Свободное воспитание»-յում, առանձնապես հարցով զբաղվել է «Трудовая школа»-յում, և մանկավարժության հին կլասիկների ուսումնասիրությամբ: Նա սիրով իր վրա կվերցներ հոդվածներ այդ հարցերի վերաբերյալ:

Պատրաստ ծառայելու.

Վ. Ուլյանով

Այս նամակին Վ. Ի. պատասխան չստացավ, ինչպես յերևում է 122-րդ նամակից:

122

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Russie. Moscou. *Մոսկվա. Մալայա Գրուզինսկայա, տ. 7, բնակ. 13. Մարիա Իլյինիչնա Ուլյանովային.*

[1] *14/XII* [*1915*] [*Բեռն*]

Թանգագին Մանյաշա,

Ստացե՞լ ես դու իմ մեծ նամակը, որ յես քեզ ուղարկել եյի գարնանը: Այնտեղ յես գրել եմ, ի միջի այլոց, մայրիկի մահվան, մեր ապրուստի մասին և այլն:

Այժմ յես քեզ գրում եմ մի հատուկ հարցի առիթով: Մենք շուտով զրկվելու յենք գոյության բոլոր հին աղբյուրներից և վաստակի խնդիրը բավական սուր կերպով է կանգնում մեր առաջ: Այստեղ որևէ աշխատանք գտնել դժվար է: Ինձ խոստացել եյին դասեր, սակայն գործը շարունակ ինչ-որ ձգձգվում է, խոստացել եյին արտագրություն, դրանից էլ բան դուրս չեկավ: Դիմեմ նոր միջոցների էլ, սակայն այդ բոլորը չափազանց հարցական է: Պետք է մտածել գրական վաստակի մասին: Չեմ ուզում, որ գործի այդ կողմն ամբողջությամբ ծանրանա Վ[ոլոդյայ]ի վրա: Առանց այդ էլ նա շատ է աշխատում: Իսկ վաստակի հարցը նրան բավական անհանգստացնում է:

Ահավասիկ, ինչ եմ ուզում խնդրել քեզնից: Վերջին ժամանակներս յես շատ

եմ զբաղվել մանկավարժությամբ առհասարակ և մանկավարժության պատմությամբ՝ մասնավորապես, այնպես որ այդ ասպարեզում յես բավականաչափ զինված եմ: Մի ամբողջ բրոշյուր անգամ ունեմ գրած՝ ժողովրդական դպրոցը և դեմոկրատիան[1]: Նրա առաջին մասն արդեն պատրաստ է. կոչվում է՝ «Արտադրողական աշխատանքի դերը ժողովրդական լուսավորության գործում»: Մի 6—7 մամուլի չափ: Ինձ թվում է, որ բավական հետաքրքրական է դուրս յեկել: Յեվ ահավասիկ, յես կուզեյի խնդրել քեզ՝ գտնել ինձ մի հրատարակիչ: Ձեռագիրը կարող եմ ուղարկել առաջին իսկ պահանջին: Գուցե հրատարակեր «Свободное воспитание»-ն[2], կամ որևէ այլ հրատարակչություն: Ի դեպ՝ «Свободное воспитание»-յին յես ուղարկել եմ մի հոդված Ռուսսոյի մասին[3]. Նամակը նրանք, ըստ յերևույթին, ստացել են, որովհետև սկսել են ուղարկել ժուռնալը, սակայն ստացե՞լ են իմ ձեռագիրը, թե ոչ, չգիտեմ: Չե՞ս կարող արդյոք իմանալ, ստացե՞լ են հոդվածը և կտպագրվի՞ թե ոչ: Շուտով ուղարկելու յեմ նրանց ավելի առօրյա խնդիրների վերաբերյալ մի քանի բաներ:

Ռախիլի յեղբորը[4] խնդրել եյի այցելել «Св[ободное] в[оспитание]»-ն, սակայն նրա սեփական գործերն էլ քիչ չեն, և բացի դրանից, նա նման բանակցությունների համար այնքան էլ համապատասխան չի: Ափսոս նույնպես, որ Գրանատի հետ գործը չհաջողվեց: Վ[ոլոդյա]ն գրել էր նրանց ամառը, սակայն պատասխան չստացավ, այնպես որ յես այժմ տեղյակ էլ չեմ, վերապահված է ինձ արդյոք իմ՝ «Աշխատանքային դպրոց» հոդվածը, ինչ ծավալի նա պիտի լինի և յե՞րբ ժամկետին պիտի ներկայացվի[5]: Ներկայումս յես շատ եմ զբաղվել նաև «Աշակերտության»[6] հարցով: Առհասարակ Շվեյցարիայում գրադարանները բավական լավ են դրված և կարելի յե լավ աշխատել: Ժամանակ էլ յես այժմ բավական շատ ունեմ, սակայն ամենադժվար հարցն այն է, թե ուր գրել: Այստեղից դժվար է որևէ բան հաջողեցնել: Արա, ինչ որ կարող ես:

Ունե՞ս արդյոք տեղեկություն Լիդայի մասին[7]: Ամառվանից լուր չունեմ նրանից: Առո՞ղջ է արդյոք. ինչպես է ապրում:

Մերոնց մեկ-մեկ գրում եմ, թեև գրելու շատ էլ բան չկա:

Պինդ համբուրում եմ քեզ, Թանգագին Մանյաշա, մի կերպ գրիր ինձ գեթ մի քիչ: Յեղիր առողջ:

Նադյա

Տեսնվո՞ւմ ես Զին[այիդա] Պավլ[ովնա]յի հետ[8]: Արդյոք նա վերջնականապես կազդուրվե՞ց վիրահատությունից հետո:

Ո՞ւր են նրանք: Ի՞նչպես են ապրում:

1 «Ժողովրդական կրթությունը և դեմոկրատիան» գիրքը լույս է տեսել 1917 թ. «Жизнь и знание» հրատարակությամբ:

2 «Свободное воспитание»-ն մանկավարժական ամսագիր էր, որը քարոզում էր ազատ կրթության և դաստիարակության գաղափարը և առհասարակ նորագույն թե ռուսական և թե արևմտյան յեվրոպական և ամերիկյան հոսանքները մանկավարժության բնագավառում: Լույս էր տեսնում 1907 թվից մինչև 1917 թ. սեպտեմբերը Լ. Ն. Կոնշինի հրատարակությամբ և Ի. Գորբունով-Պոսադովի խմբագրությամբ:

3 «Ժան Ժակ Ռուսսո», տես «Ժողովրդական կրթությունը և դեմոկրատիան» գիրքը: «Свободное воспитание»-յում այդ հոդվածը չտպագրվեց:

[4] Լազար Սամոյլովիչ Ռիվլինը Ռախիլ Սամոյլովնա Ռիվլին-Աբրամցովայի յեղբայրն է, յերկուսն էլ կուսակցության հին անդամներ:

[5] Տես 121-րդ նամակի 6-րդ ծանոթագրությունը: «Ամառը» գրված նամակը (յեթե այդ Ն. Կ.-ի թույլ տված սխալը չէ) չի պահպանվել: Ենցիկլ. Բառարանում Ն. Կ.-ի աշխատությունը չեր զետեղվել:

[6] Տես «Ժողովրդական կրթությունը և դեմոկրատիան» գիրքը:

[7] Լ. Մ. Կնիպովիչ:

[8] Զ. Պ. Կրժիժանովսկայա:

123

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՆ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

ՆԳՄ Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Մ. Գրուզինսկայա փող., տ. 7, բնակ. 13, Մոսկվա, Russie. Moscou.

Exp[editeur] M-me Oulianoff. Seidenweg 4a III à Berne.

[26/I] 8/II 1916 *թ.* [*Բեռն*]

Թանգագին Մանյաշա,

Գորբունովներից[1] *տված տեղեկանքից համար շնորհակալություն: Նրանք ճշտապես գրել են: Նրանց ժուռնալը*[2] *յես նորից սկսել եմ ստանալ և տեսնում եմ, վոր նրանք կուզեին կրճատվել են: Բրոշյուրը*[3] *Վալոդյայի խորհրդով ուղարկեցի Պիտեր: Բրոշյուրի առթիվ Վալոդյան գրեց հրատարակչին*[4]*: Անյան գրում եր, վոր կարելի յե փորձել տալ նաև Բոնչին*[5] *կամ Պապոմներին: Քո գարնանը ուղարկած բացիկը Գրանատի մասին ստացվել եր, Վալ[ոդյան] գրել է քեզ էլ, Գրանատին էլ, պատասխան չի ստացել: Գուցե դու կտեղեկանաս Գրանատի մոտ,* վո՞ր ժամկետին է հարկավոր ուղարկել յեվ ի՞նչ ծավալ պիտի ունենա[6]*: Շուտ-շուտ գրիր Վալոդյային, նա միշտ սպասում է քո նամակներին, իսկ դու այժմ չափազանց սակավ ես սկսել գրել: Խոսք չկա, հեշտ բան չի այժմ գրելը: Ի՞նչ տեղեկություն ունես Լիդյայի մասին*[7]*. ամառվանից լուր չունեմ նրանից, թեև ինքս գրել եմ նրան: Պինդ համբուրում եմ: Շատ ուրախացրեց Վ[ալոդյային] քո մեծ նամակը: Գուցե էլի մի կերպ կգրես:*

Դե, ցանկանում եմ ամենայն բարիք:

Ն[ադյա]

Գրքերն ու լրագրերն ստացված են: Վ[ալոդյան] ստանալուց հետո գրել է քեզ:

[1] Խոսքը Ն. Կրուպսկայայի մանկավարժական աշխատանքների վերաբերյալ Ի. Գորբունովի «Посредник» հրատարակչությունից տեղեկանալու մասին է:

[2] Տես 122-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը:

[3] «Ժողովրդական կրթությունը և դեմոկրատիան»:

[4] Այդ բրոշյուրի մասին Լենինը գրել եր Մ. Գորկուն: Տես 5 (36) նամակը «Լեն. Ժողովածվի» մեջ, III, եջ 528:

[5] Վ. Դ. Բոնչ-Բրուևիչ: Նրա «Жизнь и знание» հրատարակությամբ եր, վոր 1917 թ. լույս տեսավ Ն. Կրուպսկայայի վերոհիշյալ գրքույկը:

[6] Խոսքը Ն. Կ.-ի մանկավարժական աշխատության մասին է Գրանատի Ենցիկլոպեդիկ Բառարանի համար: Տես 122-րդ նամակը:

[7] Լ. Մ. Կնիպովիչ:

124

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

M-lle Marie Oulianoff. *Մարիա Իլյինիչնա* Ուլյանովային. *Մալայա Գրուզինսկայա փող., տ. 7, բնակ. 13.* Մոսկվա: Russie. Moscou.

Ulianow, Spiegelgasse. 12 (bei Kam[m]erer. Zürich. 1.

[7]20/II 1916. [*Ցյուրիխ*]

Թանգագին Մանյաշա, մեծ շնորհակալություն քո այս որերս ուղարկած լրագրերի համար: Այսոր հաղորդագրություն ստացա Կարմիր Խաչի գերմանական միությունների Կենտրոնական Կոմիտեյից, վոր Ահարոն Ռոզենֆելդը[1]*, իբրև ռազմագերի, գտնվում է* Bütow-*ում, գունդ 66* (66 Rgt)*: Մեկ տարուց ավել գնաց տեղեկանքների վրա, և վոչ Ժընևի, վոչ էլ Դանիայի Կարմիր Խաչը չեյին կարողանում իմանալ, մինչև վոր պատահմամբ աչքս ընկավ գերիների վերաբերյալ գերմանական հանձնաժողովի կազմած հասցեյին և յես գրեցի նրանց: Նրանք էլ 2 ամսից ավել չեյին պատասխանում:*

Մենք Նադյայի հետ շատ գոհ ենք Ցյուրիխից, լավն են այստեղ գրադարանները: Մի քանի շաբաթ էլ կմնանք և ապա՝ վերստին Բեռն: Այստեղ էլ կարելի յե գրել. փոստը կվերուղարկի:

Ամուր սեղմում եմ ձեռքդ և սրտանց մաղթում քեզ ամեն բարիք: Նադյան նույնպես:

Քո Վ. Ու[լյանով]

[1] Տես 120-րդ նամակի ծանոթագրությունը: Դուրս է գալիս, վոր տեղեկանքը տրված եր մի ուրիշ անվանակցի մասին, իսկ մեզ հետաքրքրող Ահարոն Ռոզենֆելդն սպանված եր ֆրոնտում:

125

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ա. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[28/II] 12/III 1916. [*Ցյուրիխ*]

Թանգագին մայրիկ,

Ուղարկում եմ ձեզ լուսանկարներ, մեկը՝ Մանյաշայի համար:

Մենք այժմ Ցյուրիխումն ենք ապրում: Յեկել ենք պարապելու այստեղի գրադարաններում:

Այստեղ լիճը[1] *մեզ շատ է դուր գալիս, իսկ գրադարանները Բեռնի գրադարաններից շատ լավն են, այնպես վոր, գուցե, այստեղ մնանք ավելի յերկար քան ուզում եյինք: Կարելի յե գրել այստեղի հասցեյով՝ փոստը միշտ կվերուղարկի:*

Հուսով եմ ձեզ մոտ յեղանակները սաստիկ ցուրտ չեն և դու չես մրսում սառը բնակարանում: Ցանկանում եմ, վոր յեղանակները շուտով տաքանան և դու հանգստանաս ձմեռվանից:

Նադյան շատ բարևում է ամենքին: Պինդ համբուրում եմ քեզ, թանգագինս, և մաղթում առողջություն: Ան[յուտա]յին մեծամեծ բարևներս, Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչին]՝ նույնպես:

Քո Վ. Ու[լյանով]

[1]) Ցյուրիխի լիճը:

126

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Տ. ԵԼԻԶԱՐՈՎԻՆ

ՆԳՍ Մարկ Տիմոֆեյեվիչ Ելիզարովին. «По Волге» Շոգեն[ավային] Ընկերության վարչություն. Նևսկի, 45, Պետրոգրադ. Russie· Petrograde.

[Expéditeur] Uljanow. Spiegelgasse 14II. Zürich. Suisse.

[7] *20/IX 1916. [Ցյուրիխ]*

Թանկագին Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]. խնդրում եմ այս բացիկը ցույց տաք Մանյաշային և կամ ուղարկեք նրան: Ես յերեկ ստացա նրա 5/VIII նամակը (բացիկը) և գրքերը, վորոնց համար շատ շնորհակալ եմ: Անյուտայի հիվանդանոցում[1] լինելու լուրն ինձ շատ անհանգստացրեց: Ի՞նչ է պատահել: Չլինի՞ դա այն հիվանդությունն է, վորի համար նա, ինչպես ինքը գրել եր, մի անգամ արդեն ստիպված յեղավ լինել հիվանդանոցում և վիրահատության յենթարկվել: Հույս ունեմ, վոր համենայն դեպս նաև Դուք ամենալավ վիրաբույժներին միայն կդիմեք, վորովհետև միջակ բժիշկների հետ չպետք է գործ ունենալ այդպիսի դեպքերում: Անհամբերությամբ հաճախակի լուրերի կսպասեմ, թեկուզ կարճ: Սարսափելի յերկար են յերթևեկում այժմ նամակները: Ամենամեծ շնորհակալություն նույնպես Մանյաշային հրատարակիչների հետ նրա ունեցած բանակցությունների համար. պիտի նստեմ վորևե գրական աշխատանքի, վորովհետև թանկությունը հրեշավոր է, ապրելը չափազանց դժվար է դարձել: Ի՞նչպես է Մանյաշան. ունի՞ արդյոք լավ վաստակ: (200 ռուբ[լի] ստացա և այդ մասին արդեն գրել եմ, նորից շնորհակալություն): Ցեթե կարելի յե, շաբաթը մի անգամ ուղարկեցեք կարդացած ռուսական լրագրերը, թե չե յես վոչ մի ռուսական լրագիր չեմ ստանում (ավելի հաճախ ուղարկել չարժի): Պինդ սեղմում եմ ձեռքդ, իսկ Մանյաշային՝ համբուրում: Նադյան՝ նույնպես:

Ձեր Վ. Ուլյանով

[1] *Աննա Իլյինիչնան ձերբակալվել եր 1916 թ. 21/VII-ին, հոկտեմբերին ազատվել և աքսորի դատապարտվել Աստրախանի նահանգը: Հիվանդության պատճառով թույլ եյին տվել մնալ միառժամանակ Պետերբուրգում: 1916 թ. ձմեռը նորից յերկու խուզարկություն է կատարվում նրա մոտ, վորոնք վոչինչ չեն հայտաբերում: 1917 թ. փետրվարի 20-ական թվերին նա ձերբակալվում է, թեև այս անգամ ել վոչինչ նրա մոտ չեյին գտել, և հեղափոխական ժողովրդի կողմից ազատվում է մի քանի որից հետո: Աննա Իլյինիչնայի հիվանդության մասին Վ. Ի. գրում եր կոնսպիրացիայի նպատակով:*

127

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ—Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Շիրոկայա փ., տ. 48, բնակ. 24. Պետրոգրադ. Russie. Petrograde.

[Exp.] Oulianoff. Spiegelgasse 14II. Zürich. I (Suisse).

Բացված է պատերազմական գրաքննության կողմից: Բաց. Պետրոգրադ Պատերազմական գրաքննիչ № 1599.

[9]22/X *1916. [Ցյուրիխ]. Թանկագին Մանյաշա, յերեկ միաժամանակ ստացա քո յերկու բացիկը՝ 29/VIII-ի և 1/IX-ի: Շատ շնորհակալ եմ հրատարակիչների հետ ունեցած բանակցություններից և դրամ ուղարկելուդ համար: Նոր հրատարակիչն ստացել է նորագույն կապիտալիզմի մասին ձեռագիրը[1]: Խնդրեմ, իմաց տաս՝ յերբ ստացվի: Ես այդ տնտեսական աշխատության առանձնահատուկ նշանակություն եմ տալիս և առանձնապես կցանկանայի վորքան կարելի յե շուտ տեսնել այն ամբողջությամբ տպված[2]: Դու գրում ես, վոր «Ագրարային հարցը»[3] հրատարակիչը ցանկանում է լույս ընծայել վորպես գիրք և վոչ՝ «բրոշյուր»: Ըստ յերևույթին շարունակությունն ել պիտի ուղարկել (այսինքն՝ ի լրումն Ամերիկայի վերաբերյալ գրվածքին, պիտի գրել Գերմանիայի մասին խոստացածը): Այդ աշխատանքին կձեռնարկեմ, հենց վոր վերջացնեմ այն, ինչ պետք է գրեմ իմ հին հրատարակչի[4] համար՝ նրանից ստացած ավանսը ծածկելու նպատակով:*

Այսպես ուրեմն, յես գտնում եմ, վոր նոր հրատարակիչը պատվիրել է *ինձ ագրարային հարցի շարունակությունը: Հանդիպելիս այդ նրան հիշեցրու. (500 ռ[ուբլին] դեռ չեմ ստացել, սակայն անշուշտ մոտ որերս կստանամ. այդ՝ իմ կարծիքով, ավանս չե, այլ հրատարակչի կողմից ստացված ձեռագրերի արժեքի հատուցումը):*

Չի՞ կարելի արդյոք իմանալ (վոչ հատկապես, այլ առիթ յեղած դեպքում)՝ Գրանատը Բառարանում զետեղե՞լ է Մարքսի մասին իմ հոդվածը[5]: Խոստացած ոտտիսկը յես չունեմ: Ցեթե նա չի պատասխանում, չի՞ կարելի արդյոք գրադարանում տեղեկանալ, վերցնելով այդ տառով բառարանը:

Թարգմանական գործերի մասին յես յերեք առաջարկ արդեն ուղարկել եմ քեզ (յերեք գիրք՝ Kemmerer, Gilbert, Hobson)[6]: *Ցեթե հարմար չեն, իմաց տուր՝ նորերը կփնտրեմ: Թե վոր հարմար են գտնում, հարկավոր է ավելի ճշտորեն պայմանավորվել, վոր պատվերը տրված է, առաջարկն ընդունված: Այն ժամանակ յես կսկսեմ աշխատել: Անյան մի գրքի թարգմանություն կվերցնի: Անյային իմ և Նադյայի կողմից մեծագույն վողջույն հաղորդիր: Ես քեզ 3 բացիկ եմ ուղարկել Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]ի հասցեյով[7], այժմ այս բացիկը քո հասցեյով եմ ուղարկում: Արդյոք այդ նո՞ւյնքան հարմար ե: Մենք Նադյայի հետ ապրում ենք առաջվա նման՝ կամաց-կամաց: Ցյուրիխում գրադարաններն ավելի լավ են և աշխատելն ավելի հարմար: Պինդ համբուրում եմ քեզ իմ և Նադյայի չեղ և բարևում Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]ին: Գրքերն ուղարկելու համար շատ շնորհակալ եմ, կանացի ժուռնալը[8] նույնպես ստացել եմ:*

Քո Վ. Ու[լյանով]

[1] *Լենինի գրքի ձեռագիրը՝ «Իմպերիալիզմն իբրև կապիտալիզմի նորագույն ետապը» («Իմպերիալիզմն, իբրև կապիտալիզմի զարգացման բարձրագույն աստիճանը» — այսպիսի վերնագրով է լույս տեսել սկզբում Լենինի աշխատությունը) տրվել եր Տիխոնովին՝* «Парус» *հրատարակչությանը: Տես Լենինի Երկերը,* XIX *հատ., ռուս. 2-րդ հրատ., ծանոթ. 69, եջ 460—461: Այդ ձեռագրի առաքման մասին տես Վ. Լենինի և Ն. Կրուպսկայայի նամակները Գ. Շկլովսկուն, Վ. Կարպինսկուն և Ս. Ռավիչին (94, 95 և 96), «Լեն. ժող.»* XI, *ռուս., եջ 226—229:*

[2] *Տես* XIX *հատոր, վերոհիշյալ ծանոթագրությունը:*

[3] *Լենինի աշխատությունը՝ «Նոր տվյալներ կապիտալիզմի զարգացման*

օրենքների մասին յերկրագործության մեջ» վերնագրով առանձին բրոշյուրով լույս տեսավ 1917 թ. «Жизнь и знание» հրատարակչությամբ: Մանրամասն տես Լենինի յերկերը, հատ. XVII, ռուս. 2-րդ հրատ., եջ 746:

4 Խոսքն ըստ յերևույթին Վ. Դ. Բոնչ-Բրուևիչի մասին է:

5 Մարքսի մասին Լենինի հոդվածը Վ. Իլյին ստորագրությամբ տպագրըված է Գրանատի ռուսական մատենագրական Ինստիտուտի Ենցիկլոպեդիկ Բառարանի 28-րդ հատորում, սակայն վոչ ամբողջությամբ: Ամբողջական տեքստը, ըստ ձեռագրի, տես Լենինի յերկեր, XVIII հատ., ռուս. 2-րդ հրատ., եջ 1—43:

6 Այդ նամակը չի պահպանվել: Տես նամակ 128, ծանոթ. 3-րդ:

7 Այդ բացիկներից պահպանվել է միայն մեկը: Տես նամակ 126:

8 Խոսքը, յերևի, քիմիական նամակի մասին է:

128

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

ՆԳՍ. Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Շիրոկայա փող., տ. 48/9, բն. 24. Պետրոգրադ. Russie. Petrograde:

[Exp.] Oulianoff, 14 II. Spiegelgasse 14 II. Zürich (Süisse).

[13] 26/XI 1916. [Ցյուրիխ]: Թանգագին Մանյաշա, հենց նոր եյի ուղարկել Մարկ Տիմոֆ[եյեվիչ]ի հասցեյով պատվիրված բացիկը, յերբ քեզնից ստացվեցին գրքերը (վեց 2 հատորում) և ապա բացիկը, վորով հաղորդում ես, թե մոտ օրերս սպասում եք Անյուտային[1]: Գրքերի համար մեծ շնորհակալություն: Չափազանց ուրախ եմ Անյուտայի մասին հաղորդած լուրերի համար: Իմ սրտագին բարևներս նրան և ցանկություն, վոր յերկար չմնա Աստրախան[ի] նահ[անգում], գուցե լինի այնտեղ — անսովոր տաք կլիմայի պայմաններում չհիվանդանա: Նադյան բարևում է և շնորհակալություն հայտնում Լիդյայի[2] մասին հաղորդած լուրերի համար:

Մենք ապրում ենք ինչպես առաջ: Թանգությունն օրեցօր սաստկանում է: Փողի համար մեծ շնորհակալություն (Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]ին գրել եմ, վոր ստացել եմ 500 ռ[ուբլի] = 869 frs): Թե չի դժվարացնի քեզ, ամիսը 3—4 անգամ ուղարկիր քո կարդացած ռուսական լրագրերը, ամուր կապելով թելով (թե չի կորչում է): Մնացել եմ առանց ռուս[ական] լրագրերի: Գալով թարգմանություններին, առաջարկել եմ 3 գիրք՝ Kemmerer: «Technischer Fortschritt». Hobson: «Imperialism». Gilbert: «Motion study»[3]. Պատասխան դեռ չունեմ. սպասում եմ (վորովհետև հրատարակիչը դեռ պիտի տեղեկանա, թե չի հրատարակված արդեն):

Նորից ամուր սեղմում եմ բոլորիդ ձեռքերը և համբուրում եմ քեզ ու Անյային:

Քո Վ. Ու[լյանով]

1 Տես 126-րդ նամակի ծանոթագրությունը:

2 Լ. Մ. Կնիպովիչ:

3 Կեմմերեր. «Տեխնիկական պրոգրես» (ռուսերեն թարգմանություն, ըստ յերևույթին, չկա). Հոբսոն. «Իմպերիալիզմ»: Թարգմանություն անգլիերենից

Վ. Բ. Բելենկոյի առաջաբանով ռուսական հրատ. առթիվ՝ «Прибой»-ի հրատ. 1927 թ. Ջիլբերտ. «Շարժումների ուսումնասիրությունն իբրև արտադրողականության բարձրացման միջոց ամեն տեսակ աշխատանքներում». ՍՊԲ, 1913:

129

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

M-lle Oulianoff. Մարիա Իլյինիչնա Ուլյանովային. Շիրոկայա փ., տ. 48/9, բն. 24. Պետրոգրադ. Russie. Petrograde.

\ Oulianoff. 14. Spiegelgasse. Zürich. 1.

[2] 15/II 1917. [Ցյուրիխ]

Թանգագին Մանյաշա, այսօր Ազովսկո-Դոնսկոյ բանկի միջոցով ստացա 808 frs., իսկ բացի դրանից 22. I ստացա 500 frs.: Գրիր, խնդրեմ, այդ ի՞նչ փողեր են, հրատարակչի՞ց են արդյոք, և վո՞ր մեկից, նաև ինչի՞ համար և ինձ համա՞ր են արդյոք: Անհրաժեշտ է հաշիվ ունենալ, այսինքն՝ գիտենալ, թե վո՞ր գրվածքների համար հրատարակիչն արդեն վճարել է և վոր մեկի համար չի վճարել: Չեմ կարողանում հասկանալ՝ վորտեղից և այդքան շատ փողը, իսկ Նադյան կատակ է անում, թե՝ «թոշակ» ես, ասում է, սկսել ստանալ: Հա, հա: Ուրախ հանաք է, թե չէ՝ թանգությունը սաստիկ հուսահատական չափերի յե հասել, իսկ աշխատունակությունս եյ, հիվանդ ջղերիս պատճառով, սաստիկ վատ է: Սակայն հանաքները դեն, չէ՞ վոր այնուամենայնիվ յես վերջապես ճշտությամբ պիտի իմանամ այս բոլորը. գրիր, խնդրեմ: Ամենահավանականն է թվում ինձ, վոր քո գրած նամակներից վորևե մեկը (կամ ավելին) կորել է, և յես չգիտեմ բանի եյությունը: Վախում եմ ծախսել փողերը (իմ միջոցով յերբեմն փող ուղարկելիս են յեղել իմ մեկ հիվանդ բարեկամիս):

Այս օրերս ստացա քեզնից գրքերը՝ «Рус[ские] зап[иски]»[1], «Тв[ердые] цены на хдеб»[2], «Труд[овое] посредн[ичество]»[3]. «Тульск[ая] стат[исти]ка»: Շատ և շատ շնորհակալ եմ: Անյուտային և Մ[արկ] Տ[իմոֆեյեվիչ]ին, նմանապես Միտյային հղում եմ ամենասրտագին բարևներս: Ապրում ենք ինչպես առաջ՝ շատ հանդարտ: Նադյան հաճախակի տկարանում է: Ձմեռն անչափ ցուրտ դուրս յեկավ. նույնիսկ այժմ էլ դեռ ցուրտ է: Դուք ամենքդ այդտեղ ի՞նչպես եք ձեզ զգում: Առո՞ղջ եք արդյոք: Ձեզնից լուրերը վատ են հասնում: Պինդ սեղմում եմ ձեռքդ և համբուրում:

Քո Վ. Ուլ[յանով]

1 «Русские записки»-ն գրական-գիտական և քաղաքական ամսագիր է վոր «Русское богатство»-յի փոխարեն 1914 թվից լույս եր տեսնում Պետերբուրգում: Ժուռնալի անվան փոփոխումը հետևանք եր կառավարական ռեպրեսիաների: 1917—1918 թվից ժուռնալը լույս եր տեսնում հին անվան տակ:

2 «Հացի կայուն գները». Պետերբուրգ, 1916 թ. (Քաղաքների Համառուսաստանյան Միություն: Վիճակագրական-Տնտեսագիտական բյուրո):

3 «Աշխատանքային Միջնորդությունը». Մասկվա. 1917 թ., Զեմստվային և Քաղաքային Համառուսաստանյան Միություններ: Գաղթականների տեղավորման բաժին: Հաշվետվություններ և նյութեր: Հատ. I):

130

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Ա. Ի. ՅԵՎ Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՆԵՐԻՆ

[2] 15/IV 1917 թ. Տորնեո

ՀԵՌԱԳԻՐ № 148 ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ ՇԻՐՈԿԱՅԱ 48/9 ԲՆ. 24 ՊԵՏՐՈԳՐԱԴ

Բլանկ № 71
Ստաց. №
Ընդուն. 2/IV 191 թ. 20 ժ. 8 ր.
Ռազմական Չրաքննիչ № 87

ՊԵՏՐՈԳՐԱԴ ՏՈՐՆԵՈ 148 13 218 12 ՆԱՑԵՆ ՊԳԴ

ԳԱԼԻՍ ԵՆՔ ՑԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԳԻՇԵՐԸ 11 ՀԱՂՈՐԴԵՑԵՔ ՊՐԱՎԴԱՅԻՆ

ՈՒԼՅԱՆՈՎ

131

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

[1917 թ. օգոստոս] [1] [Հելսինգֆորս]

Թանկագին Մանյաշա, հղում եմ ամենամեծ բարևներս և լավագույն ցանկություններս: Լավ եմ ապրում և սկսել եմ պետության մասին աշխատությունս, որը ինձ վաղուց է հետաքրքրում: Ուզում եմ քեզ խորհուրդ տալ. անպայման պետք է գնաս բժշկվելու, հենց ներկա ժամանակը, որ համեմատաբար դատարկ է և [illegible] ժամանակ անհանգիստ, պետք է օգտագործել փորքդ և ջղերդ բժշկելու համար: Շատ և շատ խնդրում եմ քեզ՝ մեկնիր անպայման և անմիջապես: Հետո կարող ես վերցնել թարգմանություն և կամ բելետրիստիկա՝ ձանձրույթը հեշտությամբ տանելու համար — ձանձրույթ, որը որոշ չափով անհրաժեշտ է բժշկվելու ընթացքում: Իսկ գնալ անպայման անհրաժեշտ է: Խնդրում եմ կատարիր իմ այս խնդիրքը և գրիր ինձ քո պատասխանը: Պինդ-գրկում եմ:

Քո [Ուլյանով]

[1] Նամակի թվականը որոշվում է նրա մեջ հիշված նախադասությունից «սկսել եմ պետության մասին աշխատությունս» («Պետություն և հեղափոխություն»), որը Վ. Ի. սկսել է գրել 1917 թ. օգոստոսին: Տես Լենինի Երկերը, XXI հատ., ռուս. 2-րդ հրատ., ծանոթ. 155, էջ 537:

132

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — Մ. Ի. ՈՒԼՅԱՆՈՎԱՅԻՆ

Միմոզային [1]

[1917 թվի օգոստոսի վերջը — սեպտեմբեր] [2] [Հելսինգֆորս]

Թանկագին, սիրելի Միմոզա. շատ եմ խնդրում, որ գնաս բժշկվես տանից հեռանալու. չի կարելի բաց թողնել ժամանակը: Վերադառնալով հեշտությամբ նորից կմտնես որևէ ծառայության: Անպայման մեկնիր:

Գալով Բերին [3]՝ թեման հիանալի է: Աշխատիր ձեռք բերել նաև Shlüter-ը [4] չարտիզմի մասին (գերմաներեն). Բերից հետո լույս տեսնել և ուզում է այս օպորտունիստին: Ըստ Բերի և Շլյուտերի յերևելի բրոշյուր կարող է դուրս գալ: Պատասխանիր:

«Կուս[ակցական] համագումարներն» էլ լավ թեմա է (բացի արձանագրություններից զանազան բրոշյուրներ * էլ պետք են, որոնք յես նույնիսկ մոտավորապես չեմ հիշում): Յեթե գրես, սևագիրն ուղարկիր ինձ, կխորհրդակցենք:

Պինդ, պինդ գրկում եմ:

[Վ. Ուլյանով]

[1] Մարիա Իլյինիչնայի մականուններից մեկն է:

[2] Այս նամակը նույն ժամանակին է վերաբերում, ինչ և նախորդը, և ըստ յերևույթին, պատասխան է հանդիսանում Մ. Ի.-ի նամակին, վերջինիս գրական աշխատանքների ծրագրերի մասին:

[3] Beer, Max: Geschichte des Sozialismus in England. Stuttgart, Dietz, 1913. (Մ. Բեր (M. Beer). «Սոցիալիզմի պատմությունն Անգլիայում», թարգմ. գերմաներենից Մ. Յե. Լանդաու. Ֆ. Ա. Ռոտշտեյնի առաջաբանով, Гиз, 1923 թ.): Ըստ յերևույթին Մ. Ի.-ն պատրաստ էր գրել մի ինչ-որ աշխատություն անգլիական բանվորական շարժման մասին ըստ Բերի գրքի, որը 1917 թվին դեռ թարգմանված չէր ռուսերեն:

[4] Հերման Շլյուտեր. «Չարտիստական շարժումը»: Անգլիայի սոցիալ-քաղաքական պատմության ուրվագծերը: Թարգմ. գերմաներենից Ս. և Կ. Ցեդերբաումների: Սոցիալ-պատմական գրադարան: Մոսկվա. Гиз, 1925 թ.:

[5] Լենին. «Զեկուցում Ռուսաստանի սոց.-դեմ. բանվորական կուսակցության միացուցիչ համագումարի մասին» (Նամակ Պետերբուրգի բանվորներին). Մոսկվա. 1906 թ.: Գինը 25 կոպ. Տպարան «Дело»:

* Յես պատահմամբ ունեմ Լենինի «Զեկուցումը» Ստոկ[հոլմի] համագումարի [5] մասին, և միայն... Քիչ է:

ՀԱՎԵԼՈՒՄ

Վ. Ի.-ի 6 նամակը վերցվել եյին Մ. Ի. Ուլյանովայի խուզարկության ժամանակ 1901 թվի լույս մարտի մեկի գիշերը և կցվել գործին, իբրև «իրային ապացույցներ»: Մոսկվայի ժանդարմային վարչության գործի մեջ («Գործ ՌՍԴԲԿ Մոսկվայի խմբակի № 69, հատ. V — 1901 թ., թերթ 101) այդ նամակներից կան հետևյալ քաղվածները.

1. «Վ. Ու.» ստորագրությամբ 98 15/XII թվակիր նամակի մեջ, որ սկսվում է հետևյալ խոսքերով. «Անյուտային ուղարկում եմ Յե. Մ.-ի[1] նամակը, որ նա ինձ ուղարկել է, խնդրելով անհապաղ ուղարկել», ուշադրություն են գրավում միայն այս մեջբերված նախադասությունը և նրանում հիշատակված «Յե. Մ.» սկզբնատառերը:

2. 98 4/IX թվակիր նամակը՝ «Քո Վ. Ու.» ստորագրությամբ, իսկ ծրարի վրա գրված է, որ նամակը Մ. Ա. Ուլյանովայինն է: Այդ նամակում, որ սկսվում է հետևյալ խոսքերով՝ «Թանգագին մայրիկ, այս օրերս ստացա նամակը», ուշադրություն են գրավում հետևյալ նախադասությունները. 1) «Ս[երգեյ] Ի[վանովիչ]ին[2] գրքերն ուղարկելու առթիվ պետք է ասեմ, որ չգիտեմ, թե որտեղ է նա: Գուցե արդեն Սրեդնե-Կոլիմսկում է». 2) «Լյախովսկին[3] մոտ օրերս գրել է գլխավորապես նոր աքսորյալների մասին, որոնք Վերխոլենսկով են անցնում». 3) Վաս. Վաս. [Ստարկովը] մտադիր է խնդիրք տալու իրեն Նիժնե-Ուդինսկ ուղարկելու մասին». 4) «Լեպեշինսկիները փոխադրվում են Կուրագինսկոյե». 5) «Ապ[ոլինարիա] Ալ[եքսանդրովնա]ն[4] մոտ օրերս գրել էր Կազաչինսկոյից»:

3. 97 3/VII թվակիր նամակը՝ «Քո Վ. Ու.» ստորագրությամբ, որն սկսվում է հետևյալ խոսքերով. «Ստացա, Մանյաշա, քո 16/VI-ի նամակը», ծրարի մեջ, որ հասցեագրված է Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովային («Մանյաշայի» մորը): Նամակում զետեղված են մարքսիզմի ուսումնասիրության պարապմունքների ծրագրերը[5]: Աղբյուրների մեջ նշված են սոցիալ-դեմոկրատիայի այնպիսի օրգաններ, ինչպես՝ «Vorwärts» և «Neue Zeit»-ը:

4. 99. 14/VI թվակիր նամակը՝ «Քո Վ. Ու.» ստորագրությամբ, որն սկսվում է հետևյալ խոսքերով. «Այս շաբաթ տանից ձեզնից ոչ մի լուր չի յեղել, թանգագին մայրիկ». Նամակում հիշվում է իշխան Յեգոր Յեգորովիչ Կուգուշևի ազգանունը[6], որին հեղինակը խնդրում է ուղարկել «Կապիտալիզմի զարգացման մասին» իր աշխատությունը:

5. 20/X թվակիր նամակը: Պրագա «Վ. Ու.» ստորագրությամբ, հասցեագրված Մ. Ա. Ուլյանովային, որտեղ հիշվում է հետևյալ հասցեն. «Herrn Franz Modráček (Վ. Ի.-ի համար) Smêcky, 27. Prag. Ավստրիա»:

6. Նույն հեղինակի «1900 18/VIII Պարիզ» թվակիր նամակը՝ հասցեագրված Մ. Ա. Ուլյանովային, որտեղ հիշվում է հետևյալ հասցեն. «M. Dr. Dubon chez... Pour M. Goukowsky, 8 Boulevard Capucines, Paris»:

Այս նամակների բնագրերը դեռևս չի հաջողվել գտնել. կարող է պատահել, որ նրանք կորել են Փետրվարյան հեղափոխության առաջին օրերին, հրդեհներից մեկի ժամանակ:

[1] Թե ում մասին է խոսքը, չհաջողվեց պարզել:

[2] Ս. Միցկևիչ:

[3] Յա. Լյախովսկին (ծն. 1872) ձերբակալվել էր Լենինի, Կրժիժանովսկու և ուրիշների հետ միասին «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի ՍՊ-Բուրգի Միության» գործով և 3 տարով աքսորվել Արևելյան Սիբիր: Իր աքսորը կրում էր Վերխոլենսկում՝ Իրկուտսկի նահանգում: Հետագայում Լյախովսկին ծառայում էր Անդրբայկալյան յերկաթուղու վարչության մեջ: Հետագայում հեռանում է հեղափոխական գործունեյությունից, մեկնում Հյուսիսային Ամերիկա, որտեղ զբաղվում է բժշկական պրակտիկայով:

[4] Ա. Ա. Յակուբովա:

[5] Մարքսիզմի վերաբերյալ գրքերի ցուցակը Վ. Ի. ուղարկել էր Մ. Ի-ին նրա խնդրանոք:

[6] Կուգուշև Յեգոր Յեգորովիչ, իշխան, ծն. 1871 թ., ՍՊԲ Տեխնոլոգիական Ինստիտուտի նախկին ուսանող: 1893 թ. դատի յէ կանչվում «Հեղափոխական Միության» գործով Տփխիսում: 1898 թ. կ. ձերբակալվում է Մոսկվայի շրջակայքում, չորս բանվորների շրջանում, որոնց նա կարդում էր «Պետերբուրգի բոլոր բանվորներին» ուղղված թռուցիկը, և 4 տարով աքսորվում Վյատկի նահանգը: 1906 թվին բանվորների մեջ պրոպագանդ մղելու համար աքսորվում է Վյատկի նահանգից, որտեղ նա նահանգական զեմստվոյի տեխնիկի պաշտոն էր վարում: Խորհրդային իշխանության օրով Լ. Բ. Կրասինը նրան հրավիրում է արտասահման աշխատանքի. Կ. մեկանի տարի առաջ վախճանվել է Լոնդոնում:

[illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0181582